

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԻՐՔԵՐՈՒՄ**



ԻՄՏԵՆԱԳԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԻՄՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՐԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ  
ՓԱՌԷԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ



# ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՀՈՒՇԵՐ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ  
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հեղինակի հուշերը գրի առավ և  
հրատարակության պատրաստեց  
պատմական գիտությունների դպրատ

ՎԱՐԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ «ԱՄԱՐԱՆ» 1997

1201(2)

## Խմբագիր՝ ՀԻՐԻԿ ԱՆՏՈՆՅԱՆ

Ղարաբաղի պաշտպանության բանակի լիեղեգնապետ Ռազմիկ Պետրոսյանի հուշերի գիրքը նվիրված է Արցախի ազգային ազատագրական շարժմանը, ազերի հրոսակախմբերի դեմ ծավալված անզիջում սրայքարին: Հեղինակը պատմում է գլխավորապես իր անմիջական մասնակցությամբ տեղի ունեցած իրադարձությունների մասին: Նրա հուշերը փաստագրական արժեքավոր հյուսիս են Արցախի ազատագրական պատերազմի պատմության համար:

Հուշերիս այս գիրքը նվիրում եմ Արցախի ազատագրական պատերազմում հերոսաբար զոհված իմ մարտական ընկերների սրայծատ հիշատակին, որոնք անձնվիրաբար մասնակցեցին ժողովրդին զինելու, սպասվող կսիվներին նրանց նախապատրաստելու և առեղի թշնամու դեմ հանելու գործին:

**ՎԻԳԵՆ ՇԻՐԻՆՅԱՆԻՆ**— Մարտակերտի ջոկատի հրամանատար, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պետգամավոր, զոհվեց Ստեփանակերտում:

**ԱՇՈՏ ՂՈՒԼՅԱՆԻՆ (ԲԵԿՈՐ)**— Առաջին գոմարտակի հրամանատար, զոհվեց Դրմբունում:

**ՎՈՂՊՅԱ ԽԱԶԱՏԻՅԱՆԻՆ**— Մարտունու պաշտպանության հրամանատար, զոհվեց Մարզուլիի մոտ:

**ԱՐՄԵՆ ՅՈՒՄԱՆՅԱՆԻՆ**— Ստեփանակերտի ջոկատներից մեկի հրամանատար, զոհվեց Քարին Տակի պաշտպանության ժամանակ:

**ՎԱՂՈ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**— Քարին Տակի պաշտպանության հրամանատար, զոհվեց Ծախումյանում:

**ՍԱԽԼԵԼ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ (ԱՔՈՎՅԱՆԻՑ)**— Դաշուշենի ջոկատի հրամանատար, զոհվեց Ծախումյանում:

**ՎԻԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**— Հադրոթի շրջանի Տոլ գյուղի ջոկատի հրամանատար, զոհվեց Տոլի մոտակայքում:

**ՍԱՎԻԿ ՄԻՐՋՈՅԱՆԻՆ**— Ասկերանի շրջանի Ադրուլաղ գյուղի ջոկատի հրամանատար, զոհվեց Ուլյն գյուղում:

**ԱՌՆՈ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**— Բերդաձոր գյուղի ջոկատի հրամանատար, զոհվեց Բաքվի բանտում:

**ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**



## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ԿՈՂՄԻՏ

Արցախի ազատագրական շարժման նշանավոր գործիչ Ռազմիկ Պետրոսյանի հուշերը գրի առնելու և տպագրելու գաղափարի համար պարտական եմ նահատակ գրող Զապել Եսաչանի «Մուրադի ճամփորդությունը» հրաշալի գրքին: Զապել Եսաչանը, գրի առնելով այդ հուշերը, սերունդների հիշողության համար փրկել է 1915 թ. Սվազից մինչև Բաթում Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ մի խումբ հայ քաջերի անօրինակ արշավի ջանքամասն պատմությունը: Եթե չլիներ Ջ. Եսաչանի նախաձեռնությունը, այսօր համարյա ոչինչ չէինք իմանա ցնցող դեպքերով, հերոսական եղելություններով հարուստ այդ ճամփորդության մասին:

1990 թ. ամռանը, լինելով Հալաստանի Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու Ռազմիկ Պետրոսյանի վատահված անձը, պետք է նրան ներկայացնեի Արթիկ քաղաքի ընտրողներին: Նրա ձեռքակալության ժամանակ գրել էի հոդված՝ «Ազատություն Ռազմիկ Պետրոսյանին ու նրա ընկերներին» վերնագրով, ընդհանուր ձևով գիտեի նրա անցած կյանքի մասին, բայց դա բավարար չէր նրան պատշաճ ձևով ներկայացնելու համար: Նրա կենսագրությունը հարստացել էր նոր եղելություններով, կարևոր իրադարձություններով: Նա հայրենի Արցախը ադրբեջանական բիրտ տիրապետությունից ազատագրման պայքարի կազմակերպողների մեջ էր, ամբողջովին տարված էր այդ սուրբ գործով: Ես պետք է խոսեի նաև այդ հարցերի մասին, ուստի անընդհատ «հարցաքննում» էի Ռազմիկին:

Եվ նա պատմում էր մերթ այս կամ մերթ այն եղելության, իր պատանեկության տարիների, ֆուտբոլային կյանքի, ազատագրական պայքարի մեջ մտնելու, ձեռքակալության, բանտում կրած անափոր տանջանքների մասին: Ես

գրի էի առնում նրա պատմածները: Այդ ժամանակ էլ, Զապել Եսայանի օրինակով, որոշեցի հրատարակության պատրաստել Ռ. Պետրոսյանի հուշերը: Մաշտոցի անվան Մասեհադարանի ղեկավարությունը և գիտական խորհուրդը հավանություն տվեցին իմ որոշմանը: Սակայն, շատ չանցած, ադրբեջանական ավազակախմբերը ներխուժեցին Ղարաբաղ: Սկսվեց պատերազմը և Ռազմիկը մեկնեց ուղղափառ: Նա միշտ առաջին գծի վրա էր:

Զինադադար հաստատվելուց հետո հնարավորություն տեղի ունեցավ շարունակելու աշխատանքը: 1994 թ. ուշ աշնանը մեկնեցի Ստեփանակերտ: Ռազմիկ Պետրոսյանն արդեն փոխզոնապետ էր, աշխատում էր որպես ԼՂՀ պաշտպանության բանակի ֆիզիկական պատրաստակամության և պորտի պետ, խիստ զբաղված էր, բայց ժամանակ գտավ շարունակելու մեր համատեղ աշխատանքը: Նա պատմում էր, բացատրում, խոսում ապագա ծրագրերի մասին: Ես լսում էի նաև դեպքերին մասնակից այլ անձանց: Միաժամանակ օգտվում էի նրա մոտ մնացած որոշ գրառումներից, նամակներից, անձնական արխիվի նյութերից: Դժբախտաբար, ձեռքակալության ժամանակ նրա փաստաթղթերի զգալի մասը բռնագործվել ու հավանորեն ոչնչացվել էր: Այդուհանդերձ, հուշերի գիրքը աստիճանաբար կազմվում էր: Իրենց խելացի խորհուրդներով ու տեղեկություններով ինձ մշտապես օգնում էին Ռազմիկի Երևանում ապրող քույրը՝ Ժաննան ու հատկապես եղբայրը՝ Զարմիկը: Ռազմիկի գործունեության մասին շատ բան իմացա իմ լավ բարեկամ, արցախյան պայքարի մեկ այլ մասնակից, բանաստեղծ ու երգահան Գուրգեն Գաբրիելյանից և ուրիշներից:

Պետք է խոստովանեմ, որ ես որոշակի նմանություններ եմ գտնում Սեբաստացի Մուրադի և Ռազմիկ Պետրոսյանի միջև: Բնավորությամբ և խառնվածքով նրանք նման են միմյանց. նույն ջերմ հայրենասիրությունը, կազմակերպչական առատ ձիրքը, անվախությունը, սեփական կյանքը մշտապես վտանգի տակ դնելու վճռականությունը, բարդ իրադրություններից խելամիտ ձևով դուրս գալու շնորհքը և, միաժամանակ, խոհեմ զգուշավորությունը: Իսկ զենք ու զինամթերք ձեռք բերելու, պահեստավորելու և ճիշտ ժամանակին

ազատագրական շարժման մարտիկներին հասցնելու գործում նա շատ նմանվում է Ուրֆաչի 1915 թ. հերոսական պաշտպանության լեգենդար հերոս Մկրտիչ Յոթենդրայրյանին: Նա առաջիններից մեկն էր Ղարաբաղում, եթե ոչ ամենաառաջինը, որը կոչ էր անում զինվել ու անպայման զինվել: Դեռևս 1988 թ., մեր առաջին հանդիպման ժամանակ, նա ասում էր, թե ռազմական ընդհարումն Ադրբեջանի հետ անխուսափելի է և որ առաջնահերթ խնդիր է զենք ու զինամթերք ձեռք բերելը: Եվ նա իրավացի դուրս եկավ:

Ընթերցողները չպետք է ակնկալեն, որ այս գրքում զրտնելու են արցախյան իրադարձությունների հետ կապված տարաբնույթ, շատ հարցերի պատասխաններ: Հեղինակն այդպիսի նպատակ չի ունեցել: Նա համեստ խնդիր է դրել իր առջև՝ մոռացությունից փրկել այն ամենը, ինչ մնացել է իր հիշողության մեջ բախտորոշ այդ իրադարձությունների մասին: Նա հիշում է միայն իր տեսածը և իմացածը: Հնարավոր է և ցանկալի, որ ուրիշ հեղինակներ լրացնեն նրան՝ նրա պատմելու մեր պատմության հերոսական դրվագներով լեցուն այս կարևոր հատվածի ամբողջացմանը: Հեղինակի միակ փափագն է, որ սերունդները հրականան և արժեքավորեն գոյամարտի խիզախ մասնակիցների գործը, հատկապես նրանց, որոնք հանուն Արցախի ազատության և անկախության նվիրաբերեցին ամենաթանկագինը՝ իրենց կյանքը:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀՈՒՇԵՐ ԿԻՐՈՎԱԲԱՂԻՑ

Իմ մանկությունն ու պատանեկությունն անցել են ծննդա-  
վայրումս՝ Կիրովաբադ քաղաքում, որին վերջերս վերա-  
դարձրեցին իր հին անունը՝ Գյանջա, հայերեն՝ Գանձակ:  
Հայաշատ քաղաք էր Կիրովաբադը: Հայերն ապրում էին  
քաղաքը կիսող Գյանջաչայ գետի աջ ափին, իսկ թուրքերը՝  
ձախ: Մենք նրանց կոչում էինք ոչ թե ադրբեջանցի նորա-  
հնար անունով, այլ՝ թուրք, շատ հաճախ էլ՝ մուսուլման, իսկ  
իրենք իրենց անվանում էին մուսուլման:

Քաղաքի հայկական բաժինը բաղկացած էր մի քանի  
թաղամասերից, որոնցից մեկը եկեղեցու շրջապատն էր և  
կոչվում էր «Եղեցի դուռ»: Այդ թաղամասում շատ խանութ-  
ներ ու կրպակներ կային: Գանձակահայությունը սիրում էր  
հավաքվել այնտեղ: Հեղափոխությունից հետո եկեղեցին  
վերածել էին մթերային պահեստի: Թաղամասերից մյուսը  
կոչվում էր «Ծաղկունց մեյդան», որտեղ հայերը վաճառում  
էին իրենց աճեցրած ծաղիկները: Հաջորդ թաղամասը կրում  
էր «Թազաչեն» անունը: Մեկ այլ թաղամասի ասում էին  
«Նուխուցոնց թաղ», որովհետև այնտեղ նուխեցի հայեր էին  
ապրում:

Հայկական թաղամասում պահպանվել էին հին եկեղե-  
ցին և պարսից Ծախ Աքբաս թազալորի ժամանակներում կա-  
ռուցված բաղնիքը: «Մեջի մեյդանի» կոչված թաղամասում,  
որը նույնպես ամբողջովին հայաբնակ էր, կար լավ աղբյուր՝  
քահրիզ: Այնտեղ էր գտնվում շուկան, որը միշտ բազմա-  
մարդ էր: Ընկերներով հաճախ էինք գնում այնտեղ վեգ  
(ջայ) խաղալու: Կիրովաբադը ազարտ խաղերի քաղաք էր:  
Կանայք ու աղջիկները սիրում էին լուտո խաղալ, իսկ մենք  
տարված էինք վեգով ու թղթախաղով: Վեգը գրավիչ խաղ  
էր, որ խաղում էին երկու հոգով: Մեջտեղում գրվում էր մի

տախիակ բար, որի վրա նետում էին երեք վեգ: Մինչև պղծ խաղրանկերներից մեկն ասում էր գումարը: Եթե վեգերը կանգնում էին բնորոշված ձևով (օրինակ՝ «գալսար», «դուխար»), գողը շահում էր կրկնապատիկ կամ եռապատիկ գումար: Գողն էլ կարող էր ասել գումարի չափը, որը, սակայն, պետք է արևյան լիներ «հակնախորդի» ասած թվից:

Խաղում էինք նաև թղթախաղ՝ «պոկեր»: Բայց ավելի տարածված էր թղթադրամների համարների գուշակելու խաղը, որը կոչվում էր «Առաջ քամակ»: Ես շատ հմուտացել էի այդ խաղի մեջ և երբեմն մեծ գումարներ էի շահում: Մեծ վարպետության էր հասել «Առաջ քամակ» խաղում Հրահանի անունով մի հայ տղա, որի անվանն էր «Քանգչին»: Պետք է ասել, որ անմական անունները շատ տարածված էին Կիրովաբաղում: Դրանց ասում էին «փուտ անուն»: Մարդ կար, որ մի քանի փուտ անուն ուներ:

Երբեմն թուրքերը գալիս էին մեր թաղը թուրք խաղալու: Այդ ժամանակ, որպես կանոն, հայերը միմյանց հետ չէին խաղում, այլ միայն թուրքերի: Մի անգամ Նիծ գյուղից Ուդի փուտ անունով մի տղա մեծ գումարներ շահեց ազերիներից: Նրան Ուդի էին ասում, որովհետև ազգությամբ ուդի էր: Ուդիները Աղվանքի ժողովուրդներից են, որոնց լեզուն շատ մոտ է լեզուներեմին, կրոնով նրանք հայ-լուսավորչական են, իսկ գրական լեզուն հայերենն է: Ուդիին տանու տված ազերիները կտորեղեն բերեցին թուփերով, բայց տարվեցին, հետո ոչխարներ տանու տվեցին: Նման դեպքերում սովորաբար կոխվ էր ընկնում խաղացողների մեջ: Ինձ ուղարկեցին օգնություն կանչելու «Ծղեցի դռնից»: Ես բերեցի 5—6 հայ տղաների, որոնք քիչ անց, անխուսափելի տուրուդմբոցի ժամանակ, ձեծեցին ու փախուստի մատնեցին թուրքերին:

Կիրովաբաղի հայերի մեջ լավ արհեստավորներ կային՝ իրենց գործի մեջ հմուտ վարպետներ: Քիչ չէին բծիշկները, ինժեներները, ուսուցիչները, իրավաբաններն ու այլ մասնագետները: Նրանց զավակներն անխտիր միջնակարգ ու հետո էլ բարձրագույն կրթություն էին ստանում: Հայերի տներն աչքի էին ընկնում իրենց մաքրությամբ, ճաշակավոր շինություններով: Հայկական դպրոցները հայրենի էին ուսման բարձր

մակարդակով, կարգապահությամբ: Աղբրեչանցիները ծուլ էին, հետևապես ավելի վատ էին ապրում, մասն էին գալիս անխնամ տեսքով, կեղտոտ զգեստների մեջ, երբեմն էլ ցրնցոտիներով: Նրանց զավակները հաճախ գրկված էին լինում ուսումից, թափառում էին փողոցներում, գողություն անում, կամ էլ, լավագույն դեպքում, օգնում փողոցային առևտուր անող իրենց ծնողներին:

Թուրքերը նախանձով էին նայում հայերի վրա, երբեմն իրենց վատ կյանքը բացատրում էին հայերի բարեկեցիկ վիճակով: Այստեղից էլ նրանց անմար ատելությունը և թշնամությունը հայերի նկատմամբ, որոնք երբեմն շատ սուր բնույթ էին ստանում: Հայերն ամենևին չէին խեղճանում և պետք եղած դեպքում զորեղ հակահարված էին տալիս վտիպացած ազերիներին:

Հայերը հողամասեր ունեին և գինի էին պատրաստում: Ամենալավ գինին և օղին պատրաստում էին Ծամխորի շրջանի Բանանց գյուղից եկածները: Կիրովաբաղում հաստատված դարաբաղցիները ևս հոշակված էին որպես հմուտ օղի քաշողներ:

Ամռան շոգերին մարդիկ իրենց ժամանակն անց էին կացնում դրսում: Նրանք խնամքով մաքրում էին փողոցի իրենց տան դիմացի հատվածն ու մաքթերը, մատուց դուրս բերված սեղանների մոտ: Երբեմն ճաշում էին աջնտեղ:

Կիրովաբաղցիները շատ հյուրասեր էին: Սիրում էին հյուրեր ընդունել և ողջ ընտանիքով հյուր գնալ: Մեծ շաքով էին անցկացնում հարսանիքները: Դրանք սովորաբար ըսկրվում էին երեկոյան ժամերին և շարունակվում մինչև լույս: Հարսանքավորները սովորություն ունեին փայտի ծայրին նախօր մեջ թաթափված լաթեր ամրացնել ու վառել: Դա կոչվում էր «մաշալա»: Հարսանքաթափորի ընթացքի ժամանակ կրակում էին որսորդական հրացաններից:

Քաղաքում շատ տարածված էր աղավաղապահությունը (դուշբագությունը): Ամենից շատ աղավաղներ (շուրջ 100 հատ) ուներ Թոռնիկ փուտ անունով մի հայ տղա, իսկ Չոլախ Կոչիկին էին պատկանում ամենից ավելի երկար տարածություններ թոշող աղավաղները: Նա աղավաղներ էր տանում



Երևան կամ Թբիլիսի, բաց թողնում և այնտեղից նրանք բարեհաջող վերադառնում էին իրենց բները:

Կոհիլովի անվան փողոցում ապրող Կազակ փուտ անուցում մի հայ տղայի մոտ եւ աղավնիներ էի պահում: Մի անգամ իմ աղավնիներով բռնեցի թուրքերին պատկանող մի աղավնի, որի պատճառով տհաճություններ սկսվեցին: Ի վերջո, 12 աղավնիներ ստանալուց հետո եւ վերադարձրեցի աղավնուն, իսկ հետո պարզվեց, որ նրա ոտքերին ամրացված օղակները ոսկուց էին պատրաստված:

Թուրքերը հարգանքով էին վարվում իրենց արհեստներով ու մասնագիտությամբ ճանաչված հայերի հետ: Կային հայ տղաներ, որոնցից թուրքերը պարզապես վախենում էին և խուսափում նրանց հետ ընդհարվելուց:

Թուրք տղաների հետ մեր ընդհարումների վայրը գետափն էր: Երբ գնում էինք լողանալու, թուրքերին դուրս էինք հանում՝ ասելով, որ նրանք կեղտոտ են: Նույնն էլ նրանք էին անում, երբ թվական գերակշռություն էին ունենում մեր նկատմամբ: Այդ ժամանակ սկսվում էր քարակոխիլը: Քարերը մետում էինք ձեռքով կամ պարսաստիկով (բարսուտով):

Կիրովաբադում աղյթեջանցիների թիվը հայերից մեծ չէր: Նրանք ավելացան հետագայում՝ ի հաշիվ գյուղերից եկածների: Թուրքերին մենք անսխալ ճանաչում էինք նրանց գլուխների երկարուկ ձևից: Քաղաքաբնակ ազերիները իրենց կուլտուրայով, միտ ու կացով ավելի բարձր մակարդակի վրա էին, քան գյուղից եկածները: Առաջինները միշտ արհամարհանքով էին նայում գյուղացիների վրա:

Հայերը զբաղվում էին նաև քարտաշությամբ, հյուսնությամբ, փակահազործությամբ: Նրանք հռչակված էին որպես լավ շինարարներ և հմուտ երկաթագործներ: Ավտոտրոգման արհեստը կարծես հայերի մենաշնորհը լիներ: Թուրքերի մեջ քիչ էին արհեստավորները, նրանց հիմնական գործն առևտուրն էր: Չնայած ճնշումներին, հայերն իրենց ընդունակությունների և կազմակերպչական բնատուր շնորհքի շնորհիվ կարողանում էին բարձր պաշտոնների հասնել՝ դառնում էին հիմնարկների սեփականեր, ձեռնարկությունների վարիչներ, գործարանների գլխավոր ինժեներներ:

Քաղաքում կար հայկական հիվեզ միջնակարգ դպրոց,

որոնցում սովորող աշակերտների թիվը անցնում էր հազար հոգուց: 1874 թվականից սկսած Գանձակում լույս են տեսել հայերեն թերթեր ու ամսագրեր (առաջին պարբերականը «Հայկական աշխարհն» էր): Եւ դպրոցական էի, երբ տրվում էր «Կոմունիստ» թերթը (իմ հասակակիցն էր, լույս տեսավ մինչև 1958 թվականը): Մեր քաղաքն ուներ հայկական թատրոն, որը փակվեց 1949 թվականին: Աղյթեջանցիներն անում էին ամեն ինչ արգելափակումներ ազգային կյանքը, զրկելու մեզ մշակութային հիմնարկներից: Այդ քաղաքականությունը տարվում էր Աղյթեջանի բոլոր հայաշատ վայրերում:

### ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ ԿԻՐՈՎԱԸԱՌԻ ԿՄԱՐՉԱՎԱՇՏՈՒՄ

Հայերի և թուրքերի հարաբերությունները հատկապես լարված բնույթ էին ստանում ֆուտբոլային խաղերի ժամանակ: Սովորաբար մարզադաշտ էր գալիս ազերիների ամենագոեհիկ, կովաբար և ազգայնամոլ խալը, որն առիթ էր փնտրում իր թշնամական վերաբերմունքը ցուցաբերելու հայերի նկատմամբ: Բայց միշտ չէ, որ այդպես էր: Ազերի ամբողջ կարիք ունի հրահրման: Եթե նրան վերևներից չեն հրահանգում, չեն դրդում ու ոգեշնչում, նա մահաձեռնություն չի ցուցաբերում: Այդպես է եղել թե՛ Սունգայիթում և թե՛ այլ վայրերում: Իսկ երբ նրան դրդում են, ապա թուրք ամբողջ երևան է բերում իր գեների մեջ եղած գազանային բնազդները: Այդ պահին նրան հրահանգել պետք չէ, նա պատրաստ է ամենավայրենի գործողությունների: Այդպես եղավ Կիրովաբադի մարզադաշտում 1959 թվականին:

Մարզադաշտը գտնվում էր հայկական թաղամասում: Թուրքերը գալիս էին այնտեղ առևտուր անելու: Երբեմն մենք չէինք թողնում, նրանք մեզ «կաշտում» էին կոնֆետներով և իրավունք ստանում զբաղվելու առևտրով:

Մինչև 1957 թ. Կիրովաբադի «Ապարտակ» ֆուտբոլային թիմի բոլոր խաղացողները հայեր էին: Մարզադաշտի տնօրենն էլ հայ էր՝ Ապերյան ազգանունով: Հետագայում

միայն ֆուտբոլիստների մեջ երևացին հաս ապրքեզանցիներ:

1959 թ. Երևանի «Սպարտակը» և Կիրովաբադի «Դինամոն» նույն ենթախմբում էին: Վերջինիս ղեկավարությունը գտնվում էր Կիրովաբադի միլիցիայի վարչության ակտ, գրե- դապետ Մեխտիկի ձեռքում: «Դինամոն» Երևանում հյուր- ընկալվելիս պարտություն էր կրել 1:2 հաշվով: Էդր էր տա- րածվել, թե իբր հայերը լավ չէին բնդունել նրանց, ուստի թուրքերը որոշել էին վրեժ լուծել Լենինականի «Ծիրակից»:

Մեր ֆուտբոլիստների դեմ խոթորությունների կազմակեր- պիչը գնդապետ Մեխտիկն էր: Երբ միլիցիան է գործի գլուխ անցնում, ապա հետևանքների դժվար չէ պատկերացնել: Նախապես նրանք սղնպես էին արել, որ տոմսերի մեծա- գույն մասն ընկել էր թուրքերի ձեռքը: Հայերը, որ միշտ ա- վկալի մեծ թիվ էին կազմում մարզադաշտում, այդ անգամ բնդամենը 30 տոկոսն էին:

Խաղի երկրորդ կեսին, երբ հաշիվը 2:1 էր հօգուտ «Ծի- րակի», թուրքերը սկսեցին քարկոծել մեր ֆուտբոլիստներին: Նետված քարերից մեկը դիպավ «Ծիրակի» լախագույն խա- լացողներից մեկի՝ կիսապաշտպան Ժակ Սուփրիկյանի գլու- խին: Խաղն րնդհատվեց 10 րոպեով: Բժիշկներն օգնություն ցույց տվեցին Ժակին և նա վիրակապարված գլխով դաշտ մտավ: «Ծիրակի» տղաները ավելի ուժեղացրեցին իրենց գրոհները և կարողացան խփել երրորդ գոլը: Թուրք հանդիսականները կարծես դրան էին սպասում, նրանք լցվեցին խաղադաշտ և ուզում էին հաշվեհարդար տեսնել հայ ֆուտբոլիստների նկատմամբ: Այդ քանը չէին կարող հանդուրժել տրիբունա- ներում եղած հայերը, նրանք էլ նետվեցին խաղադաշտ մեր ֆուտբոլիստներին պաշտպանելու համար: Կիրովաբադցի հայերը «Ծիրակի» խաղացողներին ապահով կերպով հաս- ցրեցին հանդերձարան: Այդ քանը չէր կարող դուր գալ մի- լիցիայի կողմից անընդհատ հրահրվող թուրք խուժանին, որը հարձակվեց հայերի վրա: Պարզվեց, որ թուրքերը կա- րողացել էին ստադիոն քերել որսորդական հրացաններ, ստորճանակներ, ինչպես և մեծ քանակությամբ երկաթե ձո- դեր:

Ինչպես նշեցի, ստադիոնը հայկական թաղամասի մեջ էր և կովի աղմուկից ջրակապքում եղած հայերը վազեցին

ներս: Արավեց արյունալի բնդհարում: Ստադիոնում կային նաև հայ միլիցիոներներ, որոնք երբ տեսան, որ թուրքերը հայերի վրա կրակում են հրազենից, իրենց ստորճանակները տվեցին մեզ՝ պաշտպանվելու համար, բայց պայմանով, որ վերջում դրանք վերադարձնենք իրենց: Թուրքերի թիվը մեծ էր՝ շուրջ 10 000 հոգի, բայց մերոնց թիվը գնալով ավելա- նում էր: Մենք նեղը գցեցինք նախահարձակ եղած թուրքե- րին, որոնք սկսեցին փախչել՝ ճանապարհին կոտորատելով հայերի պատուհանների ապակիները: Նրանք փախչում էին հինգ ուղղությամբ և նրանց փախուստի ճանապարհն անց- նում էր հայերի տների արանքով: Հայ տղաները քարծրա- ցել էին կտորները և այնտեղից քարկոծում էին փախչող- ներին: Բնական է, որ քարերը մեծ մասամբ կաշում էին ա- գերիների գլուխներին և նրանք շատ վիրավորներ ունեցան (ասում էին, թե նրանց վիրավորների թիվը հասնում էր 1000 հոգու):

Հայ կանաչք, որոնք աշխատում էին Կիրովաբադի թուր- քական մասում գտնվող տեքստիլ գործարանում, չէին կարո- դանում տուն վերադառնալ: Մենք զինված խմբեր կազմե- ցինք, մի քանի անգամ գնացինք այդ գործարանը և կա- նանց իրենց տները քերեցինք: Տարբեր գործերով թուրքա- կան թաղամասում գտնվող երեք հայ կանաչք բնկել էին քարքարոս ամբոյսի ձեռքը և զազանաբար սպանվել:

Գիշերվա ժամը 12-ին հայերը և թուրքերը, կենտրոնա- ցած իրևն թաղամասերում, միմյանց վրա կրակում էին որ- սորդական հրացաններից ու ստորճանակներից: Հետո գոր- քեր քերվեցին, որոնք տանկերով փակեցին ճանապարհներն ու կամուրջները: Կրակը դադարեց: Սպանվել էր 20 հոգի, որոնցից 11-ը հայեր էին, մեծ մասամբ կանաչք:

Քաղաքում ծայր աստիճան լարված վիճակ էր: Այն հա- յերը, որոնց աշխատատեղերը թուրքական թաղամասում էին, մեկ շաբաթ չգնացին գործի: Թուրքերն էլ չէին գալիս հայ- կական կողմում գտնվող հիմնարկները: Կառավարության որոշմամբ համձնաժողով ստեղծվեց՝ ազգամիջյան այդ բնդ- նարման պատճառներն ու հետևանքները ստուգելու համար: Համձնաժողովի մեջ մտնում էին մեկական հայ, ադրբե- ջանցի և ռուս: Արավեցին բնդություններ: Մի քանի հոգի

ձեռքակալվեցին: Քաղաքսրբուրդն ուղարկեց ապակեգործներին, որոնք ջարդվածների փոխարեն նոր ապակիներ գեղեցին: Կառավարությունն ընթացավ փակ գաղտնի պայմաններում: Ադրբեջանական իշխանությունները չէին ուզում, որ մեծ աղմուկ լիներ: Իրենք էին կազմակերպել և ամեն կերպ մզալուծ էին թաքցնել այդ: Ձերբակալված հայերն ու ադրբեջանցիներն ազատ արձակվեցին: Իսկական մեղավորներն, իհարկե, մնացին անպատիժ:

Այդ դեպքերից հետո Կիրովաբադում հայերի ու թուրքերի հարաբերությունները խիստ լարվեցին: Հայ միլիցիաներները, որոնք ընդհարման ժամանակ պաշտպանել էին հայերին, ազատվեցին աշխատանքից: Նրանց փոխարեն ընդունվեցին թուրքեր: Համատարած կերպով հայերին ւկսեցին հեռացնել դեկավար պաշտոններից: Սկսվեց հայերի գաղթը Կիրովաբադից: Նախկինում էլ հայերը հեռանում էին Գանձակից, բայց այժմ դա ընդունեց զանգվածային բնույթ: Կիրովաբադի հաստոցաշինական գործարանի դիրեկտորը և գլխավոր ինժեները հայեր էին: Նրանց հեռացրեցին աշխատանքից: Նրանք մեկնեցին Հայաստանի Աքուլյան քաղաքը և այնտեղ հիմնադրեցին նման մի գործարան: Դրանից հետո շուրջ 2000 հայ բանվորներ մեկնեցին Աքուլյան աշխատանքի ու ընդմիջտ բնակության:

Կիրովաբադի միլիցիայի 2-րդ բաժանմունքի աշխատակիցների 90 տոկոսը, ինչպես և պետը, հայեր էին: Բոլորին ազատեցին աշխատանքից և նրանց փոխարեն ընդունեցին ադրբեջանցիների: Քաղաքում խիստ մեծացավ գործազուրկ հայերի թիվը: Եկեղեցու մոտ հայ արհեստավորները զանազան մանր գործեր էին անում, բայց քաղաքային իշխանությունները Գասքմ անունով մի ազերի միլիցիոնների լիազոր էին նշանակել, որը հարկեր էր վերցնում այդ խեղճ մարդկանցից: Ով չէր տալիս, 15 օրով բանտ էր նստեցնում: Բոլորը վախենում էին նրանից: Այդ ժամանակ էս արդեն սովորում էի Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկոմում: Մի անգամ եկել էի Կիրովաբադ և ուշ երեկոյան հանդիպեցի այդ Գասքմին: Նա ռեստորանից խմած դուրս եկավ և հայհոյում էր հայերին: Մտտեցա նրան ու հարցրեցի, թե ինչո՞ւ է հայհոյում: Կոնի սկսվեց, մոտ կես ժամ նրան լավ

ծեծեցի, գցեցի փողոցի եզրին եղած ամվի մեջ ու հեռացի: Նրան տարել էին հիվանդանոց, պարզվել էր որ ձեռքը և ոտքը կոտրվել էր: Մոտ վեց ամիս աշխատանքի չէկալ: Հայերը լուր էին տարածել, թե խմած դուրս է եկել ռեստորանից և ընկել ամվի մեջ: Դրել էին նրան աշխատանքից հեռացնելու հարցը, բայց նա կաշառքով մի կերպ մնացել էր պաշտոնում: Դրանից հետո նա «խելոքացել էր» և հայերի հետ ընկերություն էր անում:

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

1957 թ. ընդունվեցի Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկոմ: Պետք է ասեմ, որ տեխնիկոմը լավ կրթություն էր տալիս: Դասախոսներից մի քանիսը արտասանմանում (Գերմանիայում) էին սովորել և աչքի էին ընկնում իրենց գիտելիքներով ու բացառիկ բարեխղճությամբ: Տեխնիկոմը մի փոքրիկ հողակտոր ուներ, որտեղ աշխատելով՝ մենք գործնական գիտելիքներ էինք ձեռք բերում: Շատ լավ բերք էինք ստանում, որը բավարարում էր մեր պահանջները, իսկ մի մասն էլ տանում էին շուկա: Տեխնիկոմի տնօրենն էր Շուսն Ջալադյանը, իսկ գյուղատնտեսության բաժնի վարիչը՝ Բարսեղ Բարսեղյանը: Մեր տեխնիկոմի ուսումնական հողամասի բերքով մենք մասնակցում էինք Մուկվաչի գյուղատնտեսական ցուցահանդեսին:

Մարտակերտի շրջանում բամբակ էին մշակում և բերքահավաքի ժամանակ մշտապես աշխատող ձեռքերի խիստ պակաս էր զգացվում: Ստիպված էին լինում դպրոցականներին էլ ներգրավել այդ գործի մեջ: Բայց մեզ՝ հայ ուսանողներին, բամբակ հավաքելու համար ամեն տարի տանում էին Ադրբեջանի շրջանները: 1958 թ. մեզ տարել էին Բարդաչի շրջանի «Բակիբակի ուարչիչ» սովխոզ: Ինչպես մյուս վայրերում (Փղամուլի շրջանում), այնպես էլ այստեղ մենք ընդհարումներ էինք ունենում ազերի լակոտների հետ: Ստեփանակերտում էլ նման կոնիվներ հաճախ էին պատահում: Ադրամից տարբեր առիթներով թուրքեր էին գալիս Ստեփանակերտ և իրենց շատ վտի էին պահում հայ կանանց նկատ

մասը: Մենք էլ ծեծում էինք նրանց: Այդ ընդհարումների ժամանակ մեզ օգնում էին Ստեփանակերտում բնակվող ադրբեջանցիները, որոնք չէին սիրում վայրենի աղդամցիներին:

«Բակիմուկի ռաբոչի» սովխոզում մեզ հետ էին մեր տեխնիկումի աղջիկները: Թուրքերը անպատկառ ձևով վիրավորում էին նրանց: Մի անգամ մեկը եկել էր ձիով և վտի առաջարկություններ էր անում մեր աղջիկներին: Մենք բռնեցինք նրան, վայր գորեցինք ձիուց ու մի լավ ծեծեցինք: Ձին իջեցինք նրանից: Նա գնաց, հավաքեց 10 հոգու և եկավ այնտեղ, որտեղ մենք բամբակն էինք համձնում: Մերոնք կրկնակի շատ էին նրանցից և կարողացանք ինչպես հարկն է ծեծել նրանց: Դրանից հետո նրանք այլևս չէին համարձակվում երևալ մեր աչքին:

### «ՂԱՐԱՔԱՂ» ՖՈՒՏՅՈՒԼԱՅԻՆ ԹԻՄԻ ԿԱԶՄՈՒՄ

Կիրովաբադում ազատ ժամերս ամբողջովին տրամադրում էի ֆուտբոլին: Խաղում էի բակային թիմերում, հետո ընդգրկվեցի քաղաքի պատանեկան հավաքականի մեջ: Մի քանի անգամ մեկնեցինք Բաքու և հանդիպումներ ունեցանք այլ թիմերի հետ: Երբ տեղափոխվեցի Ստեփանակերտ, ինձ նիշում էին Բաքվի մրցումներից, ուստի հրավիրեցին պարապմունքների: Հետո դարձա Ղարաբաղի հավաքականի անդամ: Խաղում էինք գլխավորապես ադրբեջանական թիմերի հետ:

Պետք է ասել, որ ազգային խորականությունն առավել բացահայտ կերպով դրսևորվում է սպորտի բնագավառում: Ադրբեջանցի դատավորներն ամեն ձևով պաշտպանում էին իրենց թիմերին՝ խրախուսելով նրանց կոպտությունները, վայրենությունը և ստիթ էին որոնում խատրեն պատժելու մեզ:

Ադրբեջանում, ըստ վերադաս մարմինների որոշման, բոլոր ֆուտբոլային թիմերի կազմում ազերիները պետք է կազմեին 70 տոկոս: Բայց ադրբեջանցիների մեջ խաղացողները շատ քիչ էին: Ֆուտբոլիստները և, ընդհանրապես, սպորտի մյուս ձևերի մարզիկները գլխավորապես այլազգիներ էին՝

աուսներ, հայեր, հրեաներ, ուկրաինացիներ և այլն: Խանդար քաղաքի թիմը, օրինակ, 90 տոկոսով բաղկացած էր հայերից, ուստի նրանց չէին թողնում մասնակցելու պաշտոնական մրցումներին: Բացառություն արվում էր միայն Ղարաբաղի թիմի համար, որը կազմված էր միայն հայերից: Այդուհանդերձ, ըստ որոշման, մեր թիմի մեկ երրորդը պետք է բաղկացած լիներ ազերիներից: Մի կողմից էլ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևոբկովը պահանջում էր, որ մեզ մոտ ինտերնացիոնալ թիմ ստեղծվեր: Այդքան թուրք ֆուտբոլիստ գտնելը շատ դժվար էր: Այնուամենայնիվ մենք թիմ էինք ընդունել երեք ադրբեջանցի ֆուտբոլիստների: Նրանք հենց սկզբից դաշտ էին մտնում: Վերադասների պահանջը ձևականորեն կատարվում էր: Դրանից մի քանի րոպե անց մենք այդ երեքին փոխարինում էինք հայերով: Բայց դրանով մենք, փաստորեն, զրկվում էին խաղի ընթացքում ֆուտբոլիստ փոխելու հնարավորությունից:

Երբ ես դարձել էի «Ղարաբաղ» թիմի մարզիչ, դեմ չէի, որ մեր թիմի կազմում ադրբեջանցիներ էլ խաղային, բայց այդպիսիք չկային և մենք ստիպված էինք անել վերը նշված ձևով: Խաղի ժամանակ վնասվածք ստացած կամ խիստ հոգնած մեր ֆուտբոլիստները դաշտում էին լինում մինչև վերջ:

«Ղարաբաղը» մասնակցում էր Ադրբեջանի առաջնությանը, բայց քանի որ մեր թիմի կազմում համարյա բոլորը հայեր էին, մեզ Հաչատուանից եկած թիմի տեղ էին դնում և հարցնում, թե ինչո՞ւ ենք մասնակցում Ադրբեջանի առաջնությանը: Ադրբեջանական թիմերը առանձնահատուկ վայրագությամբ էին խաղում մեր թիմի դեմ, կոլովներ էին սարքում դաշտում և նրանց կողմից կաշտված դատավորներն ավելի շատ մեզ էին պատժում:

Մի անգամ Ղուբա քաղաքում հանդիպում ունեինք տեղի թիմի հետ: Այդ ժամանակ «Ղարաբաղի» կազմում ընդգրկված էին Ստեփանակերտում ծառայող երեք ռուս զինվորներ՝ Գացարովը, Չեչոբկինը և Պանչենկոն: Նրանք լավ ֆուտբոլիստներ էին և մեր թիմը նրանց կարիքն ուներ: Այդ ժամանակ (1961 թ.) մեր թիմն ընթանում էր առաջին տեղում: Խաղից առաջ դուրսցիները բռնել էին այդ ռուս տղա-

ներին, դանակ էին քաշել նրանց վրա և ասել էին, թե կմորթեն նրանց, եթե դաշտ մտնեն ու խաղան իրենց թիմի դեմ: Տղաներից մեկի ձեռքին նրանք հարվածել էին դանակով: Զինվորներն այնքան էին վախեցած, որ ոչ միայն այդ օրը դաշտ դուրս չեկան, այլև ընդհանրապես հեռացան մեր թիմից:

Ղուբաջի թիմի հետ խաղը մենք տանում էինք 1:0 հաշվով (գոլը ես խփեցի): Զգում էինք, որ դատավոր Փարիկուվը (նա բաքվեցի ոռու էր) և եզրային ազերի դատավորները պաշտպանում էին դուրացիներին: Երբ հերթական անգամ դատավորը մեր դարպասի ուղղությամբ տուգանային հարված նշանակեց, ղուբաջիներից մեկը փաթաթվեց մեր դարպասապահին ու բռնեց նրա ձեռքերը: Գնդակը մտավ մեր դարպասը և դատավորը հաշվեց այդ անարդար գոլը: Հաշիվը դարձավ 1:1: Իսկ երբ խաղի ավարտին մնում էր երկու րոպե, դատավորը 11 մետրանոց հարված նշանակեց ի վնաս մեզ և մենք պարտվեցինք 1:2 հաշվով:

Այդ խաղին մենք մեկնել էինք ավտոբուսով և երբ խփել էինք առաջին գնդակը, թուրքերը քանդել էին այն կամուրջը, որով եկել էինք ստադիոն: Դա արված էր մեզ պահելու և հաշվեհարդար տեսնելու նպատակով: Բայց խաղն ավարտվեց նրանց օգտին, ասլա քաղաքային իշխանությունները բռնատար մեքենայով մարդիկ ուղարկեցին կամուրջը նորոգելու համար: Այդ մարդկանց գլխավորում էր Ղուբաջի ավտոքազայի դիրեկտորը: Նա ասաց, որ իրենց ուղարկել է շրջկոմի քարտուղարը: Նա մեքենայով գերաններ ու տախտակներ բերել տվեց: Երկու ժամում կամուրջը նորոգվեց: Երկարարներին օգնում էին նաև մեր տղաները: Երբ ավարտեցին գործը, մեքենան մի կերպ հրելով անցկացրեցինք նորոգված կամուրջով: Պարտությունը մեզ փրկեց ծեծվելուց, որը կազմակերպված էր քաղաքի ղեկավարության կողմից:

1972 թ. գնացել էինք Ստալինոպոլ խաղայու տեղի «Դինամո» թիմի հետ: Մարզումների ժամանակ ինձ մտնեցավ մի լրագրող և ծրագիրը կազմելու համար խնդրեց հայտնել թիմի կազմը: Ես նրան թեքադրեցի մեր ֆուտբոլիստների անուն-ազգանունները, և նա գնաց: Հաջորդ օրը լուր էր տեսել այդ ծրագիրը, որի մեջ գրված էր, թե «Ղարաբաղ» թիմը

ներկայացնում է Հայաստանը: Երբ վերադարձանք Ստեփանակերտ, ինձ իր մոտ կանչեց ԼՂԻՄ-ի Պետական անվտանգության կոմիտեի պետի տեղակալ Համգոյանը և ցույց տալով ծրագիրը՝ հարցրեց, թե ով է ասել, որ դուք ներկայացնում եք Հայաստանը:

Ես պատասխանեցի, որ անտեղյակ եմ: Լրագրողի խընդրանքով ես տվել եմ միայն մեր խաղացողների անուն-ազգանունները և աչքանը: Մնացածն արել է նա: Երբ մյուս տարի կրկին մեկնել էինք Ստալինոպոլ, մեզ մոտ եկավ այդ լրագրողը և պատմեց, որ իրեն ևս կանչել են Պետական անվտանգության կոմիտեի ներկայացուցչի մոտ: Հարցրել էին ֆուտբոլային ծրագրի մեջ եղած սխալի մասին: Նա ասել էր, թե տվյալները տվել է մարզիչը և ինքը նկատելով, որ թուրք խաղացողները հայեր են, կարծել է, թե «Ղարաբաղը» Հայաստանի թիմ է և այդպես էլ տպագրել ծրագրի մեջ: Նա սլոնդել է, որ մարզիչը ոչ մի մեղք չունի, ինքն է պատասխանատու դրա համար:

### ԲԱՆԱԿԱՅԻՆ ԹԻՄԻ ԿԱԶՄՈՒՄ

1961 թ. ընդունվեցի Երևանի ֆիզկուլտ ինստիտուտ: Առաջին կուրսում սովորելու ժամանակ ինձ բանակ տարան: Ակզբում ծառայում էի Բաքվում, հետո տարան Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Նախիջևան: Վեց ամիս իսկական զինվորական ծառայության մեջ էի: Աստիճանաբար վարժվեցի բանակային կարգ ու կանոնին, ինչպես հարկն է ծանոթացա զենքի տեսակներին, հմտություն ձեռք բերեցի հրաձգության մեջ: Այդ ամենն ինձ հետագայում շատ պետք եկավ, երբ Արցախում մկավեց ազատագրական պատերազմը: Կես տարի անց ինձ հրավիրեցին Անդրկովկասի զինվորական օկրուգի ֆուտբոլային թիմ: Կարձա հավաքականի անդամ: Կիսապաշտպան էի, բայց սիրում էի միանալ հարձակվողներին: Գոլեր էի խփում:

Անդրկովկասի զինվորական օկրուգի հավաքական թիմի 22 ֆուտբոլիստներից 18-ը հայեր էին, որոնք բանակ էին կանչվել Հայաստանից, Վրաստանից ու Ադրբեջանից: Մար-

զիչը հանրահայտ Արտեմ Ֆալյանն էր: Մեր թիմը երեք անգամ հանդիպում ունեցավ Բաբյի «Նեփօշիի» հետ, որն այն ժամանակ կրում էր «Նեփօշյանիկ» անունը: Երկու խաղում մենք հաղթանակ տարանք, երրորդն ավարտվեց ոչ ոքի արդյունքով: Թիմը մասնակցում էր ԽՍՀՄ առաջնությանը՝ ֆուտբոլային կոլեկտիվների մեջ: Հաղթանակներ տանելով՝ մենք դուրս եկանք գավաթի եզրափակիչ: Մեր հակառակորդը Ռուսաստանի ֆեդերացիայի «Բելալա կալիտվա» թիմն էր, որին պարտվեցինք 1:2 հաշվով:

Մասնակցում էինք ԽՍՀՄ գինված ուժերի սուպերուպանի խաղերին: Մեր թիմի հիմնական կազմում խաղում էին 8 հայ ֆուտբոլիստներ: Թիմի պետը Լդուարդ Գրիգորյանն էր: Առաջին հանդիպումն ունեցանք Օդեսայում Ռուստովի բանակայինների հետ (մարզիչ՝ Վ. Մալով): Խաղն ավարտվեց մեր օգտին՝ 2:0 հաշվով: Խաղին ներկա էր Օդեսայի գինվորական օկրուգի պետ, բանակի-գեներալ Համազասպ Բաբաջանյանը, որը դրանից շատ չանցած ստացավ մարշալի կոչում: Հաջորդ խաղից առաջ նա եկավ մեր հանդերձարանը: Տեսնելով, որ խաղացողների մեծ մասը հայեր են, նա մայր Գրիգորյանին ասաց. «Դու, ի՞նչ է, «Արարատ» թի՞մն ես բերել»: Այդ խաղը մենք տանուլ տվեցինք 1:2 հաշվով:

### ՏԵՂԱՓՈՒՎՈՒՄ ԵՄ ԵՐԵՎԱՆ

Չորացրվելուց հետո ինձ հրավիրեցին Նովոռուսիյսկի «Ցեմենտ» թիմը: Խաղում էի որպես կիսապաշտպան, երբեմն էլ՝ աջ եզրային հարձակվող: Թիմը լավ խաղ ցույց տվեց և այդ տարի երկրորդ խմբում դարձավ Ռուսաստանի չեմպիոն: Ես էլ որոշ վաստակ ունեցա այդ գործում, որովհետև մասնակցեցի բոլոր խաղերին և խփեցի 22 գնդակ:

Երբ Գրոզնիում «Արարատը» 2:1 հաշվով հաղթեց Ալմա-Աթայի «Կայրաթին» ու մտավ բարձրագույն լիգա, Արտեմ Ֆալյանը «Արարատը» բերեց Նովոռուսիյսկ «Ցեմենտի» հետ ընկերական խաղ անցկացնելու: «Ցեմենտի» մարզիչ Սոուպակովը, որը Մոսկվայից էր, հավաքեց տղաներին և պահանջեց լավ խաղ ցուցադրել: Խաղի ժամանակ զգալիոր, որ

Գրոզնիում կապացած խիստ լարված ու պատասխանատու խաղից հետո «Արարատը» շատ հոգնած էր և լիցքաթափված: Իսկ մենք թարմ ուժերով ձգտում էինք աչքի ընկնել արդեն բարձրագույն լիգա անցած թիմի հետ մրցութաբանում: Մենք հաղթեցինք 3:0 հաշվով: Ես դարձա երկու գոլի հեղինակ:

Խաղից հետո Ա. Ֆալյանը Վյունին, Յունակովիին, Վաստուլյանին, որը ծնունդով Նովոռուսիյսկից էր, իսկ ծնողները գաղթել էին Տրասիպոնից, ինձ նույնպես կանչեց իր մոտ, և առաջարկեց տեղափոխվել «Արարատ»: Վաստուլյանը չուզեց հեռանալ իր ծննդավայրից, իսկ մենք՝ երեքս, դիմում գրեցինք և սեզոնի ավարտից հետո տեղափոխվեցինք Երեվան: Ինձ հախար մեծ պատիվ էր «Արարատի» կազմում հանդես գալը, իմ մշտական երազանքն էր խաղալ հայկական ֆուտբոլը ներկայացնող այդ ուժեղ թիմում և ապրել հարագատ միջավայրում: Երազանքս իրականացավ:

«Ցեմենտի» ղեկավարությունն աշխատեց մեզ պահել Նովոռուսիյսկում: Նրանք բարձրացնում էին մեր ռոմբկյու, բնակարան առաջարկեցին: Իհարկե, նրանք կխանգարեին մեր փոխադրմանը, բայց քանի որ «Արարատը» բարձրագույն խմբում էր, իսկ «Ցեմենտը»՝ երկրորդ, ասլա օրերը մեր կողմն էր, և մենք դարձանք «Արարատի» խաղացողներ:

Դա 1966 թվականն էր: Սկզբում ես ապրում էի «Արմենիա» հյուրանոցում, հետո տեղափոխվեցի «Երևան» հյուրանոցը: Խաղում էի կիսապաշտպանության գծում: Սեզոնը չսկսած, ես մասնակցեցի Դոնեցկի «Շախտյոր», Լեհաստանի «Գուրնիկ», «Արարատի» հիմնական ու փոխարինող կազմերի մրցաշարին:

### ԿՐԿԻՆ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

1966—1967 թթ. սեզոնի ավարտվելուց հետո ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նախագահ Մուշեղ Օհանջանյանի հրավերով տեղափոխվեցի Ստեփանակերտ: Ուզում էի ամուսնանալ: Հարսնացու ունեի այնտեղ և չէի կարող նրանից հեռու մնալ: Բացի այդ, շատ կապված էի Ղարաբաղի հետ, սիրում էի

Արցախ աշխարհը, նրա կանաչ լեռներն ու ձորերը, նրա հյուրասեր և հպարտ բնակիչներին՝ իմ հայրենակիցներին: Ծնողներս դարաբաղցիներ էին՝ հայրս Մարտունու շրջանի Կաղարծի, մայրս՝ Աշան գյուղից էր: Երբ ընդունվում էի ֆիզկուլտ ինստիտուտ, հայոց լեզվի քննության ժամանակ «Իմ հայրենի բնությունը» թեմայով շարադրություն հանձնարարեցին: Ես գրեցի «Լարաբաղի մասին և «լավ» գնահատական ստացա:

Մինչև Հեղափոխության քարտուղար ընտրվելը, «Լարաբաղի բոլոր ղեկավար պաշտոնյաները հայեր էին, որոնք մտածում էին երկրի ու ժողովրդի մասին: Մարզխորհրդի նախագահ Մուշեղ Օհանջանյանի ու Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Կուրաբ Քոչարյանի նախաձեռնությամբ կառուցվեց քաղաքի ստադիոնը, որին տրվեց Ստեփան Ծահույանի անունը: Կ. Քոչարյանն ամեն ձևով օգնում էր շինարարներին: Նա նույնիսկ նրանց համար ուտելիք էր բերում, ամեն կերպ խրախուսում և օժանդակում նրանց:

1957 թ. սկսած ութքով շատ եմ շրջել «Լարաբաղում»: Այդ տարի դասընկերներինս հետ դուրս եկանք Խանլարից և Գետաշենի՝ վրայով եկանք Ծահույան: Տեխնիկումում սովորելու ժամանակ հինգ անգամ բարձրացել եմ Քիրս տարի գագաթը, երկու անգամ՝ Մոռվի գագաթը: Եղել եմ համարյա բոլոր բնակավայրերում, շրջել անտառներում, անցել եմ բոլոր հարթավայրերով, այցելել պատմական ու ճարտարապետական հուշարձանները: Հետագայում՝ ազատագրական պատերազմի ժամանակ, տեղանքի ծանոթությունը ինձ համար չափազանց օգտակար եղավ:

1966 թ. ամուսնացա ստեփանակերտցի Ասյա Պողոսյանի հետ: Մենք ծանոթացել էինք դրանից մի քանի տարի առաջ, երբ ես խաղում էի «Լարաբաղի հավաքական» թիմի կազմում: Մեկ տարի անց ծնվեց մեր առաջնեկը, որը աղջիկ էր և որին սովեցինք Գայանե անունը: Հետո ունեցանք էլի մի աղջիկ՝ Լիանան և մի տղա՝ Գագիկը: Բոլորն էլ ամուսնացել են: Տղաս՝ Գագիկը, իմ չոկատի կազմում մասնակցել է կոնվներին: Այժմ ծառայում է «Լարաբաղի պաշտպանական» բանակում որպես սարս՝ ավանդ լեյտենանտ:

Դստնայով Ստեփանակերտի «Լարաբաղ» ֆուտբոլային թիմի խաղացող մարզիչը՝ սկսեցի մեր երիտասարդ խաղացողներին փոխանցել այն ամենը, ինչ սովորել էի զինվորական թիմում, «Ցեմենտում» և Երևանի «Արարատում»: Տղաների խաղի որակը գնալով լավանում էր: Ստեփանակերտի ֆուտբոլասերները, ԼՂԽ-ի ղեկավարությունը խրախուսում էին մեզ, ամեն ձևով օժանդակում: Մենք բոլոր տվյալներն ունեինք հաղթող դուրս գալու Ադրբեջանի առաջնության մեջ: Բայց այդ հանրապետության ղեկավարությունն անում էր ամեն ինչ, որ «Լարաբաղ» թիմը չդառնա չեմպիոն: Թիմը լավ էր խաղում. հուսալի պաշտպանություն ուներ և շատ ուժեղ հարձակվողներ:

Երբ ես եկա Ստեփանակերտ, «Լարաբաղը» ընթացում էր 11-րդ տեղում: Որոշեցինք ուժեղացնել մեր խաղը և ըստացվեց: Խաղընկերներինս օգնությամբ ամեն խաղի ես 2 կամ 3 գոլ էի խփում: Մի անգամ Ադրբեջանի «Շահդադ» թիմին հաղթեցինք 11:0 հաշվով: Հաջորդ տարի մեր թիմը երրորդ տեղում էր: 1977 թ. բոլոր տվյալներն ունեինք հաղթող դառնալու Ադրբեջանի ֆուտբոլի առաջնության խաղերում: Խաղից առաջ կամ ընթացքում իմանում էինք, որ թիմերը և դասավորները հանձնարարություն են ստացել՝ ոչ մի գնով թույլ չտալ, որ հայկական թիմը միավորներ վաստակի: Այդ մասին գիտեին հակառակորդ թիմերի մարզիչներն ու խաղացողները, նրանք անպատիժ կոպտություն էին անում, խաղի ժամանակ կեղտոտ հայհոյանքներ տալիս մեզ, սպառնում մեր ֆուտբոլիստներին, հատկապես հարձակվողներին ու դարպասասպահին: Այդ պայմաններում շատ դժվար էր խաղալ, անավել ևս միավորներ հավաքել՝ հատկապես դրսում, մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված հազարավոր թուրք ֆուտբոլասերների առջև:

Բայց տղաները կարծես նոր ուժ էին ստացել դրանից և խաղում էին ուշք չդարձնելով աստելությունից եռացող ու վիթոբկվող տրիբունաների վրա: Նրանք պատժում էին նրանց իրենց սրբնթաց անցումներով ու համարձակ խաղով, իսկ երբ գոլ էին խփում և տրիբունաները պապանձվում

էին, ապա մեզ համար դա նոր ոգևորութեան աղբյուր էր դառնում: Մեր տղաները հոգեբանական մեծ փորձությունների դիմացան և ապացուցեցին, որ արժանի են հաղթող լինելու: Մերոնց ոգևորում էր նախ և առաջ դարաբաղցիների սերը և շահագրգռվածությունը: Պետք էր ապացուցել, որ մենք ճիշտ է քիչ ենք թվով, բայց կարող ենք հաղթել: Մեր հաղթանակի արժեքը շատ մեծ եղավ, մենք հաղթող դուրս եկանք ոչ միայն աղբբեջանական թիմերի, այլև հանդիսատեսների և աղբբեջանական սպորտային, և ոչ միայն սպորտային ղեկավարության նկատմամբ: Այդպես տրամադրված ամեն անգամ դաշտ էինք դուրս գալիս և հաղթանակած վերադառնում հանգստի սենյակ:

Բացի այդ, կար նաև այլ շահագրգռող հանգամանք: Եթե գրավելինք առաջին տեղը, ապա դուրս կգալինք համամիութենական ֆուտբոլի մրցումների երկրորդ խումբ և կազատվելինք աղբբեջանական թիմերի հետ խաղալու տիան պարտականությունից: Այդ երկրորդ խմբում, ճիշտ է կալին մի քանի ազերիական թիմեր, բայց դա Աղբբեջանի առաջնություն չէր և դատավորները լինելու էին ոչ թուրքեր:

Երբ առաջնության ավարտին մնացել էր 6 խաղ, մենք առաջին տեղում էինք: Մնացած խաղերից երեքն անց էինք կացնելու Ստեփանակերտում, իսկ մյուսները՝ Կիրովաբադում, Բաքվում և Սումգայիթում:

Կիրովաբադի «Քյախազ» թիմի հետ հանդիպումից առաջ իմացանք, որ Աղբբեջանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Մուսաևը զանգահարել է այդ թիմի ղեկավարությանը և կարգադրել, որ անպայման հաղթեն «Ղարաբադին»:

Կիրովաբադում ինձ լավ էին ճանաչում: Այնտեղից էի և խաղացել էի այդ քաղաքի հավաքականի կազմում: «Քյախազ» թիմում կային երկու հայ ֆուտբոլիստներ, որոնք խաղից առաջ ինձ հրավիրեցին ռեստորան: Կանչել էին նաև իրենց մարզիչներին: Ես առաջարկեցի ոչ ոքի խաղալ, բայց գլխավոր մարզիչն անկեղծորեն առաց, որ իրեն զանգ են տվել Բաքվից և պահանջել անպայման հաղթել «Ղարաբադին»: Ես առաջարկեցի դիմել դատավորներին և խնդրել, որ նրանք ազնվորեն դատեն խաղը, ով կհաղթի, թող հաղթանակը նրանը լինի: Համաձայնվեցինք ու գնացինք գլխավոր

դատավորի մոտ: Ասացինք, որ երկու մարզիչներս էլ խընդրում ենք անաչառորեն դատել խաղը: Դատավորը, որ Նախիջևանից էր, ազգանունը Ֆարգալին, պատասխանեց, թե ինչը պետք է «Քյախազի» օգտին դատի խաղը, քանի որ Բաքվից այդպիսի կարգադրություն է ստացել, բայց քանի որ երկու մարզիչներն իրար հետ համաձայնության են եկել, ապա իր համար ավելի հեշտ կլինի ազնվորեն դատելը, քան կողմնապահություն անելը: Նրան ստացի, որ եթե արդար դատի խաղը, ապա անկախ նրա ելքից, թեկուզ մենք պարտվենք, իրեն կտանք 10 լիտր կոնյակ և 10 լիտր գինի:

Խաղից առաջ տղաներին ցուցում տվեցի ընտրել պաշտպանական տարբերակը, գոլ բաց չթողնել և կոպտություններ չանել: Որոշեցինք սկզբում գոլ չխփել: Պետք է ասեմ, որ դատավորը արդար էր դատում և կողմնապահություն չարեց: Երբ խաղի ավարտին մնացել էր 20 րոպե, ես, որ խաղացող մարզիչ էի, դաշտ մտա: Հաշիվը դեռ չէր բացված: Մնացել էր 5 րոպե, երբ դատավորը մեր օգտին տուգանային հարված նշանակեց: Ես ուժեղ հարված կատարեցի, և գնդակը հայտնվեց դարպասում: Հաշիվը դարձավ 1 : 0 հօգուտ մեզ: Այդ ժամանակ կիրովաբադցիների մարզիչը մոտեցավ դատավորին և պահանջեց մեր դարպասին նշանակել 11-մետրանոց հարված: Դատավորը մոտեցավ ինձ և ասաց, թե թույլ տվեք 11 մետրանոց հարված նշանակեմ հօգուտ «Քյախազի»: Ես պատասխանեցի, որ համաձայն եմ, բայց դա պետք է լինի խաղի ավարտից 1 րոպե առաջ: Հետո տղաներին ասացի, որ կոպտություն անեն մեր տուգանային հրապարակում: Նրանք դա շատ հեշտությամբ արեցին, և դատավորը նշանակեց պենալտի: Կիրովաբադի ֆուտբոլիստը հարվածեց, բայց մեր դարպասաբանը ճարպիկ թռիչքով բռնեց գնդակը: Ստադիոնում մեծ աղմուկ ունկավ, լավում էին վաղրենի բացականչություններ, սպառնալիքներ: Խաղն ավարտվեց 1:0 հաշվով հօգուտ «Ղարաբադի»:

Վերջում դիմեցի «Քյախազի» մարզիչին, թե նա մեզանից ոն չի՞ նեղացել:— Ոչ,— պատասխանեց նա,— բայց ես Բաքվին ի՞նչ պատասխան պետք է տամ:

Մենք 7 միավորով առաջ անցանք երկրորդ տեղում ըն-



թացող թիմից և չեմպիոն դառնալու մեր հնարավորությունները շատ մեծացան:

Ստեփանակերտում խաղում էինք Լենքորանի «Խազար» թիմի հետ: Լենքորանի կուս. շրջկոմի առաջին քարտուղարը մոլի ֆուտբոլասեր էր և հովանավորում էր իրենց թիմին: Պետք է ասեմ, որ մեր մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը պակաս ֆուտբոլասեր չէր և մշտապես օգնում էր «Ղարաբաղին»: Եթե լենքորանցիները մեզ տանեին, ապա կգրավեին երկրորդ տեղը: «Խազարի» ղեկավարները (մարզիչն էր Խավիս Ասադովը) խաղից առաջ եկան ինձ մոտ և խնդրում էին, որ խաղն իրենց տանք, այսինքն պարտվենք: Նրանք բերել էին 10 կգ ձկան խավիար, ձուկ և փող: Դատավորը նույն Ֆարգալինն էր, նա էլ էր խնդրում, որ խաղը տանույ տանք: Նրանք խնդրեցին իրենց թույլ տալ խոսելու մեր ֆուտբոլիստների հետ: Ես համաձայնվեցի: Նրանք սկսեցին բանակցել մեր թիմի մի պաշտպանի և դարսպասպանի հետ:

Խաղի սկզբում չդիտահալով մեր հարձակվողների ճնշմանը՝ լենքորանցիները մի գոլ բաց թողեցին: Հետո ես տեսա, որ մեր պաշտպանը, որի հետ պայմանավորվել էին «Խազարի» ղեկավարները, դիտմամբ սխալ թույլ տվեց, հակառակորդի պաշտպանն առաջ անցավ և հարված կատարեց: Դարսպասպանը չբռնեց գնդակը և այն հալտնվեց դարսպասուս 1:1: Ես անմիջապես փոխեցի պաշտպանին և դարսպասպանին: Մենք հաղթեցինք 5:1 հաշվով:

Չեմ ուզում հիշել այն բոլոր անարդարությունները, որ թույլ էին տալիս դատավորները մեր խաղերը դատելիս (հատկապես օտար դաշտերում) կամ այն բացստիկ կոպտություններն ու արգելված հնարները, որ կիրառում էին մեր դեմ թուրքական թիմերը: Ադրոհանդերձ, մենք կարողացանք հաղթահարել այդ ամենը և «Ղարաբաղը» դարձավ Ադրբեջանի չեմպիոն: Ըստ կանոնների, մեր թիմը պետք է մտներ ԽՍՀՄ առաջնության երկրորդ լիգայի մեջ, բայց տեղի ունեցավ մեծ անարդարություն: Երկրորդ լիգայի մեջ մտցվեց առաջնությունում երրորդ տեղը գրաված Լենքորանի «Խազարը»: Դժվար չէ պատկերացնել մեր խաղացողների և հազարավոր ֆուտբոլասերների զայրույթն ու վրոպմունքը:

Ֆուտբոլից շատ հեռու կանգնած մարդիկ բողոքում էին այդ անարդարության դեմ: Գործին խառնվեց Բ. Կևորկովը: Նա բողոքեց Հ. Ալիևին և վերջինիս միջամտությամբ ԽՍՀՄ ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի նախագահ Տյամելիկովը «Ղարաբաղ» թիմը ևս մտցրեց երկրորդ լիգայի մեջ:

## ԱՆԱԿՆԿԱԿ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՆԱԽԻՋԵՎԱՆՈՒՄ

Սամեղ անունով ադրբեջանցի մի ընկեր ունեի Նախիջևնվանում: Միսսին ծառայել էինք բանակում, միսսին ֆուտբոլ խաղացել: Երբ գնում էինք Նախիջևան ֆուտբոլային հանդիպումների տեղի թիմի հետ, Սամեղն ինձ հրավիրում էր իրենց տուն, բայց չգիտեմ ինչու, չէի գնում: 1977 թ. ֆուտբոլի առաջնության խաղ ունեինք Նախիջևանի «Արագ» թիմի հետ: Սամեղը կրկին ինձ հրավիրեց իրենց տուն և առաջ, որ իր տատը շատ է ուզում ինձ տեսնել: Ինքը շատ է պատմել իմ մասին և անա տատիկն էլ ուզում է անպայման հանդիպել ինձ հետ:

Երկնոյան Սամեղի հետ գնացի նրանց տուն: Նա ծանոթացրեց իր ծնողների և եղբոր հետ: Հետո մտանք տատի տեղակը: Տարիքով կին էր, գլխին միայն գլխաշոր ուներ, երեսը բաց էր: Նստած գուլպա էր գործում:

Երբ մոտեցա նրան և ձեռքս կրկարեցի բարեկ համար, նա հանկարծ բռնեց ու համբուրեց ձեռքս: Դա անակնկալ էր ինձ համար և ես մի պահ շփթվեցի: Ինչո՞ւ պետք է այդ տարիքով կինը համբուրեր ձեռքս: Ադրբեջանական կանայք և հատկապես իր բարբերով խիստ հեռամեաց Նախիջևանի բնակչուհիները սովորաբար շատ զուսպ են տղամարդկանց ներկայությամբ, ազատ չեն զգում իրենց և աշխատում են շատ չերևալ նրանց աչքին, իսկ հյուրերի ներկայությամբ առավել ևս: Իսկ այս տարեց կինը, որ առաջին անգամ է ինձ տեսնում, առանց այլապության համբուրում է ձեռքս... Անհարմար դրության մեջ էի և չգիտեի անելիքս:

Այդ անսովոր վիճակից ինձ հանեց Սամեղը, որն ասաց.

— Դուք մի քիչ գրույց արեք, ես գնամ խորովածը պատրաստեմ:

Նայում էի այդ տարեց կնոջը և ինչ-որ հարազատ-բուն էի զգում նրա դիմագծերում: Երևում է, որ ջահել ժամանակ շատ գեղեցիկ է եղել: Զգում էի, որ նա շատ հուզված է և մեծ ցանկություն ունի բացատրելու, ասելու իր հոգում կուտակվածը, հարմուկելու մի կարևոր գաղտնիք, որն անհայտ է շրջապատի մարդկանց:

Նա ինձ ադրբեջաներեն հարցրեց, թե որտեղացի եմ, ամուսնացա՞ծ եմ, ունե՞ւի երեխաներ և այլն: Ես պատասխանեցի նրան: Երբ սպառնեցի նա այդ բնույթի հարցերը, նա նայեց երեսիս և ասաց, որ ինքը հայ է...

Այնքան էլ չզարմացա, որովհետև նրա դիմագծերը հուշկական էին և նա ամենևին նման չէր թրքուհու: Բացի այդ, ինձ անբարյան տեսնելու նրա մեծ ցանկությունը և ողջագործման մտերմիկ ու ջերմ եղանակը արդեն կասկածներ էին արթնացրել մեջս և ես զգում էի, որ ագետների այդ ընտանիքում համդիպում եմ արչունակցիս հետ:

Նա պատմեց իր մասին. 1905 թ. թորքերը հարձակվել են իրենց գյուղի վրա: Ավերել ու հրկիզել են տները: Ժողովուրդը սկսել է փախչել: Ինքն այն ժամանակ 12 տարեկան է եղել: Սամեդի պապը եկել է և ձիով իրեն տարել իրենց տուն: Փրկել՞ է, թե փախցրել է, դժվարամուս էր ասել: Ութ տարի պահել է, և երբ նա քսան տարեկան է դարձել, ամուսնացել է հետը: Մինչ այդ նա շատ է փնտրել հարազատներին, բայց ոչ մեկին չի գտել: Իսկ երբ երեխաներ է ունեցել, այնու չի փնտրել: Ամուսինը միշտ ամել է նրան, որ հայերը լավ ժողովուրդ են, բայց ավելի լավը կլինեին, եթե մահմեդականություն ընդունեին:

Սամեդը չգիտեր, որ իր տատը հայ է, բայց հայրն իմացել է: Երբ խոսք է եղել հայերի մասին, տատը միշտ լավ է արտահայտվել: Թոռները նրան ասելիս են եղել, թե կարծես նա էլ հայ է, որ հայերի մասին այդպես լավ է խոսում:

Նա հիշում էր մի քանի հայերեն բառեր՝ հաց, ջուր, հարս: Վերջում նա խնդրեց, որ Սամեդին ոչինչ չասեն: Ես խոստացա: Ծաշելիս նա չմիացավ մեզ, իսկ երբ մեկնում էի, կրկին վերցրեց ձեռքս և համբուրեց:

Սամեդի հետ զնում էինք փողոցով և խոսում ֆուտբոլի

մասին: Հանկարծ ի միջի այլոց, ես ասացի նրան, որ տատը շատ նման է հայի: Նա ասաց, որ բոլորն են այդպես ասում, բայց նա ադրբեջանուհի է: Ի դեպ, թե Սամեդը և թե՛ նրա հայրը շատ քիչ էին նման թորքի: Նրանց դիմագծերը և զվի ձևը հայկական էին:

Անցել են տարիներ, բայց միշտ ես հիշում եմ այդ կնոջ գեղեցիկ ու տխուր աչքերը: Նա համբուրում էր ձեռքս, արտահայտելու իր մեծ կարոտը հարազատ ժողովրդի նկատմամբ, որից հավիտենապես բաժանված էր: Կա՞ր ավելի մեծ դժբախտություն մարդու համար: Նախիջևանի ճակատագիրն էլ նման է եղել այդ խեղճ կնոջ ճակատագրին: Մեր հինգ վուրց պարսեմական հողը խլվեց մեզանից և օտարացվեց, իսկ բնիկ ժողովուրդը բունեց գաղթի ճամփան: Նույնն էր սպասվում նաև Ղարաբաղին, եթե մենք պայքարի դուրս չգալինք ադրբեջանցի գաղութարարների դեմ: Մենք կուլում էինք, որ մեր երեխաներն ու թոռները չհայտնվեին Սամեդի տատի թշվառ փնձակում:

## ԾԱՆՐ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ազգային ճնշումն ուժեղանում էր: Դա զգացվում էր կյանքի բոլոր բնագավառներում: Ղարաբաղի ինքնավարությունը ձևական բնույթ էր ստացել: Ամեն ինչ որոշում էր Բաքվի նստած ադրբեջանական ղեկավարությունը, որի նրպատակն էր Նախիջևանի պես հարաթափ անել նաև Լեռնային Ղարաբաղը: Ղարաբաղի նկատմամբ ագետները տանում էին գաղութային քաղաքականություն: Իրականացվում էր երկրի հարստությունների պետական թալանը: Ղարաբաղում զարգացած էր անասնապահությունը, բայց մարդիկ երբևէն զուրկ էին մնում կաթից ու մսից: Արտադրված մսի 65 տոկոսը և կաթի 57 տոկոսը տարվում էր Ադրբեջան: Դա այն դեպքում, երբ Ղարաբաղում ամեն անձի ավելի քիչ մյս ու կաթ էր հասնում, քան Ադրբեջանում: Անասնապահության զարգացման համար անհրաժեշտ էր արհեստական կեր: Քսան տարի շարունակ այդ ուղղությամբ աշխատանք

էր արվում: Առաջ էր բաշվել արհեստական կերտի գործարան կառուցելու հարցը, ի վերջո որոշվեց կառուցել դա ոչ թե Ղարաբաղում, այլ Նախիջևանում, որտեղ արհեստական կերտի պահանջը կրկնակի անգամ քիչ էր: Կոլտնտեսություններն ու սովխոզները նշտական ավելցուկներ չէին ունենում, ամեն ինչ նրանցից տանում էին: Նրանք պարոտերի տակ էին բնկել, որոնց գումարվում էին տուգանքները: Վատ էր մեքենայացման վիճակը: Մարզը խիստ կարիք ուներ տրակտորների, բեռնատար ավտոմեքենաների և դրանց պահեստամասերի, բայց չէր ստանում:

Թույլ էր զարգացած արդյունաբերությունը: Քիչ էին գործարանները, եղածները մարզին այնքան էլ օգուտ չէին բերում: Մետաքսի կոմբինատը չուներ ներկման ցեխ: Դա գտնվում էր Ադրբեջանում և մետաքսը չնչին գնով տարվում էր այնտեղ և ներկվելուց հետո բարձր գներով վաճառվում, որպես ադրբեջանական ապրանք: Նույն ձևով էին վարվում կոնյակի հետ: Կոնյակը շշերի մեջ լցման ցեխը մարզի սահմաններից դուրս էր: Կոշիկի գործարանը որպես կանոն մըշտապես անորակ կաշի էր ստանում և դա, բնականաբար, ազդում էր արտադրանքի որակի վրա:

Ղարաբաղում կար ընդամենը մեկ շինարարական տրեստ (№ 9), որն ամենափոքրն էր Ադրբեջանում: Բնակարանների, դպրոցների, հիվանդանոցների և այլ շինությունների կառուցման պլանները չէին կատարվում: Տրեստը ճանապարհաշինարարական մեքենաներ չէր ստանում: Եղածների 50 տոկոսն արդեն շարքից դուրս էր եկել: Որպես կանոն, ճանապարհները շատ վատ վիճակում էին, բայց միջոցներ ու տեխնիկա չկար նորոգելու և նորերը կառուցելու համար: Ադրբեջանցիներն այնպես էին անցկացրել ճանապարհները, որ տեղից տեղ գնալու համար մեծ մասամբ պետք է անցնեիր ադրբեջանական տարածքով: Օրինակ, Մարտակերտի և Մարտունու շրջաններ կարելի էր գնալ միայն Ադդամի վրայով, իսկ Հադրութի շրջանի ճանապարհն անցնում էր Ադդամի ու Ֆիզուլու վրայով: Լաչինից Գորիս տանող ճանապարհը երբեք չէր նորոգվում: Կասրը Հայաստանի հետ շատ վատ էր, և դա արվում էր Ղարաբաղը Հայաստանից



Մալրիկիս ու Զարմիկի հետ բանտից ազատվելուց հետո



Հայրս՝ Արշակ Պետրոսյանը (1907—1985)



Ադրբեջանի չեմպիոն «Կարաբաղ» թիմը (1977 թ.)



Ադղամցիների հարձակումը կասեցվում է (1988 թ. փետրվար)

լիովին կտրելու նպատակով: Մարզը խիստ կարիք ուներ նաև ավտոբուսներին:

Հիշում եմ, որ մի ժամանակ Ղարաբաղի մի քանի շրջաններում՝ Մարտունիում, Սակերանում, Մարտակերտում և Հաղորթում ուզում էին բացել կենցաղի տներ, բայց թույլ չտվեցին, իսկ Շուշիում, որտեղ ազերիները մեծամասնություն էին կազմում, կառուցեցին այնպիսի կենցաղի տուն, որն ուներ 100 բանվորական տեղ: Այդքան աշխատողներ չկային այնտեղ և ներդրված գումարներն իզուր վատնվեցին:

Շատ վատ էր ստողջապահության դրվածքը: Մարզի դեկավարությունը գրկված էր բժիշկներ և նույնիսկ կրտսեր բուժաշխատողներ աշխատանքի նշանակելու իրավունքից: Ամեն տարի Ադրբեջանի ստողջապահության մինիստրությունը 60—70 բուժաշխատողներ էր ուղարկում Ղարաբաղ: Հաղորթի շրջանի 12 000 հայ բնակչության և 2000 ադրբեջանցիների համար կային 26 բժիշկներ, որոնցից 15-ը ադրբեջանցիներ էին: Վերջիններս, որպես կանոն, չունեին բարձր որակավորում, բացի այդ, նրանցից ոմանք ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն չգիտեին և չէին կարողանում բացատրվել հիվանդների հետ:

Մարզում գործում էին 28 դեղատներ: Բոլոր դեղագործները հայեր էին, բայց դեղատների մեծ մասի (15-ի) վարիչները՝ ադրբեջանցիներ: Դեղատնային վարչության պետն ադրբեջանցի էր և պատահական չէ, որ մարզում մշտապես զգացվում էր դեղորայքի մեծ պակաս: Երբ մարդիկ լրջորեն հիվանդանում էին, ապա բուժվելու համար Հայաստան էին մեկնում:

Մարզի բնակչության համար խիստ վիրավորական էր Ստեփանակերտի հայկական դրամատիկական թատրոնի նակատից «հայկական» բառը հանելը, որն արվեց Ադրբեջանի դեկավարության պահանջով: Թատրոնում արգելված էր հայկական հայրենասիրական պիեսների բեմադրությունը: Երբեմն բեմ էին հանվում ադրբեջանական հեղինակների գրած խեղճ ու կրակ, պարզունակ գործերը: Ադրբեջանի կուլտուրայի մինիստրությունը արգելք էր դրել Ղարաբաղում հայկական պատմական-հայրենասիրական բնույթի ֆիլմերի ցուցադրությունների վրա:

Տարեցտարի պակասում էր Ղարաբաղի դպրոցների թիվը: Մեկը մյուսի ետևից, տարբեր պատճառներով փակվում էին դպրոցները, իսկ եղածներն էլ խղճով վիճակում էին, շատերը գուրկ էին տարրական հարմարություններից: Ցածր էր ուսուցիչների վարձատրությունը: Եթե մինչև 1988 թվականը փակվել էին 46 դպրոցներ, ապա սպասվում էր, որ մոտավա ժամանակներում կփակվեին դրանից ավելի շատ:

Ղարաբաղի հայկական և ռուսական դպրոցներում պարտադիր կերպով անցնում էին ադրբեջաներեն լեզու և Ադրբեջանի պատմություն: Բաքվում հայերեն լեզվով լույս ընծայված Ադրբեջանի պատմության դասագրքերում բացակայում էր Ղարաբաղի պատմությունը: 9—10-րդ դասարանների համար հրատարակված Ադրբեջանի նոր շրջանի պատմության դասագրքի մեջ ոչ մի խոսք չկար Հայրենական մեծ պատերազմին Արցախի զավակների ակտիվ մասնակցության մասին, այն դեպքում, երբ Ղարաբաղը ռազմաճակատ էր ուղարկել իր բնակչության համարյա մեկ երրորդը, տվել էր մարշալներ, գեներալներ և բազմաթիվ հերոսներ:

Երբ Ատևիանակերտում բացվեց մանկավարժական ինստիտուտ, մենք շատ ուրախացանք, բայց պարզվեց, որ դա սովորած էր շատ հեռու գնացող նպատակներով: Առաջին տարում (1987 թ.) ընդունվեցին 450 ուսանողներ և 200 հեռակալուներ: Մեկ տարի անց ուսանողների թիվը անցավ երկու մազարից (2 230), դրանց 35 տոկոսը ադրբեջանցիներ էին: Բաքվից հրավիրվեցին 26 ադրբեջանցի դասախոսներ, որոնք կազմում էին դասախոսների շուրջ 40 տոկոսը: Նրանց անմիջապես ապահովում էին բնակարաններով, որպեսզի մշտապես ապրեին Ստեփանակերտում:

Ազգային խորականությունը դրսևորվում էր նաև հանրապետությունից դուրս ուսանողների ընտրության հարցում: Ամեն տարի Ադրբեջանը 850—900 ուսանող էր ուղարկում ԽՍՀՄ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, բայց դրանց մեջ ոչ մեկը Ղարաբաղից չէր լինում: Դիմումներին պատասխանում էին այսպես. այդ տեղերը տրված են Ադրբեջանի բնիկ ժողովրդի, այսինքն ազերիների համար: Հայերը համարվում էին եկվոր ժողովուրդ:

Թուրքերն աշխատում էին հայերին պահել սոցիալության

մեջ: Ղարաբաղում չկար հայերեն լեզվով գրքերի հրատարակչություն: Արգելվում էր հայերեն գրքերի ստացումը Հայաստանից: Երբ Հայաստանում հրատարակված դասագրքեր էին ստացվում, թուրքերը պայման էին դնում, թե որքան հայերեն դասագրքեր պետք է բերվեն Ադրբեջան, որքան ադրբեջանական դասագրքեր էին ուղարկվում Հայաստանում բնակվող ազերիների համար: Նրանք չէին ուզում հաշվի առնել այն, որ Հայաստանում ապրող ադրբեջանցիները 200 000 էին, իսկ Ադրբեջանում ապրող հայերը՝ 500 000-ից ավելի:

Ադրբեջանի ղեկավարությունը թույլ չէր տալիս, որ Ղարաբաղում կառուցվեին ակումբներ, գրադարաններ, պիոներական տրամբներ, սարսուռային դահլիճներ: Երևանի ուղիղն Ղարաբաղում չէր չափում, հայկական հեռուստատեսության ծրագիրը հեռարձակելն արգելված էր: Ղարաբաղի տարածքում եղած հայկական հուշարձանների պահպանության ուղղությամբ ոչինչ չէր արվում: Միայն մեկ եկեղեցի նորոգվեց՝ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին և նորոգողը Հայաստանից եկած մի հրաշալի վարպետ էր:

Մեր երկիրը նվաճելու և հայերին վերջնականապես դուրս բջիլու համար ադրբեջանցի գիտնականները արցախահայերին սկսեցին համարել քրիստոնյա սովյալներ, իսկ իրենց նախնիների՝ մահմեդականությունն ընդունած ազվալներ: Մեր հայրական խաչքարն սկսեցին անվանել «խաչդաշ»: Շուշիում եղած հայկական տներն ու հասարակական շինությունները նորոգում էին մուսուլմանական ոճով և ներկայացնում որպես ադրբեջանական հուշարձաններ: Ֆիզուլի բաղաբի մոտ եղած հայկական հիմնախորց եկեղեցու վրա բուլդոզերներով հող էին կոտակել՝ առաջացնելով մի փոքրիկ հողէ բլուր, որի վրա ռուսերեն գրել էին «Փառք ՍՄԿԿ»-ին:

Ղարաբաղիների անձնագրերի մեջ չէր նշվում Լեռնային Ղարաբաղը, գերքերի ու կնիքների վրայից ջնջել էին տվել հայերեն գրությունները: Հրավիրատոմսերը տպագրվում էին միայն ադրբեջաներեն և ռուսերեն:

Թուրք ազգայնամոլների դրածո, ԼԿԻՄ-ի կենտրոնի առաջին քարտուղար Բորիս Կեռքերովը նատուկ հանձնարարություն էր ստացել ամեն կերպ 'Կարաբաղի հայերին կտրել Հայաստանից: Տուրքիստանյան ուղևորություններն ու էքսկուրսիաները դեպի Հայաստան խստիվ արգելված էին: Նրա կարգադրությամբ Ղարաբաղում աշխատանքի չէին ընդունվում Երևան ուսման գնացած և վերադարձած երիտասարդները: Մշտապես հայաձվում էին մտավորականները, որոնք մեկը մյուսի ետևից հարկադրված էին լինում հեռանալ Ղարաբաղից:

Եվ այսպես, մեր սիրելի լեռնաշխարհն ատրիճանաբար գրկվում էր իր բեկի ժողովրդից: Հայերի փոխարեն Ղարաբաղ էին լցվում թուրք գյուղացիներ, որոնք աճում էին զարմանալի արագությամբ: Եվս մի քանի տասնամյակ, և Ղարաբաղը կգրկվեր հայ բնակչությունից: Դիմանալ այլևս չէր կարելի, և ժողովուրդը, օգտվելով գոյքաշույլյան ազատություններից, ոգևորված այն բանից, որ ուղղվում են ժողովուրդների մեծ դահլիճ Ստալինի սխալները, ոտքի կանգնեց փրկելու համար իր հայրենիքը անխուսափելի կործանումից:

### ԻՆՔՆՍՏՐՍՍՍՍՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

1967 թ. ամռանը տեղի ունեցած մի դեպք ավելի շիկացրեց մթնոլորտը: Դա Ստեփանակերտում ազերի մարդասպանների դատալարությունն էր, որից հետո դատավճռից դժգոհ հայերը ինքնադատատան տեսակ մարդասպանների նկատմամբ:

Մարտունու շրջանի Կուրոպատկինո գյուղի մոտ տեղծվել էր մի սովխոզ, որտեղ աշխատում էին նաև Բերդաշենի (նախկին ակունք՝ Լզդալա) հայ գյուղացիները: Սովխոզի դիրեկտորը հայ էր՝ Բենիկ անունով մի ազնիվ մարդ: Սովխոզում աշխատող թուրքերն անընդհատ գողություններ էին անում, իսկ դիրեկտորը, բնակամաքար, թույլ չէր տալիս: Եվ ահա դիրեկտորից վրեժ լուծելու համար թուրքերը որոշում եմ սպանել նրա 10-ամյա տղային: Սպանությունը կատարվել էր ամենավայրագ ձևով, երեխային խոշտանգել էին

և հետո այլանդակելով դիակը՝ գցել մի փոսի մեջ: Սպանությանը ականատես էր եղել մի մարդ և նրա օգնությամբ բացահայտվեցին ոճրագործները: Չեքրակալվեց մարդասպանը, ոյը դպրոցի դիրեկտոր էր, ակունք՝ Աշադ, նրան օգնել էր իր վարորդը և էլի մի հոգի:

Թուրք մարդասպանների դատը եղավ Ստեփանակերտում: Ժողովուրդը պահանջում էր մահվան պատիժ տալ ոճրագործներին, բայց Բաքվից բերված դատավորները մարդասպաններին դատաւարտեցին 15 տարվա ազատագրկման:

Պետական վերջին ճիստը տեղի ունեցավ 1967 թ. հունիսի 3-ին, ամառային կինոթատրոնում: Ահապոր աճարդարությունը ավերից հանել էր ծայր աստիճան հուզված մարդկանց: Նրանք սկսեցին քարկոծել դատավորներին: Հետո հարձակվեցին ոճրագործների վրա:

Պահապան խմբի հրամանատարը, որը մի հայ սպա էր, մի քանի անգամ նախազգուշացնելու համար կրակեց վերև: Բայց ոչ ոք ետ չկանգնեց, հետո նա հրամայեց զինվորներին կրակել գետնին: Գնդակների ոհկոշետից ավելի քան 10 մարդ վիրավորվեց: Դա ավելի զայրացրեց ժողովրդին: Հրոշեջ խումբ կանչեցին: Այդ ժամանակ ոճրագործներին մտցրել էին փակ մեքենան: Մարդիկ հարձակվեցին մեքենայի վրա, շուտ տվեցին, բեկզին լցրեցին ու վառեցին: Հրոշեցներն ուզեցին հանգցնել վատրող մեքենան, բայց հայերը դանակներով կտրատեցին ջրի խողովակները և թույլ չտվեցին փրկել ոճրագործներին, որոնք բոլորը այրվեցին մեքենայի մեջ:

Ժողովրդի ձեռքով կատարված այդ ինքնադատատանը շատ թանկ նստեց մեզ վրա: Ակալեցին ձեքրակալություններ: Մի քանի հարյուր մարդու հարցաքննության համար տարան Բաքու: Տարան նաև ինձ, որովհետև ես էլ հարձակվողների մեջ էի: Ինձ հարցաքննում էին Պետական անվտանգության կոմիտեում, բայց ոչինչ չկարողացան սուսացուցել, իսկ վկայություն տվողներ չգտնվեցին: Ես ազատ արձակվեցի, բայց հայերից շատերը տուժեցին: Սպանված երեխայի հարը դատաւարտվեց 10 տարվա ազատագրկման, երկու հոգի ստացան 15-ական տարվա բանտարկություն,

իսկ 15—20 հայեր տարբեր պատրվակներով ոչնչացվեցին: Այդ գործը կազմակերպել էր Ադրբեջանի կոմկուսի երրորդ քարտուղար Ամիրովը:

Դրանից հետո ավելի հաճախակի դարձան հայերի սպանությունները: Իմիջիում սպանվեցին ստեփանակերտցի երկու հայեր, որոնք գնացել էին այնտեղ և աշխատում էին որպես մոնտյորներ:

Այդ դեպքից հետո մահացավ ԼՂԻՄ-ի միլիցիայի պետի տեղակալ Սափադ Աքրահամյանը: Կասկածում էին, որ նրան թուրքերը թունավորել էին: Ստեփանակերտ էին ուղարկվում ադրբեջանցի միլիցիաներներ Բաքվից ու Կիրովաբադից: Մեր միլիցիայի կազմը սկսեց փոխվել:

ԼՂԻՄ-ի Պետական անվտանգության կոմիտեի լիազորը հայ էր՝ Մարգարով ազգանունով: Նրան հեռացրեցին, փոխարենը բերեցին մի ռուս: ՊԱԿ-ի աշխատակիցների մեջ պակասեց հայերի թիվը: Մարգարովի երկրորդ քարտուղար բերեցին քաքվեցի մի ռուսի՝ Վոլոդին ազգանունով: Վերջինս մի անգամ ՊԱԿ-ի նախագահի հետ (ազգանունը Բստրով էր) հարբած գնացել էր Գանձասար: Այնտեղ տեսել էին Վազգեն Առաքին կաթողիկոսի լուսանկարը, որը շրջանակի մեջ կախված էր պատից: Նրանք հանել էին ատրճանակները և սկսել էին կրակել նկարի վրա:

Ժողովուրդը խիստ վիրավորված էր: Բողոքներ ուղարկվեցին ամենուր և Բստրովին հեռացրեցին աշխատանքից, իսկ Վոլոդինը մնաց:

### ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ՍՐՎՈՒՄ Է

Թուրք մարդապան ոճրագործների նկատմամբ ստեփանակերտցիների կատարած ինքնադատաստանը և նրան հաջորդած իշխանությունների վայրագ գործողություններն ավելի սրեցին իրադրությունը Ղարաբաղում:

Երբ ամառային կիճոթատրոնի մոտ ժողովուրդը հարձակվել էր մարդապաններին տանող մեքենայի վրա, Ղարաբաղի մարզգործկոմի լուսավորության բաժնի վարիչի տեղակալ Ալիևը սկսել էր զանգահարել Բադրա, Եվլախ,

Ալդամ և խիստ տագնապալի ձայնով հնչեցրել, թե հայերը թուրքերին կտտորում են, հասեք:

Ալիևի խոսակցությունները լսել էին մեր հեռախոսավարուհիները և հայտնել մեզ: Ուրեմն դեռ այն ժամանակ թուրքերի մեջ տարածվում էր Ղարաբաղի վրա հարձակվելու միտքը: Զգում էինք, որ շրջակա վայրերի ադրբեջանցիներն ի վերջո հարձակվելու են Ղարաբաղի վրա: Թուրքերն ամենին չէին թաքցնում իրենց մտադրությունները, բայց առայժմ նրանք սահմանափակվում էին գողություններով: Ղարաբաղը դարձել էր թալանի վայր: Թուրքերը մտնում էին Ղարաբաղ, մեծ թվով անասուններ գողանում և տանում Լաչինի ու Բերաքսարի շրջանները: Տանում էին կովեր և ոչխարներ:

Միլիցիան, որի կազմում արդեն զգալի թվով ադրբեջանցիներ էին խցկված, ոչինչ չէր կարող կամ չէր ուզում անել այդ զանգվածային գողությունների դեմ: Հարկավոր էր կազմակերպել հայ բնակչությանը, զինել նրանց որսորդական հրացաններով:

Որսորդական միության նախագահի հետ պայմանավորվել էինք, որ Ղարաբաղի համար ձեռք բերի մեծ թվով որսորդական հրացաններ ու զինամթերք և այնպես անի, որ դրանք ընկնեն հայերի ձեռքը: Այդ հարցում մեզ շատ օգնում էր որսորդական միության նախագահի տեղակալ Գարիկ Գրիգորյանը:

Ծուտով ստացվեցին և վաճառվեցին մեծ թվով որսորդական հրացաններ, բայց, դժբախտաբար, նրանց մի մասն ընկավ ադրբեջանցիների ձեռքը: Զենք գնելու համար նրանք ոչ մի ծախսի առջև կանգ չէին առնում, կաշառքներ էին տալիս, այլ վայրերից էին բերում:

Անասնագողությունն այնպիսի մեծ ծավալ ընդունեց, որ մարզկոմի գիտությամբ և միլիցիայի համաձայնությամբ կոլտրնտեսություններին թույլ տրվեց անասնապահական ֆերմաների պաշտպանության համար հրացաններ գնել: Մենք գիտեինք, որ հայերն ունեին նաև մարտական, ինչպես և պորտապիս գնեքեր, որոնք թաքցված էին:

Հ. Ալիևը Ադրբեջանի կոմկուսի ստաջին քարտուղարի իր գործունեությունը սկսեց նրանով, որ ղեկավար պաշտոններ-

րից հեռացրեց բոլոր հայերին: Ով պայքարում էր նրա ապօրինությունների դեմ կամ էլ ուզում էր մնալ պաշտոնում, ձեռքակալվում էր կաշառակերության կամ այլ մեղադրանքով: Բանտերը լցվեցին նահելին դեկավար աշխատողներով:

Գերագույն խորհրդի նախագահ Իսկենդերովը, որը շուշեցի էր, լավ հարաբերությունների մեջ էր հայերի հետ: Նա գնահատում էր հայերի ազնվությունը, աշխատասիրությունն ու գործիմացությունը: Նրա ժամանակ հայերը բարձր պաշտոններ էին ստացել: Հ. Ալիևը հեռացնել տվեց և՛ Իսկենդերովին, և՛ նրա հովանավորությունը վայելող մարդկանց, որոնց թվում քիչ չէր հայերի թիվը: Ղարաբաղում մկեցին հալածել Իսկենդերովի մարդկանց, որոնք լավ հարաբերություններ ունեին հայերի հետ:

Աշխատանքից հեռացվեց Ադրբեջանի գլխավոր դատախազ Մամեդովը: Բնիկ շուշեցի Ջամիլ Սուրխակիչ Բեգրաթովը, որը Ղարաբաղի մարզխորհրդի նախագահի տեղակալն էր, լավ կապեր ուներ հայերի հետ և սիրված էր նրանց կողմից: Ալիևը սրան ևս հեռացրեց աշխատանքից:

Ի դեպ, Ջ. Բեգլարովի որդու ընտանիքը մինչև հիմա էլ սպրում է Ստեփանակերտում: Հայերը լավ են վարվում նրանց հետ: Բեգլարովի որդի Ջամիլը մահացավ վերջերս:

Հալածանքներ սանձազերծվեցին Արցախի մտավորականների դեմ: Ղարաբաղի գրողների միության նախագահ Բազրատ Ուլուբաբյանը հարկադրված եղավ հեռանալ Արցախից: Հետո նա գրեց մի ընդարձակ նամակ, որի մեջ մանրամասն նկարագրել էր հայության դեմ Ղարաբաղում կիրառվող ապօրինություններն ու անարդարությունները: Այդ նամակը ձեռքից ձեռք էր անցնում և հստակ պատկերացում տալիս Ղարաբաղի քաղաքական ծանր կացության վերաբերյալ:

Ղարաբաղից հեռացան նաև այլ մտավորականներ, կուսակցական, խորհրդային աշխատողներ: Ստիպված էին հայրենիքը լքել նաև քաղաքային ու գյուղական բնակչության շատ ներկայացուցիչներ, որոնք ապրելու տարրական պայմաններից զուրկ էին: Մեծ թվով Ղարաբաղցիներ հաստատվում էին Ռուսաստանում (հատկապես Հյուսիսային Կովկասում) և Միջին Ասիայում: Ուսանելու նպատակով

Երևան ու այլ քաղաքներ մեկնած Ղարաբաղցիներն այլևս չէին վերադառնում իրենց ծննդավայրը:

Ռոբիս Կևրկովը թույլ չէր տալիս, որ Հայաստանի բուհերն ավարտած Ղարաբաղցի երիտասարդ մասնագետները աշխատանք գտնեն արցախյան երկրում: Ասեմք, եթե նա ուզեմար էլ չէր կարող մարդկանց աշխատանքի ընդունել: Այդ գործը հանձնարարված էր կենտրոնում գտնվող միմիատրություններին, որտեղ նստած ազգայնամոլ թուրքազերիները անում էին ամեն ինչ Ղարաբաղը Հայաստանից կտրելու, Հայաստանի բուհերի շրջանավարտներին տեղ չտալու և, վերջին հաշվով, Ղարաբաղը հայաթափ անելու համար: Դա վերուստ ծրագրավորած և հետևողականորեն իրականացվող քաղաքականություն էր:

## ԿԱՐԵՎՈՐ ՇՓՈՒՄՆԵՐ ԹԱԼԻՇՆԵՐԻ ՀԵՏ

Ադրբեջանի հարավում, Իրանի սահմանների մոտ ապրող թալիշները, որոնք իրանական ժողովուրդ են, խոսում են պարսկերենի քարբառով, մեզանից ոչ պակաս ենթարկվել են ադրբեջանական ազգայնամոլների հալածանքներին: Նրանց արգելվել է խոսել մայրենի լեզվով, փակվել են նրանց դպրոցները, մտավորականները ոչնչացվել կամ էլ աքսորվել են, իսկ իրենց, որ թվով շուրջ կես միլիոն մարդ են, բոլորին մարդահամարի ժամանակ արձանագրել են ոչ թե թալիշ, այլ ադրբեջանցի:

Ազերի ազգայնամոլները նույն ձևով են վարվել նաև լեզգիների, քրդերի, թաթերի և ազգային այլ փոքրամասնությունների հետ, որոնք կրոնով մահմեդականներ են: Մեր պայքարի սկզբում ազերիները փորձեր կատարեցին Ղարաբաղցիների և իրենց միջև եղած հակամարտությանը տալ կրոնական երանգ, քայց դա նրանց չհաջողվեց, որովհետև ամբողջ աշխարհը համոզվեց, որ մենք պայքարում ենք ոչ թե հավատի, այլ մեր մարդկային տարրական իրավունքների համար, որոնք ոտնահարվում էին ադրբեջանական դեկավարության կողմից: Մենք պայքարում էինք սահմանադրության ընձեռած հնարավորությունների շրջանակներում:



Ազերիներն իրենց հատուկ վաշտագությանը սանձազերծ անելով արյունաբերու հրոսակներին, ստիպեցին մեզ միջոցներ որոնել, գինվել և պատշաճ հավասարված տալ լիտիացած և անպաշտպան երեխաների, կանանց ու ծերերի վրա իրենց ուժը գործադրած ոճրագործներին: Այդ պաշարի ընթացքում մենք պետք է կապեր հատատեինք Ադրբեջանի ճրճված այլ ազգերի հետ:

Մի անգամ (դա 1982 թ. էր) «Ղարաբաղ» թիմը մեկնել էր թալիշների երկիր և Վենքորանում հանդիպում էր ունենալու «Սազար» թիմի հետ: Շոգ էր և ծարավս հագեցնելու համար մտել էի մի թեյարան: Քիչ անց, ինձանից թուլտվություն խնդրելուց հետո, իմ սեղանի շուրջը տեղ զբաղեցրեց շուրջ 50-ամյա մի մարդ, որը նման չէր ադրբեջանցու: Ծանոթացանք: Նրա ազգանունն էր Թալիշի: Նույն ազգանունով մի ծանոթ ունեի հաքվում, որը զբաղեցնում էր Ադրբեջանի ֆիզկուլտ կոմիտեի նախագահի պաշտոնը և լավ վերաբերմունք ուներ մեր նկատմամբ: Նրա ժամանակ ազգային խորականության դեպքեր համարյա չէին լինում: Նրա որդին «Մշախույ» («Քերք») սպորտային կազմակերպության նախագահի տեղակալն էր:

Մեր խոսակցությունից պարզվեց, որ տեղանակիցս բարձր վեցի պաշտոնչայի ազգականն է: Նրա ադրբեջաներենից հասկացա, որ ազգությամբ թալիշ է: Թալիշներն ադրբեջաներեն խոսում են զգալի ակցենտով և դյուրին է լեզվի միջոցով որոշել նրանց ազգությունը:

Երբ նա իմացավ, որ ես հայ եմ և «Ղարաբաղ» թիմի մարզիչը, վստահությամբ համակվեց իմ նկատմամբ և պատմեց ինձ այն բուհությունների մասին, որ ազերիները կիրառում են այդ փոքրաքանակ ազգության նկատմամբ: Նրանից իմացա, որ 30-ական թվականներին ավելի քան 1200 թալիշ մտավորականներ, մեծ մասամբ ուսուցիչներ, աքսորվել են Սիբիր: Թալիշական դպրոցները փակվել են, թալիշերեն գրքեր լույս չեն տեսնում և թալիշները զրկված են մայրենի լեզվով խոսելու իրավունքից: Թալիշներին երբեմն ձերբակալում էին միայն այն բանի համար, որ խոսում էին իրենց մայրենի լեզվով: Նույն բանն էին պատմում

նաև Ջալալաբադի թալիշ ֆուտբոլիստները, որոնց հետ հանդիպումներ էինք ունենում թե՛ նրանց մոտ և թե՛ Ստեփանակերտում: Միայն իրենց քաղաքից, պատմում էին նրանք, Սիբիր են արտրվել 400 թալիշ ուսուցիչներ:

Անցան տարիներ: Ես ամացա, որ Մատենադարանի գիտնականներից Վարդան Գրիգորյանը զբաղվում է թալիշների պատմությամբ: 1990 թ. հունվարի 6-ին երևանում լույս ընծայվող «Կոմունիստ» ռուսերեն թերթում նա հրատարակել էր «Սաա ինձ քո անունը թալիշ» վերնագրով մի ընդարձակ հոդված, որը նվիրված էր թալիշների անցյալ պատմությանը և ներկա դառը վիճակին: Արոշեցի այդ հոդվածն ուղարկել թալիշներին: Բայց դժվարին գործ էր: Թալիշների երկիրն արդեն փակ էր մեզ համար: Փոստային կապ չկար: Կարողացել էինք հոդվածը պատճենահանել և դարձնել 400 օրինակ: Պետք էր այն հասցնել թալիշներին:

Պատահմամբ իմացա, որ Վենքորանից եկած մի թալիշ վարունգ է վաճառում Ադրբայի շուկայում: Ես կապ հաստատեցի նրա հետ և խնդրեցի վարունգները վաճառել Ստեփանակերտում: Նրան խոստացանք վարունգները միանգամից գնել բարձր գներով: Նա եկավ Ստեփանակերտ և, իսկապես, մերոնք գնեցին վարունգները բարձր գներով: Ես նրան խնդրեցի Վ. Գրիգորյանի հոդվածի օրինակները իր հետ տանել Լենքորան և Ջալալաբադ: Տվեցի վերը հիշված Թալիշիի և Ջալալաբադի իմ ծանոթներից մեկի հեռախոսի համարները և խնդրեցի կապվել նրանց հետ և հանձնել թղթերը: Նա խոստացավ, և հետագայում ես իմացա, որ ամեն ինչ անկորուստ նա հասցրել էր տեղ և հանձնել քստ պատկանելույն: Ի միջի այլոց, իմ ծանոթ թալիշների հեռախոսի համարները ինձանից վերցրեցին ձերբակալության ժամանակ և ես չգիտեմ, թե դա ինչ հետևանք ունեցավ այդ մարդկանց համար:

Թալիշների երկրում ազատագրական շարժում էր սկսվել: Ադրբեջանցիներն իրենց հատուկ դաժանությամբ ցանկացել էին ճնշել թալիշների դիմադրությունը, եղել էին զոհեր ու վիրավորներ: Ղարաբաղցիների օրինակով նրանք ոտքի էին կանգնել պաշտպանելու իրենց մարդկային իրավունքները: Թալիշների պատմության, ազերիների կուլմից նրանց

Ակատմամբ գաղութատիրական քաղաքականությունն տանելու և բռնի ազգամուլելու մասին գրված հոդվածը, որը հետագայում առանձին գրքի մեջ հրատարակվեց ռուսերեն<sup>1</sup>, իսկ նրա պարսկերեն թարգմանությունը լույս տեսավ Թեհրանում (ինչպես և Լոնդոնում ու Վաշինգտոնում իրանցի վտարանդիների հրատարակած պարբերականներում), մեծ հետաքրքրություն էր առաջացրել թալիշների մոտ: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումներից ինացանք, որ ադրբեջանցիները թալիշների, ինչպես նաև լեզգիների շարժումները համարում էին դրսից մտցված շարժումներ և այդ հարցում հակաադրբեջանական պրոպագանդայի մեջ մեղադրում էին հայերին: Մեզ հայտնի դարձավ, որ հոդվածը ծառայել է իր նպատակին, շատերն էին կարդացել դա և փոխանցել ուրիշների:

Ադրբեջանցիները բռնությամբ և շողոքոթեղով կարողացան ինչ-որ չափով մեղմացնել թե՛ թալիշների և թե՛ լեզգիների ազատագրական պայքարի բոցը: Բայց ես վստահ եմ, որ այն մոտ ապագայում կրկին կթորթոքվի նոր թափով, որովհետև անկարելի է աղջափ վտիորեն արհամարհել հարյուր հազարավոր մարդկանց տարրական իրավունքները, արգելել նրանց լեզուն, մշակույթը, յուրացնել ոչ միայն նրանց երկիրը, այլև մարդկանց, որոնք ապրում են իրենց պապենական հողերի վրա:

### ԳԻՄՈՒՄՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՆ

1987 թ. սեպտեմբերին, օգտվելով բարենպաստ հնարավորություններից և վերակառուցման իրադրությունից, դարաբաղցիները նամակներ էին գրում և բազմաթիվ ստորագրություններով ուղարկում Մոսկվա՝ Խորհրդային Միության կոմկուսի քաղբյուրոյին ու ԽՍՀՄ կառավարությանը: Նրանք պահանջում էին ուղղել 1921 թ. թույլ տրված մեծ սխալը, երբ կուսակցական մարմին<sup>1</sup> կոմբյուրոյի ապօրինի որոշմամբ

<sup>1</sup> Вартан Григорян, Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992.

‘Լարաբաղը նվիրաբերվեց Ադրբեջանին: Մարդիկ այն միամիտ հավատն ունեին, որ լսելով իրենց արդար պահանջները, ԽՍՀՄ ղեկավարությունը և սուաջին հերթին վերակառուցման դրոշմ պարզած և անցյալի սխալները շտկելու վճռահանությամբ հանդես եկող Մ. Գորբաչովը, վերջ կտան անարդարությանը և կնպաստեն Լարաբաղը Հայաստանին անարդարությանը և կնպաստեն Լարաբաղը Հայաստանին միացնելու գործին: Այդ հավատն էր դրոշմ մարդկանց Ստեփանակերտի փողոցներում ու պուրակներում միտինգների ու ցույցերի ժամանակ հազարավոր կոկորդներով գոչելու «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսը, որը ոչ մի արձագանք չգտավ երկրի ղեկավարների մոտ:

Ադրբեջանցիները տեղեկացել էին հայերի դիմումների մասին, ուստի ուժեղացրեցին հալածանքը հատկապես հայերի մեջ հեղինակություն վայելող անձանց նկատմամբ, որոնք կարող էին կազմակերպել ժողովրդին: Ակսվեցին նոր բռնություններ: Տարբեր պատրվակներով ձերբակալում էին մարդկանց, բանտարկում և երբեմն էլ մահվան հասցնում:

‘Լարաբաղցիները սկսեցին պատվիրակություններ ուղարկել Մոսկվա՝ աշխատավորների նամակները տանելու և նրանց պահանջները ներկայացնելու համար: Մոսկվայի քաղաքատնտեսական պաշտոնյաները լավ էին ընդունում նրանց, ասում էին, որ այդ շարժումը ճիշտ է, դեմոկրատական, արդարացի: Ժողովուրդը գտնում էր, որ եթե ուղղվում են Ստալինի թույլ տված սխալները, ապա կշտկվի նաև այս սխալը: Այդ ժամանակ մեր վրա մեծ ազդեցություն ունեցավ նշանավոր տնտեսագետ, ակադեմիկոս Արել Ազանբեկյանի հարցազրույցը ֆրանսիական «Յոմանիստե» թերթին: Այնտեղ ասվում էր, որ տնտեսական տեսակետից ճիշտ կլինի Լարաբաղն ու Նախիջևանը միացնել Հայաստանին:

1988 թ. փետրվարի սկզբներին Ստեփանակերտի կուսակցական ակտիվի ժողովում դրված էր քայլեր մի կերպով քարտուղար Համիկ Միքայելյանի հաղորդումը ԽՍՀՄ կոմկուսի կենտկոմի սեմինարի մասին, որի ժամանակ կենտկոմի քարտուղար Եգոր Լիզաչովը ազգայնամոլներ էր անվանել Լարաբաղը Հայաստանին միացնելու կողմնակիցներին և հայտնել, որ Լարաբաղի միացումը Հայաստանին անհնա-

րին է և որ այն մշտապես պետք է գտնվի Ադրբեջանի կազմում:

Ես տեղից հարց տվեցի Հ. Միքայելյանին Ադանբեկյանի հարցազրույցի մասին և ամբողջովին կարդացի նրա հանրեմ թարգմանությունը: Դա մեծ տպավորություն թողեց ներկաների վրա, իսկ նախագահողը՝ քաղկոմի երկրորդ քարտուղար Հրանտ Մելքոնյանը, անմիջապես ժողովը հայտարարեց փակված:

Փետրվարի 12-ին Մոսկվա մեկնեց ԼՂԻՄ-ի մտավորականների ներկայացուցիչների մի խումբ, որն իր հետ տարավ Ղարաբաղը Հայաստանին միացնելու գրավոր պահանջը՝ 60 000 ստորագրությամբ: Այդ օրը Ստեփանակերտ ելյան Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Վասիլի Կոնովալովը, կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը, ՊԱԿ-ի նախագահի տեղակալ Ի. Ամրանովը և ուրիշներ: Մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեռկովի հետ նրանց նպատակն էր տեղում կազմակերպել քաղկոմի, շրջկոմների և մարզկոմի ակտիվի նիստեր ու ժողովներ, որոնք պետք է ընդունեին Ղարաբաղը Հայաստանին միացնելու առաջարկությունը դատապարտող որոշումներ:

Մարզկոմի շենքում գումարփած Ստեփանակերտի կուսակցական և տնտեսական ակտիվի նիստի ժամանակ ելույթ ունենալով՝ Վ. Կոնովալովը Ղարաբաղը Հայաստանին միացնելու առաջարկը համարեց մարզի մի խումբ ծայրամեղականների, քաղաքականապես տհաս մարդկանց արարք, որը պետք է դատապարտվի:

Նիստի ժամանակ ելույթ ունեցողները՝ շարասյան պետ Մաքսիմ Միրզոյանը, Ղարաֆետաքս կոմբինատի տնօրեն Ռադիկ Աթայանը, պրոֆտեխուսումնարանի տնօրեն Վ. Սարգսյանը պատշաճ հակահարված տվեցին Վ. Կոնովալովին՝ Ադրբեջանի ղեկավարությանը և մարզում նրա դրածո Բ. Կեռկովին մեղադրելով ազգայնամոլության մեջ:

Այդ նիստի ժամանակ ելույթ ունեցա նաև ես: Բայց կարծում եմ, որ սովորի լավ կլինի իմ ելույթի մասին մեջ բերեմ գրող Բակուր Կարապետյանի «... Եվ նրա շուրջ» գրքից մի քաղվածք.

«Վ. Կոնովալովը ակտիվի նիստը բնորոշեց որպես «քաղաքական խուլիգանների հավաք», ավելացնելով, որ ներքևներում ընդհանրապես ոչինչ չի որոշվում, իսկ վերևներում նման հարց գոյություն չունի: «Հայաստանին միանալու դեպքում,— ասաց Ադրբեջանի կոմկուսի ԿԿ երկրորդ քարտուղարը,— Ղարաբաղը կկորցնի իր ինքնավարությունը»:

Նա նկատի ուներ այն հանգամանքը, որ Հայաստանի կազմում հայկական ինքնավարություն անհնար է և իմաստ չունի:

Ռազմիկ Պետրոսյանը ձեռք բարձրացրեց. մի պահ որսալով Կոնովալովի հայացքը, տեղից բարձրացավ:

— Թույլ տվեք ես էլ խոսեմ,— Կոնովալովին դիմեց ստադիոնի տնօրենը: Ադրբեջանական կոմկուսի ԿԿ երկրորդ քարտուղարը հարմար առիթի էր սպասում, որ խոսք տար Ռազմիկին, բայց Բ. Կեռկովը թեքվեց դեպի նա և հուշեց, որ թույլ չտա:

— Ղարաբաղը երբեք Ադրբեջանի կազմից դուրս չի բերվելու,— ասաց Կոնովալովը:

Ռազմիկը ոտքի կանգնեց ու դիմեց նրան.

— Ես մի հարց ունեմ:

— Ոչ,— կրկին ժխտեց Կոնովալովը,— արդեն ուշ է:

Ժողովն ավարտված համարելով, նախագահությունն ուզում էր հեռանալ, երբ Ռազմիկը դեպի ամբիոն շարժվեց: Մի կողմից մտնեցավ մարզի ՊԱԿ-ի բաժնի պետը, մյուս կողմից՝ Ն.Գ վարչության պետը և ամուր թևանցուկ արեցին նրան:

— Ես հո հարվածելու չեմ գնում, որ բռնում եք ինձ, պարզապես խոսք ունեմ ասելու,— ասաց Ռազմիկը, ազատեց թևերը, մտնեցավ ամբիոնին ու վերցնելով միկրոֆոնը, դիմեց դահլիճին:— Մարզն այլևս Ադրբեջանին չի ենթարկվում: Ակտիվի մասնակիցների անունից հեռագիր ուղարկենք Մոսկվա՝ կենտկոմ, որ հանձնաժողով գա և լուծի մեր հարցը: Ով համաձայն է, թող ձեռք բարձրացնի:

Բոլորը ձեռք բարձրացրին»:

1 Բակուր... Եվ նրա շուրջ, գիրք առաջին, Կոգիացող երկիր, Երևան, 1990, էջ 8—10:

ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական նիստի մասին, երբ որոշում ընդունվեց դիմել Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս հանելու և Հայաստանին միանալու մասին, շատ է գրվել: Ես այդ մասին չեմ պատմի: Կուզենայի նշել, որ դեպատաստներին թույլ չէին տալիս գալ Ստեփանակերտ: Ես մասնակցում էի նրանց անվտանգ ուղեփորությունը դեպի Ստեփանակերտ կազմակերպելու գործին: Մինչև նստաշրջանի գումարվելը ես հանդիպում ունեցա մարզկոմի քարտուղար Բորիս Կևրկովի հետ: Այդ մասին մանրամասն գրված է Բակուր Կարապետյանի գրքում, ուստի ես դարձյալ ընդարձակ քաղվածք եմ անելու այդ գրքից, քանի որ եթե պատմեմ, ապա բացարձակապես նույնը պետք է ասեմ:

«Ճարժման շտաբում հանձնարարեցին Ռազմիկ Պետրոսյանին ուղիներ փնտրել բանակցություններ վարելու Բ. Կևրկովի և Վ. Օսիպովի հետ:


... Ռազմիկն ու մարզի գլխավոր փրաբույժ Էդիկ Ղուկասյանը փողոցում հանդիպում են մարզկոմի ստաժին քարտուղարի օգնականին՝ Յուրի Բեկնազարյանին:

— Յուրի,— նրան դիմեց թժիշկը,— կարո՞ղ ես Կևրկովին ասել, որ Ռազմիկն ուզում է ստանձին, ստերես հանդիպել իրեն:

— Ինչու չէ,— իսկույն հանձն առավ Յուրին,— կասեմ:

— Եթե մենակ հանդիպի՛ կգամ, թե չէ՛ պետք չէ,— ասաց ստաժիտնի տնօրենը,— երեկոյան ժամը վեցին թերթի իւր-բազրությունում կսպասեմ քո զանգին:

Պայմանավորված ժամին քարտուղարի օգնականը զանգեց խմբագրություն, որը այդ օրերին սպասամբության շտաբի էր վերածվել և կուսմարզկոմ հրավիրեց: Մուտքի մտտ պետանվտանգության ու միլիցիայի աշխատողները ստուգեցին Ռազմիկի գրպաններն ու ներս թողեցին: Յուրին ընդունարանում տեսնելով Ռազմիկին, Կևրկովի մոտ մտավ և տեղեկացրեց, որ Ռազմիկ Պետրոսյանն այստեղ է: Յուրին Ռազմիկին մարզկոմի բյուրոյի դահլիճ ստաժնորդեց: Բիչ



1960 թ.



1997 թ.



1988 թ. հունիսի 15-ի մեծ ցույցը Ստեփանակերտում: Զախից աջ՝ բանաստեղծներ Գուրգեն Գարրիբեյանը և Հրաչ Բեկլարյանը, կենտրոնում՝ Վ. Գրիգորյանը



Միտինգ Ստեփանակերտում (լուսանկար՝ Վ. Գրիգորյանի)



ԼՂԻՄ մարզկոմի քարտուղար Հենրիկ Պողոսյանը նայում է Մատենա-դարանին ընծայված մագաղաթյա ձեռագիրը (ձախից Վ. Գրիգորյանը)



Միտինգի ժամանակ ելույթ է ունենում Վ. Գրիգորյանը

անց ներս մտավ Բորիս Կևորկովը, ձեռքով հեռավեց պայտու-  
ձև հսկա սեղանին, հպանցիկ նայեց Ռազմիկի աչքերին ու  
ասաց.

— Ես ձեզ լսում եմ:

— Բորիս Սարգսյուվիչ,— դիմեց Ռազմիկը,— տեսնո՞ւմ  
եք, ժողովուրդը ոտքի է կանգնել և վաղը նստաշրջան է գու-  
մարվելու: Ուզե՞ք, չուզե՞ք՝ դա տեղի կունենա: Հիմա իրավի-  
ճակն այսպիսին է, ժողովրդի հիսուն տոկոսը հավատում է  
ձեզ, մյուս կեսը՝ ոչ: Եթե դուք համաձայնե՞ք, որ նստաշրջա-  
նը տեղի ունենա անարգել, մենք այնպես կանենք, որ ամ-  
բողջ ժողովուրդը կպաշտպանի ձեզ, և կհավատա, իսկ եթե  
ոչ՝ չգիտեմ...

— Պետրոսյան,— դիմեց Կևորկովը,— դու ինձ հավա-  
տո՞ւմ ես:

— Իհարկե,— ասաց Ռազմիկը,— եթե չհավատայի, ձեզ  
չէի դիմի:

— Ես հիմա չեմ նախաչում, չեմ ընդունում ոչ Ադրբեջանի  
կոմկուսի կենտկոմին, ոչ էլ կառավարությանը: Դա ստոր,  
կեղծ խաղերի մի հսկա որջ է: Բայց սպասում եմ Մոսկվայի  
կոմկուսի պատասխանին:

— Բորիս Սարգսյուվիչ,— Մոսկվայից ոչ մի պատասխան  
չի լինի, հավատացե՞ք: Մեր կողմն անցե՞ք, ամեն ինչ լավ  
կլինի:

— Կնստածեմ... միայն կլսե՞րե՞ք, որ մեր հանդիպման  
մասին ոչ ոք չիմանա,— ասաց, ու դուրս եկավ դահլիճից:

Ռազմիկին շարժման տղաները սպասում էին դրսում:

Երբ լսեցին Ռազմիկին, Մանուչարովն ասաց.

— Դա էլ վատ չէ, գոնե մեզ շատ չի խանգարի»<sup>1</sup>:

Փետրվարի 20-ի առավոտյան Բաքվից Ստեփանակերտ  
եկավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար  
Ք. Մ. Բաղիրովը՝ բազմաթիվ ուղեկիցներով: Նրանք որոշել  
էին խափանել մարզխորհրդի նիստը, որի ժամանակ քննարկ-  
վելու էր ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայ-  
կական ԽՍՀ կազմը մտցնելու հարցը: Արդեն նշել էմ, որ  
Լեռնային Ղարաբաղից դեպի կենտրոն՝ Ստեփանակերտ ե-

<sup>1</sup> Բակուր,... Եվ նրա շուրջ, էջ 40—42:

կող ճանապարհներն անցնում էին Ադրբեջանի տարածքով: Ահա այդ ճանապարհները փակել էին ադրբեջանական միջինցիան և զինվորական պարեկները: Նրանց կարգադրված էր փաստաթղթերը ստուգելով ի հայտ բերել պատգամավորներին և ետ վերադարձնել: Վերջիններս դուրս էին գալիս խճուղիներից և ոտքով անցնելով շատ կիլոմետրեր, գալիս հասնում էին Ղարաբաղի մայրաքաղաք: Մեզ լուր հասավ, որ պատգամավորների մի խմբի շրջափակել են Խոջալուում և թույլ չէին տալիս գալ Ստեփանակերտ: Քվորումը չէր ապահովվում: Ք. Մ. Բաղիրովն ու նրա ուղեկցողները ուզում էին դուրս գալ շենքից ճաշի գնալու համար, բայց ժողովուրդը փակել էր շենքի մուտքը և թույլ չէր տալիս նրանց դուրս գալ: Այդ ժամանակ ներքին գործերի վարչության պետ գեղասպետ Արմեն Խազոյուովը մոտեցավ ինձ ու Ռոլեն Աղաջանյանին և խնդրեց, որ ժողովրդին համոզենք ճանապարհ տան Բաղիրովին: Մենք ասացինք, որ մեր դեպուտատները շրջափակման մեջ են Խոջալուում, եթե նա կարգադրի թողնեն դեպուտատներին, մենք էլ նրանց դուրս գալու ճանապարհը կապահովենք:

Խազոյուովն այս բանը հարուկեց պարետին, որը մի ռուս գեներալ էր: Նա մեր ներկայությամբ ռացիայով կապվեց Ասկերանի պարետի հետ և կարգադրեց բաց թողնել դեպուտատներին: Մենք սպասեցինք այնքան, մինչև դեպուտատները կհասնեն Ստեփանակերտ, դրանից հետո թույլ տվեցինք, որ Ադրբեջանի կոմկուսի տվածացած ղեկավարները գնան ճաշելու: Նրանք ձգտում էին նստաշրջանը խափանել մարզխորհրդի գործկոմի որոշմամբ, բայց մենք թույլ չտվեցինք, որ գործկոմը հավաքվի, նրա անդամներից շատերին պարզապես թաքցրեցինք:

Քվորումը ապահովվեց և սրտմակամ նստաշրջանը ըսկրպեց: Չայների ճնշող մեծամասնությամբ նրա ընդունած որոշումները հայտնի դարձան ողջ աշխարհին: Արտահայտելով Ղարաբաղի ժողովրդի միահամուռ կամքը՝ աշխատավորների դեպուտատների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի նստաշրջանը որոշում կայացրեց Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի մեջ մտցնելու հարցով դիմել համապատասխան մարմիններին: Այդ որոշ-

մանն անհամբերությամբ էին սպասում քաղաքի հրապարակում միտինգ անող դարաբաղահայության հազարավոր ներկայացուցիչներ և մեր լեռնային երկրամասի ողջ ժողովուրդը:

Բաքվից եկած ղեկավար պաշտոնյաները հույս ունեին, որ շրջաններում կարող են հաջողության հասնել և ձեռք գցել Ղարաբաղը Հայաստանին միացնելու դեմ կայացված որոշումներ, բայց դա նրանց չհաջողվեց: Ամենուրեք հանդիպեցին կուսակցական-խորհրդային աշխատողների ու ողջ ժողովրդի կտրուկ դիմադրությանը և ձեռնուձայն վերադարձան Բաքու:

## ՍՈՍԶԻՆ ՀԱՐՉԱԿՈՒՄԸ

Ժողովրդի արդար վճռին Ադրբեջանը պատասխանեց Ասկերանի վրա վայրագ հարձակմամբ, հետո տեղի ունեցավ սումգայիթյան ահավոր եղեռնը: Ես կարծում էի, որ ղարաբաղցիները պետք է պատրաստ լինեին գեներով պաշտպանելու իրենց հայրենիքը: Մենք բնակավայրերի շուրջ պահակապետեր էինք դրել և շուրջօրյա հերթապահություն ստեղծել: «Կոունկ» կազմակերպության և «Ազգային խորհրդի» նախագահության անդամ էի, ստեղծել էինք շտաբ, որտեղ լուծվում էին պաշտպանության հետ կապված բազմաթիվ հրատույզ հարցեր: Ստեփանակերտի Սո. Շահումյանի անվան սոսոզիոնի տարածքում մշտապես զինված տղաներ էինք պահում, որոնք պատրաստ էին անագանգի դեպքում մեկնել շրջանները: Գնում էինք գյուղերը և կոլտնտեսությունների նախագահների հետ ճշտում անելիքները ազերիների հարձակման դեպքում: Քիրս սարի ստորոտներին և Վերին Հոբաթաղում ստեղծել էինք պահեստներ, որտեղ գեներ էինք կուտակել: Այս գործում մեծ աշխատանք տարավ Չանախչիի (այժմ՝ Ավետարանոց) դպրոցի տնօրեն Աթայանը: Ձեռքի կուտակման և ջոկատների կազմավորման ու ղեկավարման գործում մեծ դեր էին խաղում Մարտակերտում Վիգեն Ծիրինյանը, Ասկերանում Սլավիկ Միրզոյանը, Հադրոթում՝ Վիգեն Գրիգորյանը Տող գյուղից, Մարտունիում՝ Վոլոդյա Խաչատրյանը (նա գոհվեց Ադրամի շրջանի գրավման ժա-

մասնակ, սպանվել են նաև նրա երկու որդիները), Բերդաձորում՝ Առնո Մկրտչյանը, Հրաչիկ Պետրոսյանը (որոնք երկուսն էլ հետագայում ընկան թուրքերի ձեռքը և տանջամահ արվեցին Բաքվի բանտում, Առնո Մկրտչյանի դիակը կարողացանք ստանալ և հողին հանձնել, իսկ Հրաչիկ Պետրոսյանինը չտվեցին):

Ստեփանակերտում այդ հարցերով սկզբում զբաղվում էինք ես և Ռոյես Աղաջանյանը: Մեզ շատ օգնում էին «Բեկորը»՝ Աշոտ Ղուլյանը և նրա ընկեր Կարապետյանը, «Կոմսոմոլ» փոտ անունով), իսկ հետո՝ Արթուր Ալեքսանյանը, Մուրադիկ Պետրոսյանը և ուրիշներ:

Այսպեցին հարձակումները գյուղերի վրա: Բարին Տակը մի քանի անգամ ենթարկվեց շուշեցի ազերիների գրոհին: Տղաներ էինք ուղարկում այդ գյուղը պաշտպանելու համար: Բերդաձորը ևս թիրախ էր դարձել ազերիների հրոսակախմբերի հարձակումների համար, բայց գյուղի պաշտպանությունը լավ կազմակերպել էր Հայաստանից եկած մի հրաշալի երիտասարդ՝ Անդրանիկ անունով, որը հետագայում ավտոմոբիլի գոն դարձավ:

Ամենուրեք ինքնապաշտպանության ջոկատներ էին կազմակերպել: Նրանց օգնության էին շտապում Հայաստանում ապրող դարաբաղցիները և ոչ միայն նրանք: Ծառերը զինված էին գալիս: Աբովյանից Սամվելի ղեկավարությամբ եկավ մի խումբ, որի անդամները հայրենաւեր, լավ տղաներ էին: Խումբը մասնակցեց Բարին Տակի, Հաղբոթի և Ծահունյանի գյուղերի պաշտպանությանը: Սամվելը ապանվեց Ծահունյանի շրջանում:

Լարաբաղի պաշտպանությունը կազմակերպելու գործին մեծ օգնություն էր ցույց տալիս Արցախի թեմի հոգևոր առաջնորդ Պարգև Էսիսկոպոսը: Նա տրամադրում էր թե՛ մթերք և թե՛ դրամ:

Երբ թուրքերի ամբոխը հարձակվեց Ասկերանի վրա, մենք ջոկատներ ուղարկեցինք այնտեղ (մեծ մասամբ որսորդական հրացաններով զինված 60 թե 70 տղաներ): Օղանավակայանի մոտ սկսեցինք դիրքեր պատրաստել՝ թշնամու հրճարավոր հարձակումները ետ մղելու համար:

Արցախի պաշտպանության շտաբը ստեղծվեց 1988 թ. վաղ գարնանը: Այն ժամանակ մենք չէինք կարող շտաբը կոչել իր անունով: «Կոմեկի» նախագահության անդամները Ա. Մանուչարովի գլխավորությամբ մարզիորդների նախագահ Անդրոն Բաբայանի հետ պայմանավորվեցին, որ այն ստեղծվի քաղաքացիական պաշտպանության շտաբի անվան տակ: Սկզբում շտաբը գտնվում էր քաղկոմի դիմացի շենքում:

Արցախի պաշտպանության գործը ղեկավարելու համար ստեղծված շտաբի մեջ ընդգրկված էին հիմնարկությունների ղեկավարները և այն անձինք, ովքեր զբաղվելու էին գեներ ձեռք բերելու, զինապահեստներ ստեղծելու և մարտական ջոկատներ կազմակերպելու գործով: Ծառքի պետ Աշանակվեցի ես, իմ տեղակալն էր Ռոյես Աղաջանյանը, անդամներն էին՝ Էդիկ Ղուկասյանը, Ժաննա Գալստյանը, Համետ Գրիգորյանը, Էմմեստ Հայրապետյանը, Ռուդիկ Ազրյանը, Վովա Գևորգյանը, Բորիս Առուշանյանը, Սյախա Աղաջանյանը, Առնո Ծատուրյանը, Ռադիկ Աթալյանը, Վալերի Վանյանը, Էդիկ Զաքարյանը, Արարատ Զաբարյանը, Ռաֆայել Գաբրիելյանը:

Մեր առաջին գործը եղավ Ստեփանակերտում պահակակետեր ստեղծելը: Դրանք բոլոր էին: Համար առաջին պահակակետը գտնվում էր Նոր Արմենավանում, երկրորդը՝ Հեքիմյան փողոցի վրա, երրորդը՝ Կոչիկի և գյուղգործիքների գործարանների մոտ, չորրորդը՝ Պուշկինի և Բեկզադյան փողոցների խաչմերուկում, մյուսները՝ Ուզբեկստան փողոցի վրա (Կրկնամից Աերթ), Լեհնաչս փողոցի վրա եղած համար 9 դպրոցի մոտ և Բաղրամյան փողոցի վրա: Փաստորեն պահակակետերը հսկողություն էին ապահովում քաղաքը դրսի հետ կապող ուղիների վրա:

Պահակակետերում իրականացվում էր շորջօրյա ներթապահություն: Հերթապահելու գնում էին 30—40 հոգուց քաղկացած ջոկատներով: Իսկ շտաբում մշտապես ներթապահում էին հինգ ընկերներ, որոնք հետախոսային կապ էին պահպանում բոլոր պահակակետերի, ինչպես և քաղաքից դուրս գտնվող շտաբների հետ:

Հերթապահները պարբերաբար կատարում էին պահակակետերի ստուգումներ: Ամեն օր փոխում էինք նշանախոսքը (պարուլը): Մեր առաջին նշանախոսքը «Արագածն» էր, հետո՝ «Քիրսը», «Մոուլը» և այլ բառեր: Ազերիներն իրենց միլիցիոներների ուղեկցությամբ լրտեսներ էին ուղարկում Ստեփանակերտ, որոնց նպատակը հետախուզական տեղեկություններ հավաքելն էր: Պահակակետերում բռնում էին դրանց և բերում շտաբ: Հարցաքննում էինք ու հանձնում միլիցիային:

Մենք լավ հասկանում էինք, որ ռազմական ընդհարումն անխուսափելի էր: Ազերիները ձգտում էին արյան մեջ խեղդել մեր ազատագրական շարժումը: Ուրեմն պետք է հաշվի առնեինք բոլոր հնարավոր բարդությունները և պատրաստ լինեինք ամեն բանի:

Ծառախի ջանքերով հաշվառման վերցրեցինք բոլոր ավտոմեքենաները, հիմնականում ավտոբուսները և բեռնատարները: Մշակվեց մոբիլիզացիոն ընդհանուր պլան: Կազմվեցին ջոկատների ցուցակները: Ջոկատների մեջ մտնող դասակների հրամանատարներին մենք էինք նշանակում, իսկ օղակների հրամանատարներին նշանակում էին դասակի հրամանատարները: Ավտոբազայի գլխավոր ինժեներ Վալենտին Վանյանը մշակեց ու ներկայացրեց մեքենաների մոբիլիզացիայի ծրագիրը: Տազմապի դեպքում գիտեինք, թե ո՞ր մեքենան ուր է գնալու, որ ջոկատի տրամադրության տակ:

Որոշ ժամանակ անց սկսեցինք շտաբներ ստեղծել շրջաններում: Մարտակերտի շտաբի մեջ մտան Վիգեն Թիրինյանը, Յուրի Մարտիրոսյանը, Սլավիկ Աբրահամյանը և ուրիշներ: Մարտունու շտաբի անդամներն էին Վորոյա Խաչատրյանը, Մանգրեդ Բախչիյանը, Հաղորթի շտաբինը՝ Արթուր Մկրտչյանը, Ասկերանի շտաբը ղեկավարում էին Սլավիկ Առուշանյանը և Մարատ Հակոբջանյանը, Ծոշ գյուղում՝ Սյունան ու Լյովան, Կրկժանում՝ Ժողան, Տող գյուղում՝ Վիգենը, Կարաբուլաղում՝ Արշուն: Քարին Տակի շտաբի պետը Առուշանյան Վաղարշակն էր, որին Վաղո էինք ասում:

Բոլոր շտաբների հետ կապը պահպանում էինք հեռախոսի միջոցով: Ջենքի բաժանումը կատարում էինք շտաբների միջոցով: Պահանջի դեպքում զինված ջոկատներ էինք ու-

ղարկում տեղերը: Իսկ զինված ընդհարումներ անընդհատ լինում էին հատկապես Կրկժանում, Տողում, Քարին Տակում, Հասանաբաղում, Դաշբուլաղում և Զախարում: Քարին Տակ սովորաբար ուղարկում էինք Զանախչի և Սղնախ գյուղերի ջոկատները, որոնք մոտ էին Քարին Տակին: Մի քանի անգամ այնտեղ ենք ուղարկել Դաշուշենի ջոկատը արտվանցի Սամվել Հակոբյանի ղեկավարությամբ:

Մենք կազմել էինք հերթապահների պարտակազմությունների գրավոր ցուցակ: Այնտեղ նշված էր, որ հերթապահները պետք է ստուգեն պահակակետերը, մշտապես կապ ունենան նրանց հետ, յուրաքանչյուր 2 ժամը մեկ պետք է կապվեն շրջանային շտաբների հետ, տեղեկություններ ըստանան նրանցից և հարկ եղած դեպքում օգնություն ցույց տան նրանց: Ավագ հերթապահը պարտավոր էր ամեն անգամ համապատասխան գրանցում կատարել իրավիճակի մասին և մշտապես կապ պահպանել մյուս վայրերի շտաբների հետ: Մեր շտաբը մշտական կապի մեջ էր Երևանի, Արտվանի, Գորիսի, Կիրովականի ու Կիրովաբադի հետ:

1989 թ. հունվար ամսին կենտրոնական շտաբը տեղափոխվեց Սո. Ծառումյանի անվան մարզադաշտ: Այնտեղ մենք միաժամանակ պահում էինք ավտոդպրոցին պատկանող 5 բեռնատար ավտոմեքենաներ՝ զինվորական համարներով, և չորս հարյուր զինված մարտիկներ, որոնք պատրաստ էին մեր հրամանով օգնության շտապելու շրջանները: Այդ մեքենաներով մենք պարենային օգնություն ուղարկեցինք Կիրովաբադ:

Բաբելի միտինգների ժամանակ, որոնց մասնակցում էին հարյուր հազարավոր ազերիներ, կոչեր էին հնչում անմիջապես հարձակվելու Ղարաբադի վրա: 1989 թ. օգոստոսի 30-ին ինձ իր մոտ կանչեց Ա. Վոլսկին և ասաց, — թե վրտանց կա, որ ադրբեջանցիները հարձակվեն Ղարաբադի վրա, իսկ իրենք ուժեր չունեն նրանց զուպելու համար: Նա հարցրեց, թե որքա՞ն մարդ կարող ենք դուրս բերել: Պետք է ասել, որ նա բավականին վախեցած էր: Մեզ հայտնի էր, որ նրա տրամադրության տակ ընդամենը 2000 զինվոր կար:

Ես պատասխանեցի, որ կարող ենք դուրս բերել 10 000



հոգի, բայց անգեմ: Նա պատասխանեց՝ «Ոչինչ, մենք նրանց զենք կտանք»:

Բաբվի ցուցարարները համառորեն պահանջում էին թույլ տալ իրենց հարձակվելու Ղարաբաղի վրա: Աղբբեջանի դեկալարության ցուցումով մի օր քաղաքի կենտրոնական հրապարակ են բերում 60-ից ավելի ավտոբուսներ: Ցուցարարներին առաջարկվում է նստել ավտոբուսները՝ Ղարաբաղ մեկնելու համար: Հրապարակում սկսվում է չտեսնված խոնձուղ: Մարդկանցով լցվում է ընդամենը մեկ ու կես ավտոբուս: Մնացած ցուցարարները փախչում են:

Պատմում էին, որ Թոփխանաշի կապակցությամբ մեծ թվով մարդիկ Բաբվի հրապարակում հացադուլ էին հաշտարարել: Նրանց ներկայացուցիչները գնում են կենտրոնի առաջին բարտուղար Վեգիրովի մոտ և ասում, «Դե, մի բան արե՞ք՝ հարչուրավոր մարդիկ հացադուլ են անում, կարող է սովից մեռնեն»: Վեգիրովը հարցնում է, թե նրանք հացադուլ են անո՞ւմ: Պատասխանում են՝ «Այո՛, այո՛»: «Ոչինչ չեն ուտո՞ւմ»: «Այո՛, այո՛»: Հետո Վեգիրովն ասում է՝ «Եթե նրանք ոչինչ չեն ուտում, ապա ովքե՞ր են այդպես այլանդակ ձեռք կեղտոտել հրապարակի շրջակայքը»:

Մեզ համար ամենադժվարին ու պատասխանատու գործը զենք հայթայթելն էր: Դա մենք կարողանում էինք իրականացնել մեր բազմաթիվ անձնակեր բարեկամների՝ աջակցությամբ, որոնք ոչինչ չէին խնայում չորս կողմից զինված ավազակախմբերով շրջապատված Ղարաբաղին զենք ուղարկելու համար: Ջենք մենք ստանում էինք հիմնականում Հայաստանից, ինչպես նաև Ռուսաստանից: Հիշում եմ, որ Ռուսաստանից կարաքիներ էինք բերում սոլյարկայով լրցված ավտոցիստերների մեջ: Մենք ստանում էինք հրացաններ, ականանետներ, նռնականետներ, ակալներ, փամփուշտներ, նռնակներ և այլն: Դժվարանում եմ մտաբերել այն բոլոր անձանց, ովքեր տարբեր տեղերից զենք էին ձեռք բերում ու մեզ հանձնում կամ էլ տանում էին շրջանները՝ ինքնապաշտպանական ջոկատներին: Հիշում եմ, Բերդաձոր զենք պետք է ուղարկեիք: Այնտեղ էր մեկնել շուաբի անդամ, դերասանուհի Ժամնա Գալստյանը, որը խնդիր ուներ կազմակերպելու ինքնապաշտպանության գործը: Նա

այնտեղ մնաց երկար ժամանակ: Որոշել էինք այդ գյուղն ուղարկել 15 կարաքին: Վտանգավոր էր, քանի որ ճանապարհներին թուրք ոստիկաններ կային: Հրացանների փոխադրումը հանձն առավ ավտոբուսի վարորդ բերդաձորցի Վաղոն: Կարաքիները մենք ամուր կապեցինք ավտոբուսի շարժիչի սղմուկը խլացնող խողովակին (գրուշտելին): Մանապարհին սզերի ոստիկանները ստուգել էին մեքենան, բայց հրացանները չէին տեսել:

Եվ այդպես, շտաբը գործում էր, մենք պատրաստվում էինք կասեցնել թշնամու հարձակումը:

### ԿՅԱՆՔԻ Է ԿՈՉՎՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ինչպես հայտնի է, Ղարաբաղում ապօրինի ձևով դադարեցված էր ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեությունը, իշխանությունը տրվել էր Հատուկ կառավարման կոմիտեին, որը բացարձակապես վատահոությոն չէր վաչելում բնակչության մոտ և չէր կարողանում կառավարել երկիրը: Մինչև կառավարման հոր, սահմանադրական ձևի վերականգնումը, անհրաժեշտ էր ստեղծել մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մի մարմին՝ Ազգային խորհուրդ, որը պետք է նպաստեր Ղարաբաղում կայունացնելու իրավիճակը, վերականգնելու հիմնարկների, արդյունաբերական ու այլ ձեռնարկությունների նորմալ աշխատանքը և բարի-դրացիական հարաբերություններ հաստատելու մարզում և նրա սահմաններից դուրս ապրող տարբեր ազգության պատկանող մարդկանց հետ:

Այդ նպատակով գումարվեց ԼՂԻՄ-ի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար: Մենք ուզում էինք, որ նրա աշխատանքներին մասնակցելու նաև աղբբեջանական կողմը, որպեսզի սահմանադրական եղանակով, համատեղ լուծեիք հասունացած հարցերը, երկխոսություն ծավալեիք նրանց հետ, օգտագործեիք փոխադարձ մերձեցման հնարավորությունները: Բայց ազերիները կտրա-

կանապես մերժեցին մասնակցելու համագումարի աշխատանքներին:

Մեր համագումարը տեղի ունեցավ Ստեփանակերտում 1989 թ. օգոստոսի 16-ին: Հավաքվել էինք Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դահլիճում: Համագումարը որոշեց մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործունեության վերականգնումը ստեղծել Ազգային խորհուրդ և համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում տալ նրան մարզի կյանքի բոլոր բնագավառների ղեկավարման լիազորություններ: Ազգային խորհրդի կազմի մեջ ընտրվեցին մեր շարժման 80 ակտիվ գործիչներ, որոնք ընտրեցին 21 հոգուց բաղկացած նախագահություն: Նախագահության նախագահ ընտրվեց Մարտունիի շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը: Տեղակալներ ընտրվեցին Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը և ժողովրդական վերահսկողության մարզային կոմիտեի նախագահ, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վլադիմիր Թովմապյանը:

Անհրաժեշտ է նշել, որ Վաչագան Գրիգորյանը մեծ գործ է արել մեր շարժման համար: Նա հայրենասեր, սկզբունքային ղեկավար գործիչ էր, լավ հասկանում էր իրադրության լրջությունը և գտնում էր, որ անհրաժեշտ է զենք կուտակել, զինվել, այնպես ժողովուրդը կհայտնվի ծայր ստիճանի դժվարին կացության մեջ: Վաչագան Գրիգորյանը, ինչպես և Ռոլեն Աղաջանյանը այդ հարցում միանգամայն համաձայն էին ինձ հետ և իրենց հնարավորության սահմաններում նպաստում էին զենք ձեռք բերման և տեղաբաշխման գործին: Դժբախտաբար, ազատագրական շարժման այդ ամենակտիվ ղեկավարներից մեկը չտեսավ մեր հաղթանակը: Նա Մոսկվայում հիվանդացել էր, տարել էին հիվանդանոց և վիրահատել սիրտը: Նա մահացել էր վիրահատությունից անմիջապես հետո...

Նախագահության անդամներ էին մարզում պատասխանատու պաշտոններ վարող մի շարք ընկերներ՝ Աղաջանյան Ռոլենը, Բաբայան Սեմյոնը, Բաբուրյան Կարենը, Բաղյան

Գրիգորը, Դավթյան Սերգեյը, Ղուկասյան Էդուարդը, Եսայան Օլեգը, Քոչարյան Վիլենը, Քոչարյան Ռոբերտը (նա հետագայում դարձավ ԼՂՀ նախագահ, իսկ այժմ ՀՀ վարչապետն է), Մանգասարյան Ռուշիկը, Միրզոյան Մարսիմը, Մկրտչյան Արթուրը (հետո նա ընտրվեց ԼՂՀ նախագահ, բայց նրա կյանքը ողբերգորեն ընդհատվեց 1992 թ.) և ուրիշներ: Նախագահության անդամ ընտրվեցի նաև ես:

Համագումարն ընդունեց մի շարք կարևոր փաստաթղթեր՝ որոշում, ղեկավարացիա և դիմումներ, ուղղված հատուկ շրջանի պարետին, խորհրդային բանակի և ՆԳ զորքերի անձնակազմին, ադրբեջանական ժողովրդին: Որոշման մեջ հիմնավորված էր Ազգային խորհուրդ ընտրելու անհրաժեշտությունը: Այնտեղ ասվում էր, որ ԼՂԻՄ-ը իր վճռակալությունն է հայտնում վերամիավորվելու Հայաստանի հետ և թույլ չի տա, որ Ադրբեջանի կառավարությունը խառնվի իր ներքին գործերին: Համագումարը ողջունում է Ծախումյանի շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորվելու որոշմանը: Բրնակչությանը կոչ է արվում դադարեցնել գործադուլները: Որպես պետական խորհրդանիշ ընդունվում է ԽՍՀՄ պետական դրոշը:

Դեկլարացիայի մեջ արձանագրված էր այն պատմական իրողությունը, որ Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնությունն իր ընտրած մարմինների՝ խորհրդողների որոշումներով հանդես է եկել Ադրբեջանի կազմից ԼՂԻՄ-ը դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ մտցնելու օգտին: Չնայած այն բանին, որ ԽՍՀՄ սահմանադրությունը որևէ մարմնի թույլ չի տալիս դադարեցնելու նույնիսկ գյուղական ու սվամային խորհուրդների գործունեությունը, բայց և այնպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1989 թ. հունվարի 12-ի հրամանագրով Ղարաբաղում դադարեցրել էր տեղական խորհուրդների գործունեությունը և ամբողջ իշխանությունը հանձնել հատուկ կառավարման կոմիտեին: Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կանոնադրության կուպիտ խախտում էր նաև կուսակցական մարզային կոմիտեի գործունեության դադարեցնելը և նրա իրավասությունները հատուկ կոմիտեին

հանձնելը: Փաստորեն մարզը գրկվել է իր ունեցած շնչին իրավունքներից և հայ բնակչությունը հեռացվել էր իր ազգային շահերը պաշտպանելու օրինական մասնակցությունից: Համագումարը ԼՂԻՄ-ը հռչակում է անկախ խորհրդային տարածք, նրա սահմաններում դադարեցվում է Ադրբեջանի սահմանադրության և ազերիների կողմից Ղարաբաղի մասին ընդունված օրենքների գործադրությունը: Եթե Ադրբեջանը փորձ անի միջամտելու մարզի գործերին, դա կդիտվի որպես ագրեսիվ ակտ և կստանա համարժեք պատասխան:

Համագումարը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին բոլոր միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին ճանաչելու Ղարաբաղի Ազգային խորհուրդը որպես ԼՂԻՄ-ի միակ օրինական իշխանություն և օժանդակելու կառավարման ձևերի վերականգնմանը: Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման և անկախության ձգտումներին օգնելու խնդրանքով համագումարը դիմում էր նաև աշխարհի դեմոկրատական պետությունների կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Միաժամանակ մարզի բնակչությանը կոչ էր արվում չենթարկվել պրոֆոկացիաներին և ամրապնդել կարգապահությունը:

Համագումարի կողմից հատուկ շրջանի պարետին, խորհրդային բանակի ու ներքին գործերի անձնակազմին ընդունված դիմումի մեջ բացատրվում էր ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանի ընդունած որոշման արդարացի լինելը, որպես 20-ական թվականների սկզբին թույլ տված հրեշավոր արտոնական սխալի արբազյման, բռնի ուժով մասնատված ժողովրդի երկու հատվածների վերամիավորման ժողովրդական կամքի արտահայտություն: Ղարաբաղյան շարժումը վերակառուցման ծնունդ է և նպատակ ունի վերադարձնելու ազգամիջյան հարաբերություններում ամբողջ աշխարհի կողմից ընդունված իրավական նորմերը: Համագումարը դատապարտում է ամեն մի բռնություն, կոչ է անում ակտիվ համագործակցություն գործերի և բնակչության միջև: Հույս է հայտնվում, որ հարգալից վերաբերմունք կդրսևորվի համագումարում կազմված Ազգային խորհրդի նկատմամբ, որը ժողովրդի կողմից ընտրված մարմին է:

Համագումարը անհրաժեշտ համարեց նաև դիմել աղյուքեջանցիներին բացատրելով, որ Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծումը վերջ կդնի երկու հարևան ժողովուրդների միջև ծագած թշնամությանը: Հայաստանին միանալու մասին ընդունված որոշումը ոչ մի կերպ չի ոտնահարում ադրբեջանական ժողովրդի իսկական շահերը, քանի որ չի կարող ազատ լինել մի-ժողովուրդ, որն իշխում է ուրիշ ժողովրդի վրա:

Դիմումի վերջում նշված էր, որ խաղաղությունը և հանգստությունը կվերականգնվեն, իսկ ծագած կոնֆլիկտները կլուծվեն խաղաղ ճանապարհով:

Միշտն ասած, ես այնքան էլ չեի հավատում ազերիներին հղած մեր դիմումի վերջին կետին: Ադրբեջանցիների դեկափարության որդեգրած կոշտ դիրքորոշումը, ղարաբաղցիների իրավունքների բացարձակապես անտեսելու նրանց ավանդական քաղաքականությունը, հայերի դեմ ադրբեջանական ժողովրդին անընդհատ գրգռելու, զինելու և վայրենի գործողությունների դրդելու նրանց անսքող կոչերը վրկայում են, որ ազերիները կանգ չեն առնի արյունահեղությունների սուջև և կձգտեն ոչ միայն վերականգնել իրենց գաղութային տիրապետությունը Ղարաբաղի նկատմամբ, այլև կանեն ամեն ինչ Ղարաբաղի ժողովրդին իր պատկանական հողերից դուրս քշելու և Նախիջևանի պես լիովին հայաթափ անելու համար:

Մեզ մնում էր սթափ հայացքով դիտել սպառնող ոչ դյուրին ապագային, համախմբվել և անպայման զինվել: Ես միշտ հիշում էի Խաչատուր Աբովյանի խոսքեր. «Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղյուշաղդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ եսիր անում. աշխարհն էսպես ա»: Ձեռք որ չունենայինք մեզ էլ կկոտորեին, կթալանեին և մեր երկրին կտիրանային: Ուրեմն պետք է գեներունենայինք:

Բաց զինվելը դեռ գործի սկիզբն էր: Ազատագրական պայքարի հաջողության առաջին արայմաններից մեկը երկաթե կարգապահությունն է, վերադաս մարմինների, հրամանատարության որոշումների անթերի կատարումը և զենքի

մեզ մատչելի միջոցներին լավագույն ձևով տիրապետելը: Թուրքերը հաշվի են նստում միայն ուժեղների հետ, որեւէ մեք պետք է ուժեղ լինենք և պաշտպանենք մեր երկիրը ազերիների անխուսափելի ներխուժումից:

## ԳԵՊԻ ԳՈՐԻՍ

Արդեն սկսվել էր Լեոնային Ղարաբաղի շրջափակումը: Փակվել էին երկաթուղային և խճուղային ճանապարհները: Ադրբեջանի ղեկավարությունը ձգտում էր տնտեսապես քայքայել մեր երկիրը, ծնկի բերել ժողովրդին: Մայր հայրենիքի և մյուս երկրների հետ կապը իրականացվում էր միայն օդի ճանապարհով: 1989 թ. աշնանը մեծ քանակությամբ ավտոմեքենաներ էին հավաքվել Գորիսում, որոնք Հայաստանից բեռներ էին բերում Արցախ: Դրանք կլինեին ավելի քան 180 հատ՝ բարձված մթերքներով, շինանյութով և այլն: ԼՂԻՄ-ի ռազմական պարետ գեներալ Սաֆոնովը հայտնում էր, որ ազերիները փակել են Գորիս—Ստեփանակերտ ճանապարհը և թույլ չեն տալիս մեքենաներն անցնեն:

Իհարկե, գեներալի համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում խճուղին ազատելը և մեքենաների ճանապարհը բացելը, բայց նա գործարքների մեջ էր ադրբեջանցիների հետ, կաշառված էր նրանց կողմից և խոստացել էր նպաստել Ղարաբաղի տնտեսական շրջափակմանը: Այս և բազմաթիվ այլ ծառայությունների դիմաց ազերիները գեներալ Սաֆոնովին բացի այլ բաներից, նվիրեցին նաև մի մարդատար մեքենա (կարծես «Ժիգուլի»), որն ուղղաթիռով ուղարկեցին Դոնի-Ռոստով, որտեղ մշտապես ապրում էր այդ նողկալի ոճրագործը:

Մեքենաները Գորիսում 10 օրից ավել կանգնած էին և նրանց բաց չէին թողնում: Հեռախոսային մշտական կապ ունեինք Գորիսի հետ և գիտեինք, թե ինչ է կատարվում այնտեղ: Ես գիտեի լեոնային մի զուգահեռ ճանապարհ, որով կարելի էր բեռնատար մեքենաները Ղարաբաղ հասցընել, ուստի գնացի Խորհրդային Միության կենտրոնի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացու-

ցիչ Արկադի Վոլյկո մոտ և առաջարկեցի իմ ծառայությունը: Նա տվեց իր համաձայնությունը և հեռախոսով այդ մասին տեղյակ պահեց գեմ. Սաֆոնովին: Վերջինիս հայտնեցի, որ պատրաստ եմ 10 զինված մարդկանց հետ գնալ և մեքենաները բերել՝ պայմանով, որ ճանապարհին ռուս զինվորներն ինձ չկանգնեցնեն:

Նա ասաց, որ կոսա 5 զինվոր և «ԳԱՁ—66» բեռնատար մեքենա: Եվ իսկապես, որոշ ժամանակ անց իմ տրամադրությամբ տակ դրեցին այդ ավտոմեքենան և 5 ռուս զինվորների՝ իրենց հրամանատարի հետ (նա լեյտենանտ էր, անունն էր Օլեգ): Մշտապես կապ ունենալու համար ինձ տվեցին նաև ռացիա: Ջինվորներին կարգադրվեց ինձ հասցնել Գորիս, իմ իմացած ճանապարհով և ետ վերադառնալ:

Ստեփանակերտից մեկնեցիք երեկոյան: Ըուշիի մոտ թուրքերը ճանապարհը փակել էին: Ջինվորները հայտնեցին, որ գնում են ստուգելու պոստերը: Ես թաքնված էի զինվորների մեջ, թուրքերը ինձ չտեսան և բաց արեցին խճուղին: Գնացիք Բերդաձոր: Այն օրերին անձնագրային ռեժիմը ստուգելու պատրվակով զինվորները թուրքերի հետ միասին մտնում էին հայկական գյուղերը, գինաթափ անում, երբեմն էլ ձեռքակալում մարդկանց: Այդ «ստուգումներն» ուղեկցվում էին թալանով, անմեղ մարդկանց ծեծ ու ջարդով: Բերդաձորի բնակիչների մի մասը ունեցած գեներր վերցրել, հեռացել էր անտառները, իսկ մյուսները թաքնված էին: Երբ ես դուրս եկա մեքենայից, գյուղացիներն ինձ ճանաչեցին և դուրս եկան թաքնված տեղերից: Մարդկանց մեջ ես նկատեցի կոլտնտեսության նախագահ Գրիգորյանին, որի հետ միասին սովորել էինք Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Ես մոտեցա նրան: Ողջագործվեցիք: Ասացի, որ ուզում եմք գնալ Կոնստանդուպոլիս, թե դա անկարելի է, քանի որ իրենք քանդել են ճանապարհը: Նա հրավիրեց մեզ ընթրելու: Մի խոզ մորթեցին, խորոված պատրաստեցին: Միմյ և մեք վայելում էինք բերդաձորցիների հյուրասիրությունը, գյուղացիները ճանապարհը բաց արեցին (ճանապարհի մեջտեղում նրանք մեծ փոս էին փորել) և մենք դուրս եկանք գյուղից:

Երբ փոքր ինչ հետաքննել էինք Ռեդիստրից, եւ հետադիտա-  
կով տեսա, որ խճուղու վրա մի «Նիվա» մեքենա էր կանգ-  
նեցված և նրա մոտ 6—7 զինված մարդիկ կային: Թուրքեր  
էին: Ամեն կասկածից վեր է, որ գեն. Սաֆոնովն էր նրանց  
հայտնել մեր գալու մասին:

Երբ մենք մոտեցանք շուրջ 300 մետր, եւ զինվորներին  
ասացի, որ պետք է զինաթափենք այդ մարդկանց: Զինվոր-  
ներից չորս հոգու իջեցրեցինք, որպեսզի երկու կողմից մո-  
տենան ազերիներին, որոնք արդեն դիրք էին մտել: Մենք  
սպասեցինք այնքան, մինչև զինվորները ավտոմատները  
բռնած երկու կողմից մոտեցան թուրքերին և հրամայեցին  
գեները մի կողմ նետել: Թուրքերը գետնին սքառկած մնա-  
ցին ու զցեցին հրացանները: Եւ մոտեցա նրանց, հավաքե-  
ցի գեները (6 որսորդական հրացան և մեկ ատրճանակ) և  
լցրեցի մեքենան: Երկու զինվորների թողեցինք նրանց մոտ,  
շարժվեցինք առաջ, անցանք գետը և նշանատուրյան տակ  
վերցնելով թուրքերին, զինվորներին կանչեցինք մեզ մոտ:  
Ծարժվեցինք դեպի Տեղ բնակավայրը, որը Հայաստա-  
նի տարածքում է և մտնում է Գորիսի շրջանի մեջ:  
Գյուղացիները լավ ընդունեցին մեզ: Հետո գնացինք Կոո-  
նիձոր: Պահակակետում եղած սահմանապահ տղաները  
տեսել էին, թե ինչպես ենք զինաթափել թուրքերին: Կոոնի-  
ձորցիները ուզեցին մեզ հյուրասիրել, բայց հրաժարվեցինք,  
ժամանակ չկար: Նրանք գենք խնդրեցին: Եւ նրանց տվեցի  
2 որսորդական հրացան և մեկ ատրճանակ, հետո շարժվե-  
ցինք դեպի Գորիս: Ասեմ, որ Տեղ գյուղում հանդիպեցի  
Ռուբին անունով մի տղայի, որի հետ ծանոթացել էինք ու-  
ցիայով կապ պահպանելու շնորհիվ:

Գորիս չհասած, տեսանք շուրջ 200 բեռնատար մեքենա-  
ներ, որ կանգնել էին հին օդանավակայանի մոտ: Մեծ թվով  
վարորդներ կային այնտեղ, նրանց մեջ էին նաև Գորիսի  
շրջկոմի առաջին քարտուղարը, Հայաստանի կոմկուսի ԿԿ  
և Միսիստրների խորհրդի ներկայացուցիչները:

Եւ զինվորներին հանձնարարեցի սպասել և մոտեցա  
մարդկանց խմբին: Վարորդների մեջ ծանոթներ կային և  
նրանք ինձ ճանաչեցին: Բոլորը շրջապատեցին ինձ և հրա-  
վիրեցին այնտեղ դրված վրանի մեջ: Ինձ հետ եկած զին-

վորները կարծեցին, թե ինձ ձերբակալեցին, ուստի ավտո-  
մատ հրացանները բռնեցին վարորդների վրա և պահանջե-  
ցին ինձ անմիջապես ազատել: Եւ նրանց բացատրեցի, որ  
ձերբակալված չեմ և զրույց եմ անում վարորդների հետ:  
Վերջիններին ասացի, որ եկել եմ Ղարաբաղից և կարող եմ  
նրանց տանել Ստեփանակերտ: Նրանք ասացին, թե 300  
զինվորներ եմ եկել ու իրենց չեն կարողացել տանել, ինչ-  
պե՛ս պետք է դու 5 զինվորներով մեզ տանես: Եւ նրանց  
բացատրեցի կացությունը և խոստացա անվտանգ տեղ հա-  
ցնել: Ռոշեցիները առաջնության շարժվել: Հետո զինվորների  
հետ գնացինք Գորիսի հյուրանոց: Հյուրանոց չհասած ինձ  
մոտեցան Գորիսի շրջանի ՊԱԿ-ի լիազորն ու միլիցիայի  
պետը: Կասկածներ ունեին վրաս, կարծում էին թե պրովո-  
կատոր եմ և ուզում էին ձերբակալել, բայց ինձ ճանաչող-  
ները թույլ չտվեցին: Նրանք հայտնեցին, որ կարգելեն մե-  
քենաները տանել Գորիսից: Հյուրանոցում համարներ վեր-  
ցրեցինք, 2 զինվորի հերթապահ նշանակեցի միջանցքում ու  
բնեցինք: Հերթապահներին փոխել էի տալիս 2 ժամը մեկ:  
Առավոտյան ժամը 6-ին վեր կացանք ու զինվորների հետ  
գնացինք Գորիսի կուսակցական շրջկոմ: Շրջկոմի քարտու-  
ղարը ասաց, թե իրեն զանգ եմ տվել Ա. Վոլսկին ու Հենրիկ  
Պողոսյանը և ասել, որ ճանապարհին շատ թուրքեր եմ հա-  
վաքված, վտանգավոր է, մեքենաները չի կարելի անցկա-  
նել այնտեղով:

Մի ծանոթ երիտասարդ մեզ հրավիրեց իր տունը նախա-  
ճաշելու: Հետո մենք մեկնեցինք Գորիսից ու եկանք Խճճո-  
րեակ: Այնտեղից էլ մտանք Լաչինի շրջանի տարածք: Սահ-  
մանին ուսական զինվորականների պոստ կար, բացել  
տվեցինք արգելաձողն ու շարժվեցինք Ղուբաթիի ուղղու-  
թյամբ: Դեռ չէինք հասել Ղուբաթի, երբ մեր ճանապարհը  
փակեց մի զինվորական բեռնատար մեքենա, որի մեջ նրա-  
տած էին երկու ուզրեկ զինվորներ: Նրանք պահանջում էին,  
որ իրենց հետ գնանք Ղուբաթիի զինվորական պարետա-  
տուն: Դա հավասարազոր էր սղորեշանցիների ճանկն  
ընկնելուն: Երկու կողմից ճանապարհը կտրեցին, հավաք-  
վեցին շուրջ 60—70 սղորեշանցի զինվայներ: Ինձ ուղեկցող  
5 զինվորները և հրամանատարը կարգադրեցին նրանց 50

մետր հեռանալ մեր մեքենայից: Ես մնացել էի մեքենայի մեջ: Ինձ տվել էին չորս նոնակ, որոնցից երկուսը՝ արցունքաբեր: Ազերիները պահանջում էին ինձ հանձնել իրենց: Օլեգը ավտոմատ հրացանից կրակեց օդի մեջ՝ թույլ չտալով, որ ազերիները մոտենան ինձ: Նա նրանց ասաց, որ ես ՆԳ քննիչ եմ, նրանց ավագն եմ և որ մենք պետք է գնանք Լաչինի պարետատուն, քանի որ այն ենթարկվում է գեներալ Սաֆոնովին:

Մեր մեքենան աշխատեցրինք և դաշտ մտանք, հետո շրջանցելով մեզ շրջափակած մեքենաները, ուղղվեցինք դեպի Լաչին: Մի քիչ գնալուց հետո պարզվեց, որ ճանապարհը փակված է մեքենաներով: Ինձ ուղեկցող զինվորները արցունքաբեր գազ պարունակող և ծխածածկույթ ստեղծող նոնակներ նետեցին, հետո մեր մեքենան խոյահարելով ճանապարհը փակած մեքենաներին, դուրս եկավ Խնձորեսկ տանող խճուղին: Մենք կրակում էինք օդի մեջ և եթե չլիներ մեր ստեղծած ծխածածկույթը, ազերիները մեզ կբռնեին: Հայաստանի ասհմանի մոտ թուրքերը փակել էին ճանապարհը: Նրանք 8 հոգի էին: Մենք ավտոմատները բռնեցինք նրանց վրա և կարգադրեցինք բացել ճանապարհաձողը: Քիչ անց հասանք Խնձորեսկի պահակախետ: Մեր տղաները տեսել էին ծուխը, լսել կրակոցները և կարծել էին, թե մեզ թուրքերը խփել են: Ուրախությամբ մեզ ընդունեցին, ոչխար մորթեցին, բոլորիս լավ հյուրասիրեցին: Հատկապես ուշադիր էին զինվորների նկատմամբ, որոնց խմեցրին ինչպես հարկն է: Խնձորեսկի տղաներին ես նվիրեցի իմ մոտ մնացած հրացաններից մեկը և երեկոյան ժամը 10-ին կրկին շարժվեցինք դեպի Ադրբեջանի սահմանը:

Ադրբեջանցիների պահակակետում կային մոտ 10 հոգի: Մենք անցանք գետը և ավտոմատներից կրակեցինք դեպի վեր: Թուրքերը խեղապատտ փախան, մենք ուղղվեցինք Բերդաձորի կողմը և ապա մեր եկած ճանապարհով վերադարձանք Ստեփանակերտ:

Առափոտյան ժամը 9-ին գնացի գեներալ Սաֆոնովի մոտ՝ տանելով 3 հրացանները: Օլեգի հետ պայմանավորվեցինք անել հրան, որ մյուս հրացանները և առորճանակները ազերիների պահանջով ցած ենք գցել մեքենայից:

Գեներալ Սաֆոնովը խիստ բարկացած էր. ինչպե՞ս ենք մարձակվել զինաթափել միլիցիայի պետին, կոմերիտմիության շրջկոմի քարտուղարին, հետո մեկ ժամ գետնին ենք պսակեցրել նրանց և այլն: Հիմա ողջ Ադրբեջանն այս մասին է խոսում: Նա կանչեց Օլեգին և ստիպեց գեկուցագիր գրել:

Ես գնացի Ա. Վոյսկու մոտ և ասացի, որ իմ գնացած ճանապարհով կարելի է քերել Գորիսում կուտակված մեքենաները: Բայց նա հրաժարվեց: 300 զինվորներով փորձել էին Ղարաբաղ մտնել Դուբաթլիի վրայով, բայց անփառ փակված էր և ետ էին դարձել: Գեներալ Սաֆոնովը սուրբես ցույց էր տալիս, որ ցանկանում է օգնած լինել մեքենաների գալու, բայց փառտորեն նա ակտիվ կերպով արգելք էր հանդիսանում դրան: Գաղտնի տեղյակ էր պահում ազերիներին մեր պլանների մասին: Թե՛ Վոյսկին, թե՛ Սաֆոնովը չէին ուզում նպաստել Հայաստանից եկած մեքենաների տեղ հասնելուն, նրանք պարզապես ձգտում էին Ղարաբաղը խեղդել շրջափակման մեջ:

### ՄՈՍԿՈՎՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ (1989 թ. Օոյեմբեր)

Ղարաբաղի հարցը կրկին բարձրացվելու էր ԽՆՀՄ ԳԽ հիստում: Ոյոշում ընդունվեց պատվիրակություն ուղարկել Մոսկվա, որի անդամներն ամեն ինչ անելու էին ղարաբաղցիների արդար պահանջները հարկ եղած ձևով ներկայացնելու, մեր նկատմամբ բարյացակամ մթնոլորտ ստեղծելու համար: Ես ես ընդգրկված էի պատվիրակության կազմում: Ստեփանակերտից մեկնեցինք 5 հոգով (Արհեստակցական միության նախագահը, Ազգային խորհրդի անդամ Սերգեյ Դավթյանը, Ղարաբաղի գլխավոր վիրաբույժ Էդիկ Դուկասյանը, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս Համլետ Դավթյանը և ես): Մոսկվայում մեզ միացան Ազգային խորհրդի անդամ Ռոբերտ Քոչարյանը և գրող Զորի Բալայանը: Մեզ հետ տանում էինք «Մոլետուկան Ղարաբաղ» ռուսերեն թերթի օրինակներ, որի մեջ հրատարակված նյութերը պատմում էին մեր արդարացի

պահանջների, տասնամյակներ շարունակ Ղարաբաղում թուրքերի կիրառած թալանչիական, հայատյաց և հաշտահալած քաղաքականության, հատկապես վերջին տարիներին թուրքերի սանձազերծած վաշտագությունների և գողությունների մասին: Տարել էինք մեր որոշումները, բանաձևերը, գրավոր կարևոր փաստաթղթերը: Դրանցից բացի, մեզ հետ տարել էինք նաև 240 շիշ թթի օդի և կոնյակ:

Տեղավորվեցինք «Մոսկվա» հյուրանոցում: Մենք հանդիպումներ ունեցանք Կիրգիզիայի, Ղազախստանի կուլտուրայի մինիստրների, պատգամավորներ՝ Սախարովի, Սոբչակի, ուկրաինացի գրող Օլեյնիկի, Գալինա Ստարովոյտովայի և այլ ազդեցիկ պատգամավորների հետ: Մենք նրանց բացատրում էինք Ղարաբաղի հարցի էությունը, պատմում այն մասին, թե ինչպես 1921 թ. Ստալինի ձեռքով մեր լեռնաշին երկրամասը նվիրաբերվեց Ադրբեջանին, ինչպես հայաթափվեց նույն ժամանակ Ադրբեջանին նվեր տրված հինավուրց հայկական նահանգ Նախիջևանը, ինչ ծանր հետևյալանքներ ունեցան հայատյաց ազգայնամոլ Վ. Ալիևի սանձազերծած հալածանքները մեր երկրի համար և այլն, և այլն:

Մեր հանդիպումները, գրույցները, բացատրությունները նպատակեցին այն բանին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատների մի մասը նշմարիտ տեղեկություն ստացավ Ղարաբաղի ու նրա խնդիրների վերաբերյալ: Զգում էինք բարյացակամ վերաբերմունք: Մարդիկ հասկանում էին մեզ, մտնում մեր դրության մեջ, հավատում էին և խուսափում օգնել հնարավոր ամեն բանով, բայց Գորբաչովը, Լուկյանովը և նրանց լակեյները այլ ծրագրեր ունեին Ղարաբաղի նկատմամբ: Նրանց ցանկությունն էր Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ մի բան, որ հավասարագոր էր Արցախի լիովին հայաթափման:

Հանդիպումներ ունեցանք Մոսկվայի հայ համայնքի անդամների հետ և համաձայնեցրինք մեր հետագա անելիքները: Մեզ շատ օգնեցին Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հոգևոր առաջնորդ Տիրան արքեպիսկոպոս Կյորեղյանը, նկարիչ Կորյունը և կրտսեր եղբայրս՝ Վալերի Պետրոսյանը,

որը 1980 թ. հաստատվել էր Մոսկվայում: Ղարաբաղյան շարժմանն ակտիվորեն մասնակցելու համար նրան հեռացրել էին բժշկական ինստիտուտի 6-րդ կուրսից: Նա դարձել էր լրագրող և բազմաթիվ հոդվածներ հրատարակեց, որոնք նվիրված էին Ղարաբաղի խնդիրներին: Հետագայում նա վերականգնվեց ինստիտուտում, ավարտեց և այժմ Ստեփանակերտում աշխատում է որպես բժիշկ:

Մի անգամ, երբ Հայաստանի կոուպ. նախագահ Ալբերտ Հովհաննիսյանի հետ դուրս էինք գալիս «Մոսկվա» հյուրանոցից լրագրեր գնելու, մեր դիմաց դուրս եկավ մի սղորեջանցի՝ երկու հսկայական կողովներ ձեռքին: Ժպտալով նա մեզ աղրբեջաններն ասաց՝ «բերել եմ»: Ես հասկացա, որ այդ կողովները բերել էին աղրբեջանական պատվիրակության անդամների պահանջով՝ տարբեր մարդկանց հյուրասիրելու և սիրաշահելու համար: Ես անմիջապես պատասխանեցի՝ «լավ ես արել»: Ալբերտին զգուշացրեցի, որ հանկարծ հայերեն չխոսի ինձ հետ, քանի որ նա մեզ աղրբեջանցիների տեղ էր դրել: Այդ մարդը կողովները հացրեց վերելակի մոտ և ուզում էր մեզ հետ վեր բարձրանալ, բայց ես չթողեցի և նա շտապ էտ դարձավ: Կողովներով ծանրաբեռնված մտանք հյուրանոցի մեր համարը: Պարզվեց, որ կողովներից յուրաքանչյուրի մեջ 5-ական շիշ «Գյուլգյուլ» կոչված աղրբեջանական կոնյակ է, ընտիր դեղձ և խաղող: Այդ մրգերով մենք հյուրասիրեցինք մեր ընկերներին, հյուրերին, ինչպես և Արկատի Մանուչարովի կնոջն ու քրոջը, որոնք եկել էին տեսակցելու անմեղ տեղը բանտարկված իրենց հարազատի հետ:

## ԹԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐՈՎԱԸՄԴՈՒՄ ԵՐԶԱՓԱԿՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

(1989 թ. դեկտեմբեր)

1989 թ. վերջերին ծննդավայրիս՝ Կիրովաբադի հսկերը հայտնվել էին ահավոր վիճակի մեջ: Վարեճացած թուրք խուժանը, նրահրված Սուճգալիթի, Բաքվի ու այլ վայրերի հայերի ջարդերը կազմակերպած ու անպատիժ մնացած

ազերի ազգայնամոլների կողմից, սկսել էին վայրագություններ անել նաև Կիրովաբադի հայերի նկատմամբ: Կիրովաբադի հայերը, որոնց թիվն այն ժամանակ հասնում էր 60—70 000 հոգու, շրջափակման մեջ էին: Հայկական թաղամասը բարիկադներով ամրացված էր բոլոր կողմերից: Ամենօրեք հայերը պոստեր էին դրել և զինված տղաները թույլ չէին տալիս թուրքերին ներխուժելու հայկական թաղամաս:

Հեռախոսագանգ եղավ Կիրովաբադից և մենք տեղեկացանք, որ հայ բնակչությունը գրկված է հացից: Թուրքերը արգելել էին հացի մատակարարումը հայերին:

Ես անմիջապես գնացի քաղխորհրդի նախագահի տեղակալ Յուրի Ավագիմյանի մոտ: Նա հասկաբեց ամուտի բաժնի աշխատակիցներին և ես պատմեցի Կիրովաբադի հայերի ծանր վիճակի մասին: Բաժնի ղեկավար Մանուկ Լալայանը, տեղակալը՝ Ալբերտը խոստացան ամեն բան տալ՝ ալյուր, պահածոներ և այլն, և ամեն ինչ անվճար:

Ես գնացի մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի մոտ: Նա ևս հավանություն տվեց Կիրովաբադի հայերին անհապաղ պարենային օգնություն հասցնելու իմ ծրագրին: Ես սասացի, որ լավ գիտեմ Ծախումյանով Կիրովաբադ տանող ճանապարհը և կարող եմ բեռներն անցկացնել այդտեղով: Նա խորհուրդ տվեց նախապես ստուգել ճանապարհը և վտանգի տակ չդնել տանելիք մթերքները: Նույն գիշեր շտաբի պետը, այսինքն ևս, իմ տեղակալ Ռուբեն Աղաջանյանը և շտաբի անդամ, բնության պահպանության կոմիտեի նախագահ Գարիկ Գրիգորյանը «ՈՒԱԶ» մեքենայով մեկնեցինք Ծախումյան: Բոլորս հագել էինք զինվորական համազգեստներ: Երբ հասանք Ծախումյան, շրջխորհրդի նախագահ Վոլոդյա Աղաջանյանը զանգահարեց Մանուշենի գյուղխորհրդի նախագահին, որ օգնություն ցույց տա մեզ: Մեկնեցինք Մանուշեն: Այնտեղ մեզ միացավ գյուղխորհրդի նախագահը, որը հայտնեց Թողան գյուղի մոտ թուրքերի պահակակետի գոյության մասին: Թողանը հեռու էր և նրա բլմակիչները պահակակետ էին դրել Ծախումյան—Գետաշեն ճանապարհի վրա:

Գնացինք: Երբ հասանք այդ պահակակետին, տեսանք երկու ադրբեջանցիներ ևս կանգնած: Նրանք հրացանների բռնեցին մեր կողմը և կարգադրեցին կանգնել: Ես դուր քաց արեցի և թուրքերեն հայնդելուով նրանց մոտ կանչեցի: Մեկը եկավ մոտս, մյուսը մնաց հեռվում: Պաացի, որ Բաբայից եմ, դատախազ եմ, գնում եմ Գետաշեն: Հրամայեցի կանչել իր ընկերոջը: Նա ինձ ադրբեջանցու տեղ դրեց և ձայն տվեց ընկերոջը, թե արի, մուսուլման է: Նրանք երկուսն էլ հրացանները իջեցրած եկան կանգնեցին մեր մեքենայի մոտ: Գարիկը ետևի դռնից դուրս եկավ ատրճանակը ձեռքին, ես էլ դուրս եկա և արագորեն նրանցից խեցինք հրացանները, նրանք սկսեցին խնդրել. «Թե ընկեր դատախազ, ե՛տ տուր մեր հրացանները»: Ես սկսեցի բղավել նրանց վրա, թե ի՞նչ գործ ունեն իրենց գյուղից սուքան հեռու պահակակետ են դրել: Գետաշենում տպանություն է եղել, գնում ենք քննելու այդ գործը: Հրացանները կտանենք և հետո կողարկենք ձեր գյուղը, իսկ եթե դուր ետրից կլինեք այս տեղում, երկուսիդ էլ կձերբակալենք:

Երբ հասանք Գետաշեն, տեսանք ամենուր հայերը պահակակետեր են դրել և շատ զինված մարդիկ հերթապահում էին այնտեղ: Նրանք մեզ հյուրասիրեցին և սպք բնթացքում մենք պատմեցինք Կիրովաբադ օգնություն հասցնելու մեր ծրագրերի մասին: Գետաշենցիները զգուշացրեցին մեզ, որ ճանապարհների վրա թուրք գյուղացիները միլիցիոներների հետ պահակակետեր են դրել, քայց կարելի է Թագաշեն հասնել խաղողի այգիների միջով: Գնացինք, տուգեցինք պահակակետերը, իմացանք թե ինչպես կարելի է անվտանգ անցնել դեպի Կիրովաբադ, հետո վերադարձանք Մանուշեն, որտեղ մեզ սպասում էին ագրուպրոմի նախագահ Ծախեն Մեղրյանը և Վոլոդյա Աղաջանյանը: Պետք է ասեմ, որ Ծ. Մեղրյանը ակտիվորեն մասնակցում էր գեներու զինամթերք ձեռք բերելու աշխատանքին: Գնացինք նրա տուն: Ծաշի տեղանի շուրջ նրանք խոստացան ամեն ձևով օժանդակել մեզ, եթե պետք լինի, մարդիկ էլ կտան: Նույն օրը վերադարձանք Ստեփանակերտ:

Երեկոյան սկսեցին մթերքները բարձել երկու «Կամազ» մեքենաների մեջ: Ես գնացի քաղաքացիական պաշտպա-



նության շտաբի պետ Գեորգի Պետրոսյանի մոտ և խնդրեցի զհնվորական համազգեստներ: Վարորդների համար նա տվեց զհնվորների, իսկ ինձ համար՝ գնդապետի համազգեստ: Մյուս օրը առավոտյան մեկնեցինք Կիրովաբադ:

Մինչև Ծափուկյան ամեն ինչ լավ էր: Խանլարի մոտ մի լիցիայի պահակակետ կար, որտեղ հերթապահում էին թե՛ ռուսներ, թե՛ ազերիներ: Տեսնելով, որ զհնվորական համազգեստով ենք՝ մեզ բաց թողեցին: Կիրովաբադի մոտ մեզ կանգնեցրին: Մտտեցավ մի ռուս սերժանտ և ուղեգիր պահանջեց: Ստուգելուց հետո ուղեգիրը, նա կարգադրեց բաց անել ճանապարհի արգելաձողը: Իրանից հետո հաջողությամբ անցանք նաև մյուս պահակակետերով, մտանք Կիրովաբադ և կանգ առանք հայկական եկեղեցու մոտ:

Կիրովաբադի հայերը հատուկ կոմիտե էին ստեղծել, որը զբաղվում էր հայերի ինքնապաշտպանության կազմակերպման, սնունդ հայթայթելու և բաժանելու գործերով: Այդ կոմիտեի անդամ էր նաև եկեղեցու քահանա տեր Սահակը:

Հայերը շրջապատեցին մեր մեքենան: Այգբում կարծում էին, թե Հայաստանից ենք գալիս, բայց երբ իմացան, որ այդ օգնությունն ուղարկել են շրջափակված Ղարաբաղից, շատ հուզվեցին, սկսեցին լաց լինել: Մինչ կրատարկեին մեքենաները, միտինգի նման մի բան եղավ: Մենք ասացինք, որ Ղարաբաղը պատրաստ է օգնել նրանց թե՛ միջոցներով, թե՛ զենքով:

Կիրովաբադում էր բնակվում հորեղբորս աղջիկը՝ Անայա Պետրոսյանը: Նա 59 տարեկան էր, ամուսնացած չէր և ապրում էր քրոջ երեխաների հետ: Ծս նրան ստաշարկեցի ինձ հետ գնալ Ղարաբադ, բայց նա հրաժարվեց: Հրեա և թուրք ընկերուհիներ ուներ, հույսը դրել էր նրանց պաշտպանության վրա: Այն ժառանգակ կային մարդիկ, որոնք միամտորեն հավատում էին, թե դեռ ամեն ինչ կորած չէ, որ պետությունը կվերականգնի կարգ ու կանոնը: Դրանցից էր նաև հորեղբորս աղջիկը, որը չէկավ ինձ հետ Ստեփանակերտ:

Վերադարձանք Գետաշենի վրայով: Գետաշենցիները, իսկ հետո նաև շահումյանցիները շատ ուրախացել էին: Այդ մեքենաներով մենք Ստեփանակերտ բերեցինք 10 երեխա-

ների՝ 10-ից 14 տարեկան և 26—27 դարաբաղի կանանց, և տղամարդկանց, որոնք տարբեր գործերով գնացել էին Կիրովաբադ:

Ծառ չանցած, մենք կրկին մեկնեցինք Կիրովաբադ: Դարձյալ երկու մեծ բեռնատար մեքենաներով: Տարել էինք այլոր, պահածոներ և 1000-ից ավելի թխած հաց:

Մեր երկրորդ այցելության ժամանակ տեսանք, որ դրությունը ավելի է ծանրացել: Հարձակումները հայերի վրա հաճախակի էին դարձել: Վերադարձին մեզ հետ բերեցինք 42 հոգի՝ մեծ մասամբ երեխաներ և տարիքավոր մարդիկ: Պահակակետերում խտացրել էին ստուգումները, հերթապահողների մեջ երևում էին նաև սպաներ:

Իմ գնայն արդեն վտանգավոր էր, ուստի երրորդ և չորրորդ անգամ Կիրովաբադ մեկնեցին իսկական կադրային սպաներ՝ փոխգնդապետ Կոչյա Բաբայանը և քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալը Ծափուկյանից: Սրանց հետ Ստեփանակերտ եկավ Կիրովաբադի քահանա տեր Սահակը, որին այնուհետև ուղարկեցինք Էջմիածին: Նա իր հետ բերել էր տեսածապալեմներ, որոնց վրա նկարահանված էին ազերիների վայրագությունները Կիրովաբադում:

Չորրորդ անգամ Կիրովաբադ մեկնեց Գրիշա Աֆանասյանը, որը բերեց Կիրովաբադում ապրող իր ծնողներին, ինչպես և այլ մարդկանց:

Դեկտեմբերի կեսերին Երևանից և Ռուսաստանի քաղաքներից ինձ մոտ եկան 7 երիտասարդներ: Սրանց մասին լսել էի, գիտեի որ կիրովաբադցիներ են: Խնդրեցին իրենց ուղարկել Կիրովաբադ: Իմ տված մեքենայով նրանք ճանկա ընկան և քարեհաշող տեղ հասան Թազաշենի վրայով: Շուրջ երկու շաբաթ անց այդ տղաները վերադարձան Ստեփանակերտ:

Նրանք եկան ինձ մոտ՝ ստաշիոն: Ձեռքներին պայուսակներ կային: Նրանք ուղղակի ասացին, որ իրենք կույել չէին կարող, բայց կարող էին գողություն անել և այդ նպատակով էլ մեկնել էին Կիրովաբադ: Նրանք թալանել էին հայկական թաղամասում ապրող թուրքերին: Գիշերով

մտնում էին նրանց տները, կապկպում բոլորին, վերցնում թանկարժեք իրերը և դրամը: Մի բանի հոգու սպանել էին: Այնքան մեծ էր վախը նրանցից, որ աղբբեջանցիները հատուկ զինվորներ էին պահում իրենց տներում:

Ստեփանակերտում նրանք շատ դրամ տվեցին Կիրովաբաղից գաղթածներին: Ասում էին, որ վճռել են Կիրովաբաղի ֆոնդ ստեղծել փախստականներին օժանդակելու համար: Հետագայում նրանք նյութական օգնություն ցույց տրվեցին փախստականներին:

Ինչ վերաբերում է հորեղբորս աղջկան, ապա նրան այլևս չտեսա: Բմացանք, որ նրան վերջին անգամ տեսել էին Կիրովաբաղի բանտում: Մեր որոնումներն արդյունք չտվեցին:

### ՍՈՒՄԳԱՅԻԹԻՑ ՀԵՏՈ

1988 թ. փետրվարի 27—29-ը տեղի ունեցավ Սումգայիթի եղեռնագործությունը: Հարկավոր էր օգնություն ցույց տալ փախստականներին: Սումգայիթում հաստատված հայերը դարաբաղցիներ էին, նրանց հարազատները ապրում էին Ղարաբաղում և միանգամայն հասկանալի էր հայրենիք վերադառնալու նրանց ձգտումը: Բայց Աղբբեջանը թույլ չէր տալիս, որ սումգայիթցիները գան Ղարաբաղ: Նրանց տանում էին Հայաստան, Ռուսաստան, նույնիսկ Թուրքմենստան, բայց ոչ Ղարաբաղ: Նպատակը պարզ էր. Ղարաբաղը պետք է աստիճանաբար հայաթափվեր, հայերի տեղը գրավելու էին Աղբբեջանի տարբեր շրջաններից, ինչպես նաև Հայաստանից գաղթած ազերիները, այնպես որ Սումգայիթի հայերը չպետք է ապրեին Ղարաբաղում: Մեծխեթցի թուրքերին բերում էին Ստեփանակերտի տակ՝ Խոջալու, Ղայթալու և Ծուշիի շրջանի գյուղերը, իսկ սումգայիթցի հայերը չպետք է տեղ ունենային իրենց ծննդավայրում:

Այդ օրերին Ստեփանակերտ էր եկել «Իզվեստիա» թերթի թղթակիցը՝ Պավել Գուտենտովը (թե՛ Կուտենկոն), որին հատուկ մեքենայով ուղարկեցինք Սումգայիթ և Բաքու: Նա տեղում ծանոթացավ կացությանը և «Իզվեստիայում» տը-

սագրեց հոդված այն մասին, որ սումգայիթցիներին թույլ չեն տալիս մեկնել իրենց հայրենիքը՝ Ղարաբաղ: Աղբբեջանական իշխանությունները ստիպված եղան արգելք չհանդիսանալ սումգայիթցիների Ղարաբաղ մեկնելուն:

Սումգայիթի դեպքերից հետո «Կուտենկոն», իսկ հետո «Ազգային խորհրդում» ստեղծեցինք հանձնաժողով, որը պետք է զբաղվեր փախստականների տեղավորման, նրանց օգնություն ցույց տալու հարցերով: Հանձնաժողովի նախագահ ընտրեցին ինձ: Արդեն Ղարաբաղ էին հասել Սումգայիթի փախստականների առաջին խմբերը: Մենք սկսեցինք նրանից, որ կազմեցինք Ստեփանակերտ հասած փախստականների ցուցակները: Միաժամանակ թաչկումների միջոցով ցուցակագրեցինք բոլոր ազատված բնակարանները: Փախստականների նկատմամբ բացառիկ հոգատարություն ցուցաբերելով՝ մարդիկ հայտնում էին իրենց ունեցած հնարավորությունների մասին և նրանց տանում իրենց տները: Աշխատում էինք փախստականներին տեղավորել ըստ իրենց ծննդավայրերի: Եթե նրանք Մարտակերտից էին, ուղարկում էինք այնտեղ, հաղբթցիներին, մարտունեցիներին և մյուսներին ուղարկում էինք իրենց հարազատների մոտ:

Չնայած աղբբեջանցիների հարուցած արգելքներին, այնուամենայնիվ կարողացանք Ղարաբաղում ընդունել 12 000 սումգայիթցիների: 1988 թ. մարտ ամսից մինչև նույնիս կարողացանք Սումգայիթ ուղարկել 570 բեռնատար մեքենաներ, որոնք տեղափոխում էին փախստականներին իրենց տնային առարկաներով և ունեցվածքով: Անհրաժեշտ է նշել, որ փախստականների Ղարաբաղ փոխադրման գործում մեծ աշխատանք կատարեց Ստեփանակերտի ավտոբազայի դիրեկտոր Մաքսիմ Միրզոյանը: Դրանական միջոցներ մեզ տրամադրում էր սիրելի դերասան Սոս Սարգսյանի ստեղծած ֆոնդը: Երևանից զգալի օգնություն էր գալիս: Գրող Ջորի Բալայանի և Սոս Սարգսյանի նախաձեռնությամբ Ստեփանակերտ հասավ մի բեռնատար մեքենա, որը լեցուն էր ներքնակներով ու ծածկոցներով: Մեր կազմած ցուցակներով Սոս Սարգսյանի ֆոնդից նյութական օգնություն էր հատկացվում սումգայիթցիներին:

Ալեսեցիներ կիրառել բնակարանային փոխանակումն յուրօրինակ մի եղանակ՝ Ղափանից, Ջերմուկից, Գորիսից, Մխիթանից աղբբեջանցիներին ուղարկում էինք Սումգայիթ։ Նրանց ազատված բնակարանների հասցեները տալիս էինք Հայաստանից տարիներ առաջ Սումգայիթ գնացած և այժմ այնտեղից հեռացող հայերին։ Փոխանակումը, իհարկե, համարժեք չէր, որովհետև սումգայիթցիները, իսկ հետագայում նաև բաբվեցի հայերը, թողնում էին բարեկարգ, մեծ մասամբ նորոգված, երբեմն էլ կահավորված հրաշալի բնակարաններ և փոխարենը ստանում աղբբեջանցիների կեղտոտ, անհարմար և անբարեկարգ տները։ Բայց կարեվորն այն էր, որ թուրքերը հեռանում էին և նրանց բնակարանները տրվում էին երբեմն ամեն բան կորցրած և հուսահատության եզրին հասած սումգայիթցի հայերին։ Ստեփանակերտի Արմենավան թաղամասում հող հատկացվեց և մեծ թափով մկսեցին նրանց համար տներ կառուցել։

Մեքենաները Ստեփանակերտից մեկնում էին առավոտ շուտ։ Երեկոյան հասնում էին Սումգայիթ։ Գիշերը բարձում էին իրերը, իսկ առավոտյան վաղ վերադառնում։ Տեղ էին հասնում երեկոյան։ Այն բոլոր մարդիկ, որոնք Սումգայիթից Ղարաբաղ եկան իրենց իրերով և անմիջապես տեղավորվեցին, այդպես էլ ընդմիջտ մնացին Ղարաբաղում։ Իսկ նրանք, որ եկել էին առանց իրերի, մեծ մասամբ հեռացան այլ վայրեր։

Սումգայիթցիներն աշխատանքի լծվեցին և աստիճանաբար հարմարվեցին նոր պայմաններին։ Երբ Աղբբեջանը հարձակվեց Ղարաբաղի վրա և մկսվեց մեր ժողովրդի ազատագրական պատերազմը, փախստական սումգայիթցիները կազմակերպեցին մի մարտական ջոկատ, որին տվեցին «Վրեժ» անունը։ Նրանց մեջ ետում էր իրենց տանջամահ արված համաքաղաքացիների վրեժը լուծելու արդար ցատուրը։ Սումգայիթցիների հրամանատարը Յուրան էր, որը հերոսաբար զոհվեց Առաջաձորի պաշտպանության ժամանակ։ Շուրջ 30 հոգի էին և սկզբում կովել չգիտեին, բայց հետագայում լավ մարտիկներ դարձան և ամեն ինչ անում էին իրենց համաքաղաքացիների վրեժը լուծելու համար։

1988 թ. նոյեմբերին մեզ շուր հասավ, որ երևանում ստեղծվել է «Արցախ» հայրենակցական միությունը, որի նպատակն էր ամեն գնով օգնել Ղարաբաղի պաշտպանության գործին։ Այդ միության ստեղծման գաղափարը առաջ էր քաշել Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի աշխատակից, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Մանասյանը։ Ակզբում, միության ստաջին համաժողովի ժամանակ, նրա աշխատանքները ղեկավարում էին Ա. Մանասյանը և սպառողական կոոպերացիայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ալբերտ Հովհաննիսյանը, որը, դժբախտաբար, զոհվեց երիտասարդ տարիքում։ Հետագայում միության աշխատանքները ղեկավարեցին նախագահներ ընտրված Ա. Մանասյանը (1989 թ.), քանդակագործ Յուրի Հովհաննիսյանը (1990 թ.)։ «Արցախի» պատվավոր նախագահն էր Ղարաբաղյան ազատագրական շարժման նշանավոր գործիչ, այդ միության ստեղծողներից մեկը՝ գրող ու հրատարակիչու Ջորի Բալայանը, որը մեծ գործ է կատարել Արցախի պաշտպանության, զարաբաղյան հարցը աշխարհի հանրությանը պատշաճ ձևով ներկայացնելու գործում։ Մի քանի տարի անց «Արցախը» բարեգործական գործունեությունից անցնում է քաղաքականի։ «Արցախ—Հայաստան» կազմակերպության նախագահ ընտրվեց ակադեմիկոս Լեներ Աղալովյանը (1992 թ.), իսկ ավելի ուշ՝ աշխարհագրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սերգեյ Մելքունյանը։

Միության ստեղծումից շատ չանցած Ստեփանակերտ ժամանեցին «Արցախի» գործադիր մարմնի մի քանի անդամներ, որոնք պատմեցին իրենց ծրագրերի մասին։ Մեծ խնդիրներ էր դրել իր առաջ նորատեղծ այդ միությունը՝ նպատել Արցախի տնտեսական զարգացմանը, մշակութային և հոգևոր վերածնունդին, ամրապնդել մայր հայրենիքի և Արցախի կապերը կյանքի բոլոր բնագավառներում, կազմակերպել Ղարաբաղից հեռացած մարդկանց ներգաղթը,

նյութական միջոցներ ձեռք բերել ճանապարհները և ջրատարները կառուցելու համար, շենացնել ամայացած բնակավայրերը և այլն: Հետագայում նրա աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվեցին նաև փախստականներին, ինչպես նաև Սպիտակի ավերիչ երկրաշարժի տուժողներին օգնություն ցույց տալու կարևոր խնդիրները:

«Արցախը» փոխարի դեր խաղաց Ղարաբաղին ամեն ձևով օգնություն ցույց տալու, Մայր հայրենիքի ու Արցախի կապերի ամրապնդման և նրանց տնտեսական միավորումը իրականելու գործում: Մեզ համար շատ օգտակար եղավ միության հավաքած և Ղարաբաղ ուղարկված 56 տոննա սննդամթերքը, որը տեղ հասավ 1989 թ. գարնանը, երբ Ղարաբաղն արդեն շրջափակված էր և սկսվել էին գործադուլները: 1992 թ. մայիսից հետո, երբ ազատագրվեց Լաչինը և բացվեց Ղարաբաղը Հայաստանին կապող ավտոմայրուղին, «Արցախ» միությունը, նրա շրջանային և տարածքային համայնքները հարյուրավոր մեքենաներ էին ուղարկում Արցախ, որոնք լեցուն էին ոչ միայն սննդամթերքով ու շինանյութով, այլև պաշտպանական նշանակություն ունեցող թեղներով:

Մի անգամ Արցախ հասան 130 ավտոմեքենաներ, որոնք բերել էին հարյուրավոր տոննա սննդամթերք, վառելանյութ, շինանյութ և այլ ապրանքներ: Այդ շարասյանը Հայաստանի Գերագույն խորհրդի հանձնարարությամբ ուղեկցում էր «Արցախ» միության վարչության անդամ, իմ լավ ընկեր Ռազմիկ Դանիելյանը: Նա մարտունեցի է (ծնվ. 1936 թ.): Բարձրագույն կրթություն ստացել է Մոսկվայում, ավարտել է Լենինգրադի առևտրի ինստիտուտի ասպիրանտուրան, դարձել տնտեսագիտության թեկնածու, բայց երբ Ղարաբաղի համար սկսվեցին դժվարին օրեր, նա մի կողմ դրեց իր գիտական աշխատանքները և լծվեց Արցախի պաշտպանության գործին: Բազմիցս վտանգի տակ դնելով իր կյանքը՝ նա անում էր ամեն բան դարաբաղյան հողը թշնամուց պաշտպանելու համար: Նրա գործունեության մասին ես պատմել եմ իմ հուշերի տարբեր բաժիններում:

Երբ սկսվեց ազերիների զինված ներխուժումը Ղարաբաղ, «Արցախ» միությունը իր բաժանմունքների ու բազ-

մաթիվ ակտիվիստների անձնվեր ջանքերով ամեն տեսակ ապրանքներից բացի Արցախ էր ուղարկում նաև զենք, զինամթերք և դեղորայք: Կուզենայի հիշել «Կիզակ» հայրենակցականի նախագահ Էդիկ Բաբայանին, որը Հաղորդի պաշտպանության հրամանատար Էդիկ Աբրահամյանի խնդրանքով Հայաստանի զինվորական մասերում ձեռք բերեց «Ալազան» տիպի հրթիռներ ու այլ զինամթերք, և դրանք հասցրեց Հաղորդ: Հետո ուղարկեց «Ալազան»-ի հարյուրավոր արկեր:

«Արցախ» միությունը մեծ աշխատանք կատարեց նաև զոհված ու վիրավոր ազատամարտիկներին ու նրանց ընտանիքներին օգնություն ցույց տալու ուղղությամբ: Անզուհաստեղի է միության դերը կամավորական ջոկատներ կազմակերպելու և Ղարաբաղ ուղարկելու գործում: Այդ ջոկատներում հիմնականում ընդգրկված էին հայաստանաբնակ արցախցիներ, նրանց միացան նաև այլ վայրերից եկած դարաբաղցիներ: Միության նախագահությունը որոշում կայացրեց կամավորական ջոկատների կազմակերպումը վճարեց կամավորական համայնքներին: «Արցախը» կարողացավ հանդերձավորել և Ղարաբաղ փոխադրել շուրջ 60 ջոկատ: Դժբախտաբար, դրանց մեծ մասը արագհովիտ չէր զենքով: Այդ ջոկատների կազմակերպման ու վարժեցման գործով զբաղվում էր «Արցախ» միության զինվորական գծով խորհրդական, գեղապետ Գեորգի Պետրոսյանը, որին մենք լավ ճանաչում էինք ԼՂԻՄ-ի քաղաքացիական պաշտպանության ղեկավարի պաշտոնում աշխատելու տարիներից: Այդ ջոկատների մարտիկները հերոսաբար մարտնչեցին արցախյան բնակավայրերը թշնամուց պաշտպանելու ժամանակ: Հետագայում ջոկատներն ընդգրկվեցին ԼՂՀ ժողովրդա-ազատագրական բանակի զորամասերի մեջ, իսկ «Արցախը» շարունակեց իր օգնությունը այդ բանակին:

«Արցախի» ստեղծման և գործունեության մասին վերջերս լույս է տեսել Հրանտ Աբրահամյանի «Երբ հայրենիքը վտանգի մեջ է» հետաքրքրական գիրքը, որի մեջ մանրամասն տեղեկություններ կան «Արցախի» հայրենակներ իրագործումների, նրա շուրջը համախմբված անձնվեր գործիչների ծավալված փոխարի աշխատանքների մասին:

1889 թ. գարնանը, երբ արդեն ստեղծվել էր հատուկ կառավարման կոմիտեն, Ստեփանակերտ ուղարկեցին մի քանի խորհրդային գործակալներ, որոնց թվում և Բելոռուսիայի ներքին գործերի մինիստրության Միանյի միլիցիայի ուսումնարանը: Բելոռուս միլիցիոներների խնդիրն էր երկրում կարգ ու կանոն ապահովել, պաշտպանել ռազմավարական նշանակություն ունեցող վայրերն ու հաստատությունները: Թորքերն անընդհատ պայթեցնում էին Ստեփանակերտ քաղաքը ջրով սնուցող Ղաչքալու կոչվող ջրամբարը և ջրատար խողովակները: Բելոռուս միլիցիոներները պաշտպանում էին ջրատարը նորոգող մեր բանվորներին: Եվ քաղաքի ջրամատակարարումը կարգավորվում էր: Նրանք ունեցին էլիմ Ծուշիից, Լաչիկից ու այլ վայրերից եկող ճանապարհները:

Ապրելով Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի շենքում՝ նրանք մոտիկից շփվում էին դարաբաղցիների հետ: Աստիճանաբար նրանք սկսեցին բնորոշել մեր պահանջների արդարությունը: Նրանք հասկանում էին, թե ինչո՞ւ են դարաբաղցիները ձգտում անջատվել Ադրբեջանից և միանալ մայր հայրենիքին: Մեր շարժման նկատմամբ համակրանքը նրանք դրսևորում էին գործնական ձևով: Հաճախ մեզ զգուշացնում էին սպառնալի վտանգներից, ձեռքապահություններից և խուզարկություններից: Երբ հարկ էր լինում օդանավակայանում դիմավորել կամ ճանապարհ գցել ազատագրական շարժմանը օգնության եկած մեր ընկերների, նրանք սիրահոժար կերպով հանձն էին առնում նրանց անվտանգությունը ապահովելու կարևոր գործը:

Այսպես, այդ միլիցիոներները դիմավորել և հետո ճանապարհ են գցել Լեոն Տեր-Պետրոսյանին, Վանո Սիրադեղյանին, Սուրեն Զոլյանին, Սու Սարգսյանին, Սամվել Ծահմուդյանյանին, Զորի Բալայանին և ուրիշների:

Ես շատ մտերիմ էի գումարտակի հրամանատար, մայրոխվան Բախեցկու հետ: Կենտրոնախ, գեղեցիկ տղամարդ էր, կիներ մոտ 34—35 տարեկան: Նա ամեն ինչ հասկացել էր

և ամենևին չէր թաքցնում իր համակրանքը մեր ժողովրդի ու մեր շարժման նկատմամբ: Նա տեսել էր մեր վանքերը, խաչքարերը: Կարդացել էր համապատասխան գրականություն, լսել էր մարդկանց և ասում էր, որ ինքը համոզված է մեր գործի արդար լինելու մեջ: Խիստ բացասական վերաբերմունք ուներ Ադրբեջանի դեկավարության նկատմամբ և գտնում էր, որ Արցախի մնալը այդ երկրի կազմում պատմական անարդարություն է:

Իր համակրանքը Արցախի ու նրա ժողովրդի նկատմամբ նա ձգտել էր արտահայտել մի բանաստեղծությամբ, որը մի օր արտագրեց ու տվեց ինձ: Նրա վերնագիրն էր «Ցավդ տանեն»: Այդ բանաստեղծության մեղմ տողերում զգացվում էր սեր և հարգանք արցախյան երկրի ու նրա ձգտումների նկատմամբ: Հեղինակն անսթող համակրանք էր դրսևորում մեր ցավերի ու վշտերի նկատմամբ: Նա հավատում էր, որ մեր արդար գործը քարի վախճան կունենա, որ վերջապես մեր երկիրը կգտնի հանգիստ ու խաղաղություն:

Նույն ուսումնարանի գումարտակի հրամանատար, մայր Ստանիսլավ Տիշկևիչը երաժշտություն գրեց այդ բանաստեղծության համար: Նա լավ ձայն ուներ և հաճախ մեզ համար երգում էր ռուսական ու բելոռուսական երգեր:

Ամեն անգամ, երբ նրանք օդանավակայանում դիմավորում կամ ճանապարհ էին գցում մեր մարդկանց կամ մեր հանձնարարությամբ գնում էին Ադդամ ու այլ վայրեր, վերադարձին հավաքվում էինք ստադիոնի իմ սուսնձնասենյակում, որը մեր շտաբն էր: Մի անգամ այդպիսի հավաքի ժամանակ, երբ հյուրասիրության մեղան էինք բաց արել նրանց համար, Ստանիսլավ Տիշկևիչը վերցրեց կիթառը և իրեն նվագակցելով կատարեց «Ցավդ տանեն» երգը: Մենք հիացած էինք այդ երգի թե՛ բառերով և թե՛ մեղեդիով: Հարմար ստիթի դեպքում նա դարձյալ կատարում էր այդ երգը և ես մագնիտոֆոնով ձայնագրեցի դա: Որոշ ժամանակ անց, իմ խնդրանքով, Վալերի Աթաջանյանը տպագրական եղանակով բազմացրեց երգը, որն այստեղ բերում եմ ամբողջությամբ...

## ЦАВЫТ ТАНеМ

Муз. Станислава Тишкевича  
Слова Ивана Басецкого

Тысячи верст разделяют с семьей,  
С матерью—Белой Русью родной.  
Здесь над горами кружится беда,  
Вот почему нас послали сюда.

Припев:

Цавыт танем, древний Арцах,  
Боль твоя, скорбь твоя— в наших сердцах.  
— Цавыт танем, Белая Русь,—  
Скажут друзья, разделив нашу грусть.

Солнцем нас встретил седой Карабах,  
Бытом блокадным, песком на зубах.  
Многострадальный арцахский народ,  
Разве тебя белорус не поймет?

Припев:

Цавыт танем, древний Арцах,  
Боль твоя, скорбь твоя— в наших сердцах.  
— Цавыт танем, Белая Русь,—  
Скажут друзья, разделив нашу грусть.

Нет, нелегко расставаться с семьей,  
С матерью— Белой Русью родной,  
Но чтоб друзей миновала беда,  
Прибыли мы, белорусы, сюда.

Припев:

Цавыт танем, древний Арцах,  
Боль твоя, скорбь твоя— в наших сердцах.  
— Цавыт танем, Белая Русь,—  
Скажут друзья, разделив нашу грусть.

Верю: придут к вам и мир, и покой,  
Сможем и мы возвратиться домой.  
Скажем, прощаясь: «До встречи, друзья  
Старую дружбу терять нам нельзя.

Припев:

Цавыт танем, древний Арцах,  
Боль твоя, скорбь твоя— в наших сердцах.  
— Цавыт танем, Белая Русь,—  
Скажут друзья, разделив нашу грусть.

Երբ վերացվեց հատուկ կոմիտեն, Մինսկի միլիցիայի ուսումնարանի կուրսանտներին փոխադրեցին Ստեփանավերտից: Գեղի հրամանատարը և մի քանի սպաներ հրաժեշտի համար եկան ստադիոն: Մոխ սեղան էինք պատրաստել: Ստանիսլավ Տիշկևիչը կրկին երգեց «Ճավդ տանեն» երգը: Հետո նրանք խմեցին մեր երկրի ազատության և անկախության կենսաքը: «Վստահ ենք, որ երբ կրկին գանք Արցախ, նա լրիվ ազատագրված կլինի օտար տիրապետությունից»: Սրանք նրանց հրաժեշտի խոսքերն էին:

## ՄԱՆԱԾԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1990 թ. հունվարի 12-ին թուրքերը հարձակվեցին Ծահումյանի շրջանի Մանաշեն գյուղի վրա: Մինչ այդ ուղղաթիռի վթարի հետևանքով Գետաշեն գյուղում գոհվել էին մի քանի հույ երեխաներ: Ծահումյանից 19 հոգի գնում են երեխաների թաղմանը: Ճանապարհին Կուշչի Արմավիր գյուղի մոտ դարանակալ թուրքերը կարողանում են ձերբակալել նրանց: Կալանավածների մեջ էին նաև Ծահումյանի շրջկոմի առաջին քարտուղար Վոլոդյա Աղաջանյանը և շրջխորհրդի նախագահ Ծահեն Մեղրյանը: Այդ ընկերները գլխավորում էին Ծահումյանի պաշտպանության գործը և նրանց գերի ընկնելը խիստ քարոզեցրեց վիճակը: Վ. Աղաջանյանի եղբայրը՝ Կառլեն Աղաջանյանը, որը Սակերանի շրջանի միլիցիայի վարչության պետն էր, մեկնում է Ծահումյան՝ պաշտպանությունը կազմակերպելու և, ընդհանրապես, այդ շրջանի ղեկավարությունն իր ձեռքը վերցնելու համար:

Վախ կար, որ թուրքերը կարող են հարձակվել առանց ղեկավարության մնացած Ծահումյանի շրջանի վրա, ուստի

ես, որ այն ժամանակ՝ 1988-ից մինչև 1990 թ. դարաբարդ-յան ուժերի շտաբի պետն էի, իմ ջոկատով (20 մարտիկ-ներ) «Կամազ» ավտոմեքենայով մեկնեցի Ծափույան: Այդ մեքենայի վարորդը Երեմն էր, որը մինչև հիմա ծառայում է մեր բանակում: Տեղ հասնելուն պես ներկայացա Կառլեն Աղաջանյանին: Նա շատ ուրախացավ և ասաց, թե վտանգ կա, որ թուրքերը հարձակվեն Դարաշինարի կողմից: Նա խնդրեց ինձ գնալ այնտեղ և ծանոթանալ պաշտպանության որվածքին: Մեկնեցինք և էքսկավատորով խրամատների փո-րեցինք, դիրքեր պատրաստեցինք: Մենք, իհարկե, զինված էինք և մեզ հետ տարել էինք նաև նոնակներ, որոնց մի մասը տվեցինք պաշտպանությունը կազմակերպող Վալերի-կին և սովյետի դիրեկտոր Գրիշիկին: Սպասում էինք, սր թուրքերը ուր որ է կհարձակվեն գյուղի վրա:

Այդտեղ հանդիպեցինք Վազգեն Մանուկյանին և Դավիթ Վարդանյանին, որոնք բերել էին հումանիտար օգնություն, ինչպես և շրջակի պաշտպանության համար խիստ անհրա-ժեշտ բեռներ (որոտրակա նրացաններ, փամփուշտներ, պինդրակա նամագեղատներ):

Ծափույանի պաշտպանության գործն ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ մեծ աշխատանք էին տարել Ծա-սեն Մեղրյանը, Հակոբյ և Վեյլանը՝ իմ ընկերոջ եղբոր որ-դին: Գիշեր-ցերեկ տղաները հերթապահում էին և թուր-քերը չէին կարող նրանց հանկարծակիի բերել: Նրանց ձեռքի տակ կային դյուրավառ հեղուկով 100 շեր՝ պահանջի դեպքում տանկերի և զրահասրտ մեքենաների վրա զգե-լու համար:

Քանի որ շրջակի դեկավարները և էլի ուրիշ անձինք զերի էին ընկել թուրքերի ձեռքը, մենք որոշեցինք թուրք զերիներ վերցնել մեր մարդկանց հետ փոխանակելու հա-մար: Նրանց ազատագրելու միակ ճանապարհը դա էր: Մեզ հաջողվեց բռնել հիսունից ավելի ազերիների, որոնք տար-քեր զբաղմունքի տեղ մարդիկ էին: Նրանցից մեկը բժիշկ էր: Թուրք պատանդներին բաժանեցինք տների վրա՝ պա-հելու փոխանակման համար:

Այդ ժամանակ թուրքերը մի մարդ ուղարկեցին, որին բռնեցինք: Նա հաշտնեց, որ ելել է պատանդների փոխա-

նակման հարցով: Մեր մարդիկ, ըստ նրա, գտնվում էին Խանլար քաղաքի բանտում:

Մենք բաց թողեցինք նրան, որ գնա և զբաղվի փոխա-նակությունը կազմակերպելու գործով: Հետո եկավ Ադրբե-ջանի ՆԳ մինիստրի տեղակալ Մամեդովը: Նրա հետ բա-նակցությունները վարում էինք ուսցիայով: Երբ նա եկավ իր մարդկանցով, մենք նրա հետ հանդիպեցինք մեր դիրքե-րից 400 մ հեռավորության վրա: Նա հաշտնեց, որ հույ պատանդները լավ են և պահվում են Խանլարում: Մենք թույլ տվեցինք, որ Ռուս Պարիս գյուղից մորկաններ գալին և տեսակցեին մեզ մոտ գտնվող ազերի պատանդների հետ: Համոզվելով, որ ազերիները վատ պարահանների մեջ չեն, մորկանները գնացին հատորներու ազերի պաշտմատար անձանց նրանց խնդրանքը՝ անհատալ փոխանակել իրենց հույ պատանդների հետ:

Հաջորդ օրը առավոտյան ժամը 8-ին, երբ ստուգում էինք դիրքերը, հանկարծ իմացանք, որ թուրքերը հարձակվել են Մանաշենի վրա: Այդ լուրը հեռախոսով հայտնել էր Գրիշի-կին Կառլեն Աղաջանյանը և խնդրել անմիջապես Մանաշեն ուղարկել իմ ջոկատը: Ես հրաման տվեցի և իմ ջոկատը, ինչպես և Ծափույանի տղաները, բոլորը միասին 43 հոգի, լցվեցինք «Կամազը», որն ուղղություն վերցրեց դեպի Մա-նաշեն:

Հունվարի 12-ին էր կամ 13-ին, լավ չեմ հիշում: Առաջ ձյուն էր տեղացել նախորդ գիշերը: Դեռ չէինք հասել տեղ, երբ ճանապարհին տեսանք Մանաշենի բնակիչներին՝ կա-նանց ու երեխաների, որոնք փախչում էին գյուղից: Նրանց-ցից ոմանք չէին հասցրել կոշիկները հագնել: Սարսափա-հար մարդկանց այդ խումապահար փախուստը հուզեց մեզ բոլորիս: Զգտում էինք վաչկիսան առաջ տեղ հասնել և պաշտպանել նրանց:

Պարզվեց հետևյալը. թուրքերը խորամանկորեն ցույց էին տալիս, թե իբր ուզում են հարձակվել Դարաշինարի վրա: Ուժեր էին կուտակում այն կողմում, մենք էլ նրանց այնտեղ էինք սպասում: Բաց նրանք որոշել էին հարձակվել Մա-նաշեն գյուղի վրա: Դարաշինարը Ծափույանի շրջակի արևելյան կողմում էր, իսկ Մանաշենը՝ հակառակ մասում:

Սա թշնամու առաջին ուժեղ հարձակումն էր Շահումյանի շրջանի վրա, որին մասնակցում էին ավելի քան 500 զինված ազերիներ:

Երբ մենք մոտեցանք, Մանաշենի գյուղացիները վազեցին մեր կողմը և սկսեցին խնդրել մեզ, որ գնանք գյուղը պաշտպանելու: Գյուղացի տղաներից մեկին բարձրացրեցինք մեքենայի թափքը, որ նա մեզ ցույց տա ճանապարհը:

Թուրքերը հարձակվում էին Թողան արբեհչանական գյուղի մոտից, որն ավելի բարձր դիրքի վրա էր գտնվում: Նրանք արդեն անցել էին երկու գյուղերը միմյանցից բաժանող ձորը և շատ քիչ էր մնացել (մոտ 15 մետր), որ հասնեին Մանաշենի ծայրին գտնվող կղանտեսության անասնապահական ֆերմային: Վերջինս համարյա միացած էր գյուղին:

Գյուղացի տղաներից 10—12 հոգի դիրքեր էին մտել ֆերմայի մոտ և չէին թողնում թուրքերին մոտենալու: Վերջիններին անմիջական նպատակն էր թուլացնել Շահումյանի շրջանի պաշտպանության գործը և օգտվելով ստեղծված խուճապից՝ գրավել գյուղը և թալանել: Առաջին հերթին նրանք տանելու էին ֆերմայում գտնվող խոշոր եղջերավոր անասուններն ու ոչխարները: Այդ էր պատճառը, որ իրենց գլխավոր ուժերը նրանք կենտրոնացրել էին այդ ուղղությամբ: Երբ ձորը լցվել էր ազերի զինալիներով, գյուղի տղաները սկսել էին փախչել:

Մոտեցանք բարձունքին և ես 20 հոգու ուղարկեցի մեր պաշտպանների կողմը, որոնք, ինչպես արդեն նշեցի, դիրքեր էին գրավել ֆերմայի մոտ: Վեց հոգու ևս թողեցի դիրքերում, այնպես որ նրանք կարողանան հսկել շրջակայքի վրա և թույլ չտան, որ Կուշչի Արմավիրի կողմից թուրքական ուժեր գալին միանալու Մանաշենի վրա գրոհողներին:

Մեր տղաների գնդակները, արձակված որսորդական հրացաններից, վնաս չէին հասցնում թուրքերին, բայց ստիպում էին նրանց հրաժարվել Մանաշենի վրա հարձակվողներին միանալու ցանկությունից: Այդպես էլ նրանք չէկան օգնելու գրոհողներին: Նույնիսկ այն ժամանակ, երբ մենք կարողացանք շրջապատել վերջիններին և ամեն կրակի աքցանի մեջ:

Մնացած տղաներով մենք աշխատում էինք գրավել մի վորթիկ բարձունք: Ես տեսնում էի, որ կթե մեզ հաջողվե՞ր գրավել դա, ապա գրոհող թուրքերը կհարուստանան շրջապատման մեջ: Այդ բարձունքի վրա դիրքավորվել էին վեց թուրքեր և կրակում էին այնտեղից մերոնց վրա: Մենք շատ էինք մոտեցել, մնացել էր մոտ 80—100 մետր: Ընդը կես ժամ կրակում էինք միմյանց վրա: Գնդակները ձյան մեջ թշշարով անցնում էին մեր կողքով և, բարեբախտաբար, մնականից ոչ մեկին չդիպան:

Ես տղաներին կարգարբեցի թաքուն շրջանցել թուրքերին, իսկ ինքս մնացել էի իմ տեղում և կարաքիմից կրակում էի նրանց վրա: Երջանցման ժամանակ տղաները կարողացան խփել նրանցից երկուսին: Մյուս ազգիները վերցրեցին խիվածներին ու փախան: Մենք գրավեցինք բարձունքը և այնտեղ շատ հարմար դիրք ունեցանք:

Այդ ժամանակ թուրքերի շուրջ 200 հոգուց բաղկացած մի խումբ, տրակտորների ետև անցած, օգնության էր շտապում գրոհողներին: Դրանք Ս—80 բուլդոզերներ էին, որոնց առջևի մասը բարձրացած էր: Կողքերից զրահապատ էին դարձված սողապատի լայն շերտերով: Մենք ձեռքի հրթիռներ ունեինք, որ մեր տղաները քերել էին Աֆղանստանից: Ամեն մի հրթիռ մոտավորապես 70—80 տե երկարություն ուներ, թռիչքի հեռավորությունը 800—1000 մետր էր: Երբ կրակում էինք տրակտորների վրա, սպառող հրթիռների բեկորները հրեղեն անձրևի նման թափվում էին գրոհող սպերիների վրա՝ ան ու սարսափ տարածելով նրանց մեջ: Ես նշան բռնեցի տրակտորներից մեկի վրա: Հրթիռը հատավ նպատակին: Լսվեց ուժգին պայթյուն և տրակտորը հայտնվեց բոցերի մեջ: Նշան բռնեցի մյուս տրակտորի վրա: Դա ևս խփեցի և գրոհող ազերիները, որ գալիս էին տրակտորների պաշտպանության տակ, անաբեկված փախան ու միտան մոտակայքում գտնվող դիրքերը:

Գրոհը կասեցվեց: Զգտում էինք ելնել հաջորդ բարձունքի վրա, որը տիրապետող դիրք ուներ և այնտեղից կարող էինք կրակի տակ վերցնել գրոհողների առաջին խմբին:

Ես առաջացել էի մոտ 50 մետր և պառկել ձյան մեջ, որը հասնում էր մինչև գոտկատեղս: Մոտ 30 րոպե մնացի այն-



տեղ: Փամփուշտներս վերջացան: Ձէի կարող ետ գնալ, որովհետև թուրքերը կարող էին խփել ինձ: Կանչեցի մերոնց և փամփուշտ խնդրեցի: Մանաշենցի մի գյուղացի տղա, մոտ 13—14 տարեկան, սողալով մոտեցավ ինձ՝ իր հետ փամփուշտներ բերելով: Նա ուզում էր մնալ ինձ մոտ, բայց ես թույլ չտվեցի: Նա նույն ձևով ետ գնաց: Թուրքերը կրակում էին նրա վրա, բայց բարեբախտաբար վրիպեցին: Նա անվնաս դուրս եկավ կրակի տակից:

Մենք տեսնում էինք, որ մեր կրակը մարդկային զոհեր է խլում ազերիներից: Լսում էինք ազերիների ճիչերը, հառաչանքներն ու հայհույանքները:

Այդ ժամանակ Էրբեցի կողմից հայերը գրոհ սկսեցին թուրքերի առաջին խմբի վրա: Մենք տեսանք, որ Վերին Օեմի տղաները մեքենաներով արդեն հասել էին և թուրքերը շրջապատման մեջ էին ընկել, արդեն պաշտպանվում էին և մտածում էին միայն փախչելու մասին: Նրանք չէին կարող վազել, որովհետև կրակի տակ կրնկնեին, հարկադրված էին սողալով հեռանալ:

Ստեփանակերտում արդեն գիտեին թուրքերի հարձակման մասին և Օսմուլյանի ղեկավարության խնդրանքով Ա. Վոլակին մի ուղղաթիռ ուղարկեց ռեպրի վայրը: Նրանով եկել էին 6—8 հոգի, որոնց մի մասը Օսմուլյանի միլիցիոներներ էին: Նրանք միացան մեր տղաներին: Մի միլիցիոներ, որը կարծեմ սպա էր, վիրավորվեց:

Զյուների մեջ թողնելով 30 դիակ, թուրքերը դիմեցին փախուստի: Նրանցից հիմազին գերի վերցրեցինք: Օտտ գեներնկավ մեր տղաների ձեռքը: Ամեն ինչ թողեցինք շահումյանցիներին: Ես ինձ համար վերցրել էի հրթիռ արձակող ստրճանակ (ոսկետնիցա): Հանկարծ տեսա այն փոքրիկ տղային, որը ձյան մեջ սողալով ինձ փամփուշտ էր հասցրել: Ես գրկեցի նրան, համբուրեցի: Նա ինձնից խնդրեց ստորճանակը իրեն նվիրել, ես անմիջապես տվեցի: Այդ օրվանից նրան այլևս չեմ տեսել, ոչ էլ անունն եմ հիշում: Օտտ ուրախ կիներ հանդիպել նրա հետ:

Երբ խուզարկում էինք գերիներին, պարզվեց, որ նրանցից երկուսի մոտ կային 2000—ական դոլարով թուրքական չեկեր: Մանաշենցիները ծեծում էին նրանց: Մի մորուքավոր

թուրք դիմեց ինձ և խնդրեց, որ չթողնեմ իրեն ծեծեն: Նա առաց, որ ինքը Խանլարի ժողովրդական ճակատի նախագահի տեղակալն է, և իրեն կարող ենք փոխանակել Օսմուլյանի շրջանի ղեկավարների հետ, որոնք գտնվում են Խանլարի բանտում: Ես չթողեցի, որ նրան ծեծեն: Հետագայում նրան փոխանակեցինք Օսմեն Մեղրյանի հետ:

Մանաշենի կոլիզ ակալեց առավոտյան ժամը 8-ին և վերջացավ 15.30-ին: Թուրքերի ամենամեծ սխալն այն էր, որ գրոհելով 500 հոգով, նրանք առաջ էին գալիս շատ նեղ ճակատով (չուրջ 500—600 մետր): Իսկ մենք, որ բոլորս միասին 180 հոգի էինք, ունեինք 2—2,5 կմ ճակատ: Մենք կարողացանք շրջանցել նրանց: Հասկապես լավ էին կոխում թևերում գտնվող տղաները՝ Էրբեցի ջոկատը և իմ տարած ջոկատը: Ես հայտնվել էի թուրքերի թիկունքում: Մերոնք այնքան էին առաջ շարժվել, որ քիչ էր մնում ընկնեին մեր տղաների կրակի տակ:

Այդ ժամանակ բանակցություններ էին գնում պատանդ տարված 19 շահումյանցիներին ազատելու համար: Թուրքերի դիակները գտնվում էին իրենց տարածքում, բայց նրանք այնքան էին վախեցած, որ չէին համարձակվում գալ և տանել դրանց: Մեր բռնած գերիները փոխանակեցինք հայ պատանդների հետ:

Մի քանի օր մնացին Ղարաչիևարում: Պահում էինք պահակակետերը: Հունվարի 18-ին ինձ կանչեցին Ստեփանակերտ, Ազգային խորհրդի նիստին:

## ՉԵՐԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ (1900 թ. հունվարի 18)

Մանաշենից վերադառնալուց մի քանի օր անց, երբ գեներալն արդեն թաքցրել էինք, պետական անվտանգության մի քանի սպաներ եկան ստադիոն և ցանկություն հայտնեցին վազելու և լողանալու: Ես, իհարկե, թույլ տվեցի և նրանք մի քանի օր գալիս էին մարզումների: Ըստ երևույթի նրանք հսկողության տակ էին վերցրել ինձ: Պարզվեց, որ Մանաշենի կովի առանձին էպիզոդներ նկարահանվել են:

Դա կատարվել էր կամ ինքնաթիռներից, որոնք մի քանի անգամ երևացին այնտեղ, կամ էլ արհեստական արքանյակից: Ոմանք դիտել էին այդ հաղորդումը: Նրանց ասելով զարմանալի կերպով պարզորոշ երևում էին նույնիսկ ստանձին կոպոլներ (այդ թվում և ես):

Ազգային խորհուրդը լսեց իմ հաղորդումը Ծախումյանի շրջանի ընդհանուր վիճակի և Մանաշենի դեպքերի մասին: Ես մանրամասն պատմեցի ամեն ինչ: Նիստից հետո ստագիոն եկավ Ռաշիդ Մանգասարյանը, որը Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում մեր ներկայացուցիչն էր: Նրա մոտ մենք զենքեր էինք նորոգում և նոնակներ ասրթում: Նա եկել էր ինձ մոտ փորձարկումների համար նոնակների կապտույներ վերցնելու: Այդ գործում մեզ շատ էր օգնում Երևանի «Աստրո» գործարանը: Այդտեղից մեզ ուղարկում էին ականանետներ՝ իրենց ականներով, նոնակներ, կապտույներ, փամփուշտներ, որոնք մենք պահեստափրում էինք Չանախչիի մոտ և Վերին Հորաթաղում: Մնացած մասն ուղարկում էինք շրջանները:

Երբ Ռաշիդի հետ մտանք իմ առանձնատեղակ, մի քանի րոպե անց լսեցինք վազքի ձայներ: Կարծեցի սպորտամեններ են վազում, քայց պարզվեց, որ 3 ավտոմեքենաներով ստադիոնի տարածք են եկել 80 ոռու զինվորներ՝ ինձ ձերբակալելու համար: Նրանց բոլորի երեսները փակված էին սև դիմակներով: Հանկարծ նրանք երկու դռներից ներխուժեցին ներս և բռնեցին ձեռքերս: Նրանց թիկունքում ես տեսա ՊԱԿ-ի տղաներից մեկին, որը վազելու պատրվակով գալիս էր ստադիոն: Փորձեցի ազատել ձեռքերս, չկարողացա, նրանք շատվոր էին, բռնել էին նաև Ռաշիդին: Ձեռքերս նտ տարան և ձեռնաշղթաներ հագցրեցին: Նույն ձևով վարվեցին նաև Ռաշիդի հետ: Ընդունարանում բռնել էին իմ տեղակալին՝ Հայրենական պատերազմի հաշմանդամ, պահեստի մաշոր Սերգեյ Սաղյանին (այժմ հանգուցյալ): Նրան կանգնեցրել էին պատի դիմաց, ձեռքերը բարձրացրել, պատին էին դրել ու խուզարկում էին: Սև դիմակավոր զինվորների հանկարծակի ներխուժման վախից հաշվապահ Օֆելյա Գրիգորյանը և ստադիոնի քանվորուհի Ռաջա Սողոմոնյանը ուշազնաց էին եղել:

Այստեղին խուզարկել իմ գրասենյակը: Քննիչը արձանագրություն էր կազմում: Իմ գրասենյակի վրա նրանք ձտան մի նոնակ, մի քանի կապտույներ և մի տուփ հրացանի փամփուշտներ: Ձենքերը մենք թաքցրել էինք ստադիոնի պահակ Բենիկ Սողոմոնյանի այգում: Դրանից որոշ ժամանակ ստաջ Երևանից Ստեփանակերտ էր եկել հաներգային մի խումբ և թողել էին արկղներ: Ձենքերը մենք դրել էինք այդ արկղների մեջ և թաղել հողի տակ:

Ես տեսնում էի, որ մեզ ձերբակալողները խիստ շտապում էին: Նրանք երևի վախենում էին, որ շոկատի տղաները կարող էին օգնության գալ և ազատել ինձ: Անընդհատ խոսում էին ռացիայով և նրանց հրամաններ էին տրվում շտապ ավարտել ամեն ինչ և մեզ տանել:

Այդ ամենը տևեց շուրջ 8 րոպե: Ինձնից վերցրեցին շարժական փոքրիկ ռացիան (տալվանա-ամերիկյան արտադրության), որը թույլ էր տալիս կապ պահպանել 30 կմ հեռավորության վրա: Դա ես նվեր էի ստացել Արթուր Ալեքսանյանից: Նա ծառայում էր Ստեփանակերտում և մեզ զենք էր մատակարարում: Հիմա աշխատում է ՀՀ ՊՆ-ում:

Քննիչը նստած էր իմ գրասենյակի մոտ և շտապ կարգով արձանագրություն էր կազմում խուզարկության մասին: Ամեն ինչ ստուգեցին: Նույնիսկ քանդեցին հատակի տախտակները, քայց չնկատեցին, որ իմ գրասենյակի աջ կողմում թղթով փակված դարակի վրա դրված էր մեր մեծ ռացիան: Դա մենք նվեր էինք ստացել Երևանի օդանավակայանի վարչությունից, որի աշխատակիցները եկել էին և իրենց ձեռքով տեղադրել: Այդ ռացիայով ես կարվում էի Մարտակերտի, Մարտունիի, Կրասնի հազարի և Ասկերանի հետ:

Այդ ժամանակ բաքվեցի մի փախստական եկել էր ինձ մոտ աշխատանք գտնելու խնդրանքով: Ջինվորները հարձակվել էին նաև նրա վրա և ողորել թևերը: Այնպիսի վայրենությունք էին դա արել, որ կտարել էին նրա ձեռքը: Երբ ստուգելով փաստաթղթերը նրանք համոզվում են, որ նա փախստական է, իրենց մեքենայով նրան ուղարկում են հիվանդանոց:

Չեկիստները քերել էին ականներ որոնելու գործիք և

ստուգում էին Բենիկի այգին: Նրանք գտան գեներալի մի մասը (2 կարաբին, 2 որսորդական հրացան և 2 փոքր տր-րամաշափի հրացան): Բենիկ Սողոմոնյանի խեղճ-խեղճ հայացքից հասկացաւ, որ գտել են: Ըսկ գեներալի հիմնական մասը, որ պահված էր թեյարանի պահոցում, չէին գտել: Երբ ինձ տանում էին, ես թուրքական խնորեցի գրասեն-յակի բանալիները, կնիքը և սեյֆի բանալին հանձնելու քար-տողարուհուն: Վերջինս՝ Գալսա Եսայանը, որ Սումգայիթի փախստականներից էր, մոտեցավ, բանալիներն ինձնից վերցնելու: Ես ասացի, որ դատարկեմ թեյարանը: Ես հաս-կացավ, որ պահոցում գտնվող մյուս գեներալը պետք է որիշ տեղ տանել:

Ռաշիդին և ինձ մտքեցին մեքենա և տարան օդանա-վակայան: Ուղղաթիռը պատրաստ էր թռիչքի, արդեն աշ-խատում էին նրա արտոտակները: Ուղղաթիռի պատուհանից ես տեսա, թե ինչպես ինձ ձերբակալող սպային մոտեցավ վազելու պատրվակով ստադիոն եկող ՊԱԿ-ի ռուս սպանե-րից մեկը և ինչ-որ քան հարցրեց: Ես հասկացաւ, որ նա ու-զում էր իմանալ, թե գտնվե՞ն արդյոք գեներալ մյուս մասը: Ստանալով բացասական պատասխան, այդ սպան հրաման տվեց և 30 զինվորներ մեքենայով անմիջապես մեկնեցին օդանավակայանից:

Հետո ես իմացաւ, որ մարզադաշտ հասնելուն պես նրանք Գալսայից պահանջել էին բանալիները: Գալսան հայտնել էր նրանց, որ ոչինչ չգիտի և իրեն ոչինչ չեն տվել: Նրանք կոտրել էին թեյարանի դռները, մտել ներս և գտել մեր պա-հած մյուս զինամթերքը՝ ռևոլվերներ, փամփուշտներ և մի ստորճանակ: Սաստիկ շտապելով, նրանք թույլ էին տվել հետևյալ սխալը. չէին կանչել վկաներ և նրանց ներկայու-թյամբ չէին կատարել խուզարկությունը: Հաջորդ օրը եկել էին և իմ աշխատակիցներին ստիպել, որ ստորագրեն այդ մասին կազմված արձանագրությունը: Նրանք հրաժարվել էին: Այդ բանը, ինչպես կտեսնենք, հետագայում հնարավո-րություն տվեց ինձ ժխտելու զինամթերքը մեզ պատկանելու մեղադրանքը:

Գիշերը տղաս՝ Գագիկը և Դուլյան Բեգլարը (կահույքի ֆաբրիկայի գլխավոր ինժեները) գնացել էին իմ սեփական

առանձնատունը, որը 1991 թ. պայթեցրեցին (այդ մասին դեռ կպատմեմ): Առաջին հարկի մի սենյակի տակ ես փո-րել էի մի ներքնահարկ, որի մուտքը վերևից էր, և դարձրել էի պահոց: Այնուտեղ գեներալ էինք թաքցնում (որսորդական հրացաններ, ռացիա, փամփուշտներ և այլն): Դրանք նոր էինք ստացել և պետք է ուղարկեինք գյուղերը: Գագիկն ու Բեգլարը հանում են գեներալը և մեքենայով փոխադրում այլ պահոց: Հետո դրանք տանում են Չանախչի և Սղնախ գյու-ղերը, որտեղ նույնպես պահեստներ էինք հիմնել:

Հաջորդ օրը ինձ ձերբակալողները գնացել էին առանձ-նատուն, խուզարկել ամեն անկյուն և ոչինչ չէին գտել: Նրանք գնացել էին նաև Բաղրամյան փողոցի № 6 շենքում գտնվող իմ քնակարանը և դատախազի սանկցիան ցույց տալով խուզարկություն կատարել: Կինս՝ Ասյան և Գագիկն ամեն ինչ (ռազմամթերք, թուղիկներ, գյուղերը պաշտպա-նող խմբերի ցուցակներ) տեղափոխել էին հուսալի տեղ:

Իմ գրասեղանին դրված օրացույցի վրա գրված էին պայ-մանական նշաններ (պարոլներ), որոնց օգնությամբ դրսից եկած ջոկատները տեղերում ընդունելության էին արժանա-նում: Առանց դրանց ոչ մեկին չէին ընդունում: Գրված էին նաև ուսցիաների կողերը: Բայց խուզարկողները ուշադրու-թյուն չէին դարձրել դրանց: Նրանք չէին հասկացել, թե ի՞նչ թվեր էին դրանք: Այդ թվերը ես գրել էի հայերեն այբու-բենի տառերով:

## ԳԵՊԻ ՍՈՒՄԳԱՅԻԹ

Ուղղաթիռն օդ բարձրացավ: Ո՞ր էին տանում մեզ: Ար-դեն մութ էր, երբ անցանք Քոտի վրայով: Սկզբում կարծում էի, որ մեզ տանելու են Թբիլիսի, բայց տեսա, որ թռչում ենք անասպատների վրայով: Դա Սողոմոնի դաշտավայրն էր: Ուղղաթիռը թռչում էր Սումգայիթի կողմը: Եվ իսկապես այն վայրէջք կատարեց Սումգայիթի զինվորական օդանավա-կայանում, որը շրջապատված էր հազարավոր թուրքերով: Լսվում էր վայրենի ամբոխի ձայնը: Ուղղաթիռից մեզ հրե-լով դուրս հանեցին և սկսեցին հարվածել: Զինվորները մեր

թեւորից բռնելով քարշ տվեցին մեկ այլ ինքնաթիռի մոտ և մտցրեցին մեջը:

Հետագայում ես իմացա, որ ՊԱԿ-ն արդեն արձանագրել էր, որ Ռազմիկ Պետրոսյանն օդանավակայանում ինֆարկտից մահացել է: Այդ մասին հետագայում մեզ պատմեց Զորի Բալայանը: Նրանց մոտ արդեն սրտորաստ էր այդ մասին հաղորդագրությունը և դա անելու էր Բաքվից եկած ՊԱԿ-ի ռուս սպան, որը հարցաքննում էր ինձ: Դա հունվարի 18-ի գիշերն էր: Ռուսները գորք էին քերում Սումգայիթ, տանկեր էին իջեցնում ինքնաթիռներից, որոնք հետո շարժվեցին Բաքվի վրա: Սումգայիթի վայրագ թուրքերը գիտեին մեր մասին և խիտ օդակով շրջապատել էին օդանավակայանը: Վտանգ կար, որ նրանք կհարձակվեին ինքնաթիռի վրա: Իրարանցման և անտանելի ժխորի պայմաններում ինձ ուղեկցողները չհասցրեցին կամ գուցե չուզեցին իրագործել ինձ ոչյրնչացնելու իրենց մտադրությունը: Երբ մտնում էինք ինքնաթիռ, ընդունող սպան հարցրեց, թե ինչո՞ւ եմ երկու հոգի, չէ՞ որ միայն մեկը պետք է լիներ: Երևում է, որ նախատեսվում էր ինձ սպանել Սումգայիթում: Ինքնաթիռի շարժիչներն աշխատում էին: Բացի մեզանից, ինքնաթիռի մեջ կային ռուս կանաչք և երեխաներ: Նրանց փախցնում էին Սումգայիթից: Ունացող ու փոթորկվող ամբոխը քաղկականին հեռու էր և եթե հարձակում լիներ, ինքնաթիռը կկարողանար օդ քարձրանալ: Ինքնաթիռի մեջ մեզ նանձնեցին 6 հոգու հսկողության, որոնց հրամանատարը ռուս սպա էր, ալագ լեյտենանտ: Աերժանուն ազգությամբ օս էր, իսկ մյուսները Միջին Ասիայից էին:

Ինքնաթիռն օդ քարձրացավ և մի քանի ժամից վայրէջք կատարեց: Օդանավակայանի շենքի վրա կարդացի «Կրասնոդար» անունը: Ժամացույցը դուրս էր տալիս ժամը 11.30-ը:

Մեզ իջեցրին: «Ան ազոնով» կոչված մեքենան կանգնած էր այնտեղ: Չմոռանամ ասել, որ երբ օդանավը վայրէջք կատարեց, մեր ձեռքերն արձակեցին: Մոտս փոքրիկ օրացույց կար Նժդեհի նկարով, որը նվիրել էր ինձ Բելլուսից եկած Պողոս անունով մի երիտասարդ: Նա մասնակցել էր Բելլուսի հայկական թաղամասերի պաշտպանությանը: Այդ

օրացույցի վրա գրեցի Երևանում բնակվող քրոջս՝ Ժաննա-ջի հեռախոսի համարը և 30 ոտքոտ հետ միասին տվեցի սերժանտին, որ զանգ տակ նրան և պատմի իմ մասին: Նա խոստացավ կատարել խնդրանքս:

Նստեցրին մեքենան, տարան քանոն և հանձնեցին բանտապահներին: Մոտս մնացել էր 50 ոտքի: Խուզարկության ժամանակ ես տվեցի նրանց 25 ոտքի: Ծոցագրպանունս պահեցի մնացած 25 ոտքին, որը նրանք չգտան:

## ԿՐԱՆՆՈՒՄԻ ԲԱՆՏՈՒՄ

Բանտում մեզ առանձնացրեցին և յուրաքանչյուրիս տալան մեկ տեղանոց բանտախոց: Չնայած ձմեռ էր, քայց այդ փոքրիկ խցում շատ ճանճեր կային: Առաջին հերթին զբաղվեցի ճանճերը սատկացնելու գործով, քայց դրանց մի մասին ձեռք չտվեցի: Խուցի սրտերին սարդոստայններ կային: Ես բռնում էի մի ճանճ և գցում սարդի հյուսած ուտայնի մեջ: Հանկարծ երևում էր սարդը, մոտենում ճանճին, նոր թելերով կապկպում նրան և ծծում նրա հյութը: Հետո մի կողմ էր նետում:

Ծանր մտքերը սրաշարել էին ինձ և այդ զբաղմունքն օգնում էր փոքր ինչ շեղվելու դրանցից: Ի՞նչ եմ անելու ինձ հետ, ի՞նչ է նրանց հայտնի: Ռաշիդին կարելի էր ազատել: Հենց սկզբից որոշեցինք, որ նա եկել էր ստադիոն լողանալու: Սրբիչն էլ քերել ու դրել էր սեղանի վրա: Նա ոչ մի կապ չուներ ո՛չ գեներալի և ո՛չ էլ զինամթերքի հետ: Ամեն ինչ պետք է ժխտել: Ես էլ ունեի արդարացման իմ տարբերակը: Փամիլուշունները, կապտույները և նույնպես ստադիոնի տարածքում գտել էին դպրոցականները և տվել ինձ, իսկ ես դրանք հանձնելու էի քաղաքի ռազմական սարենտին: Ինչ վերաբերում է գեներալին, ապա ես պետք է ասեի, որ գաղսփար չունեմ նրանց մասին: Երևանից եկել էր համերգային ինչ-որ խումբ, իր քերած արկղների մեջ թողել էր գեներալը այգում ու գնացել: Ես ոչ տեսել եմ, ոչ էլ իմացել: Հրամարվելու էի բոլոր կարգի մեղադրանքներից և ոչ մի

թողթ չէի ստորագրեալ: Այսպէս էի վճռել և խցում անքուն գիշերվա ընթացքում մտքում պատասխաններ էի տալիս ըննիչներին:

Հաջորդ օրն ինձ կանչեցին դուրս: Երկու զինվորներ սպասում էին ինձ միջանցքում: Նրանց հետ էր գերմանական ոչխարապահ մի հսկա շուն: Կարգադրեցին ձեռքերս դնել գրիսալերես և շարժվել միջանցքով: Հետո աստիճաններով բարձրացանք 3-րդ հարկ և ինձ մտցրեցին մի սենյակ:

Գրասեղանի մոտ նստած էր քանտապետը՝ մայրի ուսադիրներով մի ոռու սպա: Նրա սենյակում էր գտնվում կաշվե վերարկու՝ հագած մի սղ ոռու՝ մայր, երևի ըննիչ էր: Մայրն ինձ հարցրեց, թե ի՞նչ մասնագիտություն ունես, որտեղացի՞ ես, որտե՞ղ եմ ինձ ձերբակալել: Ես պատասխանեցի: Մյուս հարցն էր՝ «զենքի հետ գործ ունեցե՞լ ես»: Ինչպէս որոշել էի, բացասական պատասխան տվեցի: Հետո կաշվե վերարկուով մայրը հարցրեց, թե ի՞նչ պայքար է գնում Ղարաբաղում, ի՞նչ եք ուզում:

Ես բացատրեցի նրանց, որ Ղարաբաղը հայկական տարածք է և 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով միացել է Ռուսաստանին: 1921 թ. Ստալինի որոշմամբ հանձնվել է Ադրբեջանին, որն այնտեղ տանում է գաղութային քաղաքականություն: Նախիջևանը ևս նույն ձևով տրվել է ադրբեջանցիներին, որոնք այդ հայկական երկրամասից լիովին վտարել են հայերին: Նույնն էլ ուզում են անել Ղարաբաղի հայերի նկատմամբ: Մեր շարժումը, բացատրեցի ես, ժողովրդական շարժում է: Ուզում ենք միանալ Հայաստանին: Կա մեր սահմանադրական իրավունքն է: Մենք հանցագործներ չենք և իզուր են մեզ հետ այսպէս վարվում:

Մայրն ասաց, որ ամեն ինչ հասկանալի է: Նա կարգադրեց ինձ տանել բանտախցիկ: Չմոռանամ ասել, որ դա գտնվում էր ներքնահարկի ամենածայրում և կրում էր 9 համարը:

Գիշերը բաց արեցի խցիկի պատից կախված երկաթե մահճակալը, որի վրա ոչ ներքնակ կար, ոչ էլ որևէ ծածկոց: Երկաթե ցանցերն այնքան լայն էին, որ չէի կարողա-

նում պսակել: Իրանք սաստիկ ցավ էին պատճառում և թույլ չէին տալիս կողքից կողք շտկվելու: Բաճկոնս ծայել էի ու դրել գլխիս տակ, իսկ ամառային թեթև վերարկուն գցել էի վրաս: Ձեռուցման մարտկոց կար խցիկում: Յերեկը դա տաքացվում էր, իսկ գիշերը՝ ոչ: Տուրտ էր: Ջուգարանը ներսն էր՝ վերևում ջրի ծորակով: Ես նախօրոք մի կերպ մաքրեցի դա, որովհետև սուկայի կեղտոտ էր:

Կարծում էի, որ հաջորդ օրն ինձ կկերակրեն: Ոչ ոք չմոտեցավ իմ խոցին: Մնացի առանց կերակուրի ու տաք ջրի: Առավոտները և կեսօրին ֆիզկուլտ վարժություններ էի անում: Գիշերները լսում էի շան հաչոց ու միջանցքներով շրջող պահակների ոտնաձայնը: Օրական խմում էի մեկ բաժակ ջուր: Վարժությունները շատ հանգիստ էի անում, որ էներգիա չկորցնեմ: Միախառն կար մոտս, ծխում էի: Չնայած չափազանց սոված էի, բայց ոտել չէի ուզում: Առամոքսի ցավեր ունեի, որոնք երբեմն ուժեղանում էին: Այդ ժամանակներից ես ստամոքսի հիվանդություն ունեցա, որից տառապում եմ մինչև հիմա:

Երբեմն թակում էի դուռը: Գալիս էին պահակները և դռան ետևից հայհոյում ինձ.— «Ձայնդ կտրիր շուն,— ասում էինք նրանք,— մեր զինվորներին պատել են հարվում, իսկ մենք կգնդակահարենք քեզ»:

Հինգերորդ օրը, երբ արդեն ուժասպառված էի, լսեցի երկաթե անիվներով սալակի ձայնը, որով կերակուր էին բաժանում բանտարկյալներին: Սկսեցի թակել դուռը: Մի երիտասարդ տղա, կիլներ 20 տարեկան, մոտեցավ ու բացեց դռան վրա եղած փոքրիկ պատուհանը: Նա նույնպես կալանավոր էր, երևի լավ էր պահում իրեն, ուստի վտուհել էին նրան կերակուր բաժանելու գործը: Նա հարցրեց ազգանունս և որտեղացի լինեյս: Նա նայեց սովաբաթոյթի վրա գրված ինչ-որ ցուցակ և ասաց, որ իմ անունը չկա և ինձ կերակուր չի հասնում: Նա անմիջապես փակեց պատուհանը:

Ուրեմն որոշել եմ ինձ սովամահ անել: Մի՞թե այսպէս եմ վերջացնելու կյանքս: Նստել էի երկաթե մահճակալի վրա և ուժ չունեի այլևս շարժվելու:

Կես ժամ անց կերակուր բաժանող այդ կալանավորը նորից եկավ և պատմեցինք մերս գցեց մի թղթի կտոր և մատիտ: Եւ ասաց, թե շտապ պատասխան գրիր ու տուր: Թղթի վրա ռուսերեն գրված էր. «Ռուսերացի՛, ես և ինչո՞ւ ես բռնվել: Ռաֆիկ»:

Ես գրեցի «Ստեփանակերտցի եմ, բռնվել եմ Ղարաբաղը Հայաստանի հետ միացնելու պայքարի պատճառով, Ռազմիկ Գեորգյան»: Թղթից տվեցի այդ տղային ու մազհաց:

Անցավ շուրջ 30 րոպե, երբ մա կրկին մտածեցավ դռան: Եւ բաց արեց պատուհանը և լրագրի մեջ փայտաթված մի կապոց հետեց մերս: Կապոցը բաց արեցի: Մեջը հաց կար, պեչենիներ, սիգարետներ և շաքար: Կապոցի վրա կարդացի «Ռաֆիկ, Կրասնոդարից»:

Մարտիկի տակած էր: Կերս տեսն ինչ: Սրտեցի ժխել: Մի քիչ հետո այդ տղան նորից եկավ, բաց արեց պատուհանը և մի փաթեթ էլ գցեց վար: Դրա մեջ դարձյալ հաց կար, պեչենիներ, շաքար և ծխախոտ: Վրան գրված էր «Ռուսիկ, Թբիլիսիից»:

Նույն գիշերը ինձ ուղարկեցին մի ուրիշ փաթեթ. մեջը գաթա կար, խոզի մարս, սիգարետներ և շաքար: Թղթի կտորի վրա գրված էր «Արթուր, Սոչիից»:

Հուզմունքը պատել էր ինձ: Հայրենակիցներ ունեի բանտում, որոնք գիտեին մեր պայքարի մասին և ձգտում էին օգտակար լինել ինձ: Զգում էի, որ նրանք չէին թողնի ինձ սովամահ անել: Կուզե՞նայի տեսնել նրանց, հայտնել երախտագիտությունս, բայց դա անկարելի էր: Այդպես էլ նրանցից ոչ մեկին ես չտեսա:

Վեցերորդ օրը դուռս բացեցին: Երկու հոգույ էին: Խուզարկեցին ինձ և հարցրեցին.— Զրոսնել ուզո՞ւմ ես: Բնական է, որ դրական պատասխան տվեցի: Նրանք ասացին.— պատրաստվիր:

Հագա վերարկուս և նրանց հետ դուրս եկա: Երկարեմ առտիճաններով բարձրացրեցին չորրորդ հարկ: Տանիքի վրա բարձր պատերով, ասֆալտնապատ մի սենյակ կար, որի

տանիքի փոխարեն. ցանց էր անցկացրած: Այնտեղից երկվում էր երկինքը: Ուրիշ կալանավորներ էլ կային: Ես բայբայ էի, վագրով, վարժություններ անում: Կողքի նմանատիպ սենյակներից ծայերն էին գալիս: Հետո հերթապահը, որը շեկ մազերով մի ալպազ լեյտենանտ էր, բոլորին տարավ խցերը: Ես մեծակ էի մնացել: Եւ բաց արեց դուռը և մերս մտավ, հարցրեց, թե որտեղա՞ցի եմ: Պատասխանեցի,— Հայ եմ: Փարզվեց, որ ինձ էլ հայ է, ջնարած ռուսի էր նման: Երկի ճայքը ռուս էր:

Եւ ինձ հայտնեց, որ իմ մասին լսել է Ռաֆիկից: Ինքը Կիրովաբադի Թագաշենից է: Հարցրեց, թե ի՞նչ եմ ուզում: Տվեցի եղբորս՝ Զարմիկի հեռախոսի համարը և խնդրեցի գա՞նց տալ ու տեսի, որ գտնվում եմ Կրասնոդարի բանտում:

«Եւ նորից ինձ տարավ իմ՝ բանտախոցը, պատվիրեց մեր խոսակցության մասին ոչ մեկին չասել:

Մի քանի օր մա չեղևաց: Ռաֆիկը և մյուս հայ տղաները շարունակում էին հստեղիք ուղարկել ինձ:

Բանտային կերակուր ինձ տվեցին միայն 7-րդ օրը: Ամհավ ու ջրիկ թորչ էր: Հացը լավ թափած չէր: Ուտելուց առաջ ես այն չորացնում էի ջեռուցման մարտկոցի վրա: Ուտում էի հիմնականում այն, ինչ ուղարկում էին Ռաֆիկն ու մյուս տղաները:

Ինձ կերակրելու իրավունք տալուց 3 օր անց կրկին եկավ շիկաներ հայ տղան մի ռուս ալպազի հետ և ինձ տարավ գործարան: Վերևում մա տվեց ինձ մի թղթի կտոր: Իսկույն ճանաչեցի Երևանում ապրող եղբորս՝ Զարմիկի ձեռագիրը: Եւ գրում էր, որ բոլորը լավ են, չվախենան այդ տղայից, գրիր ինչ պետք է: Դրեցի պատասխան, որ ես ոչ մի բան չեմ իմանում, առաջիկանում ոչինչ չեմ ունեցել: Ծիկաները գնաց և ինձ կրկին տարավ իմ խոցը:

Տես օր անց ստացա եղբորս ուղարկած ծանրոցը՝ մեջը ապրտույին կոստյում, հաց, պայտիմատ, շաքար և շատ սիգարետներ: 20-ամյա կալանավոր տղայի միջոցով դրանցից բաժին հանեցի Ռաշիդին, Ռաֆիկին, Ռուսիկին, Արթուրին, իսկ մի մասն էլ պահեցի ինձ: Այդ ամենն ինձ հանձնելու համար Զարմիկը տվել էր 2 շիշ հալկական կոն-

յակ: Նույն տղայից իմացա, որ Զարմիրը մեկնելու է Կրասնոդարից և կվերադառնա մի քանի օր անց:

Ես այդպես էլ չիմացա, թե ո՞վ էր գանգ տվել եղբորս՝ ինքնաթիռի մեջ հանդիպածս օս սերժանտը, թե՞ շիկահեր հայր: Զանգահարողը ասել էր միայն հետևյալը. «Քո եղբայր գտնվում է Կրասնոդարում»:

Ծորջ երկու շաբաթ էր կեղտերի մեջ էինք թե՛ ես, թե՛ Ռաշիդը, որի հետ նամակագրական կապ էի հաստատել 20-ամյա կալանավորի միջոցով՝ տալով նրան մի քանի տուփ սիգարետ: Մեզ տարան բաղնիք: Ռաշիդի հետ միասին էինք: Հետո մեզ տարան լուսանկարելու: Նկարեցին դիմաքից և երկու կողմերից: Վերցրեցին մեր մասնաճեղքերը:

Ռաֆիկի մափն իմացա հետևյալը. նա աշխատելիս է եղել Կրասնոդարի մի ռեստորանում որպես բուժետապան: Մի օր մի քանի «լավ տղաներ» եկել էին ռեստորան, կերել էին, խմել և երբ Ռաֆիկը պահանջել էր փողը, բռնել էին նրան ու մի լավ ծեծել: Նրա գրուխը ջարդել էին: Պաշտպանվելու ժամանակ Ռաֆիկը դանակահարել էր նրանց: Երկուսը մահացել էին, իսկ երրորդը՝ վիրավորվել: Ռաֆիկին դատապարտել էին 10 տարվա ազատազրկման: Նա բողոքարկել էր դատարանի վճիռը և պատասխանի էր սպասում: Նրա ծնողները ելլախցիներ էին: Ես տեսնում էի, որ Ռաֆիկը արտակարգ հարգանք էր վայելում բանտում: Նրա խոսքն օրենք էր ոչ միայն կալանավորների, այլև հրակող զինվորների ու սպանների համար:

Ես այդպես էլ չիմացա, թե ինչո՞ւ էին կալանավորվել Ռուբիկը և Արթուրը:

14 թե 15-րդ օրը ինձ խուզարկելու եկավ մի ադրբեջանցի, որը ծնունդով Քյուրդաստանից էր: Նա ասում էր, որ Ղարաբաղի հայերը մեղավոր են, կոտորում են ադրբեջանցիներին: Նա թույլ չէր տալիս, որ ինձ որևէ բան ողորկեն:

16-րդ օրը երեկոյան ժամը 11-ին նա եկավ ինձ մոտ և կարգադրեց, որ հավաքեմ իրերս: Միայն մի քիչ չորացրած հացի կտոր ունեի մոտս, դրեցի գրպանս ու գնացի նրա սոջկից: Նա ինձ գցեց մի խուց, որի մեջ կային 3 կալանավորներ: Պարզվեց, որ դրանք արվամույներ էին: Նրանց լայիռ տեսքը, անսքող առաջարկությունները նողկանք ա-

նաջացրեցին իմ մեջ: Ես սկսեցի ծեծել նրանց: Բարձր ձայնով հայհոյում էի ադրբեջանցի զինվորին, որն ինձ այդ խուցն էր մտցրել: Իմ ձայնն իր խցում լսել էր Ռաֆիկը, մոտ էր կանչել ազերի զինվորին և հայտնել, որ նրա գրուխը կտրել կտա, եթե Պետրոսյանին անմիջապես չհանի այդ խցից:

Կես ժամ անց եկավ ադրբեջանցի զինվորը և ինձ կրկին տեղափոխեց իմ խուցը: Նա ասում էր, որ ինձ իբր ուզեցել է լավություն անել:

Գիշերը ինձ, Ռաշիդին և Էլի 20 հոգու, մեծ մասը ռուսներ, վրացիներ և հյուսիսային Կովկասի մարդիկ, դուրս հանեցին բանտի բակ, մտցրեցին «սև ագոսալի» մեջ և տարան կաշարան: Հարցնում էինք, թե ո՞ր են տանում, չէին պատասխանում:

## ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿԻ ԲԱՆՏՈՒՄ

Գնացքի վագոնում մենք մնացինք 24 ժամ և այդ քնթացքում մեզ չկերակրեցին: Երբ տեղ հասանք, պարզվեց, որ մեզ բերել են Արմավիր: Նորից մտցրեցին «սև ագոսալի» մեջ և հասանք Արմավիրի բանտը: Ռաշիդին և ինձ մի բանտախոց մտցրեցին: Երեք օր մնացինք այնտեղ:

Ինչպես պայմանավորվել էինք, Ռաշիդն ամեն բան ժխտել էր:

Նա ասել էր, որ ինքը ստադիոն էր գնացել միայն և միայն լողանալու նպատակով: Ձերբակալության պահին իր սպիտակեղենը և սրբիչը գտնվելիս են եղել Ռ. Պետրոսյանի ստանձնասենյակի սեղանի վրա: Այդպես էլ նա պնդեց մինչև վերջ և նրան ընդամենը մեկ ամիս պահելուց հետո ազատ արձակեցին: Դա շատ ճարմար էր ինձ համար, որովհետև միայն ես էի մնում և պետք է պայքարեի ազատվելու համար: Որոշել էի հերքել ամեն մի մեղադրանք: Ի՞նչ մի գործ չեմ ունեցել զենքի ու զինամթերքի հետ: Եթե նրանակը և փամփուռները, որ գտել էին իմ սեղանի վրա, իմս լինեին, կպահեի: Մինչդեռ ես դրանք դրել էի այնտեղ պա-

րետին հանձնելու համար: Մյուս գեներերի հետ ոչ մի արմ-  
տություն չունեն: Այսպես էի պնդելու միևնույն վայր: ...

Առաջին օրը մեզ չկերակրեցին: Ֆիզիկապես թուլացել  
էինք, սաստիկ նիհարել, բայց շարունակում էինք պարզա-  
զույն վարժություններ անել: Երրորդ օրը մեզ դուրս բերե-  
ցին և մտցրեցին «սև ազոպի» մեջ. որք բաժանված էր  
երկու մասի. մեկը փոքր էր, որի մեջ էս էի, մյուսն ավելի  
ընդարձակ էր և այնտեղ կազմավոր կանաչ էին: Ես հա-  
զիվ էի տեղավորվում խցիկի մեջ, բայց կարգադրեցին, որ  
Ռաշիդն էլ մտնի: Ես չէր կարողանում և հրաժարվեց: Այդ  
ժամանակ գիմկորները մյուս վրա քսի տվեցին գերմանական  
ածդանա ոչխարապան շանը: Ռաշիդը մի կերպ խցիկեց  
ներս: Ես ոտքերը մտցրեց իմ ոտքի տարանքը, իսկ գլուխը  
դրեց իմ ուսին: Դուրս ամուր փակեցին դռան: Եթե այդ  
գիրքով մնափնք արձնազն մեկ ժամ, երկուսս էլ հաստատ  
կլեկողվեինք: Բայց որոշ ժամանակ անց (երկի 30 րոպե  
անց) հասանք կայարան:

Մեզ դուրս բերեցին և մտցրեցին «Թրիխոսի—Մոսկվա»  
գնացքի բանտարկայների համար հասկացված վագոնի  
մեջ: Մեր վաստաթղթերը հանձնեցին ուղեկցողին, որը զին-  
վորական էր ավագի կոչումով: Պարզվեց, որ նա ադրբե-  
ջանցի է: Երբ նա ծրարի վրա կարդաց մեր ազգանունները,  
մեզ մտցրեց մի խցիկ, որի մեջ արդեն կա ին 8 կալանա-  
վորներ: Բոլորով միասին եղանք 10 հոգի: Նրանք քրեական  
հանցագործներ էին և էտապ էին գնում:

Խցիկի մեջ ծովա էր: Մեզնեց հարցրին. թե ովքե՞ր ենք և  
դրտեղի՞ց: Պատասխանեցինք: Հետո թույլք ուղեկցողին  
կանչեցինք ու հարցրեցինք, թե նա ինչո՞ւ է մեզ քրեական  
հանցագործների խուցը գցել: Ես սպասման ավելի վատ  
տեղ մտցնել ու գնաց:

Գոյաբնույն եղած յրագիրը հանեցի և ուզեցի կարդալ:  
Կալանավորները մի թիթեղաք բաժան էին վերցրել, մեջը ջուր  
էին լցրել և շատ անց: Գոյարով պահում էին բաժակի բռնա-  
կից և տակը թույլք վատում: Խուցը լցվում էր ծխով: Նրանք  
խնդրեցին ինձանից յրագիրը. ես տվեցի: Ցերեֆանի տույ-  
րակի հետ միասին նրանք երկակի ծախելին դա և վառե-  
ցին բաժակի տակ: Մի քանի սուպեհը բաժակի մեջ եղած

ջուրը սկսեց եռալ: Այդ խմիչքը կոչվում էր «չեֆիր»: Երբ  
արդեն պատրաստ էր, նրանք առաջարկեցին ինձ խմել:  
Խմեցի մի երկու կում, հետո տվեցի Ռաշիդին: Ես հրաժար-  
վեց, բայց էս համոզեցի, որ խմի: Եվ այսպես, բոլորը հեր-  
թով մի քանի կում խմում էին այդ մուգ և թանձր հեղուկից:  
Բաժակը 2 անգամ շրջեց մարդկանց ձեռքում: Միրոս սկսեց  
արագ բարակել, բայց էս տարօրինակ թեթևություն զգացի:

Մեկ օր անց հասանք Ռուստով և մեզ տարան քաղա-  
քային բանտը: Մեզ կրկին խուզարկեցին՝ հանելով բոլոր  
զգեստները: Երկու օր մնացինք Ռուստովի բանտում: Մ'զ  
չկերակրեցին: Հետո մտցրեցին «սև ազոպի» մեջ: Զգի-  
տիկնք, թե ո՞ր են տանում: Մեկնեցինք գիշերվա ժամը  
12-ին: Ծանախարհին իմացանք, որ տանում են Նովո-  
չերկասկ:

Տարան այդ քաղաքի բանտը, որը նշանավոր էր իր  
խիստ ռեժիմով: Ուրիշ կալանավորներ ևս կային մեզ հետ՝  
10 հոգի: Երբ տեղ հասանք, կրկին հանել տվեցին մեր  
զգեստները և սկսեցին խուզարկել: Ցուրտ էր, դողում էինք,  
ատամներս աղմուկով իրար էին խփվում: Արշուն վերցրեցին  
մեր երակներից՝ չզիտեմ թե ինչ ստուգելու համար:

Արյուն վերցնողները բժիշկներ էին: Կանգնում էինք  
նրանց դիմաց լրիվ մերկ փճակում և նրանք բոլորից, նույն  
ասեղով, արյուն էին վերցնում, միայն թե ամեն անգամ ասե-  
ղը լվանում էին պարզ ջրով: Տարօրինակ կերպով մեզանից  
շատ արյուն վերցրեցին, յուրաքանչյուրից 200 գրամ: Դրանք  
լցնում էին ապակե սրվակների մեջ և վրաները գրում կա-  
լանավորների համարները: Երբ ուզեցին ինձնից արյուն  
վերցնել, էս բողոքեցի՝ թե ինչո՞ւ չեն ետացնում ասեղները:  
Բժիշկը բարկացավ ու ինձնից արյուն չվերցրեց: Մերկ կա-  
լանավորներին կուսցնում էին և երկաթալարի օգնությամբ  
ստուգում նրանց հետանքերը: Գուցե՞ այնտեղ որե՛կ բան  
պահած լինեին:

Հետո մեզ ուղարկեցին բանտախցերը: Կալանավորները  
սովածությունից խիստ թուլացել էին, հազիվ էին շարժվում:  
Ծատերը գլխապտույտ ունեին և իրենց շատ վատ էին  
զգում:

Ինձ փակեցին 33-րդ մենախցում: Լուսն, որ իմ բան-



տարկության ընթացքում ինձ միշտ մեծակ էին պահում, երկի հասուկ հրահանգ ունեին: Ակզբում տաք էր, պատահանները փակ էին և ես կարծում էի, որ լավ տեղ եմ ընկել: Դա գիշերն էր: Առափուռյան վեր կացա տակափ գիսացավով: Ջեռուցման մարտկոցները զարմանալի կերպով ծուխ էին բաց թողնում: Պատերն ամբողջովին սևացել էին: Ես հասկացա, որ դա դիտմամբ էր արվում կալանավորներին տանջելու համար: Որոշեցի ջարդել պատահանը, բայց ձեռքիս տակ ոչինչ չունեի: Պատահանը շատ բարձր էր և ապակին ջարդելու համար անարարման մի բան պետք է անեի: Առաջին օրը տարան գրասանքի: Ես կարողացա ցեմենտե պատերից մի անջատված կտոր նրկել և երբ վերահարձրից խուցը, դրանով խփեցի և կտորեցի պատահանի ապակին: Գերադասում էի ցուրտն այդ անտանելի ծխից: Իմ հարվածն այնքան ուժեղ ստացվեց, որ թևոնքի կտորը դուրս էր թռել: Բանտի պահապանները նկատել էին դա և շատ չանցած նրանցից մի քանիսը եկան ստուգելու: Ասացի, որ ես չեմ գտնել և ոչինչ չգիտեմ: Երանք խուզարկեցին ինձ ու գնացին:

### ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովոչերկասկի բանտը հինգ հարկանի էր: Հերթապահները երկուսն էին, բայց բանտի միջանցքներում գերմանական հսկա ոչխարապահ շներ կային, որոնք շրջում էին և երբ խցիկներից որևէ ձայն էին լսում, բարձրանում էին և առջևի թաթերը դնում դռան վրա և սկսում հաչել: Երբ սկսվում էր այդ անվերջաճախի հաչոցը, անկյունի էր ընկել:

Երեկոյան տարան հարցաքննության: 20 օր էր ձերբակալված էի, բայց ստաջին անգամ էին ինձ հարցաքննում: Ինձ դնեա ոչ մի մեղադրանք չէին ներկայացրել:

Քննիչները չորս հոգի էին, որոնցից երկուսը ՊԱԿ-ի աշխատակիցներ, բոլորն էլ Դոստովի մարզից: Հարցնում էին գեներալի մասին՝ ի՞նչ էին, թե ոչ, քանի՞ հատ էին և ի՞նչ տեսակի, քանի՞ մարդ կար իմ ջոկատում, ինչո՞ւ էի մասնակցել Թահումյանի կռիվին: Ես ծխում էի անեմ բան:

Ասում էի, որ մեր շարժումը դեմոկրատական շարժում է, մենք գործում ենք ասոսիալոգիայի շրջանակներում, խաղաղ ցույցեր ենք արել, Դարաբաղը Հայաստանին միացնելու խեղդանքով գրավոր դիմել ենք Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին: Ջեներալ հետ գործ չենք ունեցել:

Քննիչները հաչոցում էին ինձ, մտնեմ երկու կողմից և սպառնալիքներ տալիս: Ասում էին, որ Թահումյանում շատ գոհեր են եղել և որ ես հաստատ մասնակցել եմ այդ կռիվին: Ես ծխում էի:

Չորս ժամ անց նրանք կանչեցին հսկիչներին և տարան մի ուրիշ սենյակ: Զգացի, որ նրանք խուսից գործի են անցնելու: Եվ հսկայես, նրանք սկսեցին ծեծել ինձ, միաժամանակ հարցնում էին, թե որտե՞ղ են գեներալը, քանի՞ ջոկատ ունեմ, ովքե՞ր են ջոկատների անդամները: Երանք խփում էին ռետինե մահակներով: Մահակների երկարությունը կիներ շուրջ մեկ մետր և հարվածը ահավոր ուժով էր լինում: Երբ գլխիս էին խփում, թվում էր թե 100 կգ երկաթե ձողով են խփում: Ծատ հարվածներ հասցրեցին ձեռքերիս:

Ես հաչոցում էի նրանց, ոճրագործներ, ֆաշիստներ, տակաճներ էի անվանում: Դա նրանց ավելի կատաղեցրեց և նրանք սաստկացրեցին ծեծը: Մարմնիս վրա առողջ տեղ չէր մնացել: Ամեն կողմից հարվածներ էի ստանում: Երբ այնու ուժ չկար վրաս և թվում էր թե կիրոցնեմ գիտակցությունս, նրանք տարան ինձ և մոցրեցին կարցերի մեջ: Կարցերի կամ պատմախցի մեջ անտանելի ցուրտ էր, չէր ջեռուցվում: Այնտեղ ոչ մահճակալ կար, ոչ այտո: Ծռվելու տեղ անգամ չկար. հազիվ կանգնած էի՝ հեղկելով լրիվ թաց արտերին: Մարմնես տատկեց ցավում էր:

Չորս ժամ անց ինձ նորից տարան քննիչների սենյակ և պահանջեցին գրավոր ձևով հայտնել, որ գեներալը և գեներալները իմն են: Ես հրաժարվեցի: Կրանից հետո ինձ վերահարձրեցին իմ խուցը, որը 33-րդ համարն էր կրում:

Եվ այսպես, 10 օր շարունակ ինձ տանում էին ընկելու, տալիս էին նույն հարցերը, պահանջում էին տոտրագրել իրենց գրած թղթերի տակ, իսկ ես հրաժարվում էի: Ծե-

ծում էին բուսնցքներով, մահաէկներով, ոտքերով խփում էին և հետո պատժախոց մտցնում:

Սուկայի թուլացել էի, մարմնիս բոլոր մասերը կապտել ու ցւոլում էին: Երբ ինձ մտցնում էին քննիչների սենյակ, ես այլևս նրանց կողմը չէի նայում: ՅՅ-րդ խցում տաք էր և շարդված պատուհանից թարմ օդ էր գալիս: Դա փրկում էր ինձ:

Մի օր հերթապահներից թուղթ ու մատիտ պահանջեցի: Տվեցին մի քանի սպիտակ թուղթ և ինքնահոսի միջուկ: Բանտապետին գրեցի նամակ, հայտնեով, որ արգելված մեթոդներով եմ ինձ հարցաքննում, ծեծում եմ, ստիպում եմ տոբրագրել իրենց կազմած թղթերի տակ: Հարցաքննությունն անպայման անց եմ կացնում չորս հոգով և ուզում եմ, որ ես հանձն առնեմ իմ չկատարած գործերը:

Հաջորդ օրը եկավ մի կապիտան և տարավ ինձ հարցաքննության: Նա տարավ նույն քննիչների մոտ: Երբ ես ներս մտա և նստեցի ոտքերը հատակին ամրացված պթոռի վրա, քննիչներն ասացին կապիտանին, որ նա ազատ է:— Ոչ,— ասաց կապիտանը,— ես պետք է ներկա լինեմ հարցաքննությանը:

— Ո՞վ է Ձեզ ասել:

— Բանտապետը:

ՊԱԿ-ի քննիչը, որ քաղաքացիական հաշուառներով էր, գանգ տվեց քանտապետին:

— Այդ ո՞ր օրվանից Դուք պետք է խառնվեք մեր գործերին,— ասաց նա հեռախոսափողով: Չգիտեմ, թե ի՞նչ պատահականեց քանտապետը, բայց ՊԱԿ-ի աշխատակիցն ասաց:

— Ո՞չ, տարեք այդ կապիտանին:

Հետո քննիչը հեռախոսափողը տվեց կապիտանին և նա, ըստ երևույթին, քանտապետից հրաման ստացավ հեռանալ քննիչների սենյակից:

Մնացի մենակ քննիչների հետ: Սկսվեց նույնը: Քննիչներն ասում էին, թե սա Նովոչերկասկի քանտոն է, որ ես պատելից կենդանի դուրս չեմ գա, եթե չընդունեմ, որ զենքերը իմն եմ:

Նա ասացի, որ զենքերը իմը չեն: Իմ սեղանի վրա եղել

եմ լիամիտշտներ և նոճակ, որոնք գտել էին ստապիոնում վազող դպրոցականները և հանձնել էին ինձ: Ինչ վերաբերում է զենքերին, ապա ես տեղյակ չեմ, գուցե հենց զինվորականներն են դրել:

• Քննիչն ասաց:

— Դու կասես, կասես: Դու ես ղեկավարը, զենքը քոն է, դու մեղավոր ես Մանաշենի մոտ մի քանի տասնյակ ադրբեջանցիներ սպանելու մեջ:

Ես հրաժարվում էի: Կրկնվեց նույն ծեծն ու ջարդը: Մի քանի ժամ անց քննիչները կանչեցին հսկող զինվորին, մի թուղթ տվեցին և ասացին, թե դա ետ կրերես:

Ինձ դուրս քերեցին միջանցք: Նովոչերկասկի քանտի միջանցքները ամեն 10 մետրի վրա երկաթե ցանցերով փակված են և կողպված երկաթե ցանցապատ դռներ կան: Ոչ մի տեղ այդպիսի բան չէի տեսել: Սանդուղքները ևս երկաթեց էին և մարդկանց ոտնաձայները ամենուրեք լավ լսվում էին: Տանում էին ինձ մի 10 մետր: Մյուս կողմից հերթապահի բաց էր անում դուռը: Անցնում էինք, փակում էին դուռը և շարժվում էինք դեպի հաջորդ դուռը:

Ինձ մտքեցին մի պատժախոց, որը հազիվ մեկ քառակուսի մետր լիներ: Պատերից ջուր էր հոսում և հատակի անցքով հեռանում: Ստաստաղը բարձր էր և աչնտեղից ջուր էր կաթում: Կաթիլները շատ ուժեղ էին և նրանցից փայլելն անկարելի էր: Պատերին կպչել չէր լինում, որովհետև նրանց վրայով ջուր էր հոսում: Կաթիլներն ընկնում էին մեծ մանամբ գլխիս, երեսիս ու վզիս վրա: Վերարկուն բարձրացրել էի և ծածկել գլուխս: Կանգնած տեղում դուրս էի, շարժումներ անում, որ չստուչեմ: Ծարժումներիս ձայնից մի ավագ եկավ և բացելով դռան վրայի փոքրիկ սրտուհանը, հարցրեց:

— Ի՞նչ ես անում:

— Ծարժվում եմ, որ չստուչեմ:

— Այնպես արա, որ մյուսները չլսեն:

Երևի բարի մարդ էր այդ ավագը, որովհետև երբ ինձ հանեց այդ զարհուրելի խցից, ասաց, որ երկու ժամից ավելի իրավունք չունեին պահելու այնտեղ, իսկ ինձ պահել էին վեց ժամ:

Երբ նա ինձ հանձնեց սպային, ասաց, թե սա վերջին անգամն է, այլևս երկու ժամից ավելի չի պահի:

Ինձ նորից տարան քննիչների մոտ: Նրանց սեղանի վրա դրված էր արդեն կազմված արձանագրությունն այն մասին, որ գտնված գեներալն իմն են: Ինձ ստաջարկեցին ստորագրել արձանագրության տակ:

Ես նրանց առաջի, որ եթե գեներալն իմը լինեին, ես անպայման կստորագրեի, բայց իմը չեն, կապ չունեմ դրանց հետ, գնացե՛ք տերերին գտե՛ք: Հայտնեցի նաև, որ ես բողոքելու եմ նրանց անօրինակամտությունների դեմ:

Ինձ առաջին, թե իրենք գիտեն ամեն ինչ, որ ես ղեկավարել եմ այդ գործերը, եղել եմ շտաբի պետը, որ իրենց ամեն ինչ հայտնի է, քանի որ Ռաշիդ Մանգալարյանն իրենց պատմել է:

Ես ծիծաղեցի, ասացի, որ նա անտեղյակ մարդ է: Եկել էր ստաշիոն լողանալու, այդ ժամանակ վրա էին հասել գինվորները և նրան էլ էին ձերբակալել, մինչդեռ նրա սպիտակեղենը և սրբիչը մինչև հիմա էլ երևի ստաշիոնի իմ առանձնասենյակում են գտնվում: Գնացե՛ք, ստուգե՛ք:

Անցել էր 30 օր: Ենթադրում էի, որ Ռաշիդին արդեն ազատ են արձակել: Համատրեմ պահանջում էի աներեսում կատարել: Նրանք ուշադրություն չէին դարձնում պահանջիս վրա: Ես հասկացա, որ Ռաշիդն արդեն ազատության մեջ է:

Հարկ եմ համարում անպայման նշել, որ ես ամենևին չէի դիմանա այդ տանջանքներին, խոշտանգումներին, տեսական քաղցին ու դաժան ցրտին, եթե ժամանակին ինչպես հարկն է գրադված չլինեի սպորտով: Տարիների ընթացքում, համառ մարզումով, ես խիստ ամրացել ու կոփվել էի ֆիզիկայես, կարողանում էի դիմանալ մեծ ծանրաբեռնվածությունների, բարվածությունների, չէի հոգնում, չէի մրսում: Եթե պետք էր լինում, քայլում կամ վազում էի ժամերով, կարող էի մեծ ծանրություններ կրել իմ վրա: Որպես պրոֆեսիոնալ սպորտսեմ, անընդհատ գտնվում էի լավ մարզավիճակում և բժիշկների մշտական հսկողության տակ: Նրանք միաբերան հաստատում էին իմ միանգամայն առողջ

լինելը: Երբ հեռացել էի ակտիվ սպորտից, այլևս չէի խաղում «Ղարաբաղ» թիմում, ասքա միևնույն է, դարձյալ որպես թիմի մարզիչ մարզվում էի բոլորի հետ: Սկզբում ես խաղացող մարզիչ էի, հետո թողեցի խաղալը: Ստաշիոնի տնօրեն դառնալուց հետո ես շարունակում էի խաղալ իմ վետերան ընկերների հետ: Հիմա էլ, երբ թելադրում եմ իմ այս հուշերը, համարյա ամեն շաբաթ հավաքվում ենք ընկերներով, մարզումներ անում և ֆուտբոլ խաղում:

Ահա իմ կոփված, ֆիզիկայես ուժեղ լինելը փրկեց ինձ Նովոչերկասկի բանտում տանջամահ լինելուց: Բացի այդ, կար նաև մի այլ հանգամանք: Փոքր հասակից լավ գիտեի հեղափոխական Կամոյի մասին. ինչպես էր նա դիմացել փորձություններին, կարողացել էր թյուրիմացության մեջ գրցել իր քննիչներին և հոգեբուժներին: Անկախ այն բանից, թե իմա ինչպես ենք ընկալում Կամոյին (որը, պարզվում է, Ստալինի ձեռքի տակ գրադվել է նաև ֆրեյզային բանդիտիզմով), նրա հերոսական կերպարը ոգեշնչող է եղել ինձ համար և ես ծանր պահերին միշտ հիշել եմ նրան, աշխատել նրա նման դիմանալ փորձություններին: Դա ինձ շատ է օգնել: Ես լավ գիտակցում էի, որ եթե ընդունեմ ստաջարկված մեղադրանքները, ոչ միայն ինձ, այլև ուրիշ ընկերների կարող էի հարվածի տակ դնել, վնաս տված կլինեի մեր սուրբ գործին, որի համար պայքարի էինք ելել: Այդ տառապանքներից պետք է դիմանայի որքան կարելի է շուտ ազատվելու և մեր ազատագրական պայքարին միանալու համար: Գիտեի, որ դրսում շատ գործ ունեմ անելիք:

Հարցաքննությունները շարունակվում էին: Ոչ մի գրության տակ չստորագրեցի: Կալանավորները ամուսկան իրավունք ունեին 10 րոպեով իրեր գնելու՝ օճառ, մատիտ, թուղթ և այլն: Իմ մոտ մնացած 25 րոպեով ես թուղթ ու մատիտ գնել տվեցի և դիմում գրեցի ԽՍՀՄ գլխավոր դատախազի անունով: Կարագրեցի իմ վիճակը, գրեցի, որ քննիչները հարկադրանքով ուզում են իմ վրա մեղքեր բարդել, հարցաքննությունների ժամանակ նրանք գործադրում են արգելված միջոցներ և այլն: Պահապանից խնդրեցի մի ծրար: Նա բերեց, վրան գրեցի հասցեն՝ Մոսկվա, ԽՍՀՄ գլու-

խավոր դատախազին և մնացած փողի նեւ տվեցի նրան: Դա վերցրեց, բայց չիմացա ողորկե՞ց նամակս, թե ոչ:

Մի քանի օր անց մի պահապանի նեւ միասին իմ խցիկը եկավ բանտի հատուկ քամիի պետը՝ մայրի ուսադիր ներով: Հարցրեց, թե ի՞նչ բողոքներ ունեն: Ամեն ինչ ասացի նրան: Նրանից իմացա, որ իմ գործով հետաքրքրվում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի խումբ պատգամավորներ: Դա ինձ որսխացրեց և նոր ուժեր տվեց:

Հետո հայտնի դարձավ, որ ինձ ազատ արձակելու համար վերադառնա իշխանություններին Լին դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներ՝ Հենրիկ Գուրոսյանը, Բորիս Դադամյանը, Զորի Բալաչանը, Վահան Գաբրիելյանը, Վաչագան Գրիգորյանը և Սու Սարգսյանը: Գատգամավոր Գալինա Ստարովոյցոույան մի քանի հետագիր էր տղարկել գեներալ Սաֆոնովին և ԽՍՀՄ գլխավոր դատախազին: Մեր պատգամավորները գրել էին, թե ըստ ԼՂԻՄ-ի զինվորական պարետի հրամանի գեներալը պետք է հանձնվեին մինչև 1990 թ. հունվարի 20-ը, իսկ ինձ ձերբակալել Լին հունվարի 18-ին: Ձևական առումով նրանք սխալ էին թույլ տվել և իմ ձերբակալությունը օրինական չպետք է համարվեր:

Ստորև պատգամավորների միջնորդագիրը՝ հայերեն թարգմանությամբ.

**ԼՂԻՄ-ի դատախազություն  
Դատախազ՝ Վ. Վասիլենկոյին**

28 փետրվարի, 1990 թ.

### **Մ Ի Զ Ն Ո Ր Գ Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

**Մենք՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներս, դիմում ենք Ձեզ՝ Ռազմիկ Արշակի Պետրոսյանին մինչև դատը կալանքից ազատելու միջնորդությամբ:**

**Ռ. Ա. Պետրոսյանը վարչական կարգով 30 օրով ձերբակալվել է 1990 թ. հունվարի 18-ին, աշխատանքի ժամին իր առանձնատեղակում: Հետագալում նրան մեղադրանք է**

**ներկայացվել գեներ պահելու համար: Ստադիոնի աշխատակիցների վկայությամբ այդ գեները արտակարգ դրության հատուկ շրջանի պարետի հրամանի համաձայն հանձնվելու էր մինչև 1990 թ. հունվարի 21-ը: Քանի որ գեները նախատեսված էր հանձնելու համար, ուստի այն թաքցված չէր: Չնայած այն բանին, որ մինչև գեների հանձնման պաշտոնապես սահմանված ժամկետը մնում էր 2 օր, Ռ. Ա. Պետրոսյանին մեղադրանք է ներկայացվել գեներ պահելու համար:**

**Ռ. Ա. Պետրոսյանին կազանքի տակ պահելը և նրա հրճարավոր փոխադրումը Շուշիի բանտ, կարող է ողբերգական հետևանքներ ունենալ: Խնդրում ենք հաշվի առնել նաև այն, որ նրա խնամքի տակ են գտնվում 5 մարդ, որոնց թվում երեք երեխա:**

**Մենք՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներս, տալիս ենք մեր երաշխավորությունը, որ Ռ. Ա. Պետրոսյանը ոչ մի հակահրավական արարք չի կատարի, ոչ մի ձևով չի խախտի օրենքը, կներկայանա դատախազություն և դատարան առաջին իսկ պահանջի ժամանակ:**

**ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ ԼՂԻՄ-ից՝**

**Զ. Գ. Բալաչան, Վ. Մ. Գաբրիելյան, Վ. Ս. Գրիգորյան, Բ. Վ. Դադամյան, Հ. Ա. Գորոսյան:**

Այս միջնորդությանը իրենց ստորագրություններով միացել էին նաև՝ Ս. Սարգսյանը, Հ. Իգիթյանը, Լ. Հարությունյանը, Վ. Արձիներան (ներկայումս նա Աթապաղատի նախագահն է), Տ. Տուաչիձեն, Գ. Ստարովոյտույան և ուրիշներ:

Եղբայրս՝ Զարմիրը, շատ չարչարվեց ինձ գտնելու համար: Իմ հետքերով նա եղել էր Կրասնոդարում, Գոմի-Ռուստովում և Նովոչերկասկում: Դա կարողացել էր մտնել Կրասնոդարի և Նովոչերկասկի բանտապետների մոտ, կարողացել էր կերակուր և ծխախոտ հասցնել ինձ: Նովոչերկասկի բանտապետից նա իմացել էր Ռաշիդի ազատվելու մասին: Զարմիրը երբեք չէր տեսել Ռաշիդին, բայց հուսալից հյուրանոցներից մեկի մոտ, փողոցում, պատահաբար տեսել էր նրան, հասկացել, որ նա պետք է լիներ բանտից մեր դուրս եկած Ռաշիդը: Ձեր սխալվել: Զարմիրը հյուրստ սիրել էր նրան, փող տվել և ողորկել էր նրան:

Պատգամավորների դիմումից հետո ինձ այլևս չէին ծեծում և ոչ մի անգամ պատժախցիկ չստեղծեցին: Բայց ատողչական դրություն վատացել էր՝ երիկամների ուժեղ ցավեր էին սկսվել: Անտառների էր վիճակս, բայց հարցաքննությունները շարունակվում էին: Ակզբում քննիչները պետական անվտանգության մարմիններից էին, հետո եկան դատախազության քննիչները: Նորից նույն հարցերն էին տալիս և նույն պատասխանները ստանում:

Երիկամների ցավն այլևս անտանելի էր: Պահանջեցի բժշկի տանել: Տարան: Բժիշկն ինձ դեղեր նշանակեց: Հետո ինձ տեղափոխեցին 179-րդ խցիկը, որտեղ ազգությամբ լակ մի կալանավոր կար նստած: Նա ինձ պատմեց, թե ինչու են իրեն ձերբակալել: Նովոչերկասկում կռվել է չեչենների հետ և նրանցից երկու հոգու դանակահարելով սպանել: Չեչենները, նրա ասելով, լսվեր էին սպանել: Նա բանտում նստած էր մեկ և կես տարի, իսկ ինձ ասաց, որ 3 ամիս առաջ է բանտարկվել: Կասկածելի տիպ էր: Հարցաքննություններից հետո վերադառնում էր ոչ միայն չծեծված, այլև զանազան ոտնելիքներով: Ինձ էլ հյուրասիրում էր: Ասում էր, որ իրեն տալիս է քննիչը, որը կին էր:

Տաս օր միասին էինք այդ խցում: Նա պատմում էր ինձ իր գեներալի մասին և ասում, որ կարող է դարաբաղցիներից գեներալ տալ: Հասկացել էի, որ լրտես է: Անընդհատ հարցեր էր տալիս գեներալի մասին: Նրան ասում էի այն, ինչ ասել էի քննիչներին:

Ես իմացա, որ իմ խցիկից 50 մետր հեռավորության վրա գտնվող խցիկը դարաբաղցի մի տղա են բերել: Խընդրեցի, որ նա ինձ հետ կարվի «հեռախոսով»: Նա կապվեց և ես լսեցի նրա ձայնը: Նա Ստեփանակերտի մահ կոմբինատի աշխատակից Ռաֆիկն էր, որը ձերբակալվել էր տաս ուրիշ հայ տղաների հետ Ստեփանակերտում, պարետային ժամը խախտելու համար: Ինչպե՞ս էինք խոսում «հեռախոսով»: Այլումի՞նե բաժակը տակի կողմից դնում էինք ջեռուցման խողովակի վրա և վերևի կողմից (դեպի բաժակի մեջ)

սկսում էինք խոսել: Նախապես բաժակով պետք էր երեք անգամ թխթխացնել խողովակը, ստանալ պատասխանը (դարձյալ երեք անգամ թխթխեց), որից հետո հնարավոր էր դառնում երկուստեք խոսակցությունը: Մյուս կողմի ձայնը լսելու համար անհրաժեշտ էր բաժակը շուտ տված դնել խողովակի վրա և ականջը կիս մոտեցնել նրան: Երբեմն «հեռախոսով» ինձ համար երգում էին:

Ռաֆիկից իմացա, որ նույն բանտում են գտնվում Ռոլես Աղաջանյանը, Արկադի Դուխասյանը (այժմ ԼՂՀ-ի նախագահ), Ռոտիկ Ազարյանը, օնկոլոգիական հիվանդանոցի գլխավոր բժիշկ Լեոքերտ Խաչատրյանը և ուրիշներ:

Հետագայում Ռաֆիկը ազատվելով բանտից՝ ակտիվորեն ներգրավվել էր մեր ազատագրական պայքարի մեջ: Մասնակցել էր Ջամիլի գյուղի ազատագրմանը և այնտեղ էլ գտնվել: Ջամիլին Ստեփանակերտի մոտ գտնվող մի փոքրիկ գյուղ է: 60-ական թվականներին նրա բնակիչները, որ բոլորը հայեր էին, ստիպված էին եղել իրենց տները չնչին գներով (շուրջ 300 ռուբլով) վաճառել թուրքերին և տեղափոխվել Ստեփանակերտ:

Իսկ բանտախցում եղած լակը, որի ազգանունը Մանայի էր թե Մամեդով, լավ չեմ հիշում, մատնել էր և ինձ տեղափոխեցին ուրիշ խոց, որը հետո էր մյուսից և անկարելի էր «հեռախոսել»:

Երբ մտա այդ խոցը, այնտեղ տեսա շուրջ 50 տարեկան մի որս մարդու, որը Օսիսի քաղաքից էր: Իմացա, որ նրան բանտարկել էին բռնաբարության համար: Այդ մարդը սարսափելի ոջուտ էր և ոջիվները նրանից զալիս էին իմ կողմը: Ես հավաքում էի դրանք ու դնում մի լուցկու տուփի մեջ:

Ես դիմում գրեցի բանտի պետին և պահանջեցի տանել այդ ոջուտին իմ մոտից: Հաջորդ օրը նրան տարան բժշկի մոտ և մարմնին ինչ-որ դեղ քսեցին: Դրանից հետո նրա վրայից ոջիվները մասսայաբար սկսեցին փախչել իմ կողմը: Ես թողով բռնում էի դրանց և լցնում լուցկու տուփի մեջ, որն արդեն համարյա լեցուն էր այդ նոդկալի միջատներով: Արդեն հավաքել էի շուրջ 80 հատ:

Մի նոր դիմում գրեցի բանտապետին: Երրորդ օրը ստի-

պեցի, որ նա էլ դիմում գրի և պահանջի մաքրել իրեն: Չը-  
գրեց: Համբերությունս սպառվել էր, սկսեցի ծեծել նրան:  
Քթից արյուն եկավ: Նա ասաց, որ ես սուաջինը չեմ, որ  
իրեն հատուկ պահում եմ վտանգավոր կալանավորներին  
ոչլուտեցնելու համար: Ես նորից սկսեցի հարվածել նրան և  
ասացի, որ անպայման կապանեն:

Նա դիմում գրեց և պահանջեց իրեն տեղափոխել այլ  
խոց, քանի որ հարևանը (այսինքն՝ ես) ուզում է իրեն  
սպանել:

Հաջորդ օրը չորս պահապան զինվորներ եկան մեր  
լսջիկի մոտ: Երկուսը մտան ներս, իսկ մյուսները մնացին  
դուռնի մոտ: Ռեւոլվեր մահակներով զինված պահակները  
մտնեցան ինձ.

— Այդ դո՞ւ ես արան ծեծում: Պատասխանեցի:— Այո,  
քանի որ ոչլուտ է և չի ուզում մաքրվել:

Ես նրանց ցույց տվեցի լուցկու տուփը, որը լեցուն էր  
ոջիկներով: Նրանք նորից դիմեցին ռուս կալանավորին, թե  
նի՞շտ է, որ դրանք իր վրայի ոջիկներն են: Բայց պատաս-  
խանը ավելորդ էր, քանի որ այդ մարդու վրա նշմարվում  
էին ոջիկները: Հատկապես շատ կային գլխի վրա: Ջինվոր-  
ները թքեցին ու հեռացան: Հետո նրանք վերադարձան և  
սուսցին, որ հավաքեն շորերս և գնան իրենց հետ:

Ինձ տարան բանտի մյուս մասնաշենքի 4-րդ հարկի  
48-րդ խոցը: Քիչ անց ինձ մոտ քերեցին իմ ծանոթ լակին,  
որը դարձյալ ինձանից ուզում էր իմանալ, թե որտե՞ղ եմ  
պահում գեները: Նա գեներ ու զինամթերք էր խոստանում:  
Ես նրան ասում էի այն, ինչ ասել էի քննիչներին: Համոզ-  
վելով, որ ոչինչ չի ստացվում, հինգ օր հետո այդ տղային  
տարան ուրիշ խոց:

Ամեն օր ինձ տանում էին հարցաքննության, բայց չէին  
ծեծում: Մի անգամ, երբ վերադարձրին գրոսանքից, տեսա  
իմ խոցն եմ քերել հայաստանցի մի տղայի: Նա ևս հար-  
յնում էր ինձ գեներների մասին: Նրան չափազանց հետա-  
քորքորում էր այն, թե Հայաստանից գեներ տանո՞ւմ եմ Ղա-  
րաբաղ, ո՞վ է տանում և այլն:

Հասկացա, որ սա էլ հավաքագրված լրտես է և ուզում է  
ինձանից խոսք քաշել:

Մի անգամ պառկած ժամանակ տեսա, որ հատակին  
եղած անցքի միջով մի ծալծված թղթի կտոր է քարձրա-  
նում: Ներքևի հարկի խոցից էին հրում այդ թուղթը: Հայնե-  
վանս վերցրեց ու կարդաց: Հեղինակը ներքևի խոցում բան-  
տարկված Նովոռոսիյսկի քաղաքից մի տղա էր, որը վա-  
խուստ էր նախապատրաստում և առաջարկում էր միանալ  
իրեն:

Փախուստի պլանն այսպիսին էր. գրոսանքի ժամանակ  
պետք էր սպանել պահապան զինվորին: Նրանից վերցնել  
բանալիները, գեները, դուրս գալ բանտից և ծանոթների օգ-  
նությամբ հեռանալ քաղաքից:

Այդ գրությունը կարդաց հայաստանցի տղան և հարցա-  
կան հայացքով նայեց ինձ: Հետո ասաց՝ «Եվ՛, միանանք  
նրանց ու փախչենք»:

Ես ասացի ինչո՞ւ պետք է փախչեմ, երբ ես մեղավոր  
չեմ և ինձ անպայման ազատ են արձակելու: Ես հրաժար-  
վեցի պատասխան գրել և, ընդհանրապես, այդ թեմայով  
խոսակցություն ունենալ: Բայց նա շարունակում էր խոսել,  
հայհոյում էր իշխանություններին, դեկավարներին և այլն:  
Ես լսում էի կամ էլ ինձ քնած ձևացնում: Նա հաճախ նա-  
մակներ էր գրում բանտապետին, որը անմիջապես ընդու-  
նում էր նրան:

Տեսնելով ոչինչ չի ստացվում՝ 12 օր անց այդ տղային  
ազատ արձակեցին:

Հետագայում այդ տղան հայտնվել էր Ղարաբաղում:  
Ավելի ուշ ես իմացա, որ նրան սպանել են:

## ԶԱՐՄԻԿԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Զարմիկը լավ հարաբերությունների մեջ էր քննիչի հետ:  
Այդ ժամանակ Երևանում լույս տեսնող «Հայաստանի ֆիզ-  
կոլտուրնիկ» թերթում լույս էր տեսել մտերիմ ընկերոջս՝  
Վարդան Գրիգորյանի հոդվածն իմ մասին: Հոդվածի վեր-  
նագիրն էր՝ «Ազատություն Ռազմիկ Պետրոսյանին և իր  
ընկերներին»: Նրա ռուսերեն թարգմանությունը Զարմիկը

տվել էր մի շարք մարդկանց և իմ քննիչին: Վերջինիս վրա հողվածը դրական ազդեցություն էր ունեցել և այդ մասին նա հայտնեց ինձ: Հետո, երբ կարդացի այդ նյութը, շատ հուզվեցի, որ դրսում եղած ընկերներս չեն մոռացել ինձ և ձգտում են նպաստել իմ ազատվելուն:

Ասորև բերում եմ այդ հողվածն ամբողջությամբ:

### ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՌԻ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Խորին վրդովմունքով իմացա Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմի նախկին խաղացող, Ստեփանակերտի Ծահուճյանի անվան մարզադաշտի տնօրեն Ռազմիկ Պետրոսյանի ու նրա ընկերների ձերբակալության մասին:

Տարիքով ֆուտբոլասերները լավ են հիշում արագաչարժ, շնորհալի այդ հարձակվողին: Օրինակելի էր նաև առօրյա կյանքում, աշխատանքի մեջ, հասարակական գործերում: Հայրենասեր, սրտացավ, մարդկանց հոգսերով ապրող, անենքին հասնող և բոլորին ձեռք մեկնող: Նա սիրում է Արցախ երկիրը: Այդ մեծ սերն էր պատճառը, որ Կիրովաբադում ծնված և Երևանում մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած, մեկնեց Ստեփանակերտ և մեծ եռանդով ձեռնամուխ եղավ լեռնային մարզում ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման գործին:

Ղարաբաղցին քաջ է, անվեհեր, ուժեղ և ճարպիկ, նա պիտի աչքի ընկնի նաև սպորտի բնագավառում. սա էր Ռազմիկի հավատամքը, և նա բոլոր ուժերով ձգտում է նրա պատել դրա իրականացմանը: Սկզբում աշխատեց Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում, որպես ֆիզկուլտուրայի դասատու, միաժամանակ խաղալով «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմում: Այնուհետև ստանձնեց այդ թիմի մարզիչի պարտականությունները: Իսկ ակտիվ սպորտը թողնելուց հետո դարձավ տնօրենը Ստեփանակերտի Ծահուճյանի անվան մարզադաշտի, որը քաղաքի միակ մարզական կենտրոնն է:

Երբ Ստեփանակերտ հասան Ստեփանակերտի սպանդից ազատված մեր հայրենակիցները, մարզադաշտը դարձավ նաև օգնության կենտրոն: Մարզիկների հյուրանոցը տրամադրվեց տասնյակ փախստական ընտանիքների, կազմակերպվեց նրանց նյութական օգնությունը: Ռազմիկը Երևանից ձեռք բերեց կարի մեքենաներ և հիմնեց կարի արհեստանոց, որտեղ աշխատանք ստացան մի քանի տասնյակ գաղթական աղջիկներ ու կանայք:

Եվ այժմ Ռազմիկը, որը Արցախի Ազգային խորհրդի նախագահության անդամ էր, և իր ութ ընկերները՝ Ռաշիդ Մանգասարյանը, Ռուես Աղաջանյանը, Արկադի Ղուկասյանը, Ռուդիկ Ազարյանը, Վիգեն Բաբայանը, Ռաշիդ Բաղդասարյանը, Ավետիք Գրիգորյանը և Ռոբերտ Գևորգյանը ձերբակալվել են:

Ինչի՞ համար: Որ «հավասարակշռություն» ստեղծվի Բաքվում կատարվող ձերբակալությունների հետ: Բայց չէ՞ որ այնտեղ բռնվել են մարդատյաց, մոլեռանդ ոճրագործները: Իսկ ո՞րն է դարաբաղցի տղաների մեղքը: Ո՞ր օրվանից է ազգային արժանապատվության զգացումը, հայրենասիրությունը, հարազատ ժողովրդի անվտանգության նկատմամբ լուռեցած հոգն ու մտահոգությունը մեղք համարվել: Գտնում եմ, որ այդ ձերբակալություններն ապօրինի են, չարդարացված, ոտնձգություն են մարդու իրավունքների նկատմամբ և նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն:

ՎԱՐՉԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ,

Մատենադարանի բաժնի վարիչ,  
պատմական գիտությունների դոկտոր

«Հայաստանի ֆիզկուլտուրիկ»

8 փետրվարի 1990 թ.

Ջարմիկն ակտիվորեն գործում էր: Նա իմ քննիչի նկատմանը էր Ստեփանակերտ, քանի որ վերջինս հանդիպումներ էր ունենալու գործին առնչվող մի շարք անձանց հետ: Դրանց թվում էր նաև Ստեփանակերտի ստադիոնի պահակ Բենիկ Բաղդասարյանը: Երբ քննիչը նրան հարցրել էր զենքերի մասին, Բենիկն ասել էր, որ Ռազմիկը չի պահել

գեները, իսկ ինքը տեղյակ չէ, թե ո՞վ է եղել գեները թաքցնողը:

Ստեփանակերտից վերադառնալուց հետո քննիչն ինձ կանչեց հարցաքննության: Նրա միջոցով Ջարմիրն ինձ ուղարկել էր 10 տուփ ուստուլյան «Նաշա մարկա» սիգարետներ: Քննիչն ինձ ասաց, որ երբ պետական անվտանգության կոմիտեն ինձնից ձեռք քաշի, ապա քննչական գործը կհանձնվի իրեն և նա պատրաստ է ինձ օգնելու:

Մի անգամ գրոսաւքից վերադառնալուց հետո տեսա, որ խուցս են բերել ստեփանակերտցի մի տղայի, որը ժամանակին Երևանից ինձ համար փամփուշտներ էր բերել: Նրան թողեցին ինձ մոտ 10 րոպե: Այդ ընթացքում նրանից իմացա, որ իրեն հարց են տվել, թե ի՞նչ էս բերել Երևանից ու հանձնել Ռուզմիկ Պետրոսյանին: Նա պատասխանել էր, թե բերել է մի արկղ, որի միջից ինչ-որ չխշխկոց էր լսվում: Իսկ ես հայտնել էի, որ ինձ համար բերել էին մի արկղ չեխական գարեջուր և դա ես դրել էի երկարթե պահարանի մեջ: Պայմանավորվեցինք այդպես պնդել բոլոր հարցաքննությունների ժամանակ: 10 րոպե անց այդ տղային հանեցին իմ խցից:

Այդ խոսակցությունն ինձ օգնեց, որ հետագայում ես լիովին հրաժարվեի թեյարանում գտնված գեներտից: Երեվանից ստացել եմ մի արկղ գարեջուր, որը գտնվում է սեյֆում: Այդպես էի ասում և վերջ: Եվ իսկապես, սեյֆում այդ ժամանակ էլ կար մի արկղ գարեջուր, որը մենք խմեցինք իմ ազատվելուց հետո:

Ո՞վ էր այդ տղային մտցրել իմ խուցը և նպաստել մեր փոխադարձ պայմանավորվածությունն ձեռք բերելուն, անհայտ է ինձ համար մինչև հիմա: Ենթադրում եմ, որ բանտապետն ուզեցել էր ինձ լավություն անել: Բայց, արդյոք միայն ի՞նձ: Գուցե նա տեղյակ էր, իսկ չէր կարող տեղյակ չլինել, դարաբաղյան մեր արդարացի պայքարին և իր կարյաց սահմաններում, վտանգի տակ դնելով իր աշխատանքային կարիերան, այդպիսի համարձակ քայլով իր համերաշխությունն էր հայտնում մեր շարժմանը: Կարծում եմ, որ ժամանակի ընթացքում կպարզվի նաև այս փոքրիկ անեղծվածը:

Հերթական հարցաքննության ժամանակ քննիչ կուպիտան Պրոկոպենկոն ինձ հայտնեց, որ Պետական անվտանգության կոմիտեն այլևս գործ չունի ինձ հետ: Հարցաքննությունն ինքն է վարելու: Նրանից տեղեկացա, որ քննիչները գնացել էին Ստեփանակերտ և այնտեղ ոչ ոք իմ դեմ ցուցմունք չէր տվել. բոլորը միաբերան ասել էին, որ ես կապ չունեմ գեներտի հետ: Գործերը լավ են, պետք է մեկնենք Ստեփանակերտ՝ առերեսման: Նա ասաց, որ ես պետք է ստորագրեմ այն գրության տակ, որտեղ նշված է, թե նրանակը, կապույտները և փամփուշտները գտել են իմ գրասեղանի վրայից: Ես ասացի, որ կստորագրեմ, քանի որ դրպրոցականներն էին դրանք գտել ստադիոնի տարածքում և հանձնել ինձ, իսկ ես տալու էի զինվորական պարետին:

Մի քանի օր անց ճաշ բաժանող կալանավորը մի թույլ տվեց ինձ, որի վրա հայերեն գրված էր մոտավորապես հետևյալը.

«Մենք դարաբաղցիներ ենք, մեզ արդեն բաց են թողնում, եթե թաքցված գեներտի տեղը գիտես, ասա գնանք և հուսալի տեղում թաքցնենք»:

Ես հասկացա, թե դրանք ինչ խաղեր են և անմիջապես պատասխան գրեցի, որ գեներ չունեմ, ոչ էլ տեսել եմ:

Մի քանի օր անց ինձ տեղափոխեցին Նովոչերկասկի միլիցիայի բաժանմունք: Մտցրեցին մի խուց, որտեղ արդեն նստած էր մի ադրբեջանցի: Նա Ադրբեջանի Ժղանովի շրջանից էր, սովորում էր Նովոչերկասկում: Ձերբակալվել էր մի տորոնդերոցի մասնակցելու և դանակահարության համար: Նա բոքսի վարժություններ էր անում: Ես էլ սկսեցի այդպես մարզվել: Զգաց, որ սպորտի մարդ եմ: Հարցրեց, թե ինչն՞վ եմ զբաղվում: Պատասխանեցի, որ կարատեիստ եմ: Դա նրա վրա ազդեցություն ունեցավ: Նա ասաց, որ հայերը ազերիներ են սպանել, բռնաբարել են կանանց և այլն: Ես ասացի, որ այդ բոլորը սուտ է, ազերիներն են Սումգայիթում ու մյուս տեղերում հայերին սպանել, թալանել և այլն: Երևի այդ տղայի խուցն էին ինձ օգել,



որ նա հաշվեհարդար տեսներ իմ նկատմամբ, բայց ոչինչ չստացվեց: Այդ տղան զգաց, որ ինքնուրույն է ինքը ծեծվել: Երբ նա իմացավ, որ ինձ տանելու են, խնդրեց, որ հետագրեմ նորը գա, քանի որ շուտով տկամ է իր դատը:

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Հաջորդ օրը երեք միլիցիոներներ հանեցին ինձ խցից, մի ձեռքս ձեռնաշղթայի միջոցով կապեցին միլիցիոներներից մեկի ձեռքին և ավտոմեքենայով տարան օղանավակայան: «Ռուստով—Թրիխախ» ինքնաթիռով ինձ բերեցին Թրիխախ: Մեկ օր մնացինք այնտեղ, հետո հաստիկ ուղղաթիռ եկավ Ղարաբաղից ու մենք թռանք Ստեփանակերտ:

Զարմիր բնիչի հետ արդեն այնտեղ էր: Նա բոլոր էր ուղարկել մերոնց և ես օղանավակայանում տեսա տղայիս՝ Գագիկին, Ռոյեսին և կնոջս եղբորը՝ Բորիս Պոդոպյանին: Վերջինս Ստեփանակերտի ոմբակոծման ժամանակ, 1993 թ. հոկտեմբեր ամսին, սպանվեց փողոցում, իր տան մոտ «Գրադի» արկի պայթյունից, որն արձակվել էր Ադրամից, նրա հետ միաժամանակ զոհվել էին 7 խաղաղ բնակիչներ, մեծամասնությունը 5—12 տարեկան երեխաներ:

Մերոնց չթողեցին մոտենալ, բայց ինձ փոխանցեցին նրանց բերած փգարեւոները: Ինձ տարան միլիցիայի վարչություն և փակեցին № 10 խցում: Այնտեղ միայն ոտս պահակներ էին, հայ միլիցիոներներին թույլ չէին տալիս մոտենալ:

Գիշերը ցուրտ էր: Ոչ մի հարմարություն չկար, քնեցի գետնին:

Հետագայում ես իմացա, որ Ռոյես Ադաջանյանը որոշել էր ինձ Շուշի կամ Ադրամ տանելու դեպքում մի քանի հոգով հարձակվել ավտոմեքենայի վրա և ազատել ինձ:

Հաջորդ առավոտյան ինձ տարան հարցաքննության: Բնիչները երկուսն էին՝ կապիտան Պրոկոպենկոն և մի մայոր: Մայորն ասաց, որ այդ օրվանից ինքն է լինելու իմ քննիչը: Ցույց տվեցին գեներալի լուսանկարները: Ես կրկին պնդեցի, որ դրանք իմը չեն և ոչ մի պատկերացում չունեն

դրանց մասին: Ետևանը և վամփուշտներն ուղարկել էին Վոլոգորսկի փորձաքննության: Այնտեղ հաստատել էին, որ դրանք մարտական են: Ես ասում էի նույնը՝ դպրոցականներն են գտել ու տվել ինձ, իսկ ես էլ պետք է հանձնելի պարետատուն:

Ինձ ցույց տվեցին հայերեն գրված այն թուղթը, որ տրվել էին ինձ բանտում: Դրա վրա գրված էր և իմ պատասխանը: Իմ անձնական գործի հետ այդ թուղթն էլ էին ուղարկել: Կանչեցին մի հայ քննիչի և խնդրեցին բարձրաձայն կարդալ, թարգմանել ոտներեն, թարգմանությունն արտագրել մի թղթի վրա և ստորագրությամբ հաստատել: Եկավ մի քննիչ և այդպես էլ արեց: Դա ևս լրացուցիչ փաստարկ էր իմ օգտին:

Զարմիրն արդեն փաստարան էր վարձել: Նա ամեն օր հանդիպում էր Պրոկոպենկոյի հետ: Վերջինս Չարմիրին ասել էր, թե «Բո եղբայրը նշանավոր անձնավորություն է: Նրա վրա ոչ մի մեղադրանք չեն կարողացել դնել, եթե այդպես մնա, նա կազատվի»:

Բայց քննիչն ամեն օր ինձ հարցաքննության էր կանչում: Պահանջում էր ստորագրել թղթերի տակ և ես հրաժարվում էի: Եվ ասում էի, որ հիվանդ եմ, երիկամներս ցավում են: Նա ասում էր, թե կողարկեն ինձ հաբու կամ Կիրովաբադ, քանի որ ուրիշ տեղ հոսպիտալ չունեն: Հետո ասաց, թե կողարկեն Շուշի, բանտն այնտեղ է: Այնտեղից կբերեն հարցաքննության: Ես լավ գիտեի, որ այդ քաղաքներից ողջ չէի վերադառնա:

Ստեփանակերտում գտնվելուս 7-րդ օրը երիկամների ուժեղ բորբոքում ունեցա: Անուանելի ցավեր սկսվեցին: Պահանջում էի բժիշկ կանչել, չէին համաձայնվում: Երրորդ օրը ես այնչա չէի կարողանում ոտքի վրա կանգնել: Ցավից զարարվում էի խցի սառը հատակի վրա: Ոչինչ չկարողացա ոտել: Երեկոյան վիճակս արդեն շատ ծանր էր: Ծոսալ օգնություն կանչեցին: Բժիշկը Սաշա Գրիգորյանն էր, որն ինձ լավ էր ճանաչում: Տեսավ, որ պատկած եմ գետնին ու ցավերից կծկվել եմ: Նա ինձ անեթիկյան դեղեր տվեց և ցավերը փոքր-ինչ մեղմացավ:

Սաշային խնդրեցի այնպես անել, որ ինձ հիվանդանոց

փոխադրեն: Քննիչը դիտողություն արեց՝ «Ինչո՞ւ եք խոսում հայերեն»: Հերթապահի մոտ եղած հատուկ մատչանում Սաշան գրեց իր եզրակացությունը՝ հիվանդին պետք է անմիջապես հիվանդանոց փոխադրել և վիրահատել, քանի որ նրա մի երիկանը չի աշխատում: Նա ինձ ցավագրկող դեղեր տվեց ու գնաց:

Փաստարանն համառորեն պահանջում էր ինձ տեղափոխել հիվանդանոց՝ վիրահատման: Նա գանգ էր տվել գեներալ Սաֆոնովին: Նա պատասխանել էր, թե սուտ է, Պետրոսյանը հիվանդ չէ, ինքը Կիրովաբադից զինվորական բժիշկ կբերի և ամեն ինչ ստուգել կտա:

Մինչ այդ Ջարմիրը Ղարաբադի գլխավոր վիրաբույժ, Իսահանգիտությանը ուրույն էղիկ Ղուկասյանի հետ պատրաստել էր տվել իմ համար անձնական քարտ, որի համաձայն երիկանների բորքոքումով ես պատկած եմ եղել հիվանդանոցում: Երեք օր անց Կիրովաբադից եկավ զինվորական բժիշկը, մի փոխգնդապետ: Քննիչի հետ մտավ իմ խուցը և սկսեց ստուգել ինձ: Հետո նա հայտնեց քննիչին, որ ես իսկապես հիվանդ եմ: Նա հարցրեց ինձ, թե ես բուժվե՞լ եմ հիվանդանոցում: Դրական պատասխան տվեցի: Դրանից հետո նա գնացել էր հիվանդանոց, ծանոթացել էղիկ Ղուկասյանի հետ և եկել այն եզրակացության, որ ես խրոնիկ հիվանդ եմ և անպայման ինձ պետք է վիրահատել:

Էղիկը խնդրել էր փոխգնդապետին իր եզրակացությունը գրավոր ձևով տալ քննիչին: Այդ ժամանակ ԼՂԻՄ-ի դատախազ Վասիլենկոն դեմ էր ինձ հիվանդանոց փոխադրելուն: Նա ասում էր, թե ինքը համաձայն կլինի, եթե դրան դրական վերաբերմունք ունենա քննիչը: Ջարմիրը հանգիստ չուներ: Նա գնացել էր Ազգային խորհրդի անդամ Ռոբերտ Քոչարյանի մոտ (նա այժմ Հայաստանի Հանրապետության վարչապետն է) և նրա օգնությամբ համոզել էր քննիչին տալու իր համաձայնությունը:

Հաջորդ օրը քննիչն ինձ կանչեց հարցաքննության: Մյուս քննիչն էլ նրա հետ էր (կապիտանը): Քննիչն ասաց, որ ինձ թողնում են գնալ հիվանդանոց, միայն թե ես պետք է ստորագրություն տամ այն մասին, որ նոնակը և փամ-

փուշներն իմն են եղել: Ես նորից նույնը կրկնեցի՝ դպրոցականներն են գտել:

Այդ ժամանակ կապիտանն առաջարկեց մայրիկն գնալ դպրոցները և գտնել այն երեխաներին, որոնք գտել ու ինձ էին հանձնել այդ զինամթերքները: Ջարմիրը և Ղուկան Բեգյարը գնացել էին դպրոցներից մեկը (3-րդ դպրոցը) և պայմանավորվել երկու դպրոցականների հետ, որ նրանք զինամթերքը գտնելը և ստադիոնի տնօրենին հանձնելը իրենց վրա վերցնեն: Երկու աշակերտներ հանձն էին անել, դրանցից մեկը Բեգյարի տղան էր՝ Արմեն Ղուկանը, մյուսը՝ Մարատ Հակոբյանն էր: Երբ մի քանի դպրոցներ ստուգելուց հետո քննիչները գնում են 3-րդ դպրոցը և հավաքելով երեխաներին, հարցնում զինամթերքի մասին, Արմենն ու Մարատն ասում են, թե իրենք են գտել և հանձնել Պետրոսյանին: Լուսանկարի վրա նրանք «ճանաչել» էին հիշյալ առարկաները: Դրանից հետո քննիչները կազմել էին արձանագրություն, ստորագրել տվել ու հեռացել:

Դպրոցն ավարտելուց հետո Արմենն ու Մարատը մտել էին Ղարաբադի պաշտպանության բանակի շարքերը: Ցավոք արտի, այդ տղաներից մեկն այլևս չկա: Մարատ Հակոբյանը զոհվեց Մարտակերտի ազատագրման ժամանակ:

Դպրոցականների ցուցմունքն ստանալուց հետո քննիչը գնացել էր դատախազի մոտ և ասել, որ ոչ մի մեղադրանք չի հաստատվում: Դատախազն ասել էր՝ ստորագրություն վերցրու, թող նա գնա հիվանդանոց: Հարցաքննությունները կշարունակեն հիվանդանոցում: Ես ստորագրեցի այդ գրությունը և դուրս եկա:

Դրսում ինձ սպասում էին բժիշկ Էղիկ Ղուկասյանը, Ջարմիրը և էլի մի քանի հոգի: Ավտոմեքենա նստեցի և հիվանդանոցի փոխարեն ուղիղ մեր տուն գնացի:

## ՆՈՐԻՑ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երբ տանը նայեցի հայելում, ինձ համարյա չճանաչեցի: Խիստ միահարել էի՝ 18 կգ, այտերս ներս էին ընկել, դեմքիս կնճիռներ էին առաջացել: Ծարս վատ էի զգում: Երկվամենրս

սաստիկ ցավում էին, քայց ուրախ էի, որ տանն եմ, հարգատեներիս հետ, որոնք անչափ ուրախացել էին իմ ազատության համար: Իսկույն զանգ տվեցին աղջիկներին ու փեսաներին, որոնցից մեկը՝ Գայանեն, ամուսնու և երեխայի հետ ապրում է Երևանում, Լիանան՝ Արտաշատում:

Ամեն օր գնում էի հիվանդանոց: Բժիշկները սրկումներ էին անում, դեղեր էին տալիս: Դատախազության հսկողության տակ էի, երբ այնտեղից մարդ էին ուղարկում ստուգելու իմ ներկայությունը, բժիշկները զանգ էին տալիս ու ևս գնում էի հիվանդանոց, որը հեռու չէր իմ տանից:

Մեկ ամիս անց Է. Ղուկասյանը գրեց իր եզրակացությունը ինձ անմիջապես վիրահատելու մասին: Քանի որ դա անհնարին էր Ստեփանակերտում, ապա պետք է գնալի Երևան: Այդ գրությամբ գնացի դատախազի մոտ: Նա հարցնեց, որ ինքը դեմ չէ, քայց քննիչը ևս պետք է տա իր համաձայնությունը: Վերջինս ևս համաձայնվեց, քայց պայմանով, որ պետք է իրենց հայտնեմ հիվանդանոցի հասցեն և իմ հիվանդասենյակի համարը:

Ես ուղղաթիռով մեկնեցի Երևան և ներկայացա Հանրապետական հիվանդանոցի ուրոլոգիական բաժին: Հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալը Հենրիկ Մեփյանն էր, որին գիտեի Ստեփանակերտից: Նա լսել էր իմ ձերբակալության մասին: Երբ ինձ տեսավ, շատ ուրախացավ:

Նրա կարգադրությամբ ինձ որպես հիվանդ ընդունեցին, քայց ես պառկելու էի քրոջս՝ Ժաննայի տանը: Այդպես էլ արեցի, Ժաննայի տնից զանգ տվեցի քննիչին՝ Ստեփանակերտ, հայտնեցի հիվանդանոցի հասցեն և հիվանդասենյակի համարը: Այնտեղ պառկած հիվանդներին տվել էի հեռախոսիս համարը, որ պահանջի դեպքում ինձ կանչեին հիվանդանոց:

Արդեն փաստորեն ազատության մեջ էի, ուստի նորից ձեռնամուխ եղա դարաբաղումի ազատագրական շարժման համար գեներալի ու զինամթերքի հսկաքման գործին: Գիտեի, որ մեզ յուր ընդհարումներ են սպասում և պատրաստ պետք է լինե՞նք, քանի որ առանց գեներալի, առանց արյունահեղության մենք չէինք կարողանա նվաճել մեր հայրենիքի բաղձալի ազատությունը:

## ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

Սկսվել էր Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրությունների նախապատրաստական շրջանը: Իմ թեկնածությունը ևս առաջադրվեց Գերագույն խորհրդի պատգամավորության համար: Ես թեկնածու գրանցվեցի Հայաստանի Արթիկ քաղաքի Լեւոնտի № 119 ընտրական օկրուգում: Թեկնածու գրանցվելու համար անհրաժեշտ էր հավաքել որոշակի քանակությամբ ստորագրություններ: Այդ գործը հրաշալի կերպով կատարեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատակից Մկրտիչ Դանթելյանը (դժբախտաբար, ընտրություններից որոշ ժամանակ անց խոստումնալից գիտնական և հասարակական ակտիվ գործիչ Մկրտիչ Դանթելյանը հանկարծամահ եղավ): Վստահված անձ նրանակվեց մտերիմ ընկերս՝ Մաշտոցի անվան Մատենադարանի բաժնի վարիչ Վարդան Գրիգորյանը: Մկրտիչ կինն արթիկցի էր, իսկ Վարդանի ծնողները՝ շրջկենտրոնից ոչ հեռու գտնվող Նահապետավան գյուղից: Նրանք շատ ազգականներ ունեին Արթիկում, որոնք լայնորեն աջակցում էին իմ նախընտրական պայքարին:

Անհրաժեշտ էր պատրաստել նախընտրական ծրագիրը: Վարդանի հետ միասին դա մենք պատրաստեցինք ու բազմացրեցինք Մատենադարանում:

Սովորաբար մի մեծ թղթի վրա տպում էին պատգամավորության թեկնածուների նախընտրական ծրագիրը՝ հստեղծ ու ռուսերեն, մեջտեղում դնում թեկնածուի լուսանկարը և կենսագրությունը: Լուսանկարի փոխարեն ես դրեցի Հրաչյա Ռուիսիկյանի նկարած իմ դիմանկարը: Անվանի նկարիչը 1983 թ. եկել էր Ղարաբաղ և որոշել էր ստեղծել նշանավոր դարաբաղցիների դիմանկարները: Նա նկարել էր գրող Վազգեն Օլյանին, ԽՍՀՄ հերոս, կոլտնտեսության նախագահ Ախախ Գասպարովին, Մամոնցին, ակադեմիկոս Եմիկոյուպովին և ուրիշների: Ես էլ էի հայտնվել նրա ցուցակի մեջ որպես ֆուտբոլիստ և սպորտի կազմակերպիչ, և նա նկարեց ինձ:

Այդ նկատքը, որը հրապարակվում է հասկ այս գրքում, դրեցինք ծրագրի կենտրոնում: Ձախից վերևում իմ կենսագրությունն էր, նրա տակ ծրագիրը: Նախագծի մեջտեղում՝ իմ դիմանկարի տակ Վ. Գրիգորյանի հողվածն էր «Ազատություն հազմիկ Պետրոսյանին ու նրա ընկերներին» վերնագրով, որի մասին խոսք եղավ վերը: Իսկ պրակատի աջ կողմում կենսագրության և ծրագրի ռուսերեն թարգմանությունն էր:

Իմ ծրագրի առաջին կետով ես պարտավորվում էի հետևյալը. «Անդու և անզիջում պայքար մղել հայ ժողովրդի երկու հատվածները միավորելու մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Արցախի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված որոշման իրագործման համար: Հասնել այն բանին, որ մոտ սպազայում Արցախ վերադառնան և մշտական բնակություն հաստատեն ԽՍՀՄ տարբեր վայրերում ապրող արցախցիները: Պարմաններ տեղի տեղի հայրենի երկրամասում հայրության գոյատևման և բարգավաճման համար, պատրաստ լինել պաշտպանելու նրանց իրավունքներն ու արժանապատվությունը»:

Այս հուշերն ընթերցողները կարող են համոզվել, որ ես չսեք չեմ խնայել ծրագրիս առաջին կետը կենսագրործելու ուղղությամբ:

Բայց, ես ինչպես հարկն է չկարողացա զբաղվել իմ ծրագրի հաջորդ կետերի իրականացման գործով: Ես հույս ունեմ, որ Արթիկի աշխատավորները, որոնք ընտրությունների ժամանակ տվեցին ինձ իրենց քվեները, ներողամիտ կգտնվեն իմ այսօրինակ «թերացման» համար, որի պատճառը Արցախի պաշտպանության իմ գործուն մասնակցությունն էր:

Նախընտրական պայքարի ժամանակ Մլրտիչ Դանբեկյանից ու Վարդան Գրիգորյանից բացի, ինձ շատ օգնեցին իմ ընկերները՝ դարաբաղցի հանրահայտ բանաստեղծ, երգանան ու երգիչ Գուրգեն Գաբրիելյանը (ի դեպ, նա ձերբակալվել էր ապրիլի 24-ի կապակցությամբ Ստեփանակերտում էլույթ ունենալու պատճառով, և ազատվելուց հետո իր կնոջ՝ Նունիի հետ բուժվում էր Երևանի հիվանդանոցներից մեկում), մեր շարժման ամենաեռանդուն գործիչներից մեկը՝

տիկին Արաքսյան, որը հատուկ եկել էր Ստեփանակերտից: Կրող Ջորի Բալայանը իմ մասին նստակ էր հղկ Արթիկի ընտրողներին: Ստորև բերում եմ այդ նամակի հայերեն թարգմանությունը:

### Թանկագին բարեկամներ

Շատ ցավում եմ, որ ես զրկված եմ դեպուտատության թեկնածու Ռազմիկ Պետրոսյանի հետ հանդիպելու, վերջին նախընտրական ժողովին մասնակցելու հնարավորությունից: Հայրենիքի համար այս պատասխանատու պահին մեր ողջ հույսը Ղարաբաղի այնպիսի զավակների վրա է, ինչպիսին Ռազմիկն է: Այսօր դժվար է պատկերացնել Արցախի կյանքն ու անվտանգությունը առանց Ռազմիկի: Մեր շարժման պատմությունը դեռ պետք է գրվի: Իսկ առայժմ չի կարելի բացահայտորեն պատմել այն ամենի մասին, ինչ անում են Ռազմիկն ու նրա զինակիցները: Մեր դժվարին ու շատ բարդ պատմության ընթացքում չի եղել այսպիսի տագնապալի ժամ:

Լինել, թե չլինել, այլ ելք չկա:

Նոր խորհրդարանից է կախված ոչ միայն մեր հայրենիքի, այլև ողջ հայության ապագան, որը չի կարող գոյություն ունենալ, ինչպես առանց Հայաստանի, այնպես էլ առանց Արցախի: Ես շատ կուզեմ, որ Ռազմիկի հետ միասին դուք բոլորդ պատրաստվեք վճռական պայքարի:

Այլ բան մեզ այսօր չի տրված:

### Հարգանքներով ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Իմ ընտրությանը նպաստեցին ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը և Երևանի քաղաքապետի սպազա նախագահ, այժմ նահատակված՝ Համբարձում Գալստյանը, որոնք լիքան Արթիկ և իմ օգտին ելույթներ ունեցան ընտրողների սոջն: Ընտրողների համար ընթերցվեց Լևոն Տեր-Պետրոսյանի (այժմ՝ ՀՀ նախագահ) հեռագիրը, որով արթիկցիներին կոչ էր արվում իրենց ձայները տալ Ղարաբաղի ազատագրական շարժման գործիչներից մեկին – այսինքն՝ ինձ:

Երախտագիտությունս եմ հալսնում Լեբատի № 119 ընտրական տեղամասի ընտրողներին, որոնք ինձ՝ Նուրի-

չերկասկի բանտից նոր ազատված անձին, վառահեցին Հալստունի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի մանդատը:

Արթիկի աշխատավորները հատուկ ջոկատ էին ստեղծել, որի ուղեկցությամբ Մարտակերտի շրջան ուղարկեցին այսր, բենգին և սոյսարկա:

Ծուռով Ղարաբաղը ենթարկվեց Ադրբեջանի ագրեսիային և ես իմ ընկերների հետ հայտնվեցի ազատագրական պայքարի առաջին գծում:

## ԿՈՉ ԳՍՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Թուրքերը շրջապատել էին Արցախը: Բոլոր կողմերից զինված ավազակախմբեր էին շտապում դեպի Ադրամ, Ֆիզուլի, Միր-Բաշիր, Դուբաթի, Լաշին ու այլ վայրեր: Նրանք սերտորեն համագործակցում էին Ծուշի, Խոջալուի և արցախյան այլ բնակավայրերում հատուտված ազերիների հետ: Ադրբեջանի կառավարությունը, որն այդ հրոսակախմբերի գլխավոր կազմակերպիչն էր, ամեն ձևով օժանդակում էր նրանց: Կաշառված ոռոս հրամանատարները նրանց սոչև բաց էին արել զինապահեստները: Նրանք զինվում էին ու պատրաստվում: Երբ լինեք ընդհանուր հարձակման հրաման՝ թուրք մարդատպանների ոհմակները բոլոր կողմերից կենտրոնանում էին Ղարաբաղ: Ծառ դժվար կլինեք պաշտպանել Արցախը միայն սեփական ուժերով, ուստի գտնում էինք, որ պետք է մեզ օգնություն ցուց տրվի գեներով, զինամթերքով, ինչպես և կուխող ջոկատներով:

Հայաստանի Գերագույն խորհրդի հերթական նիստում լավում էր Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի սահմանամերձ շրջանների վիճակի հարցը: Արցախի հաճճնախմբի հետ խորհրդակցելով՝ Ռազմիկ Դանիելյանը, Ռոլես Ալաջանյանը և ես որոշեցինք գրավոր կոչ հղել պատմագրամավորներին: 1990 թ. սեպտեմբերի 2-ին Գերագույն խորհրդի նիստում ես կարդացի կոչը և նրա բազմազգված օրինակները բաժանեցինք պատգամավորներին:

Ատորև ամբողջությամբ բերում եմ այդ կոչը:

## ԿՈՉ ԶԻՆՎԱԾ ԶՈՎԱՏՆԵՐԻ ԳՈՐԾԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԳՍՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Հայրենակիցներ: Արցախին մահացու վտանգ է սպառնում: Արցախը կհրկեն միայն ու միայն հայ ժողովրդի միասնական կամքն ու դիմադրությունը: Այսօր թշնամու դեմ դիմաց կանգնած արցախցին՝ Գետաշենից մինչև Հաղրուք, միայն մեկ բան է խնդրում և պահանջում՝ Մայր Հայրենիքի՝ զենք և ջոկատներ: Ադրամում, Միր-Բաշիրում, Ֆիզուլիում և այլ ադրբեջանական շրջաններում կուտակվող ասկարները պատրաստ են մտնել Արցախ և սպանել կազմակերպել: Մենք կովելու ենք մինչև արյան վերջին կաթիլը, բայց ուժերն անհավասար են: Ուստի նորից ենք ատմ՝ զենք տվեք մեզ, ջոկատներ ուղարկեք: Այս միջոցին սա միակ փրկությունն է: Եթե դուք չկատարեք ձեր պարտքը՝ հետո չասեք, թե ոչ ոք ձեզ չի գուշացրել: Վաղը ուշ է լինելու:

2 սեպտեմբերի, 1990 թ.

Հայաստանի Հանրապետության Գերագույն  
Խորհրդի պատգամավորներ՝

ՌԱԶՄԻԿ ԳԵՏՐՈՍՅԱՆ, ՌԱԶՄԻԿ  
ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՌՈՂԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Մեր կոչը լայն արձագանք գտավ պատգամավորների և նրանց ընտրողների շրջանում: Պետք է ստել, որ մինչ այդ էլ Հայաստանի համարյա բոլոր շրջաններից ու քաղաքներից Արցախ օգնություն էր գալիս, բայց դրանից հետո, երբ գործին խառնվեցին պատգամավորները, այդ օգնությունը կրեց մատասցական բնույթ: Արցախ էին հասնում ավտոմեքենաներ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ, որոնք բերում էին նաև զենք ու զինամթերք, դեղորայք և բուժօգնության համար անհրաժեշտ սարքավորումներ: Մեզ համար շատ հուզիչ էր այն բանը, որ մեզ օգնություն էին հղում նաև երկրաշարժից տուժած շրջանների բնակիչները՝ գյուրեղիները, արթիկցիները, կիրովականցիները: Օգնություն էին ուղարկում

վրաստանի մեր հայրենակիցները: Գալիս էին գինված ջուկատներ և ցովում Արցախի տարբեր բնակավայրերը, միա՛նում դարաբաղի տղաներին և պատրաստ էին կյանքի գնով պաշտպանել Արցախը նենգ թշնամու ներխուժումից:

## ՂԱՐԱՔԱՂԻ ՂԱՇՏՂԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԵՐՈՒՄ

Մոտ ամպեր էին կուտակված Ղարաքաղի երկնակամարի վրա: Թորքերը անընդհատ ձգտում էին սպառնալիքներից անցնել ավելի գործնական քայլերի: Ադրբեջանցիների հարձակումներն առայժմ կրում էին ավելի շատ թայանջիական և ահաբեկչական բնույթ: Մի քանի տարվա ընթացքում ազերի հրոսակները կարողացան գողանալ և հաիշտակել ինքնավար մարզի անատունների շուրջ 30 տոկոսը:

Իմ տրամադրության տակ է 1989—1991 թթ. ադրբեջանցի մարդապահների ձեռքով սպանված Ղարաքաղի հայերի ցուցակը, որտեղ գրանցած է 68 մարդ: Այդ մարդիկ չեն սպանվել պատերազմի դաշտում, այլ նահատակվել են իրենց բնակավայրերում, մեծ մասամբ խաղաղ, տեղծագործ աշխատանք կատարելու պահին: Նրանց մեջ կան նաև կանայք, երեխաներ և ծերունիներ: Սպանությունների շուրջ 10 տոկոսը կատարվել է 1989 թ., 40 տոկոսը՝ 1990, իսկ մնացածը՝ 1991 թ.: Սպանությունները կատարվել են Ղարաքաղի համարյա բոլոր շրջաններում: Մարտակերտի շրջանի Հաթերք, Չղրան, Չալլու, Լեմիհալսան, Թալիշ, Խնուչիմակ, Չարտազ, Վանք, Թաղլար, Դավիրլու, Քարատակ Ս. Սու գյուղերում, Ստեփանակերտում (10 սպանություն), Ասկերանի շրջանի Խնձրիստան, Դաշուշեն (այժմ՝ Քարաշեն), Բողարա, Բուլուջա, Նախիջևանիկ, Փիքջամալ գյուղերում, Մարտունու շրջանի Կաղարծի, Մարտար, Չարտազ գյուղերում, Մարտունի քաղաքում, Բերդաձորում, Ազոխում, Գետաշենում, Մարտունաշենում, Հովսեփավանում, Հադրութի շրջանի Դրախտիկ, Բանաձոր գյուղերում, Գետաշենում, Մարտունաշենում, Ծախումյանի շրջանի Հսկակական-Բորիս գյուղում:

Թափվում էր անմեղ մարդկանց արյունը, որը չէր բավարարում ազերի գիշատիչներին, նրանք ձգտում էին Ղարաքաղի ու Ծախումյանի ողջ տարածքը վերածել Մուսգալթիի, նրանց նպատակն էր ամապցնել Երկիրը իր բնիկ ժողովրդից և նրանց փոխարեն Արցախը լցնել ազերի հրոսակներով ու մեխերթցի թուրքերով:

Ղարաքաղի տնտեսության վիճակը բարելավելու նպատակով ԽՍՀՄ կառավարության հատկացրած միլիոնները, ինչպես հայտնի է, Ադրբեջանի դեկավարները ծախսում էին Արցախի ադրբեջանական գյուղերի ընդլայնման և բարեկարգման վրա: Նրանք արհեստականորեն մեծացնում էին Արցախում ազերի բնակչության թիվը՝ հնարավոր հանրաքվեի ժամանակ դա ընդմիջտ Ադրբեջանի կազմում պահելու ու հայաթափման գործը հաջողությամբ ավարտին հասցնելու համար:

Ղարաքաղում գտնվող Ադրբեջանի վարձու գործակալները ուշադիր հետևում էին մեր ամեն քաղին: Տիրափոշյակ վիկտոր Պոլյանիչևին, այդ ծախված և ստոր պրոլոկատորը, որը հետագայում իր արժանի պատիժը գտավ Հյուսիսային Օսեթիայում, ամեն ինչ անում էր մեր շարժման վերաբերյալ սուտ ու սխալ, վարկաբեկիչ տեղեկություններ տարածելու ուղղությամբ: Բաքվի ցուցումով նա Ստեփանակերտում պատրաստել ու ցրել էր ոռուերին լեզվով տագրված մի թոռցիկ, որի նպատակն էր Ղարաքաղի հայության կամքն արտահայտող «Կոռուկ» կազմակերպությանը դեկավարներին դուրս բերել քրեական հանցագործների: Կեղծիքով ու զրպարտությամբ հեղեղված սյոթիմակ խրճճանքները ժողովրդի վրա ճիշտ հակառակ ազդեցությունն էին ունենում: Մարդիկ հասկանում, ճանաչում ու գնահատում էին Արցախի ազատության համար պայքարող իր անձնակեր զավակներին և նրանց նկատմամբ դրսևորում հարգանքի, վստահության ու սիրո ջերմ զգացումներ: Ժողովրդի ջերմ հավատն էր այն հզոր ուժը, որի վրա հենվում էինք մեր ամենօրյա գործունեության ընթացքում:

Թոռցիկներից մեկը վերնագրված էր պալպես. «Ահա թե ովքե՛ր պետք է պատասխան տան ադրբեջանցի ու հայ ժո-

**դովորդների առջև դարաբաղյան ողբերգության համար»:** Այնտեղ հակիրճ ձևով «ներկայացված» էին հետևյալ անձինք՝ «Կոունկ» կազմակերպության և «Տնօրենների խորհրդի» նախագահ Արկադի Մանուչարովը, որը նոր էր ազատվել բանտից, մարզխորհրդի նախկին նախագահ Ալեքսեյ Բարաչանը, «Կոունկ»-ի նախագահի տեղակալ, «Միացյուն» արցախյան ժողովրդական շարժման քաղաքային խորհրդի նախագահ, Հայկական ԽՍՀ Գերաշույն խորհրդի պատգամավոր Բոբերտ Քոչարյանը, «Կոունկ»-ի նախագահի տեղակալ Ռոլան Աղաջանյանը և ես:

Իմ մտային մասնավորապես գրված էր հետևյալը.

### «Գևորդյան Ռազմիկ Արշակի

Նրա լուսավորյալ կարծիքով «Ղարաբաղյան հարցի» լուծման այլ ճանապարհ չկա, բացի զինված պայքարից: Ակնհայտ է, որ այդ պատճառով նա զբաղվում է զենք տարածելու և բաժանելու գործով: Նա երազում է ստոմալին ումբի և բալխատիկ հրթիռների մասին, բայց առայժմ բավարարվում է մանրուքով, որը, սակայն, ընկնում է Ադրբեջանական ԽՍՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի տակ (զենքի ապօրինի պահում): **Ջենքի այդ առևտրականը իր տարօրինակ, մեղմ ասած «հասարակական» գործունեությունը համատեղում է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորի կոչման հետ»:**

Այդ գրապարտագրի մեջ, այնուամենայնիվ, ճշմարտության նատիկներ կային: Իսկապես, ես և իմ ընկերները գտնում էինք, որ ստեղծված իրադրության մեջ ղարաբաղյան հարցի լուծման այլ ճանապարհ, զինված դիմադրությունից բացի, գոյություն չունի և որ միակ փրկությունը զենքի կուտակման ու տարածման մեջ է: Մեր վրա եկող ազերի հրոսակներից մայրենիքը կարելի էր պաշտպանել միայն զենքի միջոցով: Կյանքը ցույց տվեց, որ դա էր Հայրենիքի ազատության միակ ողին և Ղարաբաղի հերոս ժողովուրդը, Մայր Հայրենիքի օգնությամբ կարողացավ զսպել ազերի մոլեռանդ

մարդապանների լաչն ախորժակը և ետ շարտեյ նրանց մեր պապենական հողերի մի մասից: Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ու այլ վայրերի կոտորածները լավ դաս եղան մեզ համար: Անհապաղ պետք էր ստեղծել պաշտպանական ամրոք համակարգ: Ղարաբաղի բոլոր քաղաքներն ու գյուղերը պաշտպանված պետք է լինեին: Ադրբեջանցինք քայ ու համարձակ է միայն անգն մարդկանց, երեխաների, ծերերի ու կանանց առջև, բայց երբ նրա դեմ է դուրս գալիս զինված տղամարդը, ապա նա միան անան վստխտ է դասնում և ծակեր է փնտրում թաքնվելու համար:

Անհրաժեշտ էր ձեռք բերել և մարդկանց հասցնել զենք ու զինամթերք: Դա մեր ամենաառաջնային գործն էր: Ել իմ ընկերների հետ միասին ես ձեռնամուխ եղա այդ կարևոր և անհետաձգելի խնդրի իրագործմանը:

Մենք գիտեինք, որ ազերիները լավ են զինված: Կրակը ունեին ոչ միայն թեթև զենքեր, այլև թնդանոթներ, ակամա-նետներ ու տանկեր: Մենք էլ պետք է մեր ձեռքի տակ հասալի և հզոր զենքեր ունենալինք: Բացի այդ, հարկավոր էր մարդկանց զենքի հետ վարվել սովորեցնել, վարժեցնել նրանց զինվորական կարգ ու կանոնին, ալապես ոչ մի բանի չէինք կարող հասնել:

Մարտունեցի Ռազմիկ Դանիելյանի միջոցով մենք տեղեկացանք, որ զինվորականներից 24 000 ուրբով կարելի էր գնել երկու թնդանոթ՝ իրենց արկերով: Այդ հարցով ես դիմեցի ժողովրդական դերասան Սոս Մարգարյանին, որն իր սանվանք ստեղծված ֆոնդից տվեց 12.000 ուրբի: Մյուս թնդանոթի համար վճարեց Արթուր Ալեքսանյանը:

Ժողն ուղարկեցինք Ռազմիկ Դանիելյանի միջոցով և երկու օր անց գնացինք Երևանի զինվորական գորսամաս, որտեղից ստացանք թնդանոթները: Վոլոդյա Խաչատրյանի հետ թնդանոթները տարանք Մարտունի: Մեկը թուլցիներ սյնտեղ, մյուսը տարանք Խաշուշեն՝ Ստեփանակերտի մաս: Հետագայում այդ թնդանոթն օգտագործեցինք Հաղթութի Սարիշեն գյուղի, ինչպես և համաճումն բարձունքի գրավման, Ծոռլի ազատագրման և Ծախումյանի պաշտպանության ժամանակ: Այդ թնդանոթը գործի էր պնում Դաշուշենի

պաշտպանության հրամանատար, արտվանցի Սամվելը, որը գոհվեց էրքեջի պաշտպանության ժամանակ:

Գետաշենում դրությունը վատ էր: Մենք գնացինք Գետաշեն: Ակզբում եղանք Շահեն Մեղրյանի մոտ: Նա մեզ ուղարկեց պաշտպանելու Մարտունաշենի մատուցները:

Ռուսական հրամանատարությունն ադրբեջանցիների հետ միասին արդեն սկսել էին «Կոչո» օպերացիան, որի նպատակն էր Գետաշենը, Մարտունաշենը և շրջակա տարածքներն ազատել հայերից: Թուրքերի հետ միասին հարձակվում էր Կիրովաբադում տեղակայված 25-րդ ռուսական դիվիզիան:

Ծահույանում բավականաչափ ուժեր ունեինք և կարող էինք հակահարված տալ հարձակվողներին, բայց շահում-լանցի ընկերները զգուշանում էին՝ վսխենալով, որ Ծահույանն էլ կկորցնենք: Գետաշենը և Մարտունաշենն ընկան: Ռուսական հրետանին ու տանկերը խիստ ավերեցին հատկապես Մարտունաշենը: Բնակչությունը խուճապահար փախչում էր դեպի Ծահույան:

Ի դեպ, մարտունաշենցու զավակ է ԽԱՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, գեղապետ (այժմ ուկրաինական բանակի գեներալ-մայոր) Վիլեն Մարտիրոսյանը: Այն ժամանակ, երբ Գետաշենը և Մարտունաշենը ենթարկվեցին հարձակման, Վ. Մարտիրոսյանն ուղղաթիռով եկավ այնտեղ, բայց Մարտունաշենն արդեն գրավված էր, իսկ բնակիչները, գետաշենցիների հետ միասին, որպես փախստականներ, հասել էին Ծահույան: Ծահույանցիները լավ ընդունեցին փախստականներին, որոնց մի մասն ուղղաթիռներով փոխադրվեց Երևան:

Ծահույանից ես զանգ տվեցի Ստեփանակերտ և իմացա, որ իմ տան տակը ռուսք էին դրել ու պայթեցրել: Երբ ջոկատիս տղաների հետ վերադարձա Ստեփանակերտ, իմացա, որ պայթյունն իրականացվել էր ասրիի 30-ի գիշերը: Մերոնք այդ գիշերը տանը չեն եղել և, բարեբախտաբար, ոչ ոք չէր տուժել:

Տունս սկսել էի կառուցել 1980 թ. և ավարտեցի վեց տարի անց: Բայց ես այն լիովին ավարտված չէի համարում, դեռ շատ գործ կար անելիք: Տանս ավերումը Պետական

անվտանգության կոմիտեի և զինվորական հրամանատարության կազմակերպածն էր: Գիտեի՞ն, որ ես Ծահույանում էի, ուզում էին այդ ձևով ինձ Ստեփանակերտ վերադարձնել և ձերբակալել:

## ՉԵՐԲԱՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔ

Երբ արդեն Ստեփանակերտում էի, մայիսի 13-ին փոստի սվագ հեռագրովսին կանչեց ինձ իր մոտ ասելով, որ կարելի էր հեռագիր է ստացվել ԼՂԽՄ-ի ներքին գործերի վարչության պետի տեղակալ Գուլիկի հասցեով: Հեռագրի մեջ հաղորդվում էր այն մասին, որ մայիսի 15-ին սկսվում է օպերացիան, որին նախապատրաստվելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ 10 «Ուագ» մակնիշի մեքենա, 10 շտապ օգնության մեքենա, 30 վարժեցված մարդ և որ ամեն ձևով պետք է նպաստել օպերացիայի իրականացմանը: Հեռագիրն ուղարկել էր Ադրբեջանի ներքին գործերի մինիստրը: Ես հասկացա, որ բռնություններ են սկսվելու և սպասվում են ձերբակալություններ: Մեր բոլոր տղաներին լուր ուղարկեցինք, որ իրենց տներում չքնեն, իսկ ինքս մեկնեցի ջոկատիս մոտ՝ Չամախի: Տղաս՝ Գագիկը ևս գիշերել էր ծանոթների մոտ:

Այդ գիշեր իսկապես սկսվեց օպերացիան: Չնայած զգուշացումներին, այնուամենայնիվ շարժման մի քանի գործիչներ ընկան ներքին գործերի աշխատողների ձեռքը: Մեր ընկերներից ձերբակալվել էին Համլետ Գրիգորյանը և Ռաֆայել Գաբրիելյանը:

Գիշերվա ժամը 3.40-ին Բաքվից բերված ՊԱԿ-ի զինվորականները (10 հոգով) շրջապատել էին Բաղրամյան № 6 շենքը, որտեղ ապրում էր իմ ընտանիքը: Տանը միայն կինս էր՝ Ասյան: Բակում կանգնում են մի քանի մեքենաներ, իսկ սև դիմակներ հագած մի խումբ զինվորականներ, որոնց մեջ մահ ադրբեջանցիներ, կտրելով մեր դուռը՝ ներխուժում են ներս: Ավտոմատ հրացանը բռնելով կնոջս վրա, նրանք հարցնում են, թե որտե՞ղ է ամուսինը: Նա պատասխանում է, թե չգիտի որտեղ է: Սկսում են խուզարկել տունը: Չենք և



գինամթերք էին փնտրում: Նրանք ցույց չեն տվել խուզարկության կամ ձեռքարկման որևէ փաստաթուղթ: Խստնել էին ամեն բան և 10 րոպե անց հեռացել: Սաստիկ հուզմունքից ու վախից Ասլան հիվանդացել էր շաքարախտով և դրանից տառապում է մինչև այսօր: Նրան նաև հաշտմի էր դարձել, որ այդ գինվորները ձեռքարկելու համար փնտրել են նաև Գագիկին:

Ձեռքարկալիցու համար նույն գիշերը նրանք մտել էին նաև վաստակալիոր դերասանուհի Ժաննա Գալստյանի բնակարանը: Ժաննան զգուշացված էր և հեռացել էր տնից: Կոտրելով դուռը՝ գինվորները ներխուժել էին ներս և բառացիորեն ջարդել ամեն ինչ՝ հեռուստացույց, պահարաններ, սարկելոն և այլն:

Ձեռքարկալիցուս ալիքը տարածվեց Ղարաբաղի ողջ տարածքով: Ադրբեջանի իշխանությունների դրոշմով գինվորականները ձգտում էին գլխատել շարժումը՝ ձեռքարկելով հարյուրավոր ակտիվիստների: Գուլից արդեն ստորագրել էր 500 մարդու ձեռքարկման թղթերը: Դա կատարյալ տևոր էր: Ձեռքարկալիում էին ոչ միայն շարժման գործիչները, այլև միակամայն պատահական մարդիկ: Ձեռքարկալությունների ժամանակ մարդկանց բառացիորեն թալանում էին, զաթթում նրանց տներում եղած թանկարժեք իրերը, փողը, գալոները և այլն: Բռնվածներին տանում էին տարբեր քաղաքներ՝ Բաքու, Ծուշի, Եվլախ, Ֆիզուլի, Աղդամ, Բադրա: Նրանցից շատերը ազատվեցին կաշառք տալով: Փողը վերցնում էին Գուլիեր, դատախազը և ադրբեջանցի պաշտոնյաները: Ռեանը մնացին քանտերում, ենթարկվելով զարհուրելի տանջանքների: Նրանց մեծ մասը սպանվեց կամ մահացավ այնտեղ:

Խուզարկությունից մեկ շաբաթ անց ևս եկա մեր տուն: Սովորաբար գալիս էի տարբեր մեքենաներով, նույնիսկ սրակոտորով: Կարևոր գործով մտա տուն 10 րոպեով և դուրս եկա կրկին Չանախչի գնարու համար: Հիվանդանոցի մոտ սպասում էի մեքենայի, երբ հասկարծ անցնող մեքենայի մեջ նկատեցի միիցիսափ պետի տեղակալ Գուլիկին: Նա ևս ինձ նկատեց: 15 րոպե շանցած մի դեղին գույնի «Վիլիսով» եկան հատուկ նշանակության ջոկատի մի քանի գինվորներ:

Նրանք մեքենայից իջան ինձանից մոտ 50—60 մետր հեռավորության վրա ու սկսեցին մտնելու ինձ:

Ես դեմքով շրջվեցի նրանց կողմը: Կրպանուսն ասորանակ ունեի և մի նոնակ: Հանեցի նոնակը, մատս դրեցի օղակի մեջ և կանգնեցի: Ջինվորների հետ ինձ մոտեցող տպան տեսավ նոնակը և իսկույն կանգնեց: Կանգ ատան նաև մյուսները, որոնք ինձանից ընդամենը 30 մետր հեռավորության վրա էին: Սպան հրաման տվեց գինվորներին.— «Տղաներ, ետ»: Նրանք նստեցին մեքենան ու հեռացան:

Պետք է ասեմ, որ ուսները իրենց վտակալիոր իրադրությունների մեջ չէին նետում: Երբ տեսնում էին, որ կարող է գործը արյունահեղությանը պարտվել, գերադասում էին կամ շխառնվել, կամ էլ հեռանալ:

Այս ամենը տեսան կիսաշեն շենքի մոտ աշխատող մի քանի բանվորներ, որոնք ինձ հարց տվեցին. «Այդ ի՞նչ էր, հուզմիկ»: Ես ասացի, որ ծանոթներ էին ու գնացին: Հետո եկավ մեքենան և ես մեկնեցի Չանախչի:

Մենք գնում էինք՝ շրջանցելով միիցիսափ և գինվորների պահակակետերը:

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ՓՈՐՉ

Ղարաբաղում ձեռքարկալություններն ու բռնությունները վերևից նախապատրաստված ահաբեկչություն էր: Ռուս գինվորների ադրբեջանցիների հետ մտնում էին գյուղեր, խուզարկում, թալանում և ձեռքարկում մարդկանց: Բայց նրանք չկարողացան Չանախչի մտնել: 70 հոգուց բաղկացած մի ջոկատ ունեինք այնտեղ: Երբ մի քանի անգամ փորձ կատարվեց մտնելու գյուղ, մենք դիմադրեցինք և դրանից հետո մեզ հանգիստ թողեցին:

Ջոկատներ կալին նաև Ներքին և Վերին Հորաթաղում, Մարտունիում և այլ վայրերում, բայց իսկառ գաղտնի պահմաններում:

Մարտունու շրջանի թուրքաբնակ Ղարադաղլու գյուղում հավաքվել էին ազրի գինչալ հրոսակներ, որոնք շրջակա հայկական գյուղերից՝ Կաղարծից, Սպիտակաշենից, Հոդորտից, Մուշկապատից, Աջանից անառուններ էին գողա-

նում: Երբեմն էլ սպանում էին գյուղացիներին ու անբաստիժ մնում: Գյուղի բնակիչները դիմեցին մեզ և օգնություն խնդրեցին:

Արտվանից Սամվելի ջոկատն ուժեղացված ձևով ուղարկեցինք Ղարադաղլու գյուղը հանցագործներին պատժելու և գողացված անասունները ետ բերելու համար: Թուրքերը ոչ միայն կոկեր ու ոչխարներ էին տարել, այլև խոզեր (Հողորտի գյուղից): Մարտունու ջոկատի հետ միասին տղաներ, հարձակվեցին Ղարադաղլու գյուղի վրա: Նրանք կատարեցին առաջադրանքը՝ ետ բերեցին գողացված անասունները: Փոխհրաձգության ժամանակ մերոնք սպանել էին վեց թուրքի:

Կաղարծիի պաշտպանությունը լավ կազմակերպել էր դպրոցի տնօրեն Արմեն Սարգսյանը (այժմ՝ ԼԳՀ մշակույթի նախարար): Իսկ Մարտունու պաշտպանությունն իրականացվում էր Վոլոդյա Խաչատրյանի ղեկավարությամբ: Երեվանաբնակ դարաբաղի Ռազմիկ Դանիելյանը ակտիվորեն մասնակցում էր պաշտպանությանը: Նա միաժամանակ և զենք էր բերում:

Մի օր Բաքվի ռադիոն լուր էր տարածել այն մասին, որ Ղարադաղլուի ազերիները ջախջախիչ հարված են հասցրել Կաղարծիի հայերին: Այդ ժամանակ ես գտնվում էի Քիրսի լանջերին: Անմիջապես մեքենայով մեկնեցի Կաղարծի: Հետո տարել էի «Կապաշնիկով» ավտոմատներ, զնդացիր, ռացիա և փամփուռներ: Պարզվեց, որ Բաքվի ռադիոն հերթական ստախտությամբ ցանկացել էր բարձրացնել Ղարաբաղում գործող ազերի ավազակախմբերի մարտական ոգին: Իրականում տեղի էր ունեցել հետկյալը. Ղարաբաղլու թուրքական գյուղում հաստատված ազերի միլիցիոներների ջոկատը հարձակվել էր Կաղարծիի մոտ գտնվող Պառավաթուր գյուղի կոլտնտեսության կովերի ֆերմայի վրա՝ անասուններ հափշտակելու: Կաղարծիի և Պառավաթուրի ջոկատները ետ էին շարտել նրանց: Փոխհրաձգության ժամանակ թուրքերից սպանվել էր Բելովանից եկած լեյտենանտ Շուքիրովը: Մերոնք նույնիսկ վիրավոր չէին ունեցել:

Ծարժման սկզբում, երբ Ղարաբաղում իրադրությունը լարված բնույթ էր ստացել, Կաղարծիում, գաղանի պայ-

մաններում, ստեղծվել էր ինքնապաշտպանության կոմիտե: Հրամանատար էր դարձել Արմեն Սարգսյանը: Նրա տեղակալն էր դպրոցի զինղեկ Լեոնիդ Պողոսյանը: Առաջին հերթին ցուցակագրել էին զենքերը (25 որսորդական հրացան և շուրջ 2000 փամփուռ): Պատրաստել էին դիրքերը: Այդ գործում նրանց շատ օգտակար էր եղել Գերմանիայում գրտնկող խորհրդային զորքերում որպես հետևակապիսի ծառայած Ռաֆիկ Դավթյանը: Կարևոր էր այն հանգամանքը, որ ջոկատի հրամանատար Արմեն Սարգսյանը, գյուղխորհրդի նախագահ Համլետ Սարգսյանը և կոլտնտեսության նախագահ Միքայել Գրիգորյանը գործել են համերաշխ: Արմենը զենք էր խնդրել ինձանից: Ես ուղարկել էի ավտոմատներ, ականանետներ (3 հատ), ականներ, նոնակներ, փամփուռներ: Նրանց տվել էի «Մոսին» մակերիչ հրացան, որով նրանք 1,5—2 կմ հեռավորությունից կրակի տակ էին պահում Ղարադաղլուի թուրքերին:

Կաղարծիի գոմերը և մեքենատրակտորային կայանը գտնվում էին Ղարադաղլուից 2 կմ հեռավորության վրա և թուրքերն անընդհատ հարձակվում էին նրանց վրա (ամառական 14—15 անգամ): Կաղարծիի տղաները ոչ միայն ետ էին բշտում նրանց, այլև անցնում հակահարձակման և մոկոմ Ղարադաղլուի վերին թաղերը: Կաղարծիի ջոկատը հաջողությամբ պաշտպանելով գյուղը՝ միաժամանակ օգնության էր հասնում հարևան գյուղերի՝ Ավդուռի, Մյուրիշենի պաշտպաններին: Սերտ է եղել նրանց կապը Պառավաթուրի և Աշանի ջոկատների հետ: Ծնորհիվ խելացի և համաձայնեցված գործողությունների, Կաղարծիի ջոկատը կարողացել է մշտապես հաղթող դուրս գալ Ղարադաղլուի թուրքերի հետ ունեցած ընդհարումներում: Հատկանշական է այն, որ այդ զինված ընդհարումների ժամանակ Կաղարծիի տղաները ոչ միայն զոհ, այլև անգամ վիրավոր չեն ունեցել, իսկ սպանված թուրքերի թիվը հասնում էր շուրջ 70 հոգու: Միակ գոհր հովիվ Նեխոն Հարությունյանը եղավ: Այն ժամանակ երբ տղաները զնացել էին թաղման, թուրքերը հարձակվել էին գյուղի նախրի վրա, սպանել հովիվին, հափշտակել մի քանի կով և լուսխել: Մեր տղաները ոչ միայն ետ բերեցին կովերը, այլև վրեժխնդիր եղան Նեխոնի համար՝ սպանելով

մի քանի թարանչիներ: Մեր տղաների արդար վրդովմունքն էր առաջացել նաև թուրքերի ձեռքով Կաղարծիից Գիշի գնացող մի հայ երիտասարդի ու նրա հղի կնոջ գազանաչին ապանությունը: Բարբարոսներն անպատիժ չմնացին: Ի վերջո գյուղը գրավվեց և ավերվեց: Ողջ մնացածների մի փոքրիկ խումբ կարողացավ ճողուրել անտառային ճանապարհներով, մի մասին էլ փրկեցին ուղաթիռով:

Այս ժամանակ Շուշիից անընդհատ հարձակումներ էին լինում Քարին Տակ գյուղի վրա: Չանախչիից և Սղնախից օգնություն էինք ուղարկում Քարին Տակի պաշտպաններին, որոնց գլուխն էր անցել անվեհեր Վաղոն: Նա զոհվեց 1992 թ. գարնանը, երբ գյուղը պաշարված էր 700—800 թուրք զինվորների կողմից: Ես էլ այն ժամանակ Քարին Տակում էի և կարող եմ վկայել, որ տղաները կոպում էին բացառիկ քաջությամբ:

Մի անգամ, երբ գնացել էինք Քարին Տակ թուրքերի հերթական գործը ետ մղելու, իմ ջոկատից չանաղչեցի Կամոն խնդրեց մի կարաքին, որ գնա և մի ախտմատ բերի: Ես ավեցի ու նա գնաց: Մեկ ժամ անց լսեցինք կարաքինի կրակոցի ձայնը: Թուրքերը պահակակետ էին դրել վերևում և այնտեղից կրակում էին Քարին Տակի ուղղությամբ: Կամոն փորսող տալով մոտենում է այդ պահակակետին և դիպրակ կրակով գնդակահարում ժայռի ծայրին եղած և Քարին Տակի վրա կրակող մի թուրքի: Սա իր ախտմատի հետ գլորվել էր ձորը: Դրանից հետո սպասեցինք շուրջ 2 ժամ: Կամոն չէր կարողանում վերցնել ավտոմատը: Արհամարհելով մահացու վտանգը, նա այնուամենայնիվ կարողանում է փորսող մոտենալ և վերցնել դա:

Նա վերադարձավ խիստ հոգնած և կեղտի մեջ կորած, բայց հաղթական ժպիտը դեմքին: Ուսին գրել էր իր կարաքինը, իսկ ձեռքին թշնամու ախտմատն էր, որի փայտե խզակոթը, սակայն, չարդված էր: Մենք նորոգեցինք և հանձնեցինք մեր մարտիկներից մեկին:

Չանախչիի ջոկատը ղեկավարում էր Համլետը, որը լավ որսորդ էր: Հետագայում նա դարձավ գումարտակի հրամանատարի տեղակալ: Կարաբուլազ գյուղի ջրկատի հրամանատարն այն ժամանակ Արշոն էր: Հինա նա գումարտակի

հրամանատար է: Այդ տղաներն իրենց ջոկատներով ոչինչ չէին խնայում հայրենի հողը պաշտպանելու համար:

Չանախչի, Սղնախ, Կարաբուլազ, Կարմիր գյուղ և Սարուշեն գյուղերը հողատարածքներ ունեին Ամարասի շրջակայքում: Բայց քանի որ ազերիները հարձակվում կամ էլ կրակի տակ էին պահում այդ տարածքները, գյուղացիները չէին կարողանում զբաղվել բերքահավաքի գործով: Ուստի նրանք ռուս զինվորներ էին վարձել, որոնք պաշտպանում էին նրանց ցորենի, գարու և խաղողի հավաքման ժամանակ: Դրա դիմաց նրանք զինվորներին տալիս էին մացահատիկ և միս: Բայց ինչ-ինչ պատճառներով զինվորները հրաժարվեցին պաշտպանել Ամարասի շրջակայքի այդ տարածքները:

Մոտենում էր խաղողաքաղը, ժամանակն էր նաև խոտի հնձման: Այդ գյուղերի նախագահները եկան ինձ մոտ և խնդրեցին հանձն առնել գյուղացիների պաշտպանության գործը: Նրանք ուզում էին իմանալ, թե իրենք ի՞նչ պետք է վճարեն դրա դիմաց:

Ես ասացի, որ ոչ մի քան հարկավոր չէ, դա մեր պարտականությունն է: Միայն կուզենալինք, որ գյուղացիներն օրհավանեին տղաների սնունդը: Նրանք որախությամբ հաճախվեցին: Հաջորդ օրը 16 հոգով գնացինք պայմանավորված վայրը: Միմյանցից ոչ մեծ հեռավորությամբ պահակակետեր դրեցինք և սկսեցինք հերթապահել օր ու գիշեր: Բերքահավաքը շարունակվեց 15 օր և թուրքերը ոչ մի վնաս չկարողացան հասցնել մեր գյուղացիներին: Երբ տրակտորները գիշերը թողնում էին դաշտերում, տղաները գիշերն էլ մնում էին այնտեղ: Միգչև մեր գնալը, թուրքերը հրդեհեցին էլ մի վայրերում եղած օժանդակ շինությունները: Մի քանի անգամ նրանք մոտեցան մեզ: Ըստ երևույթին ուզում էին իմանալ, թե մենք ի՞նչ գեներ ունենք: Մենք կրակեցինք նրանց վրա: Տեսանք, որ նրանցից երկուսը վայր բնկան: Մյուսները նրանց քաշելով տարան: Դրանից հետո նրանք այլևս չերևացին:

Մի անգամ բռնեցինք մի «Վիլիս» մեքենա, որի մեջ կային երեք թուրքեր (երկու տղամարդ և մեկ կին): Նրանք ասացին, որ մոլորվել են: Ոգում էինք նրանց ուղարկել Չա-

հախշի, բայց կկալ Կարաբուլաղ գյուղի նախագահ Հենրիկը և սկսեց խնդրել մեզ, որ ազատ արձակենք նրանց: Նա ա- սաց, որ այդ մարդկանցից մեկը շատ օգնել է մեր գյուղացի- ներին՝ թույլ չի տվել, որ թուրքերը այրեն նրանց ցորենի արտերը:

Մենք նրանց բաց թողեցինք՝ պայմանով, որ նրանք գնան և զգուշացնեն իրենց գյուղացիներին, որպեսզի չհարձակվեն մեր մարդկանց վրա, այլապես մենք կհրկիզենք նրանց գյուղը: Նրանք խառտացան հաղորդել մեր ասածները:

Բերքն անկորուստ հավաքվեց և տեղափոխվեց պահեստ- ները: Գյուղացիները շատ գոհ մնացին: Մարգիտրիորդի նա- խագահ Սեփյոն Բաբայանը մեզ շնորհակալություն հայտնեց և ասաց, որ այդ ձևով կարելի է ուրիշ տեղերում էլ կազմա- կերպել բերքահավաքի պաշտպանությունը և իմաստ չունի վարձու զինվորներ կանչել:

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲԵՐՂԱԶՈՐԻՆ

Բերդաձոր գյուղը վտանգված էր: Չորս կողմը թուրք հյու- սակներ էին վիստում: Ելքեմն հարձակումներ էին լինում գյուղի վրա: Գյուղ տանող ճանապարհը փակ էր, բայց հե- տախոսային կապ կար: Այնտեղից զանգ էին տվել և զինա- մթերք ուզել: Ս. Բաբայանն ինձ կանչեց իր մոտ և խնդրեց օգնել բերդաձորցիներին:

Պատրաստվեցինք ու գնացինք: Ես գիտեի, որ Բերդաձո- ռի պաշտպանությունը կազմակերպելու գործին օգնելու հու- մար այնտեղ էր գնացել մեր շարժման անձնվեր գործիչնե- րից մեկը՝ վաստակավոր դերասանուհի Ժաննա Գալստյանը, որին մենք կատակով անվանում էինք Ժաննա դ'Արկ (նա ուղղում էր՝ Ժաննա դ'Արցախ):

Ժաննան Բերդաձոր էր գնացել մի քանի տղաների հետ: Տարել էր զենք ու զինամթերք: Նա ճանաչված ու սիրված գործիչ էր: Միայն նրա ներկայությունը բավական էր մարդ- կանց ոգևորելու, արիությունը բարձրացնելու, հույս ու հու- վատ ներարկելու նրանց մեջ: Նա գիտեր մարդկանց հետ բացատրվելու գաղտնիքը, կարողանում էր գտնել պահին

հարմար անհրաժեշտ բաներ՝ թափանցելու նրանց հոգու խորքը: Ժաննան Բերդաձորում առաջին հերթին զբաղվել էր ինքնապաշտպանության ջոկատի համարման, նրա մար- տունակությունը բարձրացնելու գործով: Իսկ դրա առաջին պայմանը ամուր կարգապահությունն էր, զենքին լավ տի- բապետելը և հրամանները ճշտորեն կատարելը: Նա գրույց- ներ էր անցկացնում բերդաձորցիների հետ, հուսադրում և ոգևորում նրանց: Եթե այդ նուրբ, գրավիչ ու հետաքրքիր դերասանուհին, ավտոմատ հրացանը կրծքին, ատրճանակը կողքին անվախ գնում էր դիրքից դիրք, միանում կովոդ տը- դակներին, ուրեմն պետք էր դեն նետել երկչոտությունը, ս- րիանալ, անսնվել նրան և խոչանալ թշնամու դեմ:

Ժաննան մեծապես նպաստեց Բերդաձորի պաշտպանու- թյունն ամրապնդելու գործին: Այդպես եղավ նա սլառերազ- մի ողջ տևողության ընթացքում: Եվ ի վերջո կատարվեց նրա իղձը, գրոհող գորքերի հետ նա հասավ Հորադիզ, ե- դեզնուտների միջով մոտեցավ Արաքսին և վազվեց նրա սառնորակ ու պղտոր ջրերով:

Ինչպես արդեն ասել եմ, Չանահաշիում ես զինապահետ Էի կազմակերպել: Սամվելը, Վաղոն, Ռոսիկը, Վարազդա- տը, բերդաձորցիներ՝ Սյափիկը, Ալյոշան և ես գնացինք Չա- նահաշի: Ուսապարկերի մեջ լցրեցինք փառհուշաներ, նրո- նակներ և մեքենայով ուղղվեցինք դեպի Քարին Տակ գյու- ղը, որի պաշտպանությունը, ինչպես նշել եմ, դեկավարում էր Վաղոն: Ուզում էինք Բերդաձոր գնալ ոտքով՝ Քիրս սարի լանջերով: Վաղոն մեզ զգուշացրեց, որ այդ վայրերում թուր- քերը ոչխար են պահում և շատ զինաչներ ունեն: Բայց մենք որոշեցինք գնալ և Վաղոնին էլ վերցրեցինք մեզ հետ:

«Ուազ» մեքենայով որքան հնարավոր էր մոտեցանք Քիրս սարին: Հետո մեքենան թողեցինք այնտեղ, վարորդին, որի անունը Մարսել էր, տվեցինք հրացան և մեկ նռնակ: Նա մեքենան կանգնեցրեց մի թմրի տակ և պետք է սպասեր մեզ: Որոշել էինք շուտ վերադառնալ:

Մենք կարող էինք շրջանցել սարը, բայց միևնույն է, թուրքերը կտեսնեին մեզ և կկարծեին, թե վախենում ենք նը- րանցից: Առաջարկեցի գնալ թուրքերի վրանների արանքով:

Երբ մոտեցանք վրաններին, մեզ վրա հարձակվեցին

թուրքերի շնորհ շուրջ 10 հատ և մեծ աղմուկ բարձրացրեցին: Նրանք փորձում էին մոտենալ մեզ, բայց մենք քարերով խփում էինք: Նրանք ցավից ոռնում էին, ետ փախչում, բայց նորից վրա էին տալիս: Թուրքերը դուրս եկան վրաններից: Նրանցից մեկը մոտեցավ մեզ ու դիմեց ինձ, թե ինչո՞ւ ենք խփում Ալլահի կենդանուն: Ես նրան պատասխանեցի, թե կենդանին ինքն է, քանի որ չի պահում շներին, որ մենք անցնենք:

Թուրք հովիվն սասաց. «— Էդ էլ ճիշտ ես ասում» և շներին կանչեց իր մոտ:

Ես հարցրեցի, — «Ո՞վ է ձեր մեծը, թող գա իմ մոտ»:

Մեկն իսկույն մոտեցավ մեզ և շողոքորթ ժպիտով հրավիրեց մաժուն ուտելու: Նրա սիրալիր վերաբերմունքը կապ ուներ մեր գեներթի հետ: Նրանք շատ վախեցած տեսք ունեին:

Ես սասացի, որ Ասկերանի միլիցիայի պետն էմ: Հետապնդում եմ մի մարդու, որն աղջիկ է փախցրել և անցել է այդ կողմերով: Քարին Տակում մեզ ասել են, որ Քիրսի լանջերով նա գնացել է Բերդաձոր: Գնում ենք նրան բռնելու:

Ալլահի անունով նրանք երդվեցին, որ ոչ մի մարդ չեն տեսել: Ես կարգադրեցի նրանց, որ եթե հանկարծ նա երեվա, բռնեն ու պահեն, մինչև մենք կվերադառնանք: Հատուկ զգուշացրեցի, որ հանկարծ չկրակեն:

Երբ ուզում էինք գնալ, հովիվների ղեկավարը ինձ հարց տվեց.

— Մենք այստեղ ոչխարներ ենք պահում և չգիտենք, թե այս Ղարաբաղի հարցը ո՞նց է լինելու:


Սասցի, — չե՞ն իմացել, ուսդիտ չե՞ն լսել: Ղարաբաղն արդեն տվել են Հայաստանին:

Ես խիստ զարմացավ:

— Վա՛հ, ե՞րբ է եղել, բա մենք ի՞նչ ենք անելու:

Սասցի, — ինչո՞ւ ես զարմանում: Դու ոչխար պահող չե՞ս, քեզ համար մեկ չէ, թե ո՞ւմ ոչխարը կպահես, հաջի՞, թե թուրքի:

Թուրք հովիվներից բաժանվելով, մենք գնացինք Մոլբալար թուրքաբնակ գյուղի ուղղությամբ: Մեր աջ կողմում Լիսազորի հեռուստատեսային վերարձակման կայանն էր,



Մարտունու շտաբի պետ Վոլոդյա Խաչատրյանը և շտաբի անդամ Գրիգոր Ուլուբաբյանը



Գերասանուհի Ժաննա Գալստյանը, ձախից՝ Վ. Գրիգորյանը



Ռոյէս Աղաջանյանի հետ անտառում



Նախարար Սերժ Սարգսյանը Մարտական խաչի շքանշան է ամրացնում Արթուր Ալեքսանյանի կրծքին

որտեղից հաղորդումները փոխանցվում էին Նախիջևան: Այնտեղ թուրք պահապաններ կային, որոնք մեզ նկատեցին: Յոթ-ութ հոգի էին, ձիավորներ:

Մենք շարժվեցինք Բերդաձորի կողմը: Հեռախոսով բերդաձորցիների հետ պայմանավորվել էինք, որ պետք է հանդիպենք Սատանայի սարի մոտի անտառում: Պարզվեց, որ բերդաձորցիները շուտվանից սպասում են մեզ: Այնտեղ էին նաև հաչատուանցի Անդրանիկը և Առնո Մկրտչյանը: Ցավոք սրտի, այս երկու հերոս տղաները շատ չանցած նահատակվեցին: Անդրանիկը զոհվեց ավտոմոբիլից, իսկ Առնոն անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակ ընկել էր թուրքերի ձեռքը և տանջամահ արվեց Բաքվի բանտում:

Չինամթերքը հանձնեցինք Բերդաձորի պաշտպաններին: Նրանք իրենց հետ ուտելիքներ էին բերել: Արագ կերպով ճաշեցինք և ճամփա ընկանք: Բերդաձորցիների հետ պայմանավորվեցինք կապ պահպանել և պահանջի դեպքում ուղիով վերադառնալ մեր եկած ճանապարհով:

Մեր հաշիվներով ուշացել էինք շուրջ երեք ժամ: Բերդաձորցիները նկատել էին, որ թուրք ձիավորները կտրել էին մեր ճանապարհը և կարող էին դարանակարել մեզ: Պահանջի դեպքում նրանք տալը հոգով կարող էին մեզ օգնության գալ:

Մեզ հետ եկած Սլավիկն ու Ալյոշան, որոնց ծնողները Բերդաձորում էին, մնացին այնտեղ (հետագայում Ալյոշան զոհվեց, սպանվեցին նաև մեր այդ փոքրիկ խմբի բոլոր անդամները, բացի Սլավիկից և ինձանից): Որքան գիտեմ, Ալյոշան զոհվեց «գրադի» արկի բեկորից:

Մոլլայի գյուղի մոտից անցնելիս պարզվեց, որ հեռուստակայանի թուրք պահապանները դիրքավորվել են և մեզ են սպասում: Հենց մեզ տեսան, սկսեցին կրակել: Մենք պատասխան կրակ չբացեցինք:

Ըստ չէինք կարող մնալ այդ վայրում, որովհետև շրջապատման մեջ կրակներինք: Ես առաջարկեցի երկու հոգով մոտենալ նրանց որքան հնարավոր է, մի կողմից էլ բերդաձորցիներն էին մոտենալու: Թուրքերը կարծեցին էին, թե մենք շատվոր ենք: Երբ մնացել էր 200 մետր, սկսեցինք կրակել: Երբ մենք գործի դրեցինք «Դեգուարյով» գնդացի-

ըը, թուրքերը հեծան ձիերը և փախան: Այսպեսցինք շուրջ 10 րոպե: Մերոնցից մեկը բաց տեղանքով անցավ և դիրքավորվեց՝ մեր անցումը պաշտպանելու համար:

Երեկոյան ժամը 10.30-ին հասանք թուրք հովիվների վրանների մոտ: Նրանք հարցրեցին, թե ինչո՞ւ ենք չորս հոգով, ո՞ւր են մյուսները, ի՞նչ կրակոցներ էին:

Ասացինք, որ երկու հոգու թողել ենք հերթապահելու սարում և որ իրենց ոչ մի վնաս չենք տա: Նրանք մեզ մի ոչխար նվեր առաջարկեցին և մածուխ: Հրածարվեցինք ու շարունակեցինք ճանապարհը:

Երբ հասանք մեքենայի թողած տեղը, տեսանք այն չկա: Ասրաափեյի հոգնած էինք, բայց լրիվ մթության մեջ ստիպված քայլեցինք շուրջ երեք կիլոմետր: Գիշերվա ժամը 12-ին լեցինք մեքենայի շարժիչի ձայնը: Երբ «Ուազը» հասավ մեզ, վարորդը պատմեց հետևյալը. երբ նա լսել էր կրակոցների ձայնը, մտածել էր, որ հարձակումն ենք ենթարկվել, անմիջապես մեկնել էր դեպի Քարին Տակ, այնտեղից ութ զինված տղաների էր վերցրել և եկել մեզ օգնության:

Նստեցինք մեքենան և մեկնեցինք Քարին Տակ: Գնացինք ուղիղ Վաղոչենց տուն: Պարզվեց, որ բժիշկ Էդիկ Ղուկասյանը ճիվանդներին այցելելու համար եկել է Քարին Տակ և մեզ է սպասում:

Շատ սոված էինք: Վաղոչի տնեցիները խորոված պատրաստեցին: Մեղանին լավաշի հետ միասին կարագ ու մեղր դրեցին ու շատ լավ թթու: Ընտիր օդի էին պատրաստել: Դա էլ մեջտեղ եկավ: Երբ ավարտեցինք մեր ուշացած ընթրիքը, բժիշկ Էդիկին ճանապարհեցինք Ատեփամակերտ, իսկ մենք ուղղվեցինք դեպի Չանախչի:

## ԱՆԱՍՆԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԹԻՌՈՎ

Հայկական գյուղերի անասուններն անընդհատ հափըշտակվում էին: Թուրքերը շատ հմուտ էին անասնագողության մեջ: Նրանք կարողացել էին գողանալ Քարին Տակի ու Աղնախի կովերը: Հարկավոր էր պաշտպանել մեր գյուղացիների ունեցվածքը: Մենք Քիրս սարի տակ անտառում մի

մեծ վրան խլեցինք, որի տակ կարող էինք տեղավորվել 30 հոգով: Մեր ջոկատները հերթով մնում էին այնտեղ և անհրաժեշտ դեպքում օգնության մեկնում պահանջված վայրերը:

Չանախչի գյուղի նախագահը մեզ հայտնեց, որ իրենց գյուղի կովերը և մոզիները (մատաղները) տանելու են Փոքր Քիրսի լանջերն արածացնելու, որտեղ այդ ժամանակ լավ խոտ կար: Նա խնդրեց կազմակերպել անասունների պաշտպանությունը:

Կանչեցինք հովիվներին, որոնք զինված էին որսորդական հրացաններով: Համձնարարեցինք չկրակել իզուր տեղը, բայց եթե վտանգ լինի, կրակել մեկ անգամ գույգ փողերից:

Մի արևոտ ու տաք օր էր: Տղաները վրանի մոտ նստած հրացաններն էին մաքրում և լիցքավորում որսորդական հրացանների փամփուշտները: Հանկարծ ուղղաթիռի շարժիչի ձայն լսվեց: Վրանի վրա մենք ծառերի ճյուղեր էինք դրել և նա չէր նկատվում վերեկից: Մենք թաքնվեցինք ծառերի տակ: Տեսանք, որ ուղղաթիռը պտույտներ գործելով գնաց սարի կողմը և մի քանի րոպե մնաց այնտեղ: Հանկարծ լսեցինք որսորդական հրացանի զույգ կրակոցի ձայն: Իսկույն վերցրեցինք գնեքերը, այդ թվում գնդացիք և մի ականանետ՝ 10 արկերով (այդ ականանետը պատրաստել էին Երեվանի հաշվիչ մեքենաների գործարանում), և վազեցինք դեպի Քիրս սարը: Գնդացիքը և ականանետը դրել էինք ձիերի վրա, իսկ մենք գնում էինք ոտքով:

Կես ժամ անց տեսանք, որ հովիվները վազելով գայիս են մեր կողմը: Նրանց ետևից գայիս էին նաև մի քանի կովեր: Հետո տեսանք, որ զինվորական հագուստով մի քանի թուրքեր, ավտոմատ հրացանները վզներից կախ, փայտեղ անոթերին, մեր գյուղի կովերը քշում են Լիսագոր թուրքաբնակ գյուղի կողմը: Ուրեմն նրանք ուղղաթիռով եկել էին անասնագողության:

Թուրքերը չէին կարողանում կովերին քշել: Անմեղ անասունները կարծես հասկանում էին, թե ի՞նչ է կատարվում և փախչում էին մեր կողմը:

Կրակելու համար մենք պատրաստեցինք ականանետը,

որի արկերը թռչում էին մինչև 3 կմ, իսկ գնդացիքը երեք ձիավորների հետ ուղարկեցինք աջ կողմով թուրքերի դիմաց:

Մենք ակամանետի անկյունաչափն այնպես դրեցինք, որ ակամաները թռչեն 1000 մետր հեռավորության վրա: Հինգ թև վեց անգամ ակամանետը գործեց: Ակամաները պայթում էին այն կողմում, դեպի ուր թուրքերը թշուր էին մեր կողմերը: «Կայությունների աղմուկից կովերը սկսեցին փախչել դեպի գյուղը»<sup>1</sup> մյուս կովերի կողմը: Կովերի կեսից ավելին փախավ, իսկ թուրքերը, մտնելով քարերի ետևը, կրակ բացեցին մեր վրա: Մենք էլ դիրքավորվեցինք և սկսեցինք կրակել:

Թուրքերը չէին նկատել, որ աջ կողմից ձիավորներ են գալիս նրանց վրա: Երբ մենք սկսեցինք կրակել, ձիավորներն արդեն դուրս էին եկել մեր տեսողաշրտից: Մոտ կես ժամ անց լսեցինք մեր գնդացիի կրակահերթի ձայնը: Այդ ժամանակ բոլոր կովերը ետ էին դարձել, նրանցից մեկը վիրավորվել էր: Նկատեցինք, որ թուրքերը փախչում են, բայց ոչ թե չորս հոգով, այլ միայն երկու: Քիչ անց վերադարձան մեր ձիավորները, բերելով սպանված թուրքերի երկու նստումատ հրացանները: Նրանց դիակները մնացել էին տարում:

Վիրավոր կովին մորթեցինք, մարմինը դրեցինք ձիու վրա և եկանք մեր վրանի մոտ: Կովի մահից մի քիչ վերջրեցինք տղաների համար կերակուր եփելու, մնացածն ուղարկեցինք Չաննախչի: Չմոռանամ ասել, որ երբ մեր ջոկատը Չաննախչիում էր լինում, մեզ կերակրում էին չանախչեցիները, իսկ երբ գնում էինք Սոնախի կողմը, մեր ուտելիքի հոգսն իր վրա էր վերցնում այդ գյուղի կուլտետությունը, որի նախագահը Վարդանն էր:

### ԿԱՊԻՏԱՆ ՑԱՇԱՆ ԵՎ ՄՅՈՒՆԵՐԸ

1980 թ. հունիսի կեսերին Մատենադարանի մի քանի աշխատակիցներ (Վ. Գրիգորյանը, Ա. Զեյթունյանը, Է. Բաղդասարյանը, Ա. Աթաբեկյանը), Ստեփանակերտ բերեցին ճապոնական արտադրության պատճենահանող մի հրաշալի

մեքենա («Յուրիքս—2»): Դա Մատենադարանի (տե՛ղևն՝ ակադեմիկոս Սեն Արևշատյան) նվերն էր Ղարաբաղի գրքողների միությանը: Նրանք բերել էին նաև պատճենահանման թուղթ, ներկ և պահեստամասեր, որոնց մեծագույն մասը նվիրել էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը: Դրանից շատ չանցած Մատենադարանը ուղարկեց գերմանական արտադրության հայերեն գրամեքենաներ, որոնց նվիրատուն Միրիաչի Դամակոս քաղաքում բնակվող Վարուժան Սալաթյանն էր: Այդ հայրենասեր մարդը մեծ գումարով գնել էր արաբերեն, հայերեն և այլ լեզուներով 220-ից ավելի արժեքավոր ձեռագրեր, հազարավոր արևելագիտական բնույթի գրականություն, շուրջ երկու տասնյակ կոմպյուտերներ և նվիրել Հայաստանին: Գրամեքենաները նա անձամբ բերել էր Երևան և հանձնել Վ. Գրիգորյանին, որը դրանք ուղարկեց Ղարաբաղ<sup>1</sup>:

Մատենադարանի աշխատակիցները Սուճալիյի գույթականների երեխաների համար բերել էին մեծ քանակությամբ կոնֆետներ, որոնց մի մասը նվիրել էր Երևանի կարամելի ֆաբրիկայի կոլեկտիվը: «Էրեբունի» օդանավակայանում նրանց մեծ օգնություն էին ցույց տվել հերթապահ միլիցիոներները և հատկապես նրանց ավագը՝ կապիտան Յաշա Մաչիլյանը, որը ծնունդով Ասկերանի շրջանի գյուղերից էր:

Յաշա Մաչիլյանը բացառիկ հայրենասեր, Ղարաբաղի ազատագրության գործին ամբողջովին նվիրված մի անձնավորություն էր, որն անում էր ամեն ինչ Արցախին օգնած լինելու համար: Նրա միջոցով մենք ստանում էինք գեներու գիմամթերք, դեղորայք ու սննդամթերք: Յաշան մեր ամեն

<sup>1</sup> Հարկ է նշել, որ Մատենադարանի աշխատակիցները դատարան են չվերադարձան Ստեփանակերտից: Ղարաբաղի գրողների միության նախագահ, բանաստեղծ Վարդան Հակոբյանի օժանդակությամբ հայրենի դարձավ, որ արխիվային վարչության պետ Ալբերտ Ղազարյանի մոտ մի ձեռագիր ավտոարան կա: Ա. Ղազարյանը սիրով այլ մտադանը նվիրեց Մաշտոցի անվան Մատենադարանին: 16-րդ դարում գրված այդ մագաղաթյա ավտոարանն այժմ Մատենադարանի սեփականությունն է (№ 10981):



նահուսալի կապավորներից էր, որը ժամանակին տեղ էր հասցնում մեր կարևոր գրությունները, ինչպես և կատարում էր մեր բազմաթիվ հանձնարարությունները:

Զպետք է մոռանալ «Էրեբունի» օդանավակայանից օդ բարձրացող մեր հերոս օդաչուներին, հատկապես ուղղաթիռների անձնակազմերին, որոնք երբեմն հաշվի չառնելով անբարենպաստ պայմանները՝ կատարում էին շատ բարդ և մեզ համար չափազանց օգտակար թռիչքներ: Պատահում էր, որ մեկ օրվա ընթացքում օդաչուները դեպի Ստեփանակերտ և նա թռչում էին 20—25 անգամ: Ազերիները գետնից կրակ էին բացում նրանց վրա, բայց օդաչուների արհամարհելով մահացու վտանգները՝ չէին դադարեցնում թռիչքները, զենք ու զինամթերք էին տեղափոխում Արցախի բոլոր շրջանները, հատկապես գեներալ խիստ կարիք ունեցող շրջափակված գյուղերը: Միաժամանակ նրանք կամավորների ջոկատներ էին տեղափոխում Ղարաբաղ և Հայաստան հասցնում ծանր վիրավորված մարդկանց:

Նույնը կարելի է ասել Գորիսի ու Միսիակի օդանավակայաններից օդ բարձրացող ինքնաթիռների և ուղղաթիռների օդաչուների մասին:

Այդ օդաչուներից մի քանիսը հերոսաբար զոհվեցին իրենց հայրենասիրական պարտքը կատարելիս: Մեր ժողովուրդը, հատկապես դարաբաղցիները, երբեք չեն մոռանա խիզախ օդաչուների անմահ սխրանքը, որոնք իրենց մատաղ կյանքը նվիրաբերեցին Արցախի ազատագրման սուրբ գործին: Հիշենք նրանց անունները. «ՅԱԿ—40» ինքնաթիռի անձնակազմը՝ Արարատ Դալլաբյան, Ալեքսանդր Հովհաննիսյան, Գևորգ Դավթյան (զոհվեցին 1990 թ. օգոստոսի 1-ին), «ՄԻ—8» ուղղաթիռի անձնակազմը՝ Մուշեղ Մնրատյան, Կարեն Մարգարյան, Գևորգի Մինասյան (1991 թ. հուլիսի 14-ին), «ՄԻ—8»-ի անձնակազմը՝ Հրայր Կարապետյան, Էդվարդ Խաչիկյան, Գառնիկ Դանիելյան (1992 թ. սեպտեմբերի 29-ին), «ՄԻ—8»-ի անձնակազմը՝ Զանվույա Մուրադյան, Արամ Գրիգորյան, Իոսիֆ Միքայելյան: Արցախի համար իր կյանքը տվեց նաև ռուս օդաչու, գեղապետ Վալերի Գալլանը:

Կապիտան Յաշան ոչ միայն կազմակերպում էր խիստ

անհրաժեշտ բեռների, հատկապես զենքի տեղափոխությունը Ղարաբաղ, այլև ինքն էլ թռչում գալիս էր և հասնելով գյուղերը՝ զենքը հանձնում էր մեր տղաներին: Պատահել է, որ ադրբեջանական օմոնի զինյալներով շրջապատված Ստեփանակերտի օդանավակայան հասնելով՝ միլիցիայի հագուստով Յաշան, զինամթերքով լեցուն պալուսակները ձեռքին, դուրս էր գալիս օդանավից և հանգիստ շարժվում դեպի իրեն սպասողները: Ազերի զինվորները չէին համարձակվում մոտենալ միլիցիայի կապիտանին:

Կապիտան Յաշայի շնորհիվ մեր ջոկատները մասնակից զենք ու զինամթերք էին ստանում:

## ՆՈՐ ԿՈՒՎՆԵՐ

Զանախչիից ջոկատները մեկնում էին տարբեր տեղեր՝ օգնելու մերոնց: Երբ շրջաններում մեղ կացություն էր ստեղծվում, գանգ էին տալիս Ստեփանակերտ կամ մարդ էին ուղարկում և օգնություն խնդրում: Իսկ Ստեփանակերտից մեղ հետ կապվում էին ռացիայով: Մենք անմիջապես մեկնում էինք սլանաձված վայրը: Ոչ միայն զբաղվում էինք գյուղերի պաշտպանությամբ, այլև հարձակվում էինք թուրքաբնակ այն գյուղերի վրա, որտեղից մերոնց վրա թալանչիական արշավներ էին կատարվում: Ստանալով զորեղ հակահարված, թուրքաբնակ գյուղերի բնակիչները հաճախ գլխովին փախչում էին իրենց բնակավայրերից: Այդ ժամանակ թուրքերը գավթել էին Հաղրութի մի քանի գյուղեր և բնակիչները տեղափոխվել էին շրջկենտրոն՝ Հաղրութ կամ այլ գյուղեր:

Մի անգամ չորս ընկերներով (Սամվելը, Կոլյան, Բորիկը և ես) մեքենայով զինամթերք էինք տանում Կաղարծի: Մանապարհն անցնում էր գյուղի ներքևի մասով, որը մոտ էր Ղարադաղլու գոտին: Թուրքերը հանկարծ կրակ բացեցին մեր ուղղությամբ: Մեքենան կանգնեցրեցինք մի ապահով տեղում և նկատելով կրակողներին, պատասխան կրակ բաց արեցինք նրանց վրա: Նրանք թվական գերակշռություն ունեին, բայց մենք գնդացի ունեինք («Ինգտարլու»), որի

դիպուկ կրակահերթերը խուճապ առաջացրեցին դավադիր թուրքերի մեջ: Մենք տեսանք, թե ինչպես նրանցից մի քանիսը վայր ընկան, իսկ մյուսները դիմեցին փախուստի:

Մինչ այդ ես վիրավորվել էի ձախ ազդրից: Տղաներն ինձ տեղափոխեցին Նիզգի գյուղը, որտեղ մի տարիքով բուժակ առաջին օգնությունը ցույց տվեց: Նա ասաց, որ լավ եմ պրծել, որովհետև վերքը միջանցիկ էր, գնդակը մտել էր ազդրիս մեջ և դուրս եկել: Վերքը քիմոսով կապելուց հետո նա խորհուրդ տվեց դիմել բժշկի օգնությանը:

Չինաստները Կաղարծիի պաշտպաններին հանձնեցինք և առավոտյան Դաշուշենով, անտառի միջով, եկանք Ստեփանակերտ: Անմիջապես գնացինք բժիշկ Էդիկ Ղուկասյանի մոտ, որը վերքս ինչպես հարկն է մաքրեց, դեղեր դրեց և կապեց:

Մի քանի օր մնացի Ստեփանակերտում: Տանը չէի փշեքում: Գնացել էի ստադիոն, որը այն ժամանակ այլևս չէր աշխատում, տեղավորվել էի պահակ Բեհիկ Սողոմոնյանի տանը: Ուղքս ցավում էր, չէի կարողանում քայլել:

Դա 1991 թ. նոյեմբեր ամիսն էր:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրքերն ամեն օր Շուշիից, Կրկժանից, Բյուսայարից, Մալիբեյլիից և Զամբիլիից ոմբակոծում էին Ստեփանակերտը: Ամեն օր բնակիչները զոհեր էին տալիս, սպանվում էին երեխաներ, կանայք: Բնակելի շատ զենքեր քանդվել կամ լիովին հրկիզվել էին: Մարդիկ ամիսներով դուրս չէին կարողանում գալ հերքնահարկերից: Միայն Բաղրամյան փողոցի №1 շենքին դիպել էր 28 «Գրադի» և «Ալազանի» արկ: Նրանցից մեկը պայթել էր բարձր հարկի մի սենյակում, որտեղ եղած 19-ամյա մի աղջկանից համարյա ոչինչ չէր մնացել: Թուրքերն այնքան էին լկտիացել, որ սխեցին կրակել 399-րդ գնդի տարածքի վրա, որը գտնվում էր Ստեփանակերտում: Այն բանից հետո, երբ ոռու զինվորներից սպանվեցին երկու հոգի, գնդի հրետանին քաղաքի տարբեր մասերից պատասխան կրակ քաց արեց Շուշիի վրա: Նախաձեռնողները գնդում ծառայող հայ զինվորականներն էին (Սեյրան Օհանյանը, Վաչիկ Հայրյանը և ուրիշներ):

Մեր տղաները Շուշիքենդից «Ալազան» հրթիռներով

կրակում էին Շուշիի վրա: Նրանք բավականին ավերածություններ կատարեցին քաղաքում: Բայց դրանով չէր կարելի լռեցնել թուրքերին և ապամովել Արցախի մայրաքաղաքի բնակչության անվտանգությունը: Հարկավոր էր գրավել բոլոր կրակակետերը և ամենից մեծ կրակակետը՝ Շուշի քաղաքը:

Այդ ժամանակ հատուկ ջոկատներ էին պատրաստված, որոնց գլուխն էին անցել լեգենդար Կոմանդոսը՝ Արկադի Տեր-Թադևոսյանը, Սերժ Սարգսյանը և Կոմանդոսի տեղակալ Սամվել Բաբայանը:

1992 թ. փետրվար ամսին ազատագրվեցին Խոջալուն, Մալիբեյլին, Լարադաղլուն: Բայց Շուշին «Գրադներով» և «Ալազաններով» շարունակում էր նորանոր հարվածներ հասցնել Ստեփանակերտին: Ամեն օր զոհվում էր 4—5 մարդ: Մեր մայրաքաղաքը քանդվում էր մեր աչքերի առջև:

Այդ թվականի գարնանը թուրքերը հսկայական զինուպաշար կուտակեցին Շուշիում: Ստեփանակերտի մոտով դեպի Շուշի գնացող ճանապարհը մենք փակել էինք: Նրանք գալիս էին Ղուբաթի—Լաչին—Շուշի խճուղով: Բերում էին զենքեր, զինամթերք և դիզելային վառելիք:

Ես դիմեցի Կոմանդոսին և Սերժ Սարգսյանին, խնդրելով թույլ տալ կրակի տալ վերցնել այդ ճանապարհը և թույլ չտալ, որ Շուշի բերվի այդ ամենը: Բարտեզի վրա ցույց տրվեցին այն տեղանքը (Քարին Տակի շրջակայքում), որտեղից կարելի էր կրակել խճուղով անցնող մեքենաների վրա:

Նրանք համաձայնվեցին և հաշտեցին, թե պատրաստ են այդ հարցում օգնություն ցույց տալ մեզ: Հրաժարվեցի օգնությունից, քանի որ ամեն ինչ ունեինք: Կոմանդոսի կարգադրությամբ հետախուզական ջոկատի հրամանատար Արկադի Կարապետյանի հետ գնացինք ուսումնասիրելու տեղանքը: Գտանք, որ այն հարմար է խճուղին կրակի տակ վերցնելու համար: Արկադին գնաց զեկուցելու Կոմանդոսին, իսկ ես մեկնեցի Չամախչի՝ զենքերը վերցնելու: Հաջորդ օրը տղաների հետ մենք արդեն դիրքավորվել էինք Քարին Տակից դեպի Չարվաղու թուրքական գյուղն ընկած բարձր տարածքի վրա, որտեղից շատ լավ երևում էր Լաչինից Շուշի եկող ճանապարհը:

Շնորհով իր ջոկատով եկալ Արկատի Կարասկառանը և դիրքավորվեց մեզանից փոքր-ինչ ձեռավորութեան վրա, ալիւի ճեղքեամ: Խճուղին մեզանից հեռու էր 2—3 կմ: Երբ մեքեմաներ էին երևում, մենք արագորեն մտնեմուս էին մանասարհին, և հրացաններից ու գնդացիներից կրակ էինք բաց անում նրանց վրա: Մեքեմաները բոցավառվում էին, պայթում էին նրանց մէջ եղած զինանշուքերը: Ուսմասպարհի վրա թափվում էին սպանված թուրքերի դիակները, որոնց թիվն ավելանում էր:

Ամեն անգամ դիվերսիոն գործողայում կատարելուց մետո մենք անմիջապէս վերադառնում էինք դիրքերը, իսկ մահագտանալու համար գնում էինք Սղեախ գյուղը:

Ուրիշ ջոկատներ էլ էին գործում այնտեղ, որոնք, ցալուր, մի քանի զոհ տվեցին: Բանն այն է, որ թուրքերը շրջակա բարձունքների վրա պոստեր էին դրել և այնտեղից կրակում էին մերոնց վրա: Սկսեցինք գործել գիշերները:

Շուրի ազատագրման ժամանակ մերոնք դիրքավորվել էին հեռակալ գծով՝ Ջամիլի—Քյուսպար—Կրկժան: Մյուս ուղղություներ Նադրութի կողմն էր՝ Խճարերդ—Արփազար—Բիրսի սար: Հաջորդը՝ Բարին Տակ—Շուշիքենդ—Սլեախ—Կաշուշեն: Տեխնիկան շարժվելու էր Ստեփանակերտից: Մայիսի 7-ին սկսվեց գրոհը բոլոր կողմերից:

Մենք հսկում էինք, որ Լաչինից եկող խճուղիով Շուշին օգնություն չստանար: Սկզբում զինամթերք բերող մեքեմաներ էին գնում դեպի Շուշի: Հետո սկսվեց հակառակ հոսանքը՝ Շուշիից թուրքերը սկսեցին փախչել դեպի Լաչին:

Մենք հրաման ստացանք ավերորդ զոհեր շտալու համար թույլ տալ, որ փախչողներն անարգել ձեռսնան Շուշիից: Երկու օր անց Արցախի հիմնավորը կենտրոնը՝ Շուշին ազատագրվեց թուրքերից: Արցախահայրութունը, նրա հետ ման մայր Հայաստանի և ասիլուքի բոլոր հայերը ցնծոյթեան և ուրախութեան շատ պահեր ապրեցին: Թուրքական նուկալի լուծը վերցվեց մեր Շուշիի վրայից, որը ժամանակին եղել էր կովկասահայրութեան մշակութային խոշոր կենտրոններից մեկը:

Շուշիի ազատագրումից հետո թուրքերն ինքնաթիռներ

էին ուղարկում Ստեփանակերտը ուժակոծելու: Մեր հակաօդային պաշտպանութունը դեռևս պատշաճ միջոցներ չուներ թշնամու ինքնաթիռները խփելու համար: Կային ձեռքի «Ստրելա» («Նետ») կոչված հրթիռարձակիչ սարքեր, որոնք, սակայն, այնքան էլ շատ չէին: Մեր մայրաքաղաքը շարունակում էր ավերվել:

Ուժեղացալ թուրքերի ճնշումը Մարտակերտի ուղղությամբ: Կիրովաբադում տեղակայված 25-րդ դիվիզիան միացել էր թուրքերին: Եվլախի բրդի ֆաբրիկայի տնօրեն Սուրատ Հուսէյնովը լեզու էր գտել ռուսների հետ և ընդհանուր հարձակում սկսել Մարտակերտի ուղղությամբ:

Ղարաբաղի պաշտպանական բանակը դեռևս կազմավորման փեճակում էր: Չանախչիի ջոկատը միավորվել էր Արլմախի և Կարաբուրաղի ջոկատի հետ, կազմելով մի ստանձին գումարտակ:

### ԶՈՎԱՏԱ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է

Իմ ջոկատը քանակապէս բավականին պակասել էր, ուստի զբաղվեցի նրա համարման գործով: Կամավորներ եկան Մատաղես, Տոնաշեն և Չայլու գ ուղերից, որոնք արդեն գրաւված էին թշնամու կողմից: Չոկատիս մեջ մտան մաւ մի քանի լավ տղաներ, իմ հարևաններից: Կամավորներ եկան Երեւանից ու հատկապէս Արովյանից: Նրանց հետ աչապես կոչված քաղրատիարակչական աշխատանք տալելու կարիք չկար: Մայրական կարծի հետ նրանք ստացել էին հայրենի երկիրը թուրք զավթիչներից պաշտպանելու պարտականութեան ստրք զգացումը: Նրանք լավ հատկանում էին, որ եթէ այսօր կորցնենք Արցախը, ապա վտոր ենթաթը կհասնի Չանգեպուրին և ողջ Հայաստանին: Ամեն գնով պետք էր պաշտպանել Արցախի տարածքի ամեն մի մետրը: Այդ ստրք զգացումով համակված նրանք մարտի էին գնում և թափում իրենց արյունը հանուն հայրենի երկրի: Սակայն հայրենասիրական ջերմ զգացումները, արյունաբու թշնամու դեմ տաճամ անկողությունը, օր ատաջ Ղարա-

բաղձան սիրկի երկիրը միանգամայն ազատ և մայր հայրենիքի նեո միացած տեսնելու, կովելու և հաղթելու ցանկությունները իզուր կլինեն, եթե նրանք չենթարկվեին զինվորական ամուր կարգ ու կանոնի, եթե տարվելին ինքնագործունեությամբ, վատ կատարելին հրամանները, չլիարանելին անխտանակության բոլոր կանոնները, ֆիզիկապես ամուր և կոխված չլինեն և, վերջապես, վատ տիրապետելին զենքին: Արագորեն նրանց պետք էր զինվոր, ազատամարտիկ դարձնել:

Ջոկատիս անդամների թիվը հասավ 50 հոգու: Մենք տասցանք զենքեր՝ ավտոմատ հրացաններ, գնդացիներ (2 հատ), նոնականետներ (2 հատ), փամփուշտներ (յուրաքանչյուրին 3 տուփ, որոնց մեջ 30-ական փամփուշտ): Գլխակցից բացի տասցանք արկղերով փամփուշտներ, նոնականետներ և այլն:

Ջոկատս ամբողջ կազմով տարա Ստեփանակերտի Սո. Շահումյանի անվան մարզադաշտ: Կես ամիս մենք պնտեղ պարապմունքներ էինք անցկացնում: Մեծ ուշադրություն դարձրեցի տղաների ֆիզիկական պատրաստակամության բարձրացման վրա: Նրանք մարմնամարզական վարժություններ էին անում, լողաճյուղներ ընդունում, վազում էին, արշավների դուրս գալիս՝ իրենց վրա կրելով զենքերը և հանդերձանքը: Բոլորը քնում էին մարզադաշտի հանրակացարանում: Տակտիկական վարժություններին զուգահեռ նրանց դիպուկ նշանադրության դասեր էինք տալիս: Կրակելու համար գնում էինք Մալիբեյի: Կրակում էին ավտոմատ հրացաններից, գնդացիներից, նոնականետներ էլ էին սովորում: Բացի այդ ամենից, նրանց սովորեցնում էինք դիրքեր փորել և պահանջի դեպքում առաջին օգնություն ցույց տալ վիրավորներին:

Քարաբաղի ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Մարգարյանը մեզ շտապեցնում էր և իրավունք ունեւր, քանի որ թուրքերը գրավել էին Մարտակերտը և շարժվում էին դեպի հարավ: Արցախը վտանգի մեջ էր, պետք էր կանգնեցնել ուսական գործառնների օգնությամբ նաշտության հասած և ծայր աստիճան լկտիացած թշնա-

մուն: Մեզ տվեցին «Զիլ» մակնիշի մի բեռնատար մեքենա, որով, ինչպես և մի մարդատար «Մոսկվիչով» հունիսի 9-ին մեկնեցինք Մարտակերտի շրջանի Կրմբուն գյուղի մոտ գտնվող «Ալշան» կոչված տեղանքը: Մի ժամանակ այնտեղ էր գտնվում Մարտակերտ քաղաքի պիոներական ճամբարը:

Մենք ներկայացանք շտաբ, որը գլխավորում էին կառնային փորձված սպաներ Սեյրան Օհանյանը և Հակոբյանը: Սեյրանը մեզ կարգադրեց գնալ Մոխրաթաղ գյուղը, որը շատ մոտ էր Մարտակերտին: Այնտեղ էր գտնվում Վլադիմիր Բալայանի ջոկատը, քաղկացած մոխրաթաղցիներից: Այն ժամանակ մենք գնացել էինք 34 հոգով:

Պետք է ասեն, որ իմ տեսած ջոկատներից ամենալավը Վլադիմիրի ջոկատն էր: Տղաները խիտ կարգապահ էին, լավ տիրապետում էին զենքերին, անվախ էին, հրաշալի գլխեին տեղանքը: Նրանց պատրաստել էր Վլադիմիրը, որը, ցավոք, զոհվել էր Չայրուի պաշտպանության ժամանակ: Նրան փոխարինել էր Գիրոն (Գրիշան):

Մենք հանդիպեցինք նրա հետ գյուղի մերձակայքում, ասացինք, որ եկել ենք օգնելու իրենց: Նա շատ ուրախացավ և ցույց տվեց այն տները, որտեղ մենք ապրելու էինք: Գյուղի բնակիչները հեռացել էին, մնացել էին միայն ազատամարտիկները: Նա մեզ ճանոթացրեց մի տղայի հետ, որը պետք է ցույց տար այն պահակակետերը, որոնք մենք պաշտպանելու էինք: Գիրոյի ջոկատի հետ կապը լինելու էր այդ տղայի միջոցով, որի անունը չեմ հիշում: Մեր տղաներից Վլադերիկ Աղաբեկյանին ( մյուս անունն էր Շոշ, քանի որ Շոշ գյուղից էր) նշանակեցի խոհարար: Նա «Մոսկվիչի» վարորդն էր, իսկ «Զիլի» վարորդին՝ Ռաֆիկ Հայրյանին, նշանակեցի ավագ, որպեսզի գրադվի տնտեսական հարցերով:

Սովորության համաձայն ամեն առավոտ մարմնամարզական վարժություններ էինք անում: Մյուսնկար ծիծաղում էին մեզ վրա և ասում.

— Հեսա որ վրա տվեցին, տեսանք էդ գարյատկան անելու՞ են, թե չէ:

Երբ թուրքերը «վրա տվեցին»՝ հարձակվեցին և գյուղի

վրա կրակ էլին բացել ակամանետներից ու թնդանոթներից, մերձք դարձյալ առավոտները, էթե պահակակետում չլինի, վարժություններ էին անում:

### ՊԱՇՏՊԱՆՈՒԻՄ ԵՆՔ ՄՈՒԽՐԱԹԱՂԸ

Մենք զբաղեցնում էինք Մոխրաթաղ գյուղի մոտ գտնվող հեռուստատեսային աշտարակի առջևի խրամատներում ու փտակետերը: Ունեինք չորս դիրք:

Առավոտ շուտ թշնամին սկսեց ուրակոծել մեր դիրքերը: Ռումբերն ընկնում էին ման գյուղի վրա: Մենք շտաբին հայտնեցինք, որ թուրքերը կրակում են հեռուստաաշտարակի սարի ետևի կողմից: Մեր հրետամին կրակ բացեց այդ ուղղությամբ: Մերոնք համազարկեր էին տալիս «Գրադնեբով» և թնդանոթներով: Զգացվում էր, որ նրանք խնայում էին արկերը, քայց թուրքերի մոտ դրանք երևի շատ սուսու էլին, որովհետև կրակում էին անդադար: Մենք պատկամ էինք վիրքերում և սպասում էինք թշնամու հարձակմանը:

Մեզ մոտ, գյուղի ետնամասում, մի տանկ ունեինք, որը լավ քողարկված էր, քանի որ թշնամու ուղղաթիռներ էին հայտնվում և ունթակոծում վերևից: Այդ տանկի թնդանոթը շրջված էր թշնամու դիրքերի ուղղությամբ և նա ժամանակ առ ժամանակ արկեր էր ուղարկում նրանց վրա: Տանկի հրամանատարը Գրիշան էր, որը վերադառնալիս վիրավորվեց տանկի լույն իր վրա ընկնելու պատճառով:

Երրորդ օրը նրանց կողմից շարժվեց «Տ-72» մակնիշի մի տանկ: Մեր տանկը, որը լավ դիրքերում էր, ուղիղ նշանառությամբ խփեց այդ տանկին:

Թշնամու տանկը բոցալառվեց: Թուրքերը, նոր զոհեր տալով (շուրջ 15 հոգի), կրկին դիմեցին փախուստի: Գրանից հետո հրետակոծությունն ավելի ուժեղացավ: Հատկապես զգացվում էր 120 միլիմետրանոց ակամանետների կրակի ուժը: Մենք խրամատներից դուրս չէինք գալիս: Մերթ ընդ մերթ հեռադիտակներով նայում էինք թշնամու կողմը:

Հրետակոծության աղմուկը, ռումբերի և հրթիռների թր-

ոխշի ժամանակ արձակած սուլոցը, նրանց պայթյունների ահավոր դրդոցը սկզբում շատ ծանր ազդեցություն էին ունենում հասկապես մարտական փորձ չունեցող տղաների վրա: Բայց ես չէի տեսնում խիստ վախեցած կամ անաբեկված դեմքեր: Մի քանի օր անց նրանք վարժվեցին այդ ամենին և երբ լավում էր ակամանետներից արձակված ակամանետների սուլոցը, միայն այդ ժամանակ նրանք թաքնվում էին խրամատների մեջ:

Մեկ շաբաթ տևած աճօգուտ ունթակոծություններից և հարձակումներից հետո, երբ շատ զոհեր էին տվել, թուրքերը փոխեցին հարձակման ուղղությունը և իրենց «Գրադները» և տանկերն ուղղեցին Մաղավուզ գյուղի կողմը: Ծառտով Մաղավուզում սկսեցին պայթել թշնամու ռումբերն ու ակամանետը:

### ՀԱՐՁԱԿՈՒՄ ՄԱՂԱՎՈՒՋԻ ՎՐԱ

Ռացիայով մենք շտաբին հայտնեցինք, որ թուրքերը ուզում են գրոհել Մաղավուզի վրա: Սեյրանը բաց տեքստով հրաման տվեց Մաղավուզին, որ ուժեղացնեն պաշտպանությունը, քանի որ հարձակում է սպասվում:

Մաղավուզը պաշտպանող ջոկատի հրահանատարը ինքնավստահ տոնով հայտնեց, թե թող գան, հետո էլ իրենք կսկսեն իրենց հարձակումը:

Երբ թուրքերը սկսեցին հարձակումը, զգացվեց, որ նրանք շատ մեծ ուժեր են կենտրոնացրել այդ գյուղի վրա, ուստի Սեյրանը հրաման տվեց, որ Գիրոն և ես նուսնակամանետները տեղադրենք Մաղավուզի կողմը: Մենք տեղադրեցինք հինգ նոսնակամետ (3-ը Գիրոն, 2-ը՝ ես), և զեկուցեցինք, որ պատրաստ ենք և թույլ չենք տա, որ մեր կողմով տանկեր անցնեն:

Երբ հարձակում էին Մաղավուզի վրա, ազդերների հրետանին կրակում էր մաս մեր ուղղությամբ՝ մեր հնարավոր տեղաշարժերը կանխելու համար: Մաղավուզի տղաները լավ էին սրաշտպանվում, քայց չէին նկատում թուրքերի մանջովները, որոնք կովի ընթացքում հետևակ էին ուղարկել

գյուղի մոտ գտնվող գերեզմանատան կողմը և ձգտում էին շրջապատել Մաղավուզի պաշտպաններին:

Հեռադիտակով մենք տեսնում էինք ամեն բան և «Բասմաչ» կոչված ռացիայի միջոցով, բաց տեսքով զգուշացրեցինք, որ մաղավուզցիներին շրջապատում են գերեզմանատան կողմից, թող միջոցներ ձեռք ստնեն: Այդ լուրը հաչոնվեց մաղավուզցիներին, որոնք կարողացան մեկ օր դիմանալ: Բայց հաջորդ օրը, երբ թուրքերն ալեյի ուժեղացրեցին ճնշումը, նրանք թողեցին գյուղը: Այդ մասին մենք չգիտեինք: Տեսնում էինք պայթող ռումբերի արձակած բոցն ու ծուխը, լսում էինք դրանց խրացուցիչ ձայները, ինչպես և ավտոմատ հրացանների կրակոցների սղմուկը:

Այդ ժամանակ Գիբուն եկավ իր ջոկատի դիրքերից և ինձ հայտնեց, որ հրաման ենք ստացել թողնելու դիրքերը, որովհետև Մաղավուզը վերցրել են, իսկ եթե ընկնի նաև Մեծ Ծեղը, ապա մենք կհայտնվենք շրջապատման մեջ: Ես իրեն խնդրեցի հաղորդել, որ Մաղավուզը պահեն, իսկ մենք չենք ուզում լքել դիրքերը և պահանջի դեպքում կարող ենք օգնել նրանց: Թող օգնություն ուղարկեն Մաղավուզին: Իմ պատասխանը հաղորդվեց: Բայց հստակության չարժանացավ:

«Զիլ»-ի և «Մոսկվիչ»-ի վարորդները եկել էին ինձ մոտ և ուզում էին հեռացնել մեքենաները, որ հնարավոր նահանջի դեպքում նրանք չմնային թուրքերին: «Մոսկվիչի» վարորդ Վալերիկին (Ծոշին), որին խոհարար էի նշանակել (ի դեպ, նա շատ համեղ ճաշեր էր պատրաստում), հարցրեցի, թե ես ին՞չ է ճաշը: Նա պատասխանեց, որ հստակ փլավ է եփել:

Պետք է ասեն, որ Մոխրաթաղ գյուղի տները լեցուն էին ամեն ինչով՝ կահույք, անկողիններ, ամանեղեն: Բակերում մնացել էին շատ կենդանիներ՝ հատկապես խոզեր և հավեր: Այնտեղ մնացել էր նաև «Գազ—ՅՅ» մի բեռնատար մեքենա, որը թողել էին բեկզին չունենալու պատճառով: Մեր տղաները ոչ մի բանի ձեռք չէին տալիս: Մեզ կցված տղան ապահովում էր մեզ անհրաժեշտ սննդամթերքով:

Ես կարգադրեցի զինամթերքը բարձել բեռնատար մեքենայի՝ «Զիլի» մեջ, որը մեզ հետ գարու էր, իսկ «Մոսկվիչը»



Մարտական խաչի շքանշանակիր Արմեն Սեյրանյանը (զոհվեց 1993 թ. հունիսի 12-ին)



Հանգստացողների մեջ է նաև որդիս՝ Գագիկը



Ջոկատս հանգստի պահին



Աջից Ռաֆիկ Հայրյանն է (Ծոշը), կենտրոնում՝ Վիգեն Սողոմոնյանը



Հարցազրույցի պահին

պետք է գնար Մեծ Ծենի, Սարսանգի ջրամբարի, Հաթերք գյուղի վրայով և գար «Ալշան» տեղամասը:

Երկու ժամ անց ինձ հայտնեցին, որ մենք արդեն պետք է դուրս գանք, քանի որ թուրքերը շարժվում են Մեծ Ծենի վրա:

Արդեն մթնել էր: Զինամթերքը բարձել էինք Ռ. Հայրյանի վարած «Զիլ» մեքենայի մեջ, բայց քանի որ անձրև էր սկսվել, ցեխոտ ճանապարհով անհնարին էր շարժվելը: Ստիպված «Զիլը» կապեցինք տանկի ետևից: Ես սասցի, որ նրանք շարժվեն Մեծ Ծենի կողմը, իսկ մենք բարձրացանք Մոխրաթաղի վերևի սարը, որտեղից ուրի ճանապարհ կար դեպի Քասապետ գյուղը:

### ՎԵՐԱԳՅՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՄՈՆԻՐԱԹՅՈՒՆ

Սաստիկ հոգևած էինք և սոված: Ասիտում էինք, որ չհասցրեցինք ուտել Ծոշի եփած փլավը: Արագ տեսնվով բարձրացանք վեր և անցել էինք արդեն 5 կմ, երբ մի աղբյուրի մոտ հանգստանալով ինացա, որ ուսցիայով ինձ են հարցնում: Արդեն գիշերվա ժամը 12-ն էր: Ես գնացի մի բարձր տեղ և կապվեցի շտաբի հետ: Այնտեղից Սեչյան Օհանյանը ինձ հայտնեց, որ պետք է կրկին վերադառնալ և գրավել Մոխրաթաղը, քանի որ Մաղավուզը պահելու հնարավորություն է ստեղծվել:

Ես հավաքեցի տղաներին և պատմեցի այդ խոսակցության մասին: Նրանք զայրացած էին, որովհետև մենք կարող էինք պաշտպանել այդ գյուղը, մեզ չթողեցին, իսկ հիմա, երբ հոգևածությունից և սովածությունից թուլացել էինք, անձրևի տակ անցել 5—6 կմ, մեզ կարգադրում են վերադառնալ գյուղը պաշտպանելու: Ես սասցի, որ տրված է հրաման, որեմն պետք է կատարել: Ես գնում եմ, ով ուզում է, թող գա ինձ հետ:

60—70 հոգուց համաձայնվեցին գալ 12 հոգի: Վերցրեցինք մեր զենքերը և ճանապարհ ընկանք: Վերադարձը ավելի դյուրին էր, քանի որ գառիթափ էր, բայց մենք դժվարությամբ էինք շարժվում: Առավոտյան ժամը 4-ին հասանք

Մոխրաթաղ գյուղի վերին մասը: Ապաստում էինք, որ իմանանք, թե թորքերն արդյոք մտե՞լ են գյուղ, թե ոչ:

Կես ժամ չէր անցել, հանկարծ տեսանք, որ մեր ջոկատի մնացած տղաները եկան և միացան մեզ: Նրանք խիստ հոգնածությամբ պատճառով չուզեցին գալ, բայց երբ մենք հեռացել էինք, չէին դիմացել, միահամուռ որոշել էին հասնել մեզ: Ինչ խոսք, տղաների այդօրինակ վարմունքը մեզ նոր ինքք հաղորդեց, որոշեցինք հարձակվել գյուղի վրա, եթե այն գրավված է ազերիների կողմից:

Գյուղի վիճակը պարզելու համար ուղարկեցի չորս հետախույզների: Մեկ ժամ անց նրանք վերադարձան և զեկուցեցին, որ գյուղի ներքևի մասում տեսել են մի գրահապատ մեքենա և 30-ի չափ թուրք զինվորների:

30 հոգու երկու նոսրակներով և զինացիրով ուղարկեցի գյուղի ներքևի մասը, որպեսզի հանկարծակի խիեն մեքենային և «ուռա» գոռայով հարձակվեն թուրքերի վրա:

Ես վախենում էի, որ թուրքերը Մաղավուզից մտնեցած կլինեն Մոխրաթաղ—Մեծ Ծեն ճանապարհին, ուստի ջոկատի հիմնական մասով, շրջանցելով Մոխրաթաղը, գնացի դեպի մեր նախկին դիրքերը: Մեզ հետ էին նաև Վլադիմիրի ջոկատի տղաները: Այսպիսով մենք շրջապատած կլինեինք Մոխրաթաղ մտած թուրքերին:

Մենք պայմանավորվել էինք, որ մեր 20 տղաները հարձակվեն այն ժամանակ, երբ մենք շրջանցած կլինեինք Մոխրաթաղը: Թացհայով խոսեցինք: Իմացանք, որ նրանք տների արանքով մտել են Մոխրաթաղ և հակառակորդից գտնվում են շուրջ 100—120 մետր հեռավորության վրա:

Հրաման տվեցի, որ հարձակվեն: Ակզբում լսեցինք նրանակներուներից արձակված նոսրակների պայթյունների, ապա գնդացրի և ավտոմատ հրացանների կրակոցների ձայները: «Ուռա», բացականչություններով տղաները հարձակվել էին թշնամու վրա: Թուրքերի կեսն այն ժամանակ բնած էր եղել, իսկ մյուսները՝ նստած են եղել հետևակի մարտական մեքենայի վրա: Նրանք ահաբեկված փախել էին, տալով 14 զոհ: Մերոնցից ոչ մեկը չսպանվեց, նույնիսկ վիրավորներ չուներեցանք: Խուճապն այնքան մեծ էր եղել, որ թուրքերը չէին հասցրել նույնիսկ կրակել: Նրանք սկսեցին

կրակել, երբ արդեն գյուղից դուրս էին եկել: Նրանք փախչում էին և օդում կրակում: «ԲՄՊ»-ն նրանք թողել էին գյուղում, բայց դա արդեն խփված էր:

Մենք շտապ մտանք մեր հին դիրքերը և սզուցինք մալեյ Մաղավուզի կողմը, որտեղից կրակոցները դեռ չէին դադարել: Ես մարդ ուղարկեցի իմանալու, թե փրավը մնացե՞լ է, թե ընկե՞լ է թուրքերի ձեռքը: Պարզվեց, որ թուրքերը դեռ չէին հասել աջ տանը: Փրավը վաղուց եփված էր: Ես տղաներին հեթո՞ղ (4-ական հոգով) ուղարկում էի ճաշելու: Հետո էլ մենք գնացինք, կերանք փրավը և վերադարձանք:

Աղմուկից մենք հասկացանք, որ մեր երկու տանկերը կրակելով մտել են Մաղավուզ: Հետո իմացանք, որ դրանք Յուրա Հովհաննիսյանի տանկերն են եղել, քերված Քելյաշարի գծից: Մաղավուզում մերոնք տվել էին 19 զոհ և տանկերը գյուղն էին ներխուժել նրանց դիակները քերելու համար: Մեր կրկին մուտքը Մոխրաթաղ նպատակ ունեւ թույլ չտալ, որ թուրքերը կարողանային Մոխրաթաղի կողմից շրջանցել Մաղավուզը:

## ՄԵՍ ԾԵՆԻ ԱՆՏԱՌՈՒՄ

Տերեկվա ժամը 11-ին հրաման ստացանք նետանալ Մոխրաթաղից դեպի Մեծ Ծեն: Մեր տանկերը գալիս էին և Յուրա Հովհաննիսյանը պատմեց մեզ Մաղավուզի անհաջողության մասին:

Երբ հասանք Մեծ Ծենի անտառը, ինձ կանչեցին Սելյանն Օհանյանի մոտ: Նա քարտեզի վրա ցույց տվեց Մեծ Ծենի անտառում մի տեղանք և ասաց, որ այնտեղ պետք է դիրքավորվել և կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը, այլապես վտանգավոր դրության մեջ կհայտնվի Ղարաթաղի հյուսիսային մասը: Նա կանչեց բոլոր ջոկատների հրամանատարներին և ասաց, որ եթե թուրքերը հասնեն Մարտակերտ—Քելյաշար ճանապարհին, ապա Քաապատում և Ներքին Հարթաթաղի մոտակայքում գտնվող ջոկատը, որի հրամանատարը Սամվել Կարապետյանն էր, կհայտնվի շրջապատման մեջ: Մենք պետք է 3—4 կմ երկարությամբ



դիրքեր գրավենք և սրգելակենք թուրքերի շարժումը: Այդ պաշտպանակամ գծի հրամանատար նշանակեց ինձ:

Ես իսկույն կանչեցի տղաներին, բացատրեցի կացությունը և սկսեցինք դիրքավորվել: Գրիշան վիրավորված էր և տամկի մեջ մնացել էին միայն մեխանիկը և նշանառու Համիկը: Վերջինս դարձել էր տամկի հրամանատար: Նա Երեվանից էր, պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող:

Իսաֆիկ Հայրյանի (Շոշի) գլխավորությամբ խոհանոցը ուղարկեցինք 500 մետր ետ և տղաները սկսեցին կերակուր պատրաստել: Սեյրանը մեզ հրաժեշտ տվեց՝ խնդրելով ամեն գնով պահել դիրքերը: Խոստացավ օգնություն ուղարկել: Լինք դիրքավորվեցինք:

Թուրքերն ահեմ օր «Գրադ»-ներից, որոնք տեղադրված էին երեք տարբեր կետերում, ոմբակոծում էին մեզ: Նրանք կրակում էին Աղդաբանից, Մաղալուզի կողմից և Փափրովենցից: Կրակում էին նաև թնդանոթներից: Գալիս էին նաև նրանց ինքնաթիռները և ուղղաթիռները: Խուժքեր էին նետում, բայց քանի որ մենք անտառի մեջ էինք և լավ թողարկված, այդ ոմբակոծությունները մեզ վնաս չէին հասցնում:

Սկզբում մեծ բարձրության վրա գալիս էր հետախույզ ինքնաթիռը, կես կամ մեկ ժամ անց գալիս էին ոմբակոծիչները: Նրանք ոռմբեր էին գցում ճակատի ամբողջ երկայնությամբ:

Ինչպես ասացի, մեր դիրքը խիստ կարևոր էր Քասպատում գտնվող Սամվել Կարապետյանի ջոկատի անվտանգության համար: Նրանից աջ, Գյուլաթաղ գյուղի մոտ դիրքավորվել էր Նորիկը, որը հետագայում դարձավ Մարտակերտի պաշտպանության ղեկավարը: Չինգաթաղում դիրքավորվել էր Աշոտ Ղուլյանի (Բեկորի) ջոկատը: Այս բոլոր հրամանատարները երբ ուսցիայի կամ ստրիանդակների միջոցով կապ էին հաստատում ինձ հետ, հայտնում էին, որ էթե մենք նահանջենք, ապա իրենք անպայման շրջապատման մեջ կընկնեն: Ուտի էթե այնպես պատահեր, որ մենք այնուամենայնիվ հարկադրված լինեինք ետ քաշվել, ապա այդ դեպքում պետք է գոնե մեկ ժամ առաջ տեղյակ պահեինք իրենց:

Մեր դիրքը պաշտպանում էին իմ ջոկատը, Վլադիմիրի ջոկատը, որը ղեկավարում էր Գիրոն, և Ստեփանակերտից եկած հետախույզների 12 հոգուց բաղկացած խումբը:

Չինավթերք ունեինք, տանկը մեզ հետ էր, տղաները մարտականորեն էին տրամադրված և վճռել էինք ետ շարժվել թշնամուն, իսկ հնարավորության դեպքում առաջ գնալ:

## ԳՐՈՋ ՄԵՐ ԳԻՐՔԵՐԻ ՎՐԱ

Թուրքերը հարձակում սկսեցին մեր դիրքերի վրա: Ինչպես միշտ սկզբում եկան ինքնաթիռները: Խմբակոծեցին և ետ գնացին, հետո սկսվեց հրետանային նախապատրաստությունը: Երբ նոր էին լույս հակառակորդի թնդանոթների սրկերի պայթյունները, լսեցինք գրանատեխնիկա ի շարժիչների հոնդյունը:

Գիրոն և ես վազում էինք դիրքերով և տղաներին զգուշացնում, որ չկրակեն, թույլ տան, որ թշնամու տեխնիկան հայտնվի մեզ համար հարմար տեղում: Բացի այդ, մենի չուկեռք է թույլ տալինք, որ նրանք ճշտորեն իմանային մեր տեղը:

Թուրքերն ուղարկել էին հետախուզական ջոկատ, որը դիրքավորվել էր մեզանից շուրջ 200 մետր հեռավորության վրա: Այդ ջոկատի ասկարները նոնականետներից, գնդացիից և ավտոմատ հրացաններից կրակ բացեցին մեր դիրքերի ուղղությամբ:

Տղաներին զգուշացրել էինք, որ չկրակեն, քանի դեռ թշնամուն որոշակիորեն չեն տեսել: Այդ ժամանակ մերոնք սխեցին կրակել և ես հասկացա, որ նրանք տեսել են թրջնամուն: Սոսկայի դրոդոց թնկավ: Երկուստեք կրակում էին գնդի բոլոր տեսակներից: Ես Համիկին հրաման տվեցի, որ նա տանկը տեղից չշարժի և կրակ բաց անի տանկային հզոր գնդացիից: Նա սկսեց կրակել:

Մարտը շարունակվում էր շուրջ 30 րոպե, կար լսեցինք հակառակորդի մոտեցող տանկերի շարժիչների աղմուկը: Անտառը շատ խիտ էր, մեր տեսողաշարը ընդամենը 70—80 մետր էր: Գիրոյի հետ պայմանավորվեցինք, որ տեղնեկիցս

չենք շարժվելու: Հրահան տվեցինք պատրաստել նոստրա-  
նետները և հասկանալիացին նոստրետերը: Իմ մոտ 2 նոստրա-  
նետներ կայ, Գիրոն մեկը մեկ հատ: Համկարձ շուրջ 80  
մետր հեռավորության վրա, մեր դիմաց, միմյանցից 50—60  
մետր հեռավորությամբ հաշտվեցին թուրքերի վեց տանկեր  
և թրթուրավոր գրահապատ մեքենաներ: Նրանք բոլորը կը-  
րավում էին մեր ուղղությամբ:

Երբ երեսցին ազերիների տանկերը, մեր տուակներից մի  
քանիսի մոտ խառնույ ապակեց: Աջ և ձախ կողմից մի քանի  
նոգի անոցներ փախչել: Գիրոն և ես սկսեցինք ավտոմատ-  
ներից կրակել օդք, նրանց գլխավերև: Նրանք խկույն  
կանգնեցին, մեր նրամուտքից ետ վերադառնալ:

Գիրոն վերցրեց Բոնականետը և շտապեց իր տղաների  
մոտ՝ ննայառիթ նետահեշք կանխելու: համար:

Մի քանի րոպե անց մի ուժեղ պայթյուն եղավ մեր առջև:  
Համկարձը, որ թշնամու տանկը պայթել էր մեր դրած հա-  
կատանկային տրեկերից մեկի վրա: Նոստրանետներով կրակ  
քաղցեցինք մոտ տանկերի վրա: Գիրոն խփեց մեկ հետևակի  
մարտակրակ մեքենա «ԲՄՑ», որը մեխակեց տեղում: Մեքե-  
նայի մեջ եղած դետոնատային խոտքը անոց ցատկով մեքե-  
նայի վր. գից. բայց ընկավ մեր տղաների կրակոցների տակ:  
Երրորդ տղանկեցին: Բայց մոտ տանկերը առաջ էին  
շարժվում:

Ես կրակում էի երկու նոստրանետներով: Ծառի տակ  
չարժել էի նոստրանետը դրել էի ոտիս: Երբ կրակում էի և  
նոստրալ թոչում էր դեպի թշնամին, վերցնում էի հաջորդը.  
բոլոր մեր տղաներն արդեն լցրած էին լինում: Խփեցի մի  
տանկ, որը բոցավառվեց:

Վեց զրահատեխնիկայից թշնամին կորցրել էր երեքը,  
բայց մյուսները դեռ առաջ էին շարժվում: Նրանցից մեկը  
կավ մեր քողարկված տանկի դիմաց: Մեր տանկի շարժիչ-  
ները ուղիաատու՝ էին: Նրա թնդանոթն ուղղվեց թուրքերի  
թրթուրավոր գրահապատ մեքենայի կողմը, որի ետևից գա-  
լիս էր մե տանկը: Մեր տանկը, որի նրահանատարը Համկին  
էր, քողարկված էր կտրտված ծառերի ճյուղերով և անհկա-  
տելի էր թշնամու համար: Մնացել էր շուրջ 40 մետր, երբ

հանկարձ որոտաց մեր տանկի թնդանոթը: Մենք տեսանք,  
թե ինչպես թշնամու պայթող մեքենայի վրա եղած մարդ-  
կանց մարմինները ցրիվ եկան օդում:

Թշնամու խփված տանկերը վառվում էին մեզանից ոչ  
աչնքան հեռու տարածության վրա (40—60 մետր): Համ-  
կարձ նրանց մեջ եղած զինամթերքը սկսեց պայթել: Մենք  
թաքնվեցինք, որ պայթող արկերի բեկորները մեզ չհասնեն:  
Պատկած տեղից տեսանք, որ ադրբեջանական մոտ երկու  
տանկերի անձնակազմերը լքեցին իրենց մեքենաները և  
վախուստի դիմեցին: Մեր տղաները ոչնչացրեցին նրանցից  
մի քանիսին:

Կոիլը տնեց շուրջ երկու և կես ժամ: Թշնամին նահան  
ջել էր: Արդեն մթնում էր: Մենք պատկել էինք մեր դիրքե-  
րում և նայում էինք, թե ինչպես էր վառվում թշնամու գրա-  
հատեխնիկան: Տղաներն ուզում էին մոտենալ խփված տան-  
կերին՝ գեղք ձեռք բերելու համար, բայց ես չթողեցի: Տղա-  
ներից մի քանիսը գեղք չունեին և հույս ունեին, որ ապա-  
ված ազերիների դիակների մոտ հրացաններ կգտնեն: Ամ-  
բողջ գիշեր դիրքավորված վիճակում մենք հետևում էինք  
վառվող տանկերին, որոնց մեջ եղած փամփուշտներն ու  
արկերը մերթ քնդ մերթ պայթում էին:

Առավոտյան 15 հոգով շրթա տված ծառերի սրանքով  
շարժվեցինք տանկերի կողմը: Անընդհատ կրակում էինք  
տանկերի ուղղությամբ: Ենթադրում էինք, որ թուրքերը կա-  
րող էին այնտեղ դարահակալել և վնասել մեզ: 200 մետր  
առաջ գնացինք, դիրքավորվելուց հետո սկսեցինք հավարել  
ոսգմաավարը: Մենք հավաքեցինք 20 ավտոմատ հրացան,  
որոնցից մի քանիսը տվեցինք գեղք չունեցողներին, իսկ մի-  
նացածը՝ Յուրա Հովհաննիսյանին, որը եկել էր տեսնելու  
խփված տանկերը: Ծառ հանելի եղավ նրա բացականո-  
թյունը՝ «Ա՛յ, սա պաշտարանությունն է»:

Մարտադաշտում թուրքերը թողել էին երկու հետևակի  
մարտական մեքենա լրիվ ասրբին վիճակում: Տեսնելով, որ  
տանկերը խփվել են, նրանց անձնակազմերը վախենալով,  
որ իրենք էլ կխփվեն, կանգնեցրել էին մեքենաները և  
նրանց մեջ եղած զինվորների հետ փախուստի դիմել: Բայց  
շատ հեռու չէին կարողացել գնալ, որովհետև գրահապատ

այդ մեքենաներից ոչ հեռու տարբեր դիրքերով փոխած էին նրանց դիակները: Մեքենաների թնդանութեանը, գնդացի-ները և ռազմամթերքը միանգամայն անվնաս վիճակում էին: Մեքենաներից մեկը եւ տվեցի Վլադիմիրի ջոկատին, մյուսը պահեցի մեզ: Նրա դեկի մոտ նստեց մասնագիտությամբ տրակտորիստ Ռաֆիկը, որը մեքենան քշեց մեր թիկունքը՝ շուրջ 500 մետր հեռավորության վրա:

Հոգնածությունից տղաները հագիվ էին ուռքի վրա մը-նում, նաև տված էին: Ունեինք ճիճգ փիրավոր, որոնց մա-սին ռացիայով հայտնեցի Ասլանի փրկարարների խմբին: Ծուռով եկավ Վալերի Զավադյանն իր ընկերների հետ և փրավորներին փոխադրեց դաշտաչին հոսսփռայ:

Պետք էր կերակրել տղաներին: Ծոշը և Հայրյան Ռաֆի-կը, մոտ կես կիլոմետր հեռավորության վրա, մեր թիկուն-քում էին: Երբ նրանք հայտնեցին, որ ճաշը պատրաստ է, եւ ընտրությամբ մի քանիսին ուղարկեցի ճաշելու, իսկ մյուս-ները մնացին դիրքերում: Երբ վերադարձան նրանք, եւ ուղարկեցի մյուսներին: Բայց բոլորը չկարողացան գնալ: Այնքան հոգնած էին, որ խրամառներից չէին կարողանում դուրս գալ: Ես մնացի նրանց հետ: Տղաս՝ Գագիկը, որ ար-դեն իմ ջոկատում էր, թերմոսի մեջ լցրած բերեց մեր ճաշը և մենք դիրքերի մեջ սկսեցինք ճաշել:

Կոիվների ժամանակ ջոկատների մեծ մասը բախարար-վում էր չոր սնունդով, բայց մեզ մոտ այնպես էինք կազմա-կերպել, որ օրվա մեջ ազատամարտիկները գոնե մեկ ան-գամ տաք և սննդարար կերակուր էին ստանում: Ծոշը և Ռաֆիկը համեղ ճաշեր էին եփում: Նրանք տղաներին նույ-նիսկ տաք թեյ էին հասցնում: Զոկատի անդամների կերա-կովքն հարցին շատ կարեւորություն էինք տալիս՝ համոզ-ված լինելով, որ տված զինվորը լավ չի կարողանա կովել, եւ չի դիմանա անավոր հոգնածությանն ու անքնությանը:

Հաջորդ օրը հարեան տեղամասերից եկավ ազատամար-տիկների մի խումբ՝ տեսնելու մեր խիբը ու գրաված գրա-նատեխնիկան: Երբ մենք ռացիայով հայտնել էինք, որ «վեց հատ պողոճ են թխալ» (պողոճ՝ որ նշանակում է բրն կամ խալխարաներ, մենք պաշտանականորեն անվանում էինք

տանկերին) մեզ այնքան էլ չէին հավատացել: Դա 1992 թվականն էր և առաջին անգամ էր, որ թշնամին միանգամից այդքան գրահատեխնիկա էր կորցնում:

Գալիս էին տղաները, նայում և համոզվում, որ իրենք էլ կարող են նույնը անել:

Հաջորդ օրը ինձ կանչեցին Մարտակերտի պաշտպա-նության շտաբ: Սեչրան Ցհանյանը մեկ օրով մեկնել էր Ստեփանակերտ, նրան փոխարինում էր գնդապետ Ֆելիքսը: Եկել էր Ղարաբաղի պաշտպանության կոմիտեի նախա-գահի տեղակալ Մամիկել Բաբայանը (այժմ գեներալ-լեյտե-նանտ Ս. Բաբայանը ԼՂՀ պաշտպանության նախարարն է), որը անց էր կացնում խորհրդակցությունը:

Նա շնորհակալություն հայտնեց մեր տղաներին: Յուրա Հովհաննիսյանն ասաց, որ միայն շնորհակալությամբ բան չի լինի, տղաներին պարզև պետք է տալ: Ս. Բաբայանը պատասխանեց, թե Ռազմիկը շատ լավ գիտի, որ հիմա ոչինչ չունենք նրանց տալու, հետո կտանք:

Հետո, իսկուպես, մեզ պարզատրեցին 60000 ուրբով, որը եւ հասխարապես բաժանեցի բոլորիս միջև:

### ԱՎԻԱՑԻՍԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՏԱԿ

Պարտություն կրելուց հետո թուրքերն ուժեղացրեցին հարվածներն օդից, միաժամանակ մեր դիրքերի վրա նրանք թնդանոթային կրակ էին բացում: Չորս-հինգ օր շարունակ-վեց այդ ռմբակոծությունը: Մենք լավ էինք դիրքավորվել և թշնամու ռումբերը մեզ առանձին վնաս չէին հասցնում: Մենք խրամառների մեջ էինք և յի էինք վճռակամությամբ ետ մը-դելու թշնամուն, եթե նա հարձակման անցներ:

Հինգերորդ օրը նրանք նորից գրոհի անցան, բայց այս անգամ ոչ թե ճակատային գծով, այլ աչ և ձախ թևերի ուղ-ղությամբ: Զգացվում էր, որ այդ հարձակման համար նը-րանք լրջորեն նախապատրաստվել էին: Սգոտոս ափսոս էր: Խոտն արդեն կորցրել էր իր կանաչ գույնը և թուրքերը, որոնց առջևից եկող գրոհայինների մեջ կային նաև այլազգի

վարձկաններ, աշխատում էին հարմարվել տեղանքին: Նրանք մինչև գոտկատեղը մերկացել էին, մարմինները ներկել սլանկես, որ չգանազանվեին դեղմած խոտերից: Եվ իսկապես, երբ նրանք սողալով գալիս էին, համարյա չէին երևում: Նրանք սնայպերներ էին բերել ստաջավոր գիծ, որպեսզի դիպուկ կրակոցներով ոչնչացնեին մեր հրամանատարներին և զնդացրորդներին:

Մի անգամ ձախ թևի կողմից, որտեղ դիրքավորված էր Լեյնիավանի ջոկատը, երեք թուրք, ձեռքներին նոնակներ, սողալով մոտենում են մեր դիրքերին: Մնացել էր բնդամենը 30 մետր, որ նրանք հասնեին մեր խրամատներին, կրք մերոնցից մեկը՝ 17 տարին չլրացած մի պատանի նկատում է նրանց: Բայց նա այնպես է վախենում, որ լնգուն կապվում է ու չի կարողանում զգուշացնել իր բնկերներին: Նա կարողանում է մետրվել թմբի ետևը և կրակել դեպի վեր: Թուրքերը մտնում են 2 նոնակ, որոնց պայթյունից զոհվում է մերոնցից մեկը, իսկ երգու հոգի վիրավորվում են: Մերոնք իսկույն կրակ են բացում թշնամու վրա: Նրանցից երկուսը սպանվում են, իսկ երրորդը վիրավոր միճակում գերի դնկալ: Այդ վիրավորը թուխ գույնի մարդ էր. նրա մարմինը ներկված էր դեղին ներկով, իսկ գլխին տերեւներ էին հարմարեցված:

Փորձեցինք հարցաքննել նրան, բայց նա չէր խոսում, հրեն խուլ ու համրի տեղ էր դրել: Տղաները քիչ էր մնում մի լավ ձեռնեին 17-ամյա հայ պատանուն, մենք չթողեցինք: Նա խոստովանեց, որ առաջին անգամ էր կռվի մեջ եղել, վախից իրեն լրիվ կորցրել էր և չգիտեր, թե ի՞նչ է անում:

Երեք օր անընդմեջ գրոհներ ձեռնարկելուց հետո, թշնամին ավելի ուժեղացրեց ունրակոծությունը ինքնաթիռներից: Թուրքերը նրանք զցում էին մեր թիկունքը, որտեղ մեր խոհանոցն էր: Ըստ երևույթին նրանք նկատել էին օջախի ծուխը: Մենք աշխատում էինք աչնպես անել, որ ծուխ չլիներ, բայց այնուամենայնիվ լիում էր:

Հերթական հարձակման ժամանակ բոլորը թաքնվել էին «ԲՄՊ»-ի տակ, իսկ Ռաֆիկը հարմար տեղ էր փնտրում, երբ պայթեց ռումբը: Նա ծանր վերք ստացավ թևից և շատ ար-

յուն կորցրեց: Ծուրը նրան տարավ Չոբրան՝ դաշտային հոսպիտալ: Այնտեղ նրան վիրակապեցին և ուղարկեցին Ստեփանակերտ: Մի քանի ժամ անց Ծուրը վերադարձավ ու անցավ իր պարտականությունների կատարմանը:

## ՏԱՆԿԱՑԻՆ ԳՐՈՂ

Մի անգամ, երբ պատրաստվում էինք նաշելու, ուսցիալով լսեցինք հետկալը. Ալշան տեղանքում, մեզանից 3 կմ դեպի ձախ, պաշտպանությունը ստանձնած ջոկատի հրամանատար Մելիկը հայտնում է Աելրան Օհանյանին, որ թուրքերը հարձակվում են տանկերով: Նա օգնություն է խնդրում՝ մեկ «ԲՄՊ»: Աելրանը նայել էր քարտեզին, հետո հարցում արել մարտակերտոցիներին, որոնք լավ գիտեինք տեղանքը, և վերջիններս պատասխան էին տվել, թե «ԲՄՊ»-ն այդ տեղով չի կարող անցնել: Պետք է հույս դնել նոնակա-նետների վրա:

Մելիկը իր խնդրանքը մի քանի անգամ կրկնեց: Աելրանը պատասխանում էր, թե ինքը տեխնիկա չունի, երբ կիներ, կողարկի: Նրան պատասխանեցին, որ արդեն տեսնու՜մ են երեք տանկ և տղաներ վախենում են, որ չկարողանան նրանց խփել, հետևապես կհասանջեն:

Ես կասվեցի ուսցիալով Մելիկ հետ և հարցրեցի վիճակի մասին: Նա գիտեր, որ իմ ջոկատը իրենից 3 կմ վերև է գտնվում: Ես ասացի, որ այդտեղով թշնամու մեծ տանկերը չեն կարողանա անցնել: Իսկ եթե անցնեն «ԲՄՊ»-ներ, ապա դրանց կարելի է խփել նոնակալետներով: Թշնամին մանրներ է անում և եթե հարձակվի, ապա կհարձակվի իմ ջոկատի վրա:

Մի քանի րոպե անց, երբ Մելիկը նույն խնդրանքով դիմեց Աելրանին, ես խառնվեցի նրանց խոսակցությանը և ասացի, որ պատրաստ եմ օգնելու նրան: Աելրանն ուրախությամբ համաձայնվեց:

Ես կանչեցի մեր հետևակի մարտական մեքենայի հրամանատար Մհերին և առաջադրանք տվեցի շրջվել, զնայ Ալշան (չուրջ 10 կմ), այնտեղից կրակ բաց անել թշնամու

վրա և շտապ վերադառնալ: Նա իսկույն մեկնեց: Երբ նա տեղ հասավ, սկսեց կրակել: Թուրքերը ետ դարձան: 10 բուպե չանցած նրանք հարձակումն ուղղեցին իմ ջոկատի կողմը: Մեր վրա գալիս էին երկու տանկ և մի «ԲՄՊ»:

Ես իսկույն հայտնեցի Մելիկին, որ ՄՅերին ետ ուղարկի: Ծոսաբին էլ իրազեկ պահեցի թուրքերի հարձակման մասին: Կուսապատում ընել էին մեր խոսակցությունը ուսցիալով և Հրաչը (Հուրոն) ասաց, որ ինքը 10 հոգի է ուղարկում ինձ օգնության: Նա խնդրեց, որ մենք չտանք դիրքերը, հակառակ դեպքում իրենք շրջապատման մեջ կընկնեն:

Ես պատասխանեցի, որ թշնամուն կկարողանանք ետ շարտել: Ես վստահ էի տղաների վրա, որոնք արդեն փորձ ու հմտություն էին ձեռք բերել: Նրանք հակախոս պատում էին և գիտեին, թե ինչ պետք է անեն: Ես մի օր առաջ կանչել էի սակրավորներին, որոնց դեկավարը Արմենն էր: Նա եկալ և այնպես դրեց հակատանկային ակամները, որ ոչ մի տանկ չկարողանար անցնել մեր կողմը: Պետք է ասեմ, որ իմ տեսած սակրավորների մեջ ամենալավը Սեյրանյան Արմենն էր: Ծավոք սրտի, Ասկերանի շրջանի գյուղերի ազատագրման ժամանակ նա զոհվեց ականի պայթյունից:

Երբ ընցիմք թշնամու գրահատեխնիկայի շարժիչների աղմուկը, ես կարգադրեցի գործի գցել մեր տանկի շարժիչը: Մինչ այդ թուրքերը մեր վրա էին արձակել շրայնելային ուռմբեր, որոնք պայթում էին շուրջ 50 մետր բարձրության վրա՝ վերածվելով հարյուրավոր կարմրավուն ասեղանման քեկորների: Դրանց հետևանքով մենք ունեցանք ութ վիրավորներ, որոնց Ասլանի ջոկատի միջոցով ուղարկեցինք հուսպիտալ:

Տանկի շարժիչն աշխատում էր: Համիկը (տանկի հրամանատարը) ինձ ձայն տվեց, որ կթե ինքը տանկ խփի, մի ձեռք կոմուֆլյաժ կտա՝մ իրեն: Կոմուֆլյաժի խայտաբլետ գույնի գինվորական արտահագուստ էր, որից պահել էի 2 ձեռք: Ես նրան խոստացա անպայման տալ:

Թշնամու տանկերը և «ԲՄՊ»-ն մոտենում էին: Նրանց ետևից գրոհում էր թուրքերի հետևակը: Դա նրանց վեց-կարոյ հարձակումն էր:

Քանի որ մեր տղաները կրակում էին ծառերի ետևից, թշնամին հրաժարվեց ուղիղ նշանալությանը նրանց վրա կրակելուց և սկսեց կրակել թևերից՝ խաշաձև:

Ես մի քանի անգամ վեր կացա հրահանգներ տալու և զգացի, որ ընկնում եմ սնայպերների կրակի տակ: Ատիպված էի պտուկել: Գալառյան Սերժիկին պատվիրեցի, որ նա իր կիտևը հրացանի վրա դրած վեր բարձրացնի և ինքս սողալով ետ գնացի ու մտա մի ծառի ետև: Դրանից հետո Սերժիկին ասացի՝ բարձրացրու: Նա բարձրացրեց կիտևը և սնայպերն անմիջապես կրակեց: Ես նկատեցի կրակոցի բոցը և նրա ուղղությանը ավտոմատով երկու կրակոց արձակեցի: Մի քանի բուպե անց Սերժիկին խնդրեցի, որ նորից բարձրացնի կիտևը: Նա բարձրացրեց, բայց սնայպերը ընում էր:

Երբ մարտն ավարտվել էր և մերոնք հավաքում էին սպանված թուրքերի գեները, ես տղաներին ասացի, որ գնան սնայպերի գտնված տեղը և բերեն նրա հեռադիտակով հրացանը: Նրանք գնացել էին և տեսել սնայպերի դիակը, իսկ կողքին հեռադիտակով հրացանը: Քիչ անց, այդ հրացանն իմ ձեռքին էր:

Դա մարտից հետո էր, իսկ դրանից առաջ սուկայի դուրդոց էր ընկել: Թշնամին կրակում էր գեների բոլոր տեսակներից, մենք պատասխանում էինք: Հրաշալի գործում էր մեր տանկի ընդամենը 2 հոգուց բաղկացած անձնակազմը:

Վաղիմիրի ջոկատը երկու օր առաջ գնացել էր Ատեփանակերտ հանգստանալու: Նրանց փոխարեն նոր տղաներ էին եկել Ատեփանակերտից, որոնց հրամանատարն էր Ծախենը: Նրանք ծանոթ էին մեր գործերին և վստահեցնում էին, որ կարդարացնեն իրենց: Նրանք հերոսաբար դիմակայում էին թշնամուն, որը շատ զոհեր էր տալիս: Մերոնց մեջ միայն վիրավորներ կային:

Կովի թեժ ժամանակ վերադարձավ մեր «ԲՄՊ»-ն: Մարտը տևեց երեք ժամից ավելի: Թշնամին կորցրել էր երկու տանկ, որոնցից մեկը պայթել էր Արմենի վարպետորեն դրած ականի վրա, մյուսին խփել էր տանկի հրամանատար, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսի

ուսանող Համիկը, որին եւ հանձնեցի խոստացածս համագգեստը:

Թորքերը մեծ թվով գոներ տալուց հետո ետ էին բաշխում: Արդեւ մթնով էր: Մենք տեսանք, որ թշնամին ուզում է խլոված տանկերից մեկն իր նեւ տանել: Համիկը կրակ բաց արեց իր տանկի գնդացրից: Թորքերը վախան: Մեր տղաներն ուզում էին մոտենալ խլոված տանկերին, բայց եւ արգելեցի:

Առավոտյան ժամը 6-ին Համիկին կարգադրեցի աշխատեցնել տանկի շարժիչը և շարժել հակառակորդի խլոված տանկերի կողմը՝ շրջանցելով, ինարկե, Արմենի դրած սկանները: Տանկը շարժվեց, իսկ մենք բասն հոգով շլթա կազմած շարժվեցինք նրա ետևից: Խլոված տանկերի մոտ օջախի մետքեր տեսանք: Ռիթմն թուրքերը մնացել էին, որ տանկերին մոտեցող մեր տղաներին խլիկին, իսկ երբ լսել էին տանկի հոնդյունը, փախել գնացել էին:

Մենք հավաքեցինք սպանված թուրքերի գեները և հանձնեցինք Յուրա Հովհաննիսյանին, որը եկել էր շտաբից: Մեր մեխանիկը գնեց թշնամու տանկը և սասց, որ նրան ոչինչ չի պատահել: Տանկը նա տարավ մեր դիրքերի մոտ: Նա երրորդ գրահատելանկեան էր, որ մենք խլում էին սորքեջանցիներին:

Ես կապվեցի Ալալա Ռանունցի հետ, որը զինամթերքի ցնով հրամանատարի տեղակալն էր, և խնդրեցի աղջ տանկի համար անձնակազմ ուղարկել, բայց շտաբում տանկիստներ չուներին: Նրանք մի մեխանիկ ուղարկեցին, որն աշխատեցրեց տանկը և տարավ դեպի շտաբ:

Ռացիայով ես կապվեցի Սեյրանի հետ և բացատրեցի կրթությունը: 24 օր տղաները սլաշուպանության դիրքերում էին, այնպես էին հոգեկել, որ դժվարությամբ էին շարժվում: Անգամ չէին կարողանում անշերտ գնալ: Մաշը թերմոսներով բերում էին խրամատները: Տղաները ուտում էին, իսկ մենք չորս հոգով հսկում էինք: Բոլորս էլ սնուսանելի հոգնած էինք և տանջվում էինք անքնությունից:

Տղաներին հանգիստ էր պետք, այնպես նրանք չէին կարողանալ դիմանալ թշնամու նոր գրոհներին:

Հաջորդ օրը մեզ չկարողացան փոխարինել: Հրամանա-

տարությամբ ձեռքի տակ սլաշուպանի ջնկատներ չկային: Մեր տղաներից 17 հոգու հանգստի համար ուղարկեցի թիկունք (500 մետր հեռավորության վրա): Այդ ժամանակ թուրքերը կրկին հարձակվեցին, բայց այս անգամ սասնը տանկերի: Մարտն արդեն սկսվել էր: Անցել էր մեկ ժամ: Հանգստի գնացած տղաները ռացիայով հարցնում էին մեզ՝ գանք թե ոչ: Ես վստահ էի, որ թուրքերին ետ կշարտենք. սղջ պատճառով մերժում էի նրանց: Նրանք երբ տեսան, որ կոիվը երկարում է, սկսեցին գալ մեր կողմը: Ես կարգադրեցի, որ սպասեն 200 մետր հեռավորության վրա: Մարտն ախարսովելուց հետո թույլ տվեցի, որ նրանք վերադառնան: Թշնամին կրկին ետ շարսովեց՝ տալով բազմաթիվ գոներ:

Խլոված տանկերը, որ մինչև հիմա այնտեղ են՝ Մեծ Ծեղի անոստում, իրենց տեսքով ոգևորում էին մեր տղաներին և, բնդհակառակը, անաբեկում թշնամուն:

Հաջորդ օրը Սեյրանը նոր ջոկատ ուղարկեց, որը բաշխացած էր Մարտակերտի միլիցիայի աշխատակիցներին: Հրամանատարը Մարտակերտի միլիցիայի բաժանմունքի պետերից մեկն էր: Վերջինիս ցույց տվեցի Արմենի դրած սկանների տեղը և այն վայրերը, որտեղով կարող էր թրշնամին հարձակվել: Հետո մենք հանգստի համար ետ բաշխեցինք՝ տանելով մեզ հետ ԲՄԴ-ն, որը վարում էր տրակտորիստ Ռաֆիկը:

Մանապարհին «ԲՄԴ»-ի շարժիչը կանգ առավ: Համկարծ տեսանք Սեյրան Յհանջյանին, որը մեքենայով գնում էր դիրքերը ստուգելու: Նա ողջունեց մեզ, շնորհակարություն նայունեց: Երբ նա տեսավ մեր ԲՄԴ-ն, մտավ նրա մեջ և քիչ անց աշխատեցրեց շարժիչը: Սեյրանը փորձված տանկիստ էր, եղել էր տանկային վաշտի հրամանատար: Նա խորհուրդ տվեց մինչև տեղ հասնելը շարժիչն այլև չկանգնեցնել:

Մենք եկանք Ստեփանակերտ: Հետո ինձ գանգ տվեց Մերձ Սարգսյանը և հայտնեց, որ երկու օր անց պետք է գնանք ռազմաճակատ: Ես մի նոր «Կամազ» բեռնատար մեքենա էի ստացել, որի վարորդը իմ հարևան Գևորգն էր: Այդ մեքենայով մեկնեցինք: Երբ հասանք Մեհմանա գյուղի

մտ, իմացանք, որ մեր թողած դիրքերից մերոնք նահան-  
ջել են շուրջ 10 կմ և թշնամին դուրս է եկել Մարտակերտ-  
Քերթաշար խճուղին:

Գնացիկն Զլորան գյուղի մոտ գտնվող մեր շտաբը, որ-  
տեղ մեզ ասացին, թե Մեծ Ծենի մոտ գտնվող դիրքերից  
նահանջել ենք, պետք է գնանք Մեհմանա գյուղի մոտ: Մեհ-  
մանան հունական և հայկական խառը բնակչություն ունե-  
ցող գյուղ էր: Հույները բարեկամական սերտ կապերի մեջ  
էին իրենց հայ հարևանների հետ և հաճախ պատահում էին  
խառը ամուսնություններ: Երբ ադրբեջանցիները գրավեցին  
այդ գյուղը, բնակիչները տեղափոխվեցին Ստեփանակերտ,  
որն այն ժամանակ ումրակոծության տակ էր: Հույների մի  
մասը դիմեց Հունաստանի կառավարությանը և թույլտվու-  
թյուն ստանալով տեղափոխվեց Հունաստան: Ղարաբաղում  
կային նաև այլ նույնական գյուղեր, որոնց բնակիչները ևս  
նույն վիճակի մեջ հայտնվեցին:

### ՀԵՌՈՒՍՏԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ

Մի օր Երևանի հեռուստատեսությանն ակարահանող մի  
խոսք եկավ մեզ մոտ: Նկարահանեց ջոկատիս մարտիկնե-  
րին արշալի պահին և անտառում հանգստանալիս: Հետո  
գրուցեցին մեզ հետ ու մեկնեցին այլ գործառույթ: Ամիսներ  
անց մենք իմացանք, որ ակարահանված նյութը ցուցադրվել  
է Երևանի հեռուստատեսությամբ: Գրող հագրատ Ուլուքաբ-  
յանը դիտել էր այդ հաղորդումը և այդ մասին գրանցում  
կատարել իր օրագրում: Վերջերս լույս բնծայած իր «Ար-  
ցախյան գոյապայքարի տարեգրություն» գրքում (հրատ.  
Երևանում, 1997 թ.) այդ մասին նա գրել է հետևյալը.

«Հեռուստատեսությամբ ցույց տվին Մարտակերտի շրջ-  
ջանի մի գորաջոկատ, որի հրամանատարն է Ռազմիկ  
Պետրոսյանը՝ նախկին ֆուտբոլիստ, Վարդիշ, Ստեփանա-  
կերտի մարզադաշտի տնօրեն, շարժման առաջին օրերից  
էլ՝ գոյապայքարի կազմակերպիչների առաջին շարքում:  
Ոգևորությամբ խոսեց իրենց խնդիրների մասին, ցավով՝  
ձախողանքներից: Լրիվ ճերմակել է, երկու տարի առաջ մեր

տուն էր եկել, ոչ մի ճերմակ մազ չուներ: Ճերմակել է, բայց  
նույն պինդ ու կրակոտ երիտասարդն է: Տղան իր գորաջո-  
կատում է կոչում՝ գեղեցիկ, ամուր, ջլապինդ, ինչպես հայրը:  
Հարցնում են՝ ի՞նչ կարծիքի ես հրամանատար հորդ մա-  
սին: «Լավ,— ասում է,— փորձառու է, միշտ ճիշտ է մտա-  
ծում, հարաբերությունները զինվորների հետ՝ հարգալից,  
պահանջկոտ:— Ապա կատակում է,— լավ է, որ հրամանա-  
տար է, թե չէ, որ շարքային լինեք, ինձ պես չէր կարող  
կոչվել: Դե տարեց մարդ է, հիսունն անց...»

Ուրեմն տղան հորն ուրիշ կերպ չի պատկերացնում, քան  
կոչի դաշտում, բայց լավ է, որ հրամանատար է...» (էջ  
551—552):

### ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐ

Մեհմանաջի մոտ դիրքավորվել էր Հուրոյի (Հուայի) դե-  
կավարության տակ գտնվող ջոկատը: Նրանից աջ՝ դեպի  
Կյուլաթաղ, Իլիչի խումբն էր: Նորիկի ջոկատը պահում էր  
Կյուլաթաղից Մեհմանա տանող ճանապարհը: Մենք գրա-  
դեցրեցինք ձախ կողմը՝ Դրմբոնի ուղղությամբ: Այնտեղ լավ  
բարձունք կար, որի վրայից մեր հսկողության տակ էինք  
վերցրել թե՛ ձորի, թե՛ սար բարձրացող ճանապարհները:

Հակաօդային պաշտպանության էֆեկտիվ միջոցներ չու-  
նեինք այդ վայրում: Միայն ձեռքի հրթիռներ կային, որոնց  
միջոցով կարողացել էինք խիստ թշնամու մի քանի ինքնա-  
թիռ և ուղղաթիռ: Ամեն օր ազերիների կողմից գալիս էին  
«ՍՈՒ—25» և «ՄԻԳ—25» ինքնաթիռներ, ումրակոծում մեզ  
ու հեռանում:

Մի քանի օր անց թուրքերը նորից հարձակման անցան:  
Նրանք ճնշում էին գործադրում տանկերով: Լավ էր պաշտ-  
պանվում Հուրոյի ջոկատը, իսկ Մարտակերտի անհորձ  
մարդիկ փախուստի էին դիմում: Երբ հարցնում էինք նը-  
րանց, թե ինչո՞ւ էին փոխում, նրանք պատասխանում էին,  
որ լավ հրամանատար չունեն:

Թուրքերը շարժվում էին դեպի Մեհմանա—Մարտա-  
կերտ—Դրմբոն ճանապարհը: Այդ մասում մեր տանկերը

խիել էին թշնամու երկու հետևակի մարտական մեքենա, ուստի ազերիները շրջանցում անելով Կյուլաթաղի կողմով ելան դեպի Մեհմանա՝ մեզ շրջապատման մեջ վերցնելու համար:

Այդ ժամանակ վիրավորվել էին Նորիկը և էյի մի քանի մարտիկներ: Նրանց կողմից պաշտպանությունը թուլացել էր և շրջապատման մեջ չընկնելու համար իմ ջոկատի տղաներից մի քանիսին ուղարկեցի Նորիկի պաշտպանած դիրքերը՝ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: Այդ մասին տեղյակ պահեցի հրամանատարությունը: Ծոսքից օգնության ուղարկեցին Մամվել Կարապետյանին, որն իր հետ բերեց մի տանկ: Ճանապարհին նա հավաքել էր և իր հետ բերել փախած մարտակերտցիներին: Մենք ժողովի պես մի հավաք տարբեցինք: Ուզում էինք մարտակերտցիներից իմանալ փախուստի պատճառների մասին: Նրանք նորից նույնն էին ասում՝ չունեն լավ հրամանատար և չգիտեն, թե ի՞նչ են անելու: Նրանցից մեկին հրամանատար նշանակեցինք, բացատրեցինք ջոկատի անելիքները, ցույց տվեցինք տեղակեցք, իմացանք, որ գեներերին տիրապետում են, պարզաբանեցինք հրամանատարին իր խմբին տրվող առաջադրանքները և պահանջեցինք որ նա մշտապես կապի մեջ լինի մեզ հետ:

Մարտակերտ—Քելբաջար ճանապարհը շատ մոտ էր (մոտավորապես 2 կմ): Ժորայի (Գրաղ Ժորայի) դելավարության տակ լավ էր աշխատում մեր հրետանին: Հրետանավորները խիել էին մի քանի տանկ, իսկ մեր ուղարկած ջոկատները հսկողության տակ էին վերցրել Մարտակերտ—Քելբաջար ճանապարհը և խփում էին այնտեղով անցնող զինվորներ տեղափոխող թուրքական զինվորական մեքենաներին, ոչնչացնում զինվորներին, վառում և պայթեցնում մեքենաների մեջ եղած զինամթերքը:

Մարտակերտը թուրքերի ձեռքին էր: Մեր խնդիրն էր կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի հարավ: Գիրքային համառ կոխվել էին: Մի օր օդում երևացին երկու ուղղաթիւ: Մենք կարծեցինք, որ թուրքական են և քիչ էր մնում կրակ բացելիք նրանց վրա, բայց կամպոսում էինք ու լավ է, որ չկրակեցինք: Պարզվեց, որ դրանք հայկական

բաղաձայնական ուղղաթիւներ էին: Խլիպա օդաչուները, խաբելով թուրքերին, սկզբում թռել էին Մարտակերտի վրա և այնտեղից, այսինքն թուրքերի թիկունքից, եկել էին մեր կողմը: Թուրքերը կարծում էին, թե դրանք իրենց ուղղաթիւներն են և ոչինչ չձեռնարկեցին նրանց դեմ: Ուղղաթիւները ցածր բարձրությունից սկսեցին ռումբեր նետել թուրքերի դիրքերի վրա՝ մեծ կորուստներ պատճառելով նրանց: Եվ այդպես, մեր ուղղաթիւներն անարգել ունակօժեցին թուրքերին ու հեռացան:

Մի անգամ գիշերը Հաթերքից մահանջող մեր ջոկատներից մեկը չէր կարողացել կողմնորոշվել և դեգերում էր մեր կողմերում: Փացիայով կապ ունենն շտաբի հետ և ուզում էին իմանալ, թե ո՞ր կողմով կարող էին գնալ, որ թուրքերի ձեռքը չընկնեն: Ես խորհուրդ տվեցի նրանց գալ մեր կողմը, քանի որ թուրքերը դեպի Գոմբոն ջոկատներ էին ուղարկում: Հայտնեցի նրանց, որ ընդառաջ եմ ուղարկում երկու հոգու, որոնք լուսաչին հետագիծ թողնող փամփուշտներ կկրակեն օդ և նրանցով ցույց կտան դեպի մեր կողմը գալու ճանապարհը: Այդպես էլ արեցինք: Նրանք որոշեցին միշտ ուղղությունը և մոտ երեք-չորս ժամ անց բարեհաջող հասան մեզ: Նրանք փաստորեն հայտնվել էին թշնամու թիկունքում:

Քսան օր մնացինք այնտեղ: Լավ արշտպանվում էինք, երբեմն էլ հսկահարձակումներ էինք ձեռնարկում՝ թշնամու պատճառելով մարդկային ուժի և տեխնիկայի զգալի կորուստներ: Մի անգամ, երբ ետ էինք մղել թուրքերի հերթական հարձակումը, ջոկատների հրամանատարները հավաքվեցին մեզ մոտ: Ասում էինք, որ երբ լավ ենք համագործակցում, թշնամին ոչինչ չի կարողանում անել և որպես կանոն, սրարտություն է կրում: Որոշեցինք այդպես էլ շարունակել:

Ջոկատներից մեկի տղաները կրակ էին վատել, որպեսզի չորացնեն ջրերի միջով անցնելու ժամանակ թրջված կոշիկներն ու հագուստը: Թուրքերը նկատել էին խարույկի ծովը և ակամանեռներից սկսեցին կրակել այդ ուղղությամբ: Հըրաման տվեցինք անմիջապես հանգնել խարույկը և հեռա-



նալ այդ վայրից՝ մարդկային կորուստներ չունենալու համար:

Բնել էինք դիրքերում և շատ շուտ արթնացանք: Գեներալ մեքենայով գնաց ջուր քերելու, որ թել պատրաստենք: Համկարծ մեր վերևում, շուրջ երեք հարյուր մետր բարձրության վրա, մի ինքնաթիռ հայտնվեց: Գոռացիներ «վոզդուխ», «վոզդուխ» («օդ», «օդ»): Բոլորը թաքնվեցին: Ինքնաթիռը նետեց կասետային մի հսկա ումբ, որը պայթեց մեզանից ոչ այնքան հեռու: Մերոնցից յոթ հոգի վիրավորվեցին, այդ թվում նաև ես:

Մենք յուր ուղարկեցինք փրկարար ջոկատին (Ասլանի ջոկատին), որ գար: Բայց տղաները արշունաքամ էին լինում: Առիվով «Կամազ» մեքենայից քերված ջուրը թափեցինք ցած, վիրավորներին պատգարակներով դրեցինք նրա մեջ և շարժվեցինք դեպի Չլդրանի հուսպիտարը՝ դաշտային հիվանդանոցը: Ծանապարհին հանդիպեցինք սանիտարների «Ուազ» ավտոմեքենային: Վիրավորներին տեղափոխեցինք նրա մեջ, իսկ «Կամազն» ուղարկեցինք ետ:

Չլդրանում մեզ սուաջին օգնություն ցույց տվեցին, բայց քանի որ՝ վիրավորները շատ էին և անընդհատ նորերն էին քերում, մեզ ուղարկեցին Ստեփանակերտ: Ամեն օր «Ծտապ օգնության» մեքենաներ էին գալիս Չլդրանի հուսպիտար և վիրավորներին տեղափոխում մայրաքաղաք:

Ստեփանակերտի հիվանդանոցում տեղ չկար: Այդ պատճառով բժիշկ Մարությանը, թեթև վիրավորներին խնդրեց գնալ իրենց տները և ամեն օր գալ հիվանդանոց՝ բուժումը շարունակելու համար: Նա մշակեց մեր վերքերը, փոխեց վիրակապերը և դրանից հետո մերոնցից մի քանիսին տարան տուն: Գիշերը քնում էինք մեր տներում, իսկ առավոտյան Ծոշի մեքենայով հաւաքում վիրավորներին և տանում հիվանդանոց:

Ջոկատիս մի մասը մնացել էր դիրքերում և ես անպայման պետք է վերադառնայի: Բայց մի քանի օր հետո ջուկատը եկավ Ստեփանակերտ, որովհետև Մեհմանայի ու Չլդրանի դիրքերը մերոնք հանձնել էին: Թուրքերը շարժվում էին դեպի Խաչեն գետը:

Մեկ շաբաթ անց ինձ կանչեցին և կարգադրեցին ջոկատն

ուղարկել առաջավոր գիծ: Գիտեին, որ վիրավորված եմ, ուստի առաջարկեցին մի հոգու դեկավար նշանակել: Որոշեցի ինքս մեկնել, չնայած քայլել չէի կարողանում: Տղաների հետ մեկնեցինք դեպի շտաբ, որը գտնվում էր Կիչան գյուղի մոտակա ձորակում: Այնտեղ էր հաստատվել նաև դաշտային հիվանդանոցը:

## ԿՌԻՎՆԵՐ ՄԵՀՄԱՆԱՅԻ ՄՈՏ

Ծտաբում կային մարտակերտից մի քանի սպաներ, որոնցից իմացանք, որ մերոնք ետ են գրավել Չլդրանը: Այդ ժամանակ Չլդրանի մոտակայքում էր գտնվում Սամվել Կարապետյանի ջոկատը: Նա շտաբի սպաներին խնդրեց, որ իմ ջոկատն ուղարկեն իր դիրքերը: Ուշ երեկոյան, երբ մութն արդեն ընկել էր, մենք անցանք ոմբակոծման տակ գտնվող ճանապարհը և գիշերվա մնացած մասն անցկացնելով Չլդրանի աղբյուրի մոտ՝ առավոտյան սկսեցինք գրոհել Չլդրանի առջևում գտնվող Մեհմանայի բարձունքը:

Բարձունքը գրոհողների, հատկապես հետախույզների մեջ հրաշալի տղաներ կային: Նրանցից կուզեմայի հիշել Անդոյին (Անդրանիկին), որը հետագայում դարձավ գնդի հետախույզության հրամանատարը, Վարդգեսին և չլդրանցի Վիգենին:

Հարձակումը սկսել էինք առավոտյան վաղ: Անդոն գրոհում էր աջ կողմից, իսկ մենք մեջտեղում էինք: Թուրքերը Մեհմանա—Չլդրան խճուղին պահում էին 3 թե 4 տանկերով, որոնք գնում-գալիս էին ու անընդհատ կրակում: Մենք շուրջ երկու կիլոմետրի վրա շրջա էինք կազմել և երբ մոտեցանք խճուղուն, թուրքական տանկերը սկսեցին կրակել մեր վրա: Ես իսկույն նռնակաձեռից կրակեցի տանկի վրա, իսկ Վարդգեսի տղաները կրակեցին «Մուխա» («ճանճ») կոշված հրթիռով և խփեցին տանկին: Տանկն ուժեղ ցնցվեց ու կանգ առավ, բայց քանի որ նրա լուկերը բաց էին, անձնակազմը այդ ցնցումից մեծ վնաս չտեսցավ և անսիջապես փախուստի դիմեց: Մենք իջանք խճուղին և անցնելով դա առաջ շարժվեցինք՝ այնպես անելով, որ ջոկատի շուր-

թան մի ուղղությամբ լինի: Դա արեցինք նրա համար, որ պատահմամբ միմյանց վրա չկրակենք: Այդ ժամանակ Անդրանիկի ջոկատը գրավել էր թուրքերի դիրքերը և խփել «Տ—72» մեկ տանկ:

### «ՅԱՇԱՍԸՆ ԱՋԻԲԵՅԶԱՆ ՀՈՔՅՈՒՄԱԹԸ»

Մենք հասանք այդ խնդիրն միանգամից մոտ և նայում էինք, թե որտեղի՞ց է դա այդպես վնասվել: Այդ ժամանակ վերևի կողմից նկատեցինք սև գույնի համազգեստով մի զինվորի, որը մոտենում էր մեզ: Նրա ձեռքերում երկու ավտոմատ հրացան կար: Մեկը բռնել էր աջ ձեռքով և փողմ ուղղել էր մեր կողմը, մյուսը ձախ ձեռքին էր, որը բարձրացրել էր վեր: Նա մոտենում էր: Մերոնցից մեկն ասաց. «Հանա մեր էն ոխժի տանկիստներան ինա», մյուսը թե՛ «Ա, չէ, շան տղան հանց ա թուրք ինի»:

Իսկ այդ զինվորը մոտենում էր մեզ: Երբ մնացել էր մոտ քառասուն թե հիսուն մետր, ես մեխանիկորեն ավտոմատ հրացանի փողմ ուղղեցի նրա կողմը և ոռուրեմ բղավեցի. «Գցիր գեները»: Այն ավտոմատը, որ նա ձախ ձեռքով վեր էր բարձրացրել, նա վայր գցեց և մարմնով շրջվելով ուզեց փախչել: Այդ ժամանակ էլ աջ ձեռքին բռնած ավտոմատից կրակ բաց արեց: Երբ նա արդեն մարմնով շրջվել էր, գոնաց՝ «Յաշասըն Ազրբեյջան հոքյումայթը» («Կեցցե Ազրբեյջանական պետությունը»):

Ես, ինչպես և մի քանի տղաներ, կրակեցինք և նա ընկավ: Վազելով մոտեցանք նրան: Արդեն մեռած էր: Վարդգեսի ջոկատի տղաներից մեկը՝ Կարենը, վերցրեց նրա նետած ավտոմատը և մենք նրա խզակոթի վրա կարդացինք հայերեն գրված մի ակում՝ «Հարութ»: Եթե նա հասցնել կրակել, մեզ շատ վնաս կտար:

Կարենը և Վարդգեսը պատմեցին, որ այդ թուրք զինվորը Ներքին Հորաթաղ գյուղի մոտ ևս նույն բան է արել: Երբ խփվել էր նրա տանկը, նա թռել էր տանկի վրայից և պակել գետնին: Մերոնք, որ այդ ժամանակ գտնվելիս եմ եղել շուրջ 100 մետր հեռավորության վրա, կարծել են թե՛

սպանված է, մոտեցել են նրան: Մնացել էր մոտ 100 մետր, որ հառանելին նրան, նա վեր է թռել և ավտոմատից կրակել մերոնց վրա: Չորս հոգի մերոնցից վայր էին ընկել: Երկուսը սպանվել էին, մյուսները՝ վիրավորվել: Նրան այժմ նախնացին արտահագուստից և մազերից: Նա շիկահեր էր, իսկ դիմացի կողմից՝ ճաղատ: Այդպես էլ նա տպավորվել էր տղաների հիշողության մեջ:

Մի քանի օր անց Ծափոմյանի շրջանի Գյուլիստան գյուղի ջոկատի տղաները թաղեցին նրան, որովհետև դիակը սկսել էր նեխել:

### ԱՋԵՐԻ ԿԱՊԱՎԱՐԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄԸ. ՌԱԴԻՈԿԱՊ ՍՈՒՐԱՏ ՀՈՒՍԵՅՆՈՎԻ ՀԵՏ

Չորրանից նուաջ էինք անցել մոտ ութ կիլոմետր: Դիրքավորվել էինք և պահում էինք շուրջ երկու կիլոմետրի չափ տարածություն: Իսկ Չորրանից դեպի մեր դիրքերը երեք կիլոմետր բաց տարածություն կար: Այնքան մարդ չունեինք, որ կարողանայինք տեղավորել այնտեղ: Այդ տարածքը, փաշտորեն, անպաշտպան էր մնացել: Այդ մասին ինձ հայտնեց Մեյրան Օհանյանը: Ես 3—4 հոգու ուղարկում էի այնտեղ և նրանք բարձունքին նստած, հսկողության տակ էին պահում շրջապատը:

Թշնամին ամեն գեղով ուզում էր գրավել Չորրանը: Հսկող տղաները հանկարծ ինձ հայտնեցին, որ թուրքերից շուրջ 15 հոգի շարժվում են Չորրանի ուղղությամբ: Այդ մասին ես հաղորդեցի Չորրանի պաշտպաններին: Նրանց մոտ էր նաև Սամվել Կարապետյանն իր ջոկատի մյուս մասի հետ (մնացածները ինձ մոտ էին): Մենք պայմանավորվեցինք, որ ես փակեմ այդ թուրքերի դարձի ճանապարհը, իսկ իրենք կշարժվեն Չորրանից դեպի Մեհմանա: Հետո մենք կգնայինք դեպի Չորրան և թուրքերին կվերցնեինք օղակի մեջ:

Այդպես էլ արեցինք: Մեր ջոկատները շարժվում էին գրահատելիս իրարից հեռավոր պաշտպանության մեքո: Երբ մոտեցանք թուրքերին, նրանք կրակ բաց արեցին ու փա-

խան ետ: Այնտեղ մերոնք էին և նրանք հայտնվեցին շրջապատման մեջ: Բոլորին սպանեցինք, բացի մեկից, որը, պարզվեց, նրանց կապավորն էր: Նրա ուսցիան միացած էր ազգերիների շտաբի ուսցիային և մենք լսում էինք աղբբեջաներեն խոսակցություն:

Մենք լսեցինք Մարտակերտի ճակատի հրամանատար Սուրատ Հուսեյնովի ձայնը: Բրդի մթերման ֆարքիկայի դիրեկտորությունից գորահրամանատար դարձած Սուրատ Հուսեյնովը, որը Մարտակերտը գրավելու համար դարձել էր Ադրբեջանի ազգային հերոս, այդ ժամանակ գլխավորում էր Չլդրանի և մյուս գյուղերի դեմ ծավալված ուղղման գործողությունները: Հետագայում նա դեկավարեց նախագահ Աթուլյազ Էլշիրեյի դեմ հայտնի խռովությունը՝ և ճանապարհի հարթեց Հեղար Աչիևի համար դեպի նախագահական աթոռ, իսկ ինքը դարձավ Ադրբեջանի վարչապետը: Ալիևը ձգտեց ազատվել նրանից և Գանձակի խռովությունից հետո Սուրատ Հուսեյնովը փախստական դարձավ: Նա թաքնվում էր Մոսկվայում, բայց Ալիևը լեզու գտնելով ադրբեջանական նավթից հարքած ոռու շինովնիկների հետ՝ նրան ձերբակալել տվեց և տեղափոխվեց Բաքվի բանտ: Այժմ Սուրատ Հուսեյնովը բանտում է և սպասում է իր դատին: Բայց այն օրերին նա ճակատի հրամանատար էր և մենք լսում էինք նրա ձայնը: Նրա ուսցիայի թվահամարն էր 52-ը:

Մահվան արաստի տակ գերի ընկած ազգերի կապավորը համաձայնվեց կատարել մեր բոլոր հրամանները: Հենց որ Ս. Հուսեյնովը կապվեց 15 հոգուց բաղկացած ջոկատի հետ, որը քիչ առաջ ոչնչացվել էր մեր կողմից, մենք կապավորին կարգադրեցինք օգնություն խնդրել: Դա գիշերվա ժամը 12-ն էր: Ս. Հուսեյնովը հրաման տվեց լուսային հետք թողնող փամփուշտներ կրակելով վեր, ցույց տալ տեղը: Երկու հոգույ սկսեցինք կրակել այդ փամփուշտներով դեպի վեր: Ս. Հուսեյնովն անմիջապես կապվեց կապավորի հետ և հայտնեց, թե «դուք գտնվում եմ Չլդրան—Մեհմանա խճուղու վրա»: Նա հարցրեց, թե «ձեզ նկատել են խոզերը» (այսինքն հայերը, նրանք մեզ խոզ էին անվանում):

Կապավորին ասացինք հալորդել հետևյալը. «Տերեկը նկատել են, իսկ հիմա՝ ոչ»: Ս. Հուսեյնով կարգադրեց. «Տեղից չշարժվել, առավոտյան ժամը 4-ին մարդ կուղարկեմ. նրանց հետ ետ կգաք»:

Այդպես ուրեմն, Ս. Հուսեյնովին խաբեցինք և նա մեզ «նվեր» պետք է ուղարկեր լավ զինված մի ջոկատ, որը կարող էր ընկնել մեր լարած թակարոյը: Այդպես էլ եղավ: Գիշերվա ժամը 2-ի կողմերը 20 հոգիանոց մի խումբ թողեցինք այն կետում, որտեղից կրակել էինք, մնացածներով դարան մտանք: Երկու ժամ անց տեսանք, որ մի խումբ է մոտենում մեզ: Թուրքերը կամաց-կամաց, շատ զգուշորեն մոտեցան և հեռվից ձայներ էին հանում, որոնք նմանվում էին բորենու հաչոցների: Թուրք կապավորին հարցրեցինք, թե ո՞րն է նշանախոսքը: Նա ասաց՝ բորենու հաչոցը: Մերոնցից չլրրանցի Վիզենն ասաց, որ ինքը կարող է այդպիսի ձայներ հանել: Երբ թուրքերը բավականին մոտեցան, Վիզենն իսկապես սկսեց բորենու նման հաչել: Մենք պարզորոշ լսեցինք թուրքերեն հետևյալ խոսքերը՝ «Մերոնք են, եկե՛ք»:

Երբ նրանք մոտեցան, տեսանք, որ կլինեին 17—18 հոգի: Ես հրամայեցի կրակել: Միաժամանակ կրակեցինք ավտոմատ հրացաններից ու երկու գնդացիներից: Նրանք էլ կրակ բաց արեցին, բայց անօգուտ: Համարյա բոլորն ընկան մեր կրակահերթերի տակ: Երբ մոտեցանք, հաշվեցինք 15 դիակ: Մի քանիսին հաջողվել էր փախչել:

Առավոտյան ժամը 9-ին Ադրբեջանի պաշտպանության մինիստր Ռահիմ Գազիևը խոսեց «52-ի» (այսինքն Սուրատ Հուսեյնովի) հետ և հարցրեց. «Չլդրանը վերցրե՞լ եք, թե ոչ»: Սուրատը բացատրական պատասխան տվեց և հայտնեց, որ Մեհմանայի բարձունքն իր կոկորդին է նստել, արդեն 30 զոհ է տվել: Նա խնդրեց «Գարանգոշներ» ուղարկել: Պատասխանն այսպիսին էր. «Վաղը կուղարկենք, բայց ինչ գնով էլ լինի Չլդրանը պետք է գրավեք»:

«Գարանգոշ» ադրբեջաներեն նշանակում է «Ծիծեռնակ»: Այդպես էին ասում ինքնաթիռներին: Մենք էլ ուսցիայով խոսելու ժամանակ օգտագործում էինք զանազան ծածկանուններ. «Տ—72» տանկին ասում էինք «Մեծ պողոճ»,

«Փոքր պոլուն» անվանում էինք հետևակի մարտական մեքենան: «Վոլեյբոլիստ» նշանակում էր սպանված, «ֆուտբոլիստ»՝ վիրավոր: Ինքնաթիռին մենք էլ էինք ասում «ծիծեռնակ», իսկ ուղղաթիռին՝ «թիթեռ»: Թուրքերը էրք ասում էին «Խիչար ուղարկեք», մենք հասկանում էինք, որ նրանք արկեր են պահանջում, իսկ էրք «Սեմոչկա» էին ուզում, նշանակում է վամպուշտի կարիք ունեն:

Այսպես ուրեմն, Ադրբեջանի պաշտպանության միջնատրը խուտացավ մյուս օրը մեր վրա ինքնաթիռներ ուղարկել: Ես հավաքեցի չոկատների հրամանատարներին և կարգադրեցի բոլոր մեքենաները մտցնել անտառ և լավ բողարկել, որովհետև մեզ ուժակոծելու են օդանավերից: Մարտիկները պետք է իմանան ադ մասին և դիրքերից դուրս չգան:

Հաջորդ օրը ասավոտյան լեռնիք ինքնաթիռների շարժչների հոնդյունը: Բայց էրք նրանք մտնեցան, պարզվեց, որ ուղղաթիռներ են: Երեք հատ էին՝ «Կորբա» մակնիշի: Նրանք վախեցան գալ մեր գլխավերևը և հետվից հրթիռներ արձակեցին մեր կողմը: Բայց դրանք բոլորն ընկան մեզանից շուրջ 100 մետր հեռավորության վրա՝ ոչ մի վնաս չբարձրառելով մեզ:

**ԱԶԵԻՆԵՐԸ ՌԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ**

Երեկոցան նորից լեռնիք «52»-ի խուսակցությունը: Սուրստ Հուսեյնովը միջնատր Ռահիմ Գազիեին հայտնեց, որ Չլդրանը չի վերցրել և խնդրեց նորից «Ծիծեռնակներ» ուղարկել:

Հաջորդ օրը եկան ինքնաթիռները և ուժակոծեցին խուսակցին: Մենք ունեցանք մի քանի վիրավոր: Լավ հասկանում էինք, որ Ս. Հուսեյնովը խաբում է իր հրամանատարությանը: Կինեով ավելի հեռու Չլդրանից (մոտ 8 կմ), փաստորեն Դրմբուհի մոտ, նա հայտնել էր, որ շատ մոտ է Չլդրանին (2 կմ) և ինքնաթիռները ուժակոծում էին Չլդրանի շրջակայքը, իսկ մենք անվնաս էինք մնում:

Ս. Հուսեյնովի պարծենկոտությունը մեզ շատ օգուտներ տվեց: Օգտվում էինք նաև իրենց հրամանատարությանը խաբող ազգերի այլ «գորավարների» խաբեբայություններից: Այսպես, ադրբեջանական հրամանատարությունը մի գործմաս էր ուղարկել Չլդրանը գրավելու համար: Թուրքերը եկել էին Դրմբուհի մոտ, սպառել մինչև երեկոցան ժամը 6-ը և զենքի բոլոր տեսակներից կրակ բաց արել մեզ վրա: Բայց մենք նրանցից հեռու էինք շուրջ 6 կմ և միայն պայթյունների ձայներն էին մեզ հասնում: Մենք լուռ էինք: Թուրքերը հետո կապվեցին իրենց հրամանատարության հետ ու հաշտեցին, որ հանդիպել են հակառակորդի, այժմեք մեր, ուժեղ դիմադրությանը ու չեն կարողացել գրավել Չլդրանը: Նրանք թուլություն խնդրեցին վերադառնալ Դրմբուհի:

Երբ լավում էին թուրքական գոյամասի կրակոցների ձայները, Սեդան Օհանջանը ուցիալով հարցնում էր մեզ՝ «Էդ կո՞վը ձեզ հե՛տ է»: Պատասխանում էինք՝ «Այո, հետո կպատմենք»: Նույն հարցը տվեց նաև մեր մեկ այլ հրամանատարը (անունը մոռացել եմ), որը հետո զոհվեց: Մենք դրական պատասխան էինք տալիս և ասում, որ դիմումում ենք:

Այսպես, թուրքերը, վախենալով կոմի բռնվել մեզ հետ, խաբելով իրենց հրամանատարությանը՝ իզուր զինամթերք էին վաճառում, իսկ մենք հետվից դիտում էինք այդ ամենը և լուռ նրանց խուսակցությունը:

**ԹՈՒՐԷՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԳՐՈՂԻ,  
ՄԵՆՔ ԿԱՆԵՈՒՄ ԵՆՔ ՆՐԱՆՑ**

Մի անգամ «52»-ը հարորդում տվեց բոլոր շրջակա գոյամասակներին այն մասին, որ կրեկոցան նրանց մոտ մարդ է գալու և ասելու է, թե ինչ են անելու: Այդ հազորդունը կրկնվեց մի քանի անգամ: Բացի այդ, նրանք իրենց մոտ կանչեցին ինչ-որ մեկին, որին անվանում էին «նալիչ»: Իստանկիստ էր, որին Ռուսաստանից էին բերել: Նրան էլ

կանչեցին իրենց մոտ: Ես ենթադրում էի, որ հարձակում պետք է լինի: Քիչ անց հասկացանք, որ իրենց գրոհը ազերիները սկսելու են ժամը 6-ին: Դարձյալ ուսցիայով մի ազերի հրամանատար հայտնեց, որ «ժամը վեցին բոլոր «լալթաթիքյաները» իրենց մոտ լինեին: Մենք գիտեինք, որ «լալթաթիքյաներ» նրանք ասում էին սակիտարներին: Եթե սակիտարներին հրամայվում է սրտքատա լինել ժամը 6-ին, ուրեմն նրանք այդ ժամին գրոհի են գալու:

Ես կապվեցի Չորասնում գտնվող մեր շտաբի հետ և խնդրեցի ինձ մոտ մարդ ուղարկել, որին կարճոր քան ունեմ ստելու: Նրանք խոստացան, բայց որովհետև ճանապարհը գնդակածության տակ էր, դժվար էր անցնելը: Այդ ժամանակ էր, որ Չորասնից Մեհմանդար գնալիս ոտքից ծանր վիրավորվեց Սեյրան Օհանյանը և հետագայում ենթարկվեց ոտքի անդամահատության: Քաջապիրտ մարդ էր Սեյրանը, կորցնելով մի ոտքը՝ նա մնաց շարքերում և այժմ հանդիսանում է Ղարաբաղի պաշտպանական բանակի գլխավոր հրամանատարի տեղակալը:

Իմանալով թշնամու հարձակման մասին՝ ես պատրաստություններ էի տեսնում: Հավաքեցի ջոկատների հրամանատարներին՝ Անդրանիկին, Վարդգեսին, Վազգենին, Վալերիկին (Տաքսիին) և հաղորդեցի, որ առավոտյան ժամը 6-ին թորքերը հարձակվելու են մեր վրա, իսկ մենք թշնամուն անակնկալի բերելու համար դրանից 2 ժամ շուտ՝ ժամը 4-ին կհարձակվենք նրանց վրա:

Երեկոյան ժամը 10-ին ժամանեց Չորասնի շտաբի պետ, կապիտան Սահլելը, որը Մարտակերտի զինվորական կոմիսարն էր:

— Ի՞նչ է պատահել Ռազմիկին.— անհամազուտությամբ հարցրեց նա:

Մենք հանգստացրեցինք նրան և պատմեցինք թորքերի սպաավող հարձակման մասին: Ծոսքից ես թուլություն խնդրեցի ժամը 4-ին հարձակվելու թորքերի վրա: Ես մի պայման դրեցի, որ եթե աչից առաջ անցնեն 10 կմ, ձախից պետք է գնա Արթուր Ալեքսանյանը (նրա ջոկատում Հալախտակից եկած կամավորներ էին և մարտակերտցիներ),

իսկ Արխավենդ գյուղի կողմից առաջ է գնալու Ժիրոյի խումբը:

Ծոսքում պետք է քննարկեին իմ առաջարկությունը և հետո պատասխան տային: Ես խնդրեցի ուսցիայով ոչինչ չհաղորդել: Եթե համաձայն են իմ ծրագրին, թող ստեն «Այդ տղայի ճնունըը կատարեք»: Իսկ Գրադ Ժոռային պետք է կարգադրվի, որ նա հրթիռակոծի Մարտակերտ—Քելբաջար խճուղին, որպեսզի երբ ես առաջ անցնեմ, այնտեղով թորքերին օգնություն չգա:

Ժամը 24-ին շտաբը ուսցիայով հայտնեց, որ «Կարող ես այն տղայի ճնունըը կատարել»: Գրադ Ժոռան ասաց, որ ճնունը կապակցության ինքը կարող է ընդհատել 8 հատ նվեր ուղարկել: Իսկ նշանակում էր, որ նա ի վիճակի է միայն 8 հրթիռ արձակելու:

Առավոտյան ժամը 4-ին մեր երեք ջոկատները, յուրաքանչյուրում 40 մարտիկ, շարժվեցին դեպի թորքերը:

Ջոկատների հրամանատարների հետ քարտեզի վրա որպեսմավորվեցինք, թե որտեղ ենք հանդիպելու: Որոշեցինք նշանակալուսքը՝ «Ջրաբերդ»: Տարբեր ճանապարհներով էինք գնալու: Մինչև մեր դուրս գալը, սակրավորները, որ գնում էին առջևից, հանում էին մեր և թշնամու դրան սկանները:

Մանապարհին երկու խումբ թորքերի հանդիպեցինք, բնգամենր 15 հոգու: Տղաները, որոնց մեջ էր նաև մի դազախ կամավոր, նրա մասին կայտունեմ քիչ հետո, բոլորին ոչնչացրեցին: Թորքերի մի ուրիշ խումբ էլ, դարձյալ 15 հոգի, հանդիպում է Վիզենի ջոկատին: Անակնկալ գրոհով մերոնք սպանում են սրանց նա: Նրանք առաջավոր գծի պոստերն էին պահում:

Երբ նստանք պայմանավորված տեղը, առջևից լսեցինք ինչ-որ խոսակցություն: Այդտեղ թշնամին պետք է լիներ, ուստի մեր առաջնային գծի վրա եղած տղաները կրակ բացեցին ձայների ուղղությամբ: Այն կողմից լսվեցին պատասխան կրակոցներ: Մերոնք գնդացիներից կրակ բացեցին: Հանկարծ առջևի գծի տղաներն ինձ հայտնեցին, որ հակառակորդի կողմից հայերեն բառեր են լսել: Ես կարգադրեցի

հարցնել նշանակաւորը: Իրանից անմիջապէս ճեռոտ պարզ ու հստակ լսվեց «Ջրաբերդ» բառը: Մերոնք էին: Վիգենի ջոկատի տղաներն էին, որ ըստ պայմանավորվածութեան այնտեղ չպետք է լինէին, այլ արևելի ետևում:

Ես կանչեցի Վիգենին և բարկացած հարցրեցի արդ մաւին: Նա պատմեց, որ տղաները երկու թուրք էին տեսել և ընկել նրանց ետևից ու առաջ անցել: Լսւլ է, որ գոհեր չեղան:

### 1156 ՔԱՐԺՈՒՆՔԻ ԳՐԱՎՈՐԸ

Մենք միացանք ու շարժվեցինք առաջ, դեպի 1156 բարձունքը, որը գտնվում էր Մեհմանայի դիմաց: Քանի որ սակրավորներն արդեւ ականազերծել էին ճանապարհը, ես կարգադրեցի, որ տանկերը զամ մեզ մոտ: Ինձ պատասխանեցին, որ տանկերից մեկը պատրաստ է, իսկ մյուսը՝ ոչ: Տանկերից մեկի հրահանատարը Վիտյան էր Չախար գյուղից: Ես ասացի, որ չաշխատող տանկի անձնակազմը պետք է միանա մեզ: Վերջիններս Վիտյային խնդրեցին իր տանկով հրել իրենց տանկը և աշխատեցնել շարժիչը: Վիտյան այդպէս էլ արեց, շարժիչն աշխատեց և երկու տանկերը շարժվեցին մեր կողմը: Իսկ մենք գտնվում էինք Դրմբոն—Մեհմանա ճանապարհի խաչմերուկում: Չորս կողմը անտառներ էին, գեղեցիկ տեսարաններ, բայց մենք տրամադրութեամբ չունեինք հիանալու դրանցով: Մեր ուշադրութեամբ կենտրոնացած էր միայն 1156 բարձունքի վրա, որը անպայման գրավելու էինք:

Տանկերից մեկը և 10 մարտիկների ես թողեցի այդտեղ, որ դիրքավորվեն, իսկ մենք կրակելով գրոհի անցանք դեպի բարձունքը, որն իշխող դիրք ուներ շրջապատի նկատմամբ: Տանկը ևս կրակ բաց արեց բարձունքում դիրքավորված թուրքերի վրա: Վերջիններս այնու չէին կարող դիմանալ: Մենք կարողացանք գրավել բարձունքը: Թուրքերը խուճապահար փախչում էին դեպի Մեհմանա գյուղը:

Մեր ջոկատների կազմում էր ազգութեամբ ղազախ (կրոնով մահմեդական) մի քաջ երիտասարդ: Նա Ղազախաստանի արևմուտքում գտնվող Ակտյուբինսկ քաղաքից էր: Նրա հարևանները հայեր էին եղել: Երբ նա նրանցից լսում է Ղախարալի թեպքերի մասին, որոշում է գալ այստեղ և կռվել ոճրագործ ազերիների դեմ, որոնք ձգտում էին ամեն գնով պահպանել գաղութային լուծը Ղախարալի ժողովրդի վրա:

№ 1156 բարձունքը գրավելու ժամանակ ինձ մտեցան այդ ղազախ կամավորը և նրա հրահանատար Վազգենը: Նրանք խնդրեցին թույլ տալ գրավելու մի բարձունք, որը եթե թշնամու ձեռքին մնար, կարող էր մեզ շատ խանգարել: Ես տվեցի իմ համաձայնությունը և Վազգենի ջոկատը ճամփա ընկաւ: Առջևից գնում էր ղազախը երկու հալ տղաների հետ: Երբ նրանք հասնում են բարձունքի ամենավերին մասը, տեսնում են, որ հինգ ադրբեջանցի ասկարներ նստած դիրքի մեջ «Սպիդդա» ռադիոընդունիչով համերգ են լսում, իսկ մեկն էլ հեռապահում է: Տղաներն ուզեցել էին անմիջապէս ավտոմատներով կրակ բաց անել թուրքերի վրա, բայց ղազախը չէր թողել: Նա ինքը, լսւլ դիրք ընտրելով, նոնականետով կրակել էր և միանգամից սպանել բոլորին: Իսկ ժամապահին խիել էին գնդացրի կրակահերթով:

Հետո տղաները գրոհում են մեկ այլ բարձունքի վրա և գրավում այն: Առջևի գծի վրա էր եղել ղազախ կամավորը, որը վիրավորվել էր ձեռքից: Հանկարծ ես տեսա նրան: Չընայած վիրավորված էր, բայց ուսին գցել էր երկու ավտոմատ հրացան, որոնք վերցրել էր սպանված ազերիներից: Ես ռացիայով խնդրեցի սանիտարներ ուղարկել: Մենք մի քանի վիրավորներ ևս ունեցինք:

Քիչ հետո մեքենայով եկան սանիտարները: Վիրավորները բարձրացան մեքենայի մեջ, իսկ ղազախ տղան, որի ձեռքից արյուն էր կաթում, չէր շտապում: Նա անսպասման ուզում էր լուսանկարվել ջոկատի տղաների հետ, որոնց հետ արդեւ շատ մտերմացել էր: Իր մոտ եղած լուսանկարչական սարքատը նա տվեց մի տղայի ու խնդրեց նկարել:

Նա նկարվեց թորթի հետ, իսկ հետո ստանձին տղայիս՝  
Գագիկի հետ: Նա հրաժեշտ տվեց մեզ ու բարձրացավ մե-  
քենան: Մենք ջերմ շնորհակալության և բարեմաղթության  
խուրքեր ասացինք նրան:

### ԱԶԵՐԻՆԵՐՆ ԻՐԵՆՑ «ԳՐԱԳՆԵՐԻ» ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՏԱԿ

Ադրբեջանցիները սկսեցին կրակել «Գրադներից», բայց  
մենք նախկին տեղում չէինք, շատ էինք մոտեցել հակառու-  
կորդի դիրքերին: «Գրադի» հրթիռները սկսեցին ընկնել  
ազերիների վրա: Թուրքերն աչք ժամանակ արձակեցին մո-  
տավորապես 120 արկ: Պարզորոշ լսվում էին թուրքերի  
հայհոյանքները և հուսահատ քացականչումները՝ «Վա՛, ի,  
դադա, վա՛, դադա», («դադա» նշանակում է հայրիկ):

Ես Գրադ Ժոռային խնդրեցի խնայել արկեր և չկրակել  
թուրքերի վրա, քանի որ հրետակոծելու գործը հաջողու-  
թյամբ կատարում էր հենց իրենց հրետանին: Բարձունքի  
վրայից ուսցիալով ես կապվեցի Սերժ Մարգույանի հետ և  
խնդրեցի Վանք գյուղի տղաների ջոկատն առաջ ուղարկել,  
քանի որ Դմբոնը նրանց ձեռքին էր, իսկ մենք Դմբոնից  
առաջ էինք անցել: Նա Արթուր Ալեքսանյանին հրամայեց  
շտապ առաջ գնալ: Արթուրը հրահանգ է տալիս տղաներին  
առաջ գնալ, բայց նրանք չեկան: Բանն աչն է, որ թշնամին  
այնտեղ լավ էր դիրքավորված, իսկ նրա հրետանին Վերին  
Հորաթաղի կողմից գորել հարվածներ էր հասցնում:

Մի քանի անգամ կապվեցի Սերժ Մարգույանի հետ: Նա  
հրաման տվեց սարսել և տեղից չշարժվել, մինչև իր նոր  
կարգադրությունը: Մարտը շարունակվեց մի քանի ժամ:  
Վազգենը, որ գրավել էր բարձունքը, օգնություն խնդրեց  
ինձանից, քանի որ թշնամին նոր ուժեր էր մոտեցրել և  
շարժվում էր նրա կողմը: Ես չէի կարող օգնություն ուղար-  
կել, քացի այդ, հնարափորություն չունեինք բոլոր բարձունք-  
ների պահելու, ուստի նրան առաջի, որ ջոկատը վերցնի ու  
գալ մեզ մոտ: Նա բարկացած էր և ստում էր, որ եթե այդ

նարմար դիրքը տան թշնամուն, նա այնտեղից կարող է մեզ  
գնդակոծել:

Երբ նա տղաների հետ եկավ մեզ մոտ, ես կարգադրեցի  
այնպես դիրքավորվել, որ կարողանանք հարվածի տակ պա-  
հել բարձունքը և թույլ չտանք, որ թուրքերը այնտեղից կը-  
րակեն: Տանկիստ Վիտյային կանչեցի ինձ մոտ, ցույց տվեցի  
բարձունք և ասացի, տանկն այնպես կանգնեցնի, որ կարո-  
ղանա խփել բարձունքին: Վիտյան խնդրեց հեռացնել տղա-  
ներին այդ վայրից, որպեսզի իր արձակած արկերի թեկոր-  
ները նրանց չվնասեն: Քիչ անց նա լավ դիրք գրավեց իր  
տանկով և ուզում էր կրակել: Ես խնդրեցի սպասել այնքան,  
մինչև թուրքերն իրենք սկսեն կրակել բարձունքից: Ինչպես  
նախատեսել էինք, թուրքերը, գրավելով բարձունքը՝ դիր-  
քավորվեցին այնտեղ և գնդացիներից ու ավտոմատ հրա-  
ցաններից կրակ բաց արեցին մեր ջոկատների վրա:

Տղաները մտել էին թմբի ետևը և թշնամու գնդակները  
կամ անցնում էին նրանց գլուխների վրայով կամ էլ մխրձ-  
վում թմբի մեջ: Բարձունքի վրա կային շուրջ 40 ազերի  
զինվորներ: Վիտյային ասացի, որ նրանց վրա բեկորային  
արկեր արձակի: Իրար ետևից նա երեք արկ ուղարկեց նը-  
րանց դիրքերի վրա: Այնու կրակոցներ չեղան:

Ժամը 17-ն էր, կոնիլը դեռ շարունակվում էր: Թուրքերը  
տանկեր էին մոտեցրել: Ծուսբից մեկ հետևակի մարտական  
մեքենա էինք ստացել: Սերժ Մարգույանը հրաման տվեց  
վերադառնալ նախկին դիրքերը: Ժամը 18-ին ես տեղում  
թողեցի 10 զինվորների և մեկ տանկ, որոնք պետք է ա-  
պահովեին մյուսների նահանջը: Ես էլ մնացի նրանց հետ և  
մենք հաջողությամբ «զսպում» էինք թուրքերին:

Այդ գործողության ժամանակ թուրքերը տվեցին 35 զոհ,  
իսկ մենք ունեցանք չորս վիրավոր, որոնցից մեկը ծանր  
վիրակում:

### ԿՐԾՔԻՑ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐԸ

Հայաստանից ինձ մոտ կային տասնհինգ կամավոր տղ-  
դաներ, որոնց հրամանատարը կապիտան էր (անունը չեմ  
հիշում): Նա եկավ ինձ մոտ և ասաց, որ գրոհի ժամանակ

իր տղաներից մեկը կրծքից ծանր վիրավորվել է: Նրան թողել էին մի աղբյուրի մոտ, իսկ կոպի ալարտից հետո, երբ վերադարձել էին նրան բերելու, տեսել էին, որ նա չկա: Խիստ մտատանջությամբ մեջ էր, ինչ էր եղել այդ տղան:

Ես կանչեցի Վիգենին և հանձնարարեցի հինգ չղրանցի մարտիկների հետ միանա կապիտանի ջոկատին և գնա փնտրելու վիրավորին: Նրանք զննցին և մեկ ժամ անց գլխահան և տխուր վերադարձան ասելով, որ չեն գտել նրան: Կապիտանը բերեց վիրավորվածի հետ եղած երկու զինվորներից, որոնք պատմեցին հետևյալը. գնդակը դիպել էր իրենց ընկերոջ արտին, երբ նրանք գրոհում էին բարձունքը: Նրանք կարծել էին, թե նա մահացել է: Թողել էին նրան աղբյուրի մոտ՝ կողքին դնելով նրա ավտոմատ հրացանը: Իսկ երբ վերադարձել էին, չէին գտել իրենց ընկերոջ դիակը:

Կապիտանը, որ շատ մտերիմ էր եղել այդ զինվորի հետ, չափազանց վշտացած էր: Նա անպարիսխ ուզում էր գտնել նրան: «Ի՞նչ պատասխան պետք է տամ նրա ծնողներին» շարունակ կրկնում էր նա: Երեք օր շարունակ մեր տղաների հետ նա որոնումներ էր կատարում, բայց անարդյունք:

Մի քանի օր անց նրանց ուղարկեցինք հանգստի: Այդ դեպքից 12 օր անց չղրանցիները գնացել էին իրենց գյուղից կարտոֆիլ բերելու: Տներից մեկի ներքնահարկից նրանք հանկարծ ձայներ են լսում: Գնում են նայում, տեսնում են մարդ կա այնտեղ: Պարզվում է, որ այդ վիրավոր զինվորն է՝ նոճակը ձեռքին: Սկզբում նրանք թուրքերեն հարց են տալիս, բայց պատասխան չեն ստանում, հետո խոսում են հայերեն: Վիրավոր զինվորը պատասխանում է: Ասում է, որ ինքը հայ է, դուրս չի գալու, կպայթեցնի իրեն, բայց գերի չի հանձնվի: Նա ասում էր, թե. «Դուք թուրքեր եք, հայերեն եք խոսում»: Տղաներն ասում են, թե սխալվում է, իրենք հայ զինվորներ են: Թող ինքը դուրս գա և նոճակը պատրաստ պահի ձեռքում: Նա մի կերպ դուրս է գալիս թաքստոցից և ուժասպառ ընկնում գետնին: Մերոնք նետվում են նրա կողմը և տեսնում, որ նա կրծքից վիրավոր է, ստացել է միջանցիկ վերք, որն արդեն սկսել էր նեխել:

Նրա ընկերները ճիշտ էին ասել: Բայց նրանք չէին հասկացել, որ նա արտից չէր վիրավորվել, այլ գնդակը մտել էր արտից փոքր ինչ ներքև և դուրս եկել մեջքի կողմից: Միրտը վնասված չէր: Երբ նա ուշքի էր եկել, աղբյուրի մտից օրորվելով ու ընկնելով մի կերպ գնացել էլ Չղրան՝ տանելով իր հետ հրացանը և ունեցած նոճակը: Նա մտել էր մի տան ներքնահարկ և փռվել հատակին: Երբ ուշքի էր եկել, դուրս էր սողացել և տեսել, որ չորս կողմը միզատու աչքիներ են: Տերեկները նա պառկած էր լինում, իսկ գիշերները դուրս էր գալիս և միրգ հավաքում: Նա սնվել էր միայն մորգերով: Մարտը շարունակվում էր և նա չգիտեր, թե ի՞նչ է կատարվում գյուղում, ովքե՞ր են դա գրավել:

Մենք իսկույն սանիտարներ կանչեցինք և այդ խիզախ տղային ուղարկեցինք հոսպիտալ: Անցավ մի առ ժամանակ: Մի անգամ փոստում հաճոփայեցի մեզ հետ միասին ծառայած Նապոլեոն անունով մի տղայի, որը Վեդիից էր: Նա եկել էր զանգահարելու այդ վիրավոր տղայի ծնողներին՝ ասելու համար, որ նրանց որդին ազանված չէ, այլ վիրավորվել է: Հետո մենք մեծ ուրախությամբ իմացանք, որ որ նա առողջացել է ու վերադարձել տուն:

## ԹՈՒՐԷՆԻ ԿՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Վիգենը հետախուզության էր գնացել: Երբ վերադարձավ, պատմեց, որ տեսել է մեր կողմը ելող թուրք հետախույզների: Նա լսել էր տանկերի շարժիչների հոնդյունը և հասկացել, որ թշնամին ուժերի վերադասավորում է կատարում, հետևապես սրատրաստվում է հարձակման:

Մենք սկսեցինք նախապատրաստվել: Նախ անհնապատեցինք ճանապարհները: Ծտաքից խնդրեցինք «Ճագոտ» (հակատանկային կառավարվող հրթիռ): Ծտաքից ուղարկեցին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մի քանի ուսանողների, որոնք բերեցին մեկ «Ճագոտ» և չորս հրթիռ: Ես հարցրեցի նրանց, թե լա՞վ են տիրապետում այդ զենքին: Նրանք դրական պատասխան տվեցին, որից հետո ես նրանց ուղարկեցի առաջախոր գիծ: «Ճագոտը» նրանք տեղադրե-



ցին դիրքի մտտ և վերադառնալով գնկուցեցին, որ իրենք դժվար թե կարողանան իրինչ հակառակորդի տանկերին, քանի որ նրանց տեսադաշտն ընդամենը 200 մետր է: Մինչդեռ «Ֆագոտը» հնարավոր է կառավարել 500 մետր թռչելուց հետո միայն: Մենք նրանց խնդրեցինք կրակել 200 մետրից: Գիտեմք, որ թշնամու տանկիստները սարսափելի վախճնում են սյդ անել գնեքից: Ասեմ, որ «Ֆագոտի» հրթիռի ետևից թռչքի ժամանակ մի բարակ շար է բացվում, որի միջոցով կարելի է ճշտել թռչքի ուղղությունը: Դա կատարվում է ճշանառությունը թշնամու տանկի վրա ճշտորեն պահելու միջոցով: Տանկը որքան մանրանեղ անի, չի ազատվի, որովհետև հրթիռն էլ անմիջապես փոխում է իր ուղղությունը՝ միշտ թռչելով ուղիղ դեպի տանկը: Հարվածը և պայթյունը սուկայի ուժով են լինում:

Չոկատների հրամանատարներին կանչեցինք մեզ մոտ և ասացինք, որ հարձակում է սպասվում: Պետք է դիմանալ, ոչ մի քալ նահանջի իրավունք չունենք: Թշնամին հետախույզներ է ուղարկում: Չպետք է կրակել նրանց վրա, որպեսզի մեր տեղը չհայտնաբերվի: Առջևի գծում «Տաքսի» խումբն էր և «Վրեժ» ջոկատը, որն ամբողջովին բաղկացած էր սամգայիթցիներից: Չախ կողմում գոյիստանցիներն էին 18 հոգով, նրանցից ձախ իմ ջոկատն էր (32 մարտիկ) և Վազգենի ջոկատը (20 մարտիկ):

Թշնամին արդեն հետախույզներ էր ուղարկել, իսկ նրանց ետևից տանկերի շարժիչների հոնդյունն էր լավում: Մենք ունեինք «Տ—72» մակնիշի մեկ տանկ և հետևակի մեկ մարտական մեքենա: Տանկի հրամանատարը, ինչպես վերը նշեցի, չափարեցի Վիտյան էր, իսկ մյուս մեքենայի անձնակազմի մեջ ստաշանոցի ու վանքեցի տղաներ էին, որոնք հրաշալի տիրապետում էին թե՛ տեխնիկային և թե՛ հրաձգային գործին:

Ազերի հետախույզները մոտեցել էին շուրջ 100 մետր և բարձունքից իջնում էին դեպի ցած, մեր կողմը: «Վրեժ» ջոկատի հրամանատար Յուրան ինձ կանչեց իր մոտ (նա նրանից հեռու էի շուրջ 50—60 մետր) և ցույց տվեց թուրքերին, որոնք խիտ անտառի միջով իջնում էին դեպի մեր դիրքերը: Պարզորոշ բնեցինք նրանց խոսակցությունը՝ «Այս,

գոյմաս է, գալիմ նեշքիմ բոխտ'ը» («Այս, մի վախեցիք, ոչ մեկը չկա, եկի՛ք»): Ես մոտեցա «Վրեժ» ջոկատի տղաներին և զգուշացրեցի, որ չկրակեն, թողնեն թշնամին մոտիկանա: Թացիալով լսում էր թուրքերի խոսակցությունը. նրանք պահանջում էին գրահատեխնիկա ուղարկել:

Մնացել էր մոտ 80 մետր, որ թուրք հետախույզները հասնեն մեզ, բայց «Վրեժ» ջոկատի տղաներից մեկի նյարդերը չդիմացան և նա ավտոմատից կրակահերթ տվեց: Թուրքերից երկու հոգի սպանվեցին: Մարտը սկսվեց: Երկու կողմերն էլ կրակ բացեցին ավտոմատներից ու գնդացիներից: Մերս ընդ մերթ լավում էին նոնականետներից արձակված նոնակների պայթյունների ձայները: Ահռելի դողոց էր: Մեր տանկի շարժիչը գործի դրվեց, իսկ նրանց տանկերը, որ երեք հատ էին, շարժվեցին մեր վրա: Երբ մնացել էր 200 մետր, պոլիտեխնիկի տղաները «Ֆագոտից» համազարկ տվեցին: Հրթիռը դիպավ ծառիմ, բայց երբ պայթեց, բեկորը կապվ տանկի թնդանոթի փողին: Տանկը կանգ առավ, իսկ տանկիստները միջից դուրս թռան ու փախան: Ազերիների հետևակի մարտական մեքենան, որն անընդհատ կրակում էր մեր վրա, պայթեց մեր դրած սկանի վրա, իսկ նման մեկ այլ մեքենայի խեղցիք նոնականետով: Իմ հրամանով մեր տանկի թնդանոթից կրակ բացվեց բարձունքի վրա, որտեղից թշնամու զինվորները (8—10 հոգի) նոնականետներից կրակում էին մեր վրա: Այնպիսի անտանելի տղամոկ էր, որ սամգայիթցի անփորձ տղաներից հինգ հոգի վախից ուշաթափվեցին: Բացի սյդ, ունեինք ութ վիրավոր:

Ես հրամայեցի վիրավորներին և ուշաթափվածներին գետնին դնել և մտնել դիրքերը: Իմ ջոկատից հինգ հոգու ուղարկեցի օգնության: Բոլոր վնասվածներին ուղարկեցինք հուպիտալ, իսկ մյուսները կոփում էին: Եվ պետք է ասել, որ նրաշալի էին կոփում: Անվրեպ կրակով նրանք մեծ կոբուստներ պատճառեցին թշնամուն: Անտառի ծառերի տակ, սյդ ու սյն կողմում տարբեր դիրքերով ընկած էին ազերիների դիակները: Մյուսները ճողոպրեցին՝ մարտի վայրում թողնելով «Տ—72» մեկ տանկ, հետևակի մարտական երկու մեքենա: Տանկի միայն թնդանոթի փողն էր վնասված:

Մենք այն հանձնեցինք Վանքի ու Առաջաձորի տղաներին:

Մարտից հետո ես շտաբին հաշտեցի, որ տղաները խիստ հոգնած են և հանգստի կարիք ունեն: Ինձ պատասխանեցին այսպես. «Դիմացեք երկու օր, հետո կփոխենք»: Երկու օր անց եկավ մի ջոկատ, որի հրահանատարը լեհականացի Ռուբին էր: Ես նրան մանրամասն բացատրեցի իրերի կացությունը և ջոկատի ողջ կազմով հետացանք հանգստի: Հինգ օր հետո թուրքերը մեծ ուժեր կուտակելով այդ վայրում կարողացան ետ գրավել Մեհմանայի բարձունքը և Չլդրանը: Մեր պաշտպանական գիծն արդեն ետ էր քաշված և գտնվում էր Կիչան գյուղի մոտ:

### ՍՏԵՂԵՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

Մեր ջոկատը վերադարձավ Ստեփանակերտ հանգստանալու: Տղաները ցովեցին իրենց տները, բայց երկու օր անց հավաքվելու և անմիջապես ռազմահանրամասններում հրահան եկավ: Ազերիները հասել էին Խաչեն գետի ափը: Պետք էր կանգնեցնել նրանց:

Սամվել Կարապետյանի և իմ ջոկատները պաշտպանում էին Կիչան գյուղի շրջակայքը: Մեր խնդիրն էր թույլ չտալ, որ թշնամին անցներ Խաչենի աջ ափը: Եթե մենք հանձնեցինք մեր պաշտպանած բարձունքները, թուրքերը կգրավեին Գանձասարի վանքը: Ամեն գնով պետք է կանգնեցնեինք թշնամուն, հակառակ դեպքում արցախյան երկրի ամենանշանավոր վանական համալիրը, հայ ճարտարապետության հիասքանչ հուշարձանը կրկին արտելի թշնամու ձեռքը, որը հուշարձաններ քանդելու և պղծելու գործում մեծ փորձ ու վարպետություն ունի: Կավերվեր ու կամայանար նաև Գանձասարից ցած գտնվող հիմնավորք Վանք գյուղը:

Կիչանի շրջակայքը պաշտպանում էին Առաջաձոր, Վանք, Քոլատակ գյուղերի, Մարտակերտի շրջանի գյուղերի ջոկատները, որոնց հրահանատարը Նորիկ Դանիելյանն էր: Նրանց օգնություն էին ցույց տալիս Սամվել Կարապետյանի

և իմ ջոկատները: Ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր Ս. Կարապետյանը:

Ինչպես տեսնում ենք, մեր պաշտպանական ուժերը քաղկացած էին տարբեր գյուղերի բնակիչներից կազմված մարտիկներից: Հասունացել էր ժամանակը այդ ջոկատների միավորմամբ ստեղծելու կոտ, միասնական, մարտունակ բանակ՝ թշնամուն ավելի զորեղ հարվածներ հասցնելու և Արցախի պաշտպանությունն ավելի հուսալի ձևով կազմակերպելու համար:

Մերձ Սարգսյանի, Սամվել Բարսեղյանի և Սեյրան Օհանյանի եռանդուն ջանքերով, կարճ ժամանակում, պատերազմական փորձություններով անցած այդ մարտական ջոկատների հիման վրա ստեղծվում է Ղարաբաղի պաշտպանական բանակը: Դա վերին աստիճանի կարևոր, անհետաձգելի գործ էր, որը մեր շարժմանը հաղորդելու էր նոր թափ ու նոր որակ:

Նախ ստեղծվեց կենտրոնական պաշտպանական շրջանը, որի հրամանատար նշանակվեց գործունյա, մարտիկների ու հրամանատարների շրջանում մեծ հեղինակություն վայելող Սամվել Կարապետյանը: Ծուարի պետ նշանակեցին ինձ:

Կենտրոնական պաշտպանական շտաբի մեջ մտան նետեյալ գորամիավորները՝ առաջին վաշտը (հրամանատարը Գեճան էր): Դա Աշոտ Ղուլյանի (Բեկորի) ստեղծած վաշտն էր: Նա հսկայական աշխատանք էր տարել ուժեղ, մարտունակ այդ ջոկատի կազմավորման ուղղությամբ: Բեկոր (Օսկոլկա) փուտ անունը տվել էին մեր սիրելի Աշոտին, որովհետև մի քանի անգամ վիրավորվել էր արևի բեկորներից, որոնցից մի քանիսը այդպես էլ մնացել էին նրա մարմնի մեջ: Վերքերը դեռ չբուժած՝ Աշոտը մետվում էր մարտի դաշտ՝ պաշտպանելու արցախյան սիրելի երկիրը: Նա հերոսաբար զոհվեց Պողոսագոմեղ գյուղի մոտ հարձակման ժամանակ, երբ ձգտում էինք ազատագրել Կրմբունը:

Այդ ժամանակ ես գտնվում էի Մեհմանայի բարձունքում: Գիտեի, որ Բեկորը գիշերը հարձակման էր անցնելու Կրմբունը գրավելու համար: Նա խիղիղ էր այն պահին, երբ

թշնամու վրա կրակ բաց անելու հրաման էր տվել: Այդ ցավալի լուրը ես իմացա ուսցիալով: Սիրոս կծկվեց խորը ցավից ու արիստանքից: Բեկորը մեր շարժման ամենապայծառ դեմքերից մեկն էր: Նա վիթխարի գործ է կատարել գեներեր կուտակելու և մարտական ջոկատ ստեղծելու համար: Նա բուրդի կողմից սիրված հրամանատար էր և նրա մահը անփոխարինելի կորուստ էր մեզ համար:

Երկրորդ վաշտի հրամանատարը Վահան Լարիբյանն էր: Հրաշալի մարդ, կարգապահ, ընկերասեր: Մասնակցել է շատ մարտերի, եղել է Շուշիի ազատագրողների մեջ, աչքի ընկել Ասկերանի ու Մարտակերտի ազատագրման մարտերում: Նա նշանակվել էր Շուշիի բանտի պետ: Երբ աստուկացան մարտերը Սեյտուանի, Կարմիր Ավանի, Լեհինավանի ազատագրության համար, Վահանն իր ջոկատով (որն իրականացնում էր Շուշիի բանտի պահպանությունը) մեկնեց այդ թեժ վայրերը: Այնտեղ էլ նա զոհվեց: Լավ ճանաչում էի նրա հորը՝ Յուրային, որն աշխատում էր Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայում:

Երրորդ վաշտի հրամանատարն էր Սամվել Հարությունյանը: Նրա վաշտը աչքի ընկավ հատկապես Մարսանգի ջրավազանի գրավման ժամանակ: Ցախը սրտի, Սամվելը, սրդ հրաշալի հրամանատարը, չտեսավ մեր հաղթանկը: Կաղալուզ գյուղի ազատագրումից հետո «Ուազ» մեքենան, որի մեջ էր նա իր չորս ընկերներով, պայթեց արևնի վրա: Զոհվեցին բոլորը:

Երբ ստեղծվել էր կենտրոնական պաշտպանական շրջանը, հնարավոր եղավ անցնելու հակահարձակման: Կիշանի ճանապարհով մենք պետք է մտնեինք Դրմբոն: Կարճ ժամանակի ընթացքում Կիշանից մինչև Առաջաձորի բարձունքները զբաղեցնող մեր երեք վաշտերը և Մարտակերտի ուժերը (Նորիկ Դանիելյանի հրամանատարության տակ) հարձակման անցան դեպի Չոլբան, Դրմբոն, Հաթերք: Հենց այդ ժամանակ էլ զգացվեց բանակային նոր զորամիավորման ստավիդությունը: Առանձին-ստանձին գոյություն ունեցող ջոկատների միավորմամբ ստեղծված արշտպանական շրջանը, համագործակցելով այլ միավորումների հետ՝ ի վիճակի էր լուծելու կարևոր մարտական խնդիրներ: Անցնե-

լով հակահարձակման՝ մեկ-երկու օրում մենք Խաչենի սփերից հասանք Դրմբոն և Թարթառի հովիտ: Հակահարձակմանը մեծ օգնություն էր ցույց տալիս Գրադ Ժողաշի հրետանին: Զինամթերքի պակաս չունեինք: Շուշիում ազերիներից գրավել էինք «Գրադի» արկեր, իսկ Չոլբանում վերցրել էինք չորս թնդանոթ, որոնց փողերն անմիջապես ուղղեցինք նահանջող թուրքերի կողմը:

Մեր զորքերը սրընթաց գոռոզ վազտագրեցին Մուտը, Հաթերքը, Չազիկը, Չախարը, Վաղուհասը, Կճողուրը և այլ բնակավայրեր: Մի քանի օր հանգստանալուց հետո պատրաստվում էինք ազատագրել Մեծ Ծենը, Մաղավուզը, Մոխրաթաղը և, ամենավերջին, Սարսանգի ջրամբարը:

## ՄԱՅՐԻԿԻՍ ԹԱՂՈՒՄԸ

1992 թ. ուշ աշնանը մահացավ մայրս՝ Համիկ Պետրոսյանը: Զարմանալի համեստ կին էր՝ բարի, ստատաձեռն, իր հնարավորության սահմաններում օգնում էր բոլորին: Նա ծնեց ու դաստիարակեց հինգ երեխաներ (երեքը տղա, երկուսը՝ աղջիկ): Բոլորին բարձրագույն կրթություն տվեց: Հավասարաչափ սիրում էր մեզ, միաժամանակ խտասարահանց էր, երես չէր տալիս: Ամեն ինչ աճում էր, որ իր երեխաները մաքուր, գեղեցիկ հագնված և դասերը արտոբուստաճ գնան դպրոց: Ամենաակարգը ես էի: Երբեմն դասերս չէի պատրաստում կամ էլ փախչում էի դպրոցից՝ գնում ֆուտբոլ խաղալու, վերադառնում էի խիստ հոգնած և սղտոտված շորերով: Ավելի վատ էր լինում վիճակս, երբ մասնակցում էի թուրք լակոտների հետ կոփվեթիին: Մեծ մասամբ ծեծում էի նրանց, բայց երբեմն, հերթական տոբուղմբոցից հետո, ծեծված էի տուն գալիս՝ պատառոտված հագուստներով:

Նա միշտ աշխատում էր զսպել ինձ, խնդրում էր զգույշ լինել, հեռու մնալ նրանցից: Հետագայում ծնողներս տեղափոխվեցին Ստեփանակերտ: Մայրս լավ գիտեր, որ ազատագրական շարժման կազմակերպողների մեջ եմ: Որպես

Էր դրա համար, բայց այդպես էլ ոչինչ չիմացավ իմ ձեռքակալության մասին: Մերոնք այդ բանը գաղտնի պահեցին նրանից: Մինչ այդ նա հիվանդացել էր: Նրան փոխադրել էինք Հոկտեմբերյան (այժմ՝ Արմավիր) մեծ քրոջս՝ Սվետլանայի մոտ, որի ամուսինը բժիշկ էր և լավ հետևում էր մայրիկին բուժմանը:

Բոլորը հիշում են 1992—1993 թթ. խառաշունչ ձմեռը: Ձյունը եկավ նոյեմբերի կեսերին: Շանապարհները հաճախ փակվում էին, կտրվել էր կապը գրողերի ու շրջանների միջև: Իմ ընկերների հետ ամբողջովին տարված էի բանակի ստեղծման գործով, երբ ստացա մայրիկիս մահվան տխուր լուրը: Շատ դժվարին ժամանակներ էին: Թուրքերն Աղդամից անընդհատ ուժեղացնում էին Ստեփանակերտը: Մարդիկ թաքնված էին ներքնահարկերում: Ցուրտ էր և մութ: Զգացվում էր ոչ միայն սննդամթերքների, այլև խմելու ջրի պակաս: Երբ թաղումներ էին լինում, զգուշանալով մարդկանց կուտակումներից՝ թույլ չէինք տալիս, որ չորսհինգ հոգուց ավելի մարդ գնա գերեզմանատուն, քանի որ թուրքերը նկատում էին և թնդանդամներից ու հրթրոներից կրակում նրանց վրա: Հանգուցյալներին շտապ հասցնում էին գերեզմանատուն, թաղում և արագորեն վերադառնում:

Անկեղծ առած, որոշ մարդկանց մոտ խուճապալին տրամադրություններ կային: Հալացքները դուրսն էր և առիթ ու հնարավորություն էին որոնում հեռանալու Ղարաբաղից: Իժմախատաբար, գտնվեցին նաև հեռացողներ: Պետք էր բարձրացնել մարդկանց տրամադրությունը, հուսադրել, հավկացնել նրանց, որ ոչ մի դեպքում չենք լքելու մեր պապերի օրրանը՝ Արցախ աշխարհը: Պետք է մնանք այստեղ մեր նախնիների գերեզմանների մոտ: Դա շատ կարևոր էր:

Իհարկե, շատ դյուրին կլինեք մայրիկիս թաղումը կազմակերպել Հոկտեմբերյանում: Հալաստանում շատ հարսգատներ ունեինք. այնտեղ էին ապրում քույրերս և եղբայրս իրենց ընտանիքներով, մյուս եղբայրս կարող էր գալ Մոսկվայից: Բայց, մերոնց համաձայնությամբ, ես որոշեցի մայրիկիս դին բերել Ղարաբաղ՝ հողին հանձնելու Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում, որտեղ թաղված էր հայրս:

Այդ բանով ուզում էի ցույց տալ հայրենակիցներին, որ Ղարաբաղից երբեք չենք հեռանալու և այստեղ է լինելու մեր հանգուցյալների վերջին հանգրվանը: Բայց թաղումը կազմակերպելու համար շատ դժվարություններ կային: Անդադար տեղացող ձյունը փակել էր ճանապարհները: Շատ դժվար էր մեքենաների համար վառելանյութ ձեռք բերելը: Բայց մենք ետ չկանգնեցինք մայրիկիս՝ Ղարաբաղում թաղելու մտքից:

Հեռախոսով մշտապես կասի մեջ էի Ջարմիկի հետ. խնդրեցի նրան մայրիկի դիակը հասցնել գոնե մինչև Եղեգհաձոր: Առավոտյան ժամը 8-ին նրանք Երևանից դուրս էին եկել երեք մեքենաներով: Շանապարհին մեքենաները կանգնեցրել էին զինվորները և թույլ չէին տվել առաջ գնալ, որովհետև թուրքերը Նուխիջևանի տարածքից ուժեղացնում էին խճուղին: Նրանք առիպված գնացել էին Վեդիի վրայով, բայց այնտեղ էլ վթարի մեջ էին ընկել: Առիպված վերադարձել էին ու գնացել մույն ճանապարհով: Եղեգհաձոր էին հասել 8 ժամում:

Ես նրանց ընդառաջ էի ողարկել մեր «Կամազ» մեքենան, որի վարորդը մեր հարևան Գեման էր: Եղեգհաձորում նրանք հանդիպել էին իրար: Դազադը տեղափոխել էին «Կամազի» մեջ, մյուս մեքենաները հողարկավորներով վերադարձել էին Երևան, իսկ եղբայրներս և քույրերս «Կամազում» տեղավորվելով (քույրերս վարորդի կողքին, իսկ Ջարմիկը ու Վալերիկը՝ վերևում) շարժվում են դեպի Ղարաբաղ:

Նրանք Ստեփանակերտ հասան գիշերվա ժամը 10-ին: Հաջորդ օրվա առավոտյան «Կամազը» ուղղություն վերցրեց դեպի Կաղարծի: Նրա ետևից մեկնեց իմ վարձած ավտոբուսը, որի մեջ թաղմանը մասնակցող իմ բարեկամներն ու ընկերներն էին: «Կամազը» ձյունների մեջ ճանապարհ էր բաց անում ավտոբուսի համար, երբեմն էլ, դժվար տեղերում, քաշում էր նրան իր ետևից: Այդպես հասանք Կաղարծի:

Հայաստանում մահացածին Ղարաբաղ փոխադրելու և

այնտեղ թաղելու լուրը տարածվել էր ամենուր: Մարդիկ այդ փաստի մեջ հուսադրվելու շատ բան էին տեսնում: Մենք էլ հպարտ էինք, որ մեր սիրելի մայրիկի թաղման իրողությունը ծառայում էր մեր նպատակներին: Եթե մայրիկիս թաղեցինք Ղարաբաղում, ուրեմն վստահ էինք, որ Ղարաբաղը մերն է մնալու և պայքարելու ենք նաև նրա գերեզմանը պահպանելու համար: Արցախը ոչ միայն մերն է ու գալիք սերունդներինը, այլև հանգուցյալներինը, որոնք իրավունք են նվաճել ընդմիջտ անջելու իրենց պապենական հողում: Ուրեմն պետք է պայքարենք նաև մեր նախնիների անյունների հանգստության համար:



ՎԱՐԴԱՆ  
ԱՐԹՈՒՐԸ

Ղարաբաղյան շարժումը ծնեց շատ հերոսներ, որոնց մասին կարելի է հատորներ գրել: Դրանցից մեկը Արթուր Ալեքսանյանն է: Այնքան մեծ է նրա դերը «Ամարաս» բարեգործական միության ստեղծման ու գործունեության մեջ, որ ընկերները նրան կատակով կոչում էին Ամարասի Արթուր: Բնությունը նրան պարթև հասակ չի տվել և ոչ էլ ատլետիկ կազմվածք: Միջահասակ է, ջլապիկո, ուժեղ, նուրբ արտաքինով, բայց նրա կրծքում աղյուծի սիրտ է բարսխում: Ծայր աստիճանի անվախ է, անձնվեր, սկզբունքային ու հայրենասեր: Կազմակերպչական մեծ տաղանդ ունի, տիրապետում է մարդկանց հոգու խորքերը թափանցելու, նրանց ոգևորելու և իր ետևից տանելու գաղտնիքներին: Ոչինչ չի խնայել Արցախի պաշտպանության համար: Ծանր պայմաններում, աղբյուրառանկան օտնի քթի տակ գեներ ու գինավոր է կուտակել, ինքնապաշտպանության ջոկատներ կազմակերպել: Նա էր, որ փաստորեն ստեղծեց «Ամարաս» բարեգործական միությունը և հետո ամեն ինչ արեց Արցախի հոգևոր թեմը կյանքի կոչելու համար: Մեկ ամիս նա բանտարկված է եղել Ծուշվա բանտում, այդ երկրպային դժոխ-

քում, որտեղից բշերին էր հաշտվում կենդանի դուրս արձնել: Բայց նա դուրս է եկել և նոր թափով շարունակել պաշարը: Կոիվների ժամանակ նա մի քանի անգամ ծանր վիրավորվել է: Այնքան բուք էր նրա վիճակը, որ բուժելու համար նրան ուղարկեցին Նյու Յորք: Ռոքի կանգնելուց հետո նա նորից ռազմաճակատ էր մեկնում և միշտ սանձազստանգավոր տեղերում էր: Ղարաբաղյան շարժումն իր հաղթանակի համար պարտական է այնպիսի գործիչների, ինչպիսին Արթուր Ալեքսանյանն է:

Այժմ նա Հայաստանի զինված ուժերի զնդապետ է, զնդի հրամանատար: Իր գործնաչի համար կենցաղային հրաշալի պայմաններ է ստեղծել: Զինվորների նկատմամբ ուշադիր է, հոգատար, բայց և պահանջկոտ: Նա գտնում է, որ առանց երկաթե կարգապահության գործնաչ կլից սողաներ զինվորներ չեն դառնա: Կարգ ու կանոնին վարժված զինվորի առաջին գործը գեներալին քաջ տիրապետելն է, հրամանները ճշտորեն հասկանալն ու կատարելը: Նա շատ կարևոր է համարում գիտակցական կարգապահությունը, որը խարսխվելու է հայրենի երկրի նկատմամբ որդիական ջերմ սիրո և պատասխանատվության զգացումների վրա: Նրա զինվորներն ու սպաները ըստ էն հասկանում իրենց հրամանատարին, սիրում ու գնահատում են նրան: Երևի նրանց մտքով չի անցնում, որ արտաքինից խիստ ու պահանջկոտ իրենց հրամանատարը ժամանակին եղել է... երաժիշտ: Նա դնկափարել է Ստեփանակերտի «Օրֆեյ» էստրադային անսամբլը, հանդես է եկել պետական էստրադային «Ղարաբաղ» խմբի կազմում, նույնիսկ դարձել էստրադային արտիստների համամիութենական մրցույթի դափնեկիր: Երաժիշտ էր ու նաև Ռուսաստանում կրթություն ստացած տնտեսագետ, բայց ղարաբաղյան շարժումը նրան դարձրեց ընդհատակի պայմաններում գեներալ կոտակոյ գործիչ, որը հետո նետվեց մարտի դաշտ որպես զինվոր, որպես հրամանատար:

Արթուր Ալեքսանյանին ձերբակալելու համար տխրահոշակ Վ. Պոլյանիչկոյի նախաձեռնությամբ ՊԱԿ-ը և զինվորական իշխանությունները խաբեությամբ կանչել էին նրան

Ստեփանակերտի օդանավակայան, բերել էին զինվորների մի ամբողջ գումարտակ:

Այդ օրը Ասխարասի բացումն էր լինելու: Արթուրը նշանակված էր քալոր և անպայման մասնակցելու էր բացման արարողությանը: ՊԱԿ-ը ցանկանում էր մեծ աղմուկ բարձրացնել այն հարցի շուրջ, որ բարեգործական համարված միությունը զբաղված է գեներալ կոտակելու գործով ու սպանապատկերին է ծառայեցնում հավաքած փողերը: Արթուրը միշտ շրջում էր «դիպլոմատ» կոչվող պաշտակալով, որի մեջ կարևոր փաստաթղթեր ու դրամ էր լինում:

Ի դեպ, դերասանուհի Ժաննա Գալստյանը պատմում է, որ Արթուրը մի օր չափազանց սոված վիճակում դիմել է իրեն և խնդրել ուտելու որևէ բան: Նրա գրպանը դատարկ էր, փող չուներ: Բայց «դիպլոմատը» լեփ լեցուն էր փողերով: Դրանք գեներալի համար էին և Արթուրն ավելի շուտ սովածան կլիներ, քան կոյուպչեր սուրբ նպատակի համար հավաքված փողերին:

Այդ օրը նրա ձեռքին դարձյալ «դիպլոմատ» կար, բայց ոչ նախկինը, որը նա թողել էր վստահելի տեղում: Այդ պայտասակի մեջ անմեղ առարկաներ էին ու կրոնական բովանդակությամբ գրքեր: Զերբակալելուց հետո գրահապաս մեքենայով Արթուրին տարել էին Շուշի:

Շուշիա բանտն այն ժամանակ, բարեբախտաբար, դեռևս ռուս զինվորների հսկողության տակ էր: Ազերիները միայն վարչական պարտականություններ ունեին, նրանք տեր ու տնօրեն հետո դարձան այնտեղ:

Սկզբում Արթուրին խուզարկել էին: Բանտի աշխատակիցներից մի ազերի սպա նրանից պահանջել էր վզից հանել խաչը, որն Արթուրը նվեր էր ստացել Վազգեն Առաջին կաթողիկոսից: Արթուրը չէր հանել: Ետևում կանգնած զինվորը հրել էր նրան հրացանի խզակով: Դա կարծեք ազդանշան էր եղել ազերիների համար, որոնք նետվել էին Արթուրի վրա: Առանձնապես զազանային հարվածներ էր հասցնում այն սպան, որը ցանկանում էր հանել տալ խաչը: Արթուրը խաչը մոցնում է բերանը: Հարվածում էին հատկապես նրա դեմքին: Ծեծ ու ջարդից հետո Արթուրին նե-

տում են պատժախոց: Երբ նա ուշքի է գալիս, թթում է, ջարդված ատամների ու արյան հեռո միասին դուրս է գալիս նաև Վեհափառ հայրապետի ընծայած խաչը:

Նա ստանոքսի խոց ուներ, տառապում էր «Հայկական» կոչված հիվանդությամբ: Կինը՝ Սվետլանան, հաջողացնում է նրան ուղարկել ցավազրկող դեղեր, որպեսզի անտանելի ցավերի դեպքում նա կարողանար սրսկել իրեն և ազատվել Շուշի քաղաքի հիվանդանոց տեղափոխվելու վտանգից, որովհետև այդ հիվանդանոցն ընկնող հայերն այլևս այնտեղից ողջ դուրս չէին գալիս:

Տիկին Սվետլանան նամակագրական կապ էր հաստատել Արթուրի հետ: Արթուրի նամակներից մեկը, գրված Աստվածաշնչից պոկված մի փոքրիկ թղթի վրա, պահպանվել է: Արթուրը ներողություն է խնդրում իր մաշիկից, որ ինքը ձերբակալվել է նրա ծննդյան օրը (սեպտեմբերի 7-ին): Նրան շատ հետաքրքրել է մարզում այլորի առկայության հարցը և նա նամակի մեջ գրել է այդ մասին և ուզեցել տեղեկություն ստանալ:

Դեռևս գարնանը (1990 թ. ապրիլի 20-ին) Արթուրին գրանցել էին որպես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու: Ընտրությունները կայանալու էին սեպտեմբերի 30-ին: Նրա վրչտահաված անձր Դավիթ Ծահնագարյանն էր: Վերջինս, երբ իմանում է Արթուրի ձերբակալության մասին, բողոքի նամակ է ուղարկում ԼՂԻՄ հատուկ ջրջանի պարետի պաշտոնակատար գեղապետ Օվչիննիկովին: Նա գրում է, որ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու Ա. Ալեքսանյանի ձերբակալությունը պատգամավորի անձի անձեռնամխելիության մասին օրենքի կոպիտ խախտում է: Ընտրողների և իր անունից Դավիթ Ծահնագարյանը պահանջում է անմիջապես ազատել նրան, հակառակ դեպքում իրենք հարկադրված կլինեն դիմել միջազգային կազմակերպություններին:

Արթուրին ազատելու հարցով շատերն էին զբաղվում թե Հայաստանում և թե Մոսկվայում: Զորի հալայանը պատմում է. «Օրական տասը նամակ էինք ուղարկում տարբեր հասցեներով, պահանջելով զբաղվել Արթուրի բախտով: Հա-

զար ու մի հիվանդություններով տառապող Բորիս Դադանյանը, կաղալով, առավոտից երեկո նամակները տանում էր հարկավոր հասցեներով: Կարծում եմ, այդպես Արթուրը կենդանի չէր դուրս գա Շուշիի բանտից: Եվ փրկեցինք նրան, այն ժամանակ այնքան էլ լավ չիմանալով, որ փրկում ենք իսկական զինվորի»:

Արթուրին բանտից ազատ արձակելու պահանջով Վազգեն Առաջին կաթողիկոսը դիմել էր նախագահ Միխայիլ Գորբաչովին:

Դիմումները ունեցան իրենց ազդեցությունը: ՊԱԿ-ը Արթուրի վրա չկարողացավ գործ սարքել և նա մեկ ամիս Շուշիա բանտում տառապելուց հետո ազատ արձակվեց: Ընկերները և տիկին Սվետան այնպես արեցին, որ նա կարողացավ հենց նույն օրը թռչել Երևան:

Ազատվելուց հետո նա նոր կրքով ու մեծ եռանդով շարունակեց ընդհատված գործը: Պետք է ասել, որ «Ամարաս» միությունը նրա փաստացի ղեկավարության ներքո շատ գործ արեց շարժմանն ամեն կարգի օգնություն հասցնելու գործում: Արթուրյի մասնակցում էր ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման և զենք հայթայթելու ոչ դյուրին աշխատանքներին: 1991—1992 թթ. նա նշանակվել էր ՀՀ պաշտպանության պետական կոմիտեի մոբիլիզացիոն և ինքնապաշտպանական ջոկատների ստեղծման շտաբի պետի տեղակալ: Երբ ադրբեջանցիները հարձակվեցին Ղարաբաղի վրա, Արթուրը թողեց ամեն ինչ և մեկնեց: Նա ուզում էր կռվել որպես հասարակ զինվոր: Բայց նրան նշանակեցին հետախուզական-դիվերսիոն ջոկատի հրամանատար: Միաժամանակ զբաղվում էր թիկունքի ապահովման հարցերով: Շուշիի ազատագրումից հետո Մերյան Օհանյանը Արթուրին նշանակեց գրոհող ջոկատի հրամանատար, որին հրաման էր տրված գրավել մի շաք գյուղեր (Զարիսի, Լիսագոր, Բերդաձորի չորս գյուղերը և այլն) և ոչնչացնել այնտեղ ամրացած -հակառակորդի ուժերը: Դրանով լավ պայմաններ կտեղծվեին ազատագրելու Լաչինի միջանցքը: Հրամանատարության ստաջատրանքը Արթուրը գերազանց կա-

<sup>1</sup> Զորի հալայան, «Գծուխ և դրահառ», Երևան, 1995, էջ 500:

տարեց: Հետևեց հոր նշանակում. նա դարձավ Հարեթի պաշտպանական շրջանի հրամանատար: Նրան ենթակա ուժերի հետո դառնում են գումարտակ, որին օգնում էին «մասնագարտներին» «Արծիվ» ջոկատի մարտիկները և Իոնի շրջանից եկած երկու հարյուր կազակները:

Արթուրը այդ գումարտակով պաշտպանում էր Խաչենի լեռնաշղթան: Նա ազատագրում է Հարեթի ենթաշրջանը՝ համագործակցելով Շահումյանի շրջանի պարտիզանների հետ: Այդ գործողության ժամանակ նա վիրավորվում է: Բուժվելուց հետո նշանակվում է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրետանու պետի տեղակալ: Քելբաջարի շրջանի ազատագրման ժամանակ նա ղեկավարում էր մարտական գործողությունների և հետախուզական տվյալների մշակման աշխատանքները, ինչպես նաև հրետանին: Բոլորը գիտեն, թե ինչպիսի ծանր մարտեր էին մղվում այդ վայրերում և հալկական հրետանին ինչ վիթխարի նպաստ բերեց մեր զորքերի հաղթական առաջընթացին:

Արթուրն իրեն խնայել չգիտեր: Գիշեր-ցերեկ ոտքի վրա էր: Գերյարվածությունն իրեն զգացնել տվեց դաժան ձևով, նա միկրոիմուրտ ստացավ, որին գումարվեց և թոքերի բարբոթումը: Հիվանդությունները չէին կարող կանգնեցնել նրան: Բուժվելուց հետո նա նորից ամենաթեժ վայրերում էր: Հետագայում ՀՀ ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանը Արթուրին տված բնութագրում նշել է, որ ինքը ստանձնապես կարևորում է Ա. Ալեքսանյանի դերը Մարտակերտի շրջանի ազատագրման ժամանակ:

Երբ թշնամին կրկին Օմարի լեռնանցքի վրա էր, Արթուրին նշանակում են այդ ուղղությամբ գործող ուժերի հրամանատար: Նա հաջողությամբ ղեկավարեց հակահարձակումը: Թշնամին մեծ կորուստներ տալով խուճուրդահար հանունչեց: Վերջում նա վիրավորվեց ոտքից և ուսից: Բուժվելու համար նրան տարան ԱՄՆ: Մարտակերտի ու շրջակա զբոսիկի ազատագրման ժամանակ նա կրկին վիրավորվում է և ծանր ապաքարդ ստանում (կոնստոզիա):

Արթուրը սիրված հրամանատար էր: Պատահել է, որ իր մարտական ընկերները, մահացու վտանգի ենթարկելով

իրեն՝ կարողացել են փրկել նրա կյանքը: Զորի Բալայանը պատմում է, թե ինչպես Ծուշիի գործողության ժամանակ Ջանհասանի ուղղությամբ, որտեղ Արթուր Ալեքսանյանը գումարտակի հրամանատար Յուրի Հովհաննիսյանի տեղակալն էր, մերոնք գրավում են մի բլուր, որի հակառակ կողմից ադրբեջանցիները նոճակներ էին նետում մերոնց վրա: Մեր տղաները նրանց պատասխանում էին նույն կերպ: Հանկարծ ազերիների նետած մի նոճակ գալիս է ուղիղ Արթուրի վրա. «Հանկարծ մի աղեկտուր միչ լավեց,— գրում է Զ. Բալայանը,— բոլորը միաբերան Արթուր կանչեցին: Ինչպես դանդաղեցված նկարահանման ժամանակ, երկնքից նոճակն իջնում էր ուղիղ Արթուրի վրա: Տղերքը մասցրին նկատել, թե Լևոն Մովսիսյանը (Լոյոն) կատվի ճարպկությանը ինչպես երկարած ձեռքով բռնեց «լիմոնկան» և ախով վոլեյբոլիստի պես փոխեց նոճակի թոփչքի ուղղությունը: Ինքն էլ ընկավ, նոճակը ծածկելով իր մարմնով: Անմիջապես լավեց պայթյուն: Առաջինը Լևոնի մոտ նետվեցին նրա եղբայր Առաքելը (Ծմայը) և Արթուրը:

Միայն հետո Վազերի Մարությանը կպատմի. «Հուսպիտարում ոչ ոք չէր կարողանում հավատալ, թե Լոյոն կփրկվի: Անբողջ կրծքախեղուկը տակնուվրա էր եղել, բայց, բարեբախտաբար, շատ չէին տուժել կենսական նշանակություն ունեցող օրգանները»<sup>1</sup>:

Եվ այսպես, ճակատամարտեր, վերքեր, հիվանդանոցներ և կրկին մարտադաշտ:

Արթուր Ալեքսանյանն այս տարի 40 տարեկան դարձավ, բայց 100 տարեկանի փորձ ունի կուտակած: Ծատ չի սիրում խոսել իր կատարած գործերի վերաբերյալ, բայց ոգևորությանը պատմում է մի դեպքի մասին, որի նա երբեք չի մոռանա: Ծուշիի գրավումից հետո մեր տղաները Ղազակչեցոց եկեղեցու մոտ գերիներ էին վերցրել: Անմիջապես լուր են ուղարկում Արթուրին: Նա շտապում է այնտեղ և շատ մեծ է լինում նրա զարմանքն ու ուրախությունը, երբ գերիների մեջ նա տեսնում է այն ադրբեջանցի աբսլին, որն իր բանտարկության տառջին օրն ուզում էր հանել տալ իր կրծքին

<sup>1</sup> Զորի Բալայան, նույն տեղում, էջ 501:



կախված խաչը և դաժան ծեծի ենթարկեց իրեն: Նա Ծուշիի քանդի հայ կարանավորների խոշտանգողներից մեկն էր, նրանց դահիճը: Եվ հիմա այդ նողկալի արարածը որպես գերի գտնվում էր իր գոհներից մեկի ձեռքում: Նա վիրավոր էր: Նրա հետ էին նաև կինը, մայրը և երկու երեխաները:

Այն հարցին, թե ինչպես վարվեցին մերոնք այդ դահիճի հետ, Արթուրը կարճ պատասխանեց. «Ողարկեցինք շուտ, թող աչնտեղ որոշեին նրանց բախտը»:

Երբ Արթուրին ներկայացնում էին ՀՀ Մարտական խաչ առաջին աստիճանի շքանշանի, նախարար Սերժ Սարգսյանը, որը շատ բավ է ճանաչում նրան, իրավացիորեն գրել է. «Ամենուր, որտեղ Ա. Ալեքսանյանը ծախյալ է իր գործունեությունը, իրեն դրսևորել է որպես պետական մտածողություն, հայրենիքի պաշտպանության գործում բացառիկ խիզախություն և անձնավիրություն ցուցաբերող սպա: ...Ազնիվ է, բարեխիղճ, աշխատասեր, գաղտնապահ: Լավ ընկեր է, քաջ գորական»:

Ինչպես ասում են, ամեն ինչ դեռ առջևում է և գեղապետ Արթուր Ալեքսանյանին մեծ դեր է վերապահված հայկական բանակի իզորացման գործում:

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԻ ՄԱՍԻՆ

Պատմական գիտ. դոկտոր Վարդան Գրիգորյանը Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց պատմության» բազմահատորյակի հեղինակներից է: Նա պատրաստել է «Դիվան հայոց պատմության» նոր շարքի 3 հատորները (1-ինը հրատ. 1984 թ.), լույս է ընծայել «Երեվանի խանությունը 18-րդ դարի վերջում», «Կամենեց Պոդոլսկ քաղաքի հայկ. դատարանի արձանագրությունները», «Ուկրաինայի և Լեհաստանի հայկական գաղութների պատմությունը», «Հայությունը նվիրված կյանք», այլ գրքեր ու հարյուրավոր հոդվածներ: Նա հրատարակության է պատրաստել Լ. Ֆապրիչյանցանի «Կարավանը մահվան ճանապարհին» հուշագրությունը, նվիրված Էրզրումի գալթիմ (հրատ. Բեյրութում 1985 թ.): Նույն թնություն գործ է 1995 թ. նրա հրատարակած «Հուշեր Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի ու հետագա իրադարձությունների մասին» գիրքը (հեղ. Ե. Գահվեճյան): Ղարաբաղյան շարժման ժամանակ նա հստակ ուսումնասիրություններ նվիրեց Ադրբեջանի մահադատական ազգային փոքրամասնությունների (թախչներ, թաթեր, քրդեր, լեզգիներ) բռնի ազգաձուլման հարցերին:

1959 թ. Վ. Գրիգորյանն աշխատում է Մատենադարանում: Ձեռագրեր որոնելու նպատակով նա եղել է մի շարք երկրներում և Հայաստանի համարյա քոչոր բնակավայրերում: Ձեռք է բերել և Մատենադարան փոխադրել ավելի քան 350 ձեռագիր՝ հայերեն, արաբերեն, բատիներեն, ասորերեն ու այլ լեզուներով: Նա ձեռագրերի ցուցամանդեաներ է կազմակերպել Վիեննայում ու Վենետիկում: Ընտրվել է Հայկաի համալսարանի արաբական գիտ. ակադեմիայի պատվո անդամ և Սիրիայի աշխարհագրական ընկերության թղթակից անդամ:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Աշխատատիրոջ կողմից	5
Հուշեր Կիրովաբադից	9
Ազգամիջյան ընդհարում Կիրովաբադի մարզադաշտում	13
Ստեփանակերտում	17
«Կարաբաղ» ֆուտբոլային թիմի կազմում	18
Բանակային թիմի կազմում	21
Տեղափոխվում եմ Երևան	22
Կրկին Ստեփանակերտում	23
«Կարաբաղը» Ադրբեջանի շեմպիոն	25
Անակնկալ հանդիպում Նոբայեցեանում	29
Ծանր կացություն Կարաբաղում	31
Ինքնաբուսառանց Ստեփանակերտում	36
Իրադրությունը կրկին սրվում է	38
Կարևոր շփումներ թափշմարի հետ	41
Դիմումներ Մոսկվայի	44
Հայաստանին միանալու պահանջը	48
Առաջին հարձակումը	51
Ծուարը գործում է	53
Կլանքի է կաշվում Ազգային խորհուրդը	57
Դեպի Գորիս	62
Մոսկովյան ուղևորություն (1989 թ. նոյեմբեր)	67
Օգնություն Կիրովաբադում շրջափակված հայերին (1989 թ. դեկտեմբեր)	69
Սունգայիթից հետո	74
«Արցախը» օգնության է հասնում Արցախին	77
«ԱՅԵՄ ԴԱՅԵՄ»	80
Մանաշենի պաշտպանությունը	83
Ձերբակալություն (1990 թ. հունվարի 18)	89
Դեպի Սունգայիթ	93
Կրասնոդարի բանտում	95
Անապատելի օգնություն	98
Կոլոշերկասկի բանտում	101
Առաջին հարցաթերթությունները	104
Փոփոխություն իմ վիճակի մեջ	112
Զարմիկը գործում է	115
Պետական անվտանգության կոմիտեի նրաժամարվում է իմ գործից	119
Ստեփանակերտում	120

Նորից ազատության մեջ	123
Նախընտրական սրագրար, ընտրություններ և մաշտոություն	125
Կոչ պատգամախոհներին	128
Կարաբաղի պաշտպանության վերջերում	130
Ձերբակալությունների նոր ալիք	135
Ինքնապաշտպանության հաշտող փորձ	137
Օգնություն Բերքաձորին	142
Անանազողություն ինքնագոյով	146
Կուսիտան Յաշան և մյուսները	148
Նոր կոիվներ	151
Զոկառա պատրաստվում է	155
Պաշտպանում ենք Մոխրաբաղը	158
Հարձակում Մաղապաղի վրա	159
Վերադառնում ենք Մոխրաբաղ	161
Մեծ ճեմի անտառում	163
Գրոն մեր դիրքերի վրա	165
Ափիսցիայի հարվածների տակ	169
Տանկային գրոն	171
Հեռուստանկարահանում	176
Պաշտպանական կոիվներ	177
Կոիվներ Մեհմեդապի մոտ	181
«Յաշաբլի Ազրբեջան հարցումաթը»	182
Ազերի կազավորների գերեխարամը, ուսյիտկապ Ասրաառ Հաունցնովի հետ	183
Ազերիները խարամ են իրենց հրամանատարությունը	186
Թուրքերը պատրաստվում են գրոնի, մենք կանխում ենք նրանց	187
1158 բարձանների գրավումը	190
Կաթաի կամախոյի սխրագործությունը	191
Ազերիները իրենց «զբաղվելի» հարվածների տակ	192
Կրծքից վիրավոր զինվորը	193
Թուրքերի նոր հարձակումը	195
Ստեղծվում է Կենտրոնական պաշտպանական շրջանը	198
Մայրիկիս թաղումը	201
Հավերժան. Ամարասի Արթուրը	205

**ԻՍԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ԱՐՁԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ**

**Հուշեր արցախյան շարժման և ազատագրական  
պատերազմի մասին**

**ՀԵՂԻՆԱԿԻ ՀՈՒՇԵՐԸ ԳՐԻ ԱՌԱՎ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՐԱՍՏԵՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈԿՏՈՐ  
ՎԱՐԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**

**РАЗМИК ПЕТРОСЯН**

**НА СТРАЖЕ ПОЗИЦИИ АРЦАХА**

**Воспоминания об арцахском движении и освободительной войне  
ВОСПОМИНАНИЯ АВТОРА ЗАПИСЫВАЛ И ПОДГОТОВИЛ  
К ИЗДАНИЮ ДОКТОР ИСТОРИЧЕСКИХ НАУК  
ВАРТАН ГРИГОРЯН**

Պատվեր՝ 235:

Տպարանակ՝ 1000:

«ԱՄՐՈՒՄ» տպարան, Երևան, Տեղում 44: